

ԸՆԴՆԱՆՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԱՅՐԵՐ

ՀՐԱՄԱՆԱԲ
Ն.Ս.Օ.Տ.Տ.
ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ
ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՅԱՓԱՌ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Գ

Ս. ՆՈՎՆԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆ

ՃԱՌԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ



Ս. ԷԶՄԻՃԻՆ - 2007

ՀՏԴ 25
ԳՄԴ 86.37
Ս – 970

Թարգմ. ռուսերենից՝
Թ. Խաչատրյանի

Ս. ՀՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆ
Ս – 970 Ճառերի ընտրանի: - Էջմիածին: Մայր Աթոռ Սուրբ
Էջմիածին, 2007.- 224 էջ:

ԳՄԴ 86.37

ISBN 978-99930-75-51-6

© Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2007 թ.

ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆ (347-407)

↑ ոնելի սուրբ հայրերից է, որոնք հայտնի են «երկոտասան վարդապետք» անունով: Կ. Պոլսի պատրիարք (398-404) Անտիոքի Մելետիոս հայրապետը (ազգությամբ՝ հայ) նախ՝ Յովհան Ոսկեբերանին, ապա և ծնողներին քրիստոնյա է մկրտել: Մելետիոսի հսկողությամբ Յովհան Ոսկեբերանը ուսանել է Անտիոքի նոր մկրտվածների դպրոցում: Քրիստոնեության դասերին զուգընթաց նշանավոր հռետորների և իմաստասերների մոտ հետևել է փիլիսոփայության և արտաքին գիտությունների դասընթացներին, այնուհետև Աթենքում փիլիսոփայության ուսումնասիրությունը շարունակել Անթոնիոս փիլիսոփայի մոտ: Տասնութ տարեկանում եռանդով ու հետևողականորեն սկսել է զբաղվել Սուրբ Գրքի և աստվածաբանության ուսումնասիրությամբ, ապա Անտիոքի մոտակա լեռներում՝ քարայրի մեջ, երկու տարի անձնատուր եղել ճգնավորական խստակեցության: 381 թվականին Յովհան Ոսկեբերանը ձեռնադրվել է սարկավագ, 386 թվականին՝ քահանա և կարգվել Անտիոքի գլխավոր եկեղեցու քարոզիչ:

Յովհան Ոսկեբերանի քարոզներն աչքի են ընկնել հռետորական բարձր արվեստով, հոգեբանական նրբին թափանցումներով: Իր հոգեղեն քարոզների և պերճախոսության համար կոչվել է «Ոսկի բերան»: Յովհան Ոսկեբերանը ծավալել է նաև աղքատախնամ

գործունեություն: Անտիոքի եկեղեցում նրա հոգածությամբ ամեն օր կերակրվել են շուրջ երեք հազար որբեր, այրիներ, բանտարկյալներ: Իր կամքին հակառակ ընտրվել է Կ. Պոլսի պատրիարք: Իրեն հատուկ ուղղամիտ համարձակությամբ դատապարտել է հասարակության, հատկապես՝ արքունիքի հռչի բարքերը: Նրա դեմ կազմվել է հակառակորդների զորեղ խումբ, որը ստոր միջոցներով անվանարկել է նրան ու տապալել: 403 թվականին Քաղկեդոնի մոտ Կաղնյաց ժողովը արքեպիսկոպոստը և Ռիոսի Բյուզանդիա (Կ. Պոլսի մոտ): Մեկ օր անց ժողովրդի պահանջով հովվապետը վերադարձել է Կ.Պոլիս: Սակայն կրկին դառնալով արքունիքի խարդավանքների զոհ՝ արքայից և Փոքր Հայքի Կոկիսոն քաղաքը. «առեալ տարան յանապատն Հայոց», որտեղ մնացել է երեք տարի: Այդ ընթացքում ուխտավորների անընդմեջ շարք է ձգվել Անտիոքից դեպի Կոկիսոնի հայոց եկեղեցի: Տեսնելով Հովհան Ոսկեբերանի աճող հեղինակությունը՝ թշնամիները խնդրել են Արկադիոս կայսրին արքայից նրան մերձսևծովյան Պիտիոս անմարդաբնակ վայրը: Հովհան Ոսկեբերանը ենթարկվել է ծանր տաժանակրության. ցուրտ ձմռանը ճանապարհի մեծ մասն անցել է հետիոտն և Պոնտոսի Կոմանա քաղաքի մոտ, արքայից փախած, վախճանվել:

Հովհան Ոսկեբերանը թողել է մատենագրական հարուստ ժառանգություն (մեկնություններ, դավանաբանական և հակաճառական գրվածքներ, ճառեր, քարոզներ, ներբողներ, թղթեր և այլն), որը կարևոր դեր է կատարել քրիստոնեական մտքի պատմության մեջ: Հով-

հան Ոսկեբերանի երկերն իրենց բովանդակությամբ ու ձևով միջնադարում եղել են հռետորական խոսքի ու ոճի, եկեղեցական բեմբասացության դասական չափորինակ: Նրա անունով մեզ են հասել Հին և Նոր Կտակարանների քարոզ-մեկնություններ: Մեկնել է (386-388) Ծննդոցի 1-28 գլուխները, սաղմոսներ, որտեղ անդրադարձել է առաքինության և մոլորության խնդրին, ճշմարիտ աղոթքի կարևորությանը, եկեղեցիներում սաղմոսերգության կարգին, քահանայական պաշտոնի վեհությանը և այլ թեմաների: Սաղմոսների քարոզ-մեկնություններում կան նաև հակաճառություններ *արիոսականության, մանիքեության, Պողոս Սամոսատցու մոլորությունների դեմ: Հին Կտակարանից մեկնել է նաև Եսայու, Երեմիայի, Դանիելի մարգարեությունները, Առակների և Հոբի գրքերը, Ա Թագավորությունից ուրոշ հատվածներ:*

Նոր Կտակարանից Հովհան Ոսկեբերանը մեկնել է բոլոր չորս Ավետարանները. մեզ են հասել միայն հատվածներ Մատթեոսի (390) և Հովհաննեսի (391) Ավետարաններից: Մատթեոսի Ավետարանը մեկնելիս մերժել է մանիքեական աղանդավորների այն սխալ կարծիքը, թե Հին և Նոր Կտակարանները խորապես տարբերվում են միմյանցից, ցույց տվել, որ Հին և Նոր Կտակարանների Աստվածը նույն օրենսդիրն է: Մատթեոսի Ավետարանի մեկնությունն ուղեկցվում է մյուս Ավետարանների համապատասխան տեղիների համադրական բացատրությամբ: Յուրաքանչյուր համարի բացատրությանը հետևում է հորդորակը, որը տվյալ համարում արժարժված հարցերի բարոյաբանական եզրակացությամբ

յունն է: Հովհաննեսի Ավետարանի մեկնություն-ճառերն արտասանվել են առավոտյան ժամերգության ընթացքում, կրում են հակաճառական բնույթ և ուղղված են ընդդեմ արիոսականների: Հովհան Ոսկեբերանը այդ ճառերում ապացուցել է, որ ավետարանական բնագրերը կատարելապես համաձայն են եկեղեցու դավանած ճշմարիտ վարդապետությանը: Հովհաննեսի Ավետարանի մեկնություններն ունեն քրիստոսաբանական նկարագիր և իրենց ձևով ու բովանդակությամբ տարբերվում են հեղինակի մյուս մեկնություններից: Գործք առաքելոցի մեկնության ճառերը, Հովհան Ոսկեբերանի իսկ վկայությամբ, գրվել են Կ. Պոլսում 400 թվականին հոգեկան տագնապների, եկեղեցական-քաղաքական հուզումների պայմաններում: Նա նշել է, որ Գործքը լեցուն է քրիստոնեական իմաստությամբ և հստակ վարդապետությամբ, ուստի նախածեռնել է գրքի մեկնությունը, որպեսզի այդ գանձն անթեղված չմնա: Հովհան Ոսկեբերանը ընդհանրապես կարևորել է Սուրբ Գրքի ուսումնասիրման անհրաժեշտությունը: Նրա մեկնողական վաստակի մեծագույն մասը նվիրված է Պողոս առաքյալի կյանքին, գործունեությանը և թղթերի մեկնությանը: Պողոս առաքյալի «Առ Հռովմայեցիս» թղթի երեսուներկու ճառ-մեկնությունները համարվում են նրա նույն թղթի վրա գրված հայրաբանական մեկնությունների ամենանշանավոր և ամենագեղեցիկ գործը, իսկ քսաներեքերորդ ճառը՝ քրիստոնեական քաղաքական մտածողության ամենակուռ և փայլուն գրվածքը: Հովհան Ոսկեբերանի մեկնությունները շարադրված են Անտիոքի աստվածաբանական դպրոցին հատուկ ե-

ղանակով և առանձնանում են պատմաբանասիրական, լեզվաքերականական ուրույն հատկանիշներով: Հինկտակարանային մեկնություններում Աստվածաշնչի հունարեն «Յոթնասնից» թարգմանությունը հաճախ համեմատել է այլ թարգմանությունների հետ, բացահայտել մեկնաբանվող համարի իմաստային նրբերանգները: Պատմաբանասիրական մեկնաբանման այս եղանակն է կիրառել նաև Նոր Կտակարանը բացատրելիս:

Հովհան Ոսկեբերանին են վերագրվում բազում ճառեր, սակայն ոչ բոլորն են նրա գրչին պատկանում: Դավանական և հակաճառական բնույթի ճառաշար է գրել «Յաղագս անճառելի բնութեանն Աստուծոյ» թեմայով, որտեղ պաշտպանել է Աստուծո անճառելի, անըմբռնելի և անիմանալի բնությունը՝ ընդդեմ հերետիկոսների բնապաշտական հակումների, որոնք ժխտել են քրիստոնեական կրոնի անդրանցականությունը և Որդու բնության հավասարությունը Հոր բնությանը: Նշանավոր են քահանայական ծառայությանը վերաբերող ճառերը: «Յաղագս անդրիանդաց» և անտիոքյան շրջանի այլ երկերում գերակշռում է քրիստոնեական սիրո գաղափարը: «Ընդդեմ հրեաների և հրեացող քրիստոնյաների» ճառը Անտիոքի պատրիարքի թողտվությամբ գործող հրեաների ու նրանց ազդեցությանը ենթարկվող քրիստոնյաների դեմ է: Բարոյախոսական ճառերում նա զովաբանում ու բարձրացնում է ողորմածասիրության քրիստոնեական առաքինությունը՝ «Լավ է տալն, քան զառնուլն» առաքելական սկզբունքով (Ա Կորնթ. ԺԶ 1-4): Դրա համար էլ նրան կոչել են նաև «Սուրբ Հովհաննես Ողորմած»: Ճարտասանական արվեստի ըն-

տիր նմուշ է Անտիոքի ժողովրդին ուղղած «Յաղագս անդրիանդաց» ճառը: Գրել է նաև ներբողներ՝ նվիրված Հին Կտակարանի մեծ սրբերին, Անտիոքի եկեղեցու նշանավոր հայրապետներին:

Հովհան Ոսկեբերանի կյանքը և մատենագրական վաստակը մի շարք կողմերով կապված է հայ իրականության հետ: Նրա երկերի մեծ մասը թարգմանել են հայ վարդապետները հինգերորդ դարում՝ գրերի գյուտից և Աստվածաշնչի թարգմանությունից անմիջապես հետո: Թարգմանությունների լեզուն և ոճը համարվում են դասական՝ իրենց հստակությամբ, ճշգրտությամբ ու գեղեցկությամբ: Միայն Երևանի Մատենադարանում նրա երկերի ամբողջական կամ հատվածական բազում ձեռագիր թարգմանություններ են պահվում: Առաջին տպագիր երկը՝ «Մեկնութիւն սրբոյ Աւետարանին՝ ըստ Յօհաննոս» (1717), բաղկացած է ութունյոթ ճառից և «յորդորակներից», ընդ որում, յուրաքանչյուր ճառ համարվում է «աստվածախօս» մի գիրք: Տպագրվել են սուրբ Գրիգոր Ա Լուսավորչին նվիրված «Ներբողեանք...»-ը (1734), որոնք Հովհան Ոսկեբերանը գրել է աքսորավայրում, Կոկիոսի հայության խնդրանքով, և արտասանել «յոզնախումբ բազմութեանն» առաջ. «Երանելի՛ քեզ, անապատ Հայաստանեայց, որ ժողովեցեր զարեգակնդ բազմաճառագայթ ի ծոց քո և լուսաւորեցեր արփիափայլ նշուլիւք դորա» (էջ 110-115): Տպագրված գործերի շարքում իր ուրույն տեղն ունի «Հատընտիր գիրք և ճառք և ներբողեանքը» (հ. 1-2, 1818): Հովհան Ոսկեբերանի մատենագրական վաստակի հայերեն թարգմանված և տպագրված գործերի

մեջ կարևոր տեղ են գրավում նաև Մատթեոսի Ավետարանի («յԱւետարանագիրն Մատթեոս, գիրք 1, 2, 1826») և Պողոս առաքյալի թղթերի («Մեկնութիւն Թղթոցն Պաւղոսի», հ. 1, 2, 1862) մեկնությունների վեցնետիկյան հրատարակությունները: Միջազգային բանասիրության համար խիստ կարևոր է Եսայու մարգարեության մեկնության (հունարեն բնագրի մեծ մասը կորած է) հայերեն թարգմանությունը (հրտ. 1880): Միայն հայերենով են պահպանվել նաև Եզեկիելի, Ամբակունի մարգարեությունների, Մարկոսի, Ղուկասի Ավետարանների, Կաթողիկե թղթերի հատվածական մեկնությունները, բազմաթիվ ճառեր: Մեզ է հասել Հայոց կաթողիկոս Գրիգոր Բ Վկայասերի թարգմանությամբ Հովհան Ոսկեբերանի վարքը, որը տպագրվել է 1751 թվականին Վեներտիկում՝ «Պատմութիւն վարուց» խորագրով: Հովհան Ոսկեբերանի երկերի հայերեն թարգմանությունները լայնորեն օգտագործվել են հայ մեկնողական (*Անանիա Սանահնեցու, Սարգիս Կունդի, Գևորգ Սկևռացու, Վարդան Արևելցու* խմբագիր մեկնություններ), դավանաբանական («Կնիք հաւատոյ», «Արմատ հաւատոյ» և այլ) գրականության մեջ:

Սույն ճառերի ընտրանին հայերեն է թարգմանվում առաջին անգամ:

Հ. Քյոսեյան

ՄԻՐՈ ՄԱՄԻՆ

Մարդասեր Աստված մեր, կամենալով ամենքիս կապել փոխադարձ կապերով, ով սիրելիներ՝, մարդկանց գործերում այնպիսի օրենքներ հաստատեց, որ մեկի օգուտը մշտապես միանում է մյուսի օգուտին: Այսպես, երկրագործը այնքան հատիկ չի ցանում, որքան իրեն պետք է, այլապես նա վաղուց կկործաներ և՛ իրեն, և՛ ուրիշներին, ապա թե զինվորը իրեն վտանգի է ենթարկում ոչ այն բանի համար, որպեսզի փրկի միայն ինքն իրեն, այլ որպեսզի անվտանգ դարձնի նաև քաղաքները, և առևտրականը այնքան չի բերում, ինչքան իրեն պետք է, այլ այնքան, որ ուրիշներն էլ ունենան:

Եթե մարդիկ այդպիսի անհրաժեշտություն առջև չդրվեին, ապա չէին ցանկանա մերձավորների օգուտը, այդ պատճառով Աստված ամեն ինչ այդպես առնչակցեց և թույլ չտվեց օգուտին հասնել այլ կերպ, քան ուրիշների օգուտը նկատի ունենալով:

Այլ ճանապարհով անկարելի է նաև փրկվել, և եթե դու անգամ վարժվում ես բարձրագույն իմաստասիրությունը, ուրիշների՝ կործանվողների նման, ապա Աստծո առաջ ոչ մի շնորհ չես ունենա: «Եվ եթե իմ ամբողջ ունեցվածքը տամ, - ասում է Աստծո առաքյալը, - և իմ այս մարմինը մատնեմ այրման, բայց սեր չունենամ, ոչինչ չեմ շահի» (Ա Կորնթ. 11, 3):

Եվ եթե դու ցանկանում ես իմանալ, թե ինչ զորություն է ձեռք բերում նա, ով հրապուրում է եղբայրներին, թեպետ երբեմն՝ նաև անհավատներին, կամ նրան, ով խոնարհ է, խաղաղ, վարքով հաճելի, ապա լսիր, թե ինչ է ասում նույն այդ երանելի Պողոսը՝ դատարան գալով անհավատ դատավորի մոտ. «Ինձ երանելի եմ համարում, քանի որ

այսօր քո առաջ եմ պատասխան տալու» (Գործք 26, 2):

Սա նա ասում է ոչ նրան շողոքորթելու նպատակով, ամենևին ո՛չ, այլ ցանկանում է այդպիսի խոնարհությամբ հասնել օգտակարության: Մասամբ նա դրան հասավ. նա, ով մինչ այդ համարվում էր ամբաստանյալ, հմայեց դատավորին և այդ հաղթության մասին բոլորի ներկայությունում հստակորեն վկայում է ինքը՝ հմայվածը, ասելով. «Քիչ է մնում ինձ էլ համոզես, որ քրիստոնյա դառնամ» (Գործք, 26, 28): Իսկ Պողոսը: «Կիսնդրեի Աստծուն, որ վաղ թե ուշ, ոչ միայն դու, այլ բոլոր նրանք, որ այսօր ինձ լսում եմ, լինեն այնպիսի, ինչպիսիք ես ինքս եմ» (Գործք, 26, 29):

Արդ, եթե նա այդքան մեծ բան է պահանջում, իսկ մենք նույնիսկ փոքրը չենք պատկերացնում, ապա մենք արժանի կլինե՞նք որևէ ներողամտության: Եվ մի կարծիք, թե ուրիշի օգնության կարիքն ունենալը նսեմացուցիչ է. դա Աստծո անճառելի իմաստնության գործն է: Եթե մենք միմյանց կարիք ունենք և անգամ փոխադարձ օգնության անհրաժեշտությունը մեզ չի միացնում ընկերական կապերով, ապա, եթե մենք ինքներս կարողանայինք բավարարել մեր կարիքները, արդյոք, անսասնձ գազանների չէի՞նք նմանվի:

Զորությունը և անհրաժեշտությամբ է Աստված մեզ հաշտեցրել իրար հետ, և մենք ամեն օր առնչվում ենք միմյանց: Եթե Աստված քանդեր այդ հանգույցը, ո՞վ կփնտրեր մերձավորի բարեկամությունը:

Հենց այդ պատճառով է Աստված մեզ տվել մեկ բնակատեղի՝ այս աշխարհը, բոլորիս համար վառել է մեկ լուսատու՝ արևը, մեզ վրա տարածել է մեկ արյուն՝ երկինքը, և մեզ պարգևել է մեկ սեղան՝ հողը:

Հարուստին Նա ավելին չի տվել կամ ավելի արժեքավոր, իսկ աղքատին՝ քիչ և պակաս արժեքավոր, որպեսզի

մեր միջև լինի լիակատար և անտրոհելի միասնություն, և որպեսզի ոչ ոք չկարողանա ասել՝ այս մեկը ինձ ո՛չ ընկեր է, ո՛չ հարազատ, ո՛չ մերձավոր, և ես նրա հետ ընդհանուր բան չունեմ, ապա ես ինչպե՞ս կարող եմ զնայ նրա մոտ կամ ինչպե՞ս կարող եմ նրա հետ զրուցել:

Մեր միջև կապը պետք է ավելի ամուր լինի, քան ընկերների միջև եղած կապը. այն պետք է անդամների միջև կապ լինի: Եվ նման այն բանին, երբ չես կարողանա ասել՝ ես ի՞նչ հարազատություն կամ մերձավորություն ունեմ նրանց հետ, որովհետև դա ծիծաղելի կլիներ, ճիշտ այնպես, ինչպես որ նույնը եղբորդ մասին չես կարող ասել: Թող որ նա քո հարազատը չէ և ոչ էլ ընկերը, բայց նա մարդ է, որ քեզ նման միևնույն բնությունն ունի, միևնույն Տերը և ապրում է միևնույն աշխարհում:

Փողի մասին խոսելիս մենք գովաբանում ենք նրան, ով ոչինչ պարտք չէ, վասն սիրո խոսելիս, մենք փառաբանում և հարգում ենք նրանց, ովքեր մշտապես պարտապան են: Հաստատվենք այս ճշմարտությամբ և միանանք իրար. և եթե որևէ մեկը կամենա բաժանվել, ինքդ մի բաժանվիր և մի ասա այդ սառը խոսքերը. եթե սիրում է ինձ, ես էլ նրան եմ սիրում, իսկ եթե ինձ չի սիրում աջ աչքը, ապա կհասնեմ:

Ընդհակառակը, եթե նա չի կամենում սիրել, ապա նրան ավելի մեծ սեր ցույց տուր, որպեսզի նրան գրավես, չէ՞ որ այն քո մի մասն է: Եթե ինչ-որ հանգամանքների բերումով մասը բաժանվում է մարմնից, ապա մենք ամեն ինչ անում ենք, որպեսզի նրան վերստին միացնենք մեզ, և հատուկ հոգածություն ենք ցուցաբերում նրա հանդեպ: Եվ քո պարգևն ավելի մեծ կլինի, եթե դու հրապուրես սիրել չցանկացողին: Եթե խնջույքին Աստված հրամայում է կանչել նրանց, ովքեր չեն կարող հատուցել մեզ, որպեսզի

ավելանա վարձատրութիւնը, ապա առավել ևս պետք է անի ընկերութեան մասին դատելիս:

Նա, ով քեզնից սիրված լինելով, փոխադարձում է սերդ, ապա դրանով արդեն իսկ շնորհ է անում քեզ, իսկ նա, ով, քեզնից սիրված լինելով, քեզ չի սիրում, ապա իր փոխարեն քեզ է Աստծուն պարտապան դարձնում: Եվ բացի այդ, երբ նա քեզ սիրում է, փոքր-ինչ ջանք է պահանջում, իսկ երբ չի սիրում, ապա քո օգնութեան կարիքն ունի:

Մի արա այն, որ կարող է դառնալ հոգացողութեան պատճառ, անհոգութեան պատճառ, և մի ասա՝ քանի որ նա տկար է, ես զանցառում եմ, տկարութիւնը սիրո սառչումն է: Չեմ մտադրում սառածը: Չէ՞ որ ուժգին սիրվելու ցանկութիւնը ուժգին սիրելուց է:

Երբ մենք բարեհաճ չենք ինչ-որ մեկի հանդեպ, ապա նրա ընկերակցութեան կարիքը չունենք, թեպետև նա մեծ ու հոգակալ մարդ է, սակայն երբ ինչ-որ մեկին ջերմագին և անկեղծորեն սիրում ենք, ապա թեկուզ և մեր սիրելին փոքր ու չնչին մարդ է, մեզ համար մեծ պատիւ ենք համարում այն սերը, որ նա ներշնչում է մեզ:

Եթե դու անկարող ես եղբորդ պետքն ունենալ, ապա ունակ կլինե՞ս երբևէ ճիշտ օգտվել ուրիշներից: Եթե ի գորու չես դիմելու սեփական մարմնամասին, ապա երբևիցե կարո՞ղ ես գրավել և քեզ միացնել դրսում եղածը: Դու ցանկանո՞ւմ ես, որ քո մասին վատ չխոսեն: Ուրեմն, ինքդ ուրիշների մասին վատ մի արտահայտվիր: Ուզում ես, որ քեզ գովաբանե՞ն: Դու էլ ուրիշներին գովաբանիր: Ուզում ես, որ քեզ գթա՞ն: Դու էլ գթառատ եղիր: Ուզում ես, որ քեզ ներե՞ն: Ներիր նաև ինքդ: Ուզում ես, որ քեզ չկողոպտե՞ն: Դու էլ մի կողոպտիր:

Մերձավորներին հարկ է վերաբերվել այնպես, ինչպես ցանկանում ենք, որ նրանք վերաբերվեն մեզ: Ինչպես հո-

գուն առանց մարմնի մարդ չես անվանի, այնպես էլ՝ մարմինն առանց հոգու, ճիշտ այդպես նաև սերն առ Աստված է, եթե չի ուղեկցվում առ մերձավորը սիրով:

Ուզում ես ինչ-որ մեկին ծառայել: Չեմ առարկում. բայց թող որ դա ուրիշին դառնութիւն չպատճառի: Չէ՞ որ, դրա համար չեն մեզ ուսուցիչներ տրված, որպեսզի թշնամանք ունենանք միմյանց հանդեպ, այլ որպեսզի բուրս մի միութիւն կազմենք: Ինչո՞ւ ես դու մենակ: Ինչո՞ւ շատ ընկերներ ձեռք չես բերում: Ինչո՞ւ չես դառնում սիրո արարիչ: Ինչո՞ւ չես հաստատում բարեկամութիւն՝ առաքինութեան այդ մեծագույն փառաբանումը:

Նման այն բանին, որ չարերի հետ համաձայնելը առանձնապես բարկացնում է Աստծուն, այնպես էլ բարիների հետ համաձայնութիւնը ուրախացնում է Նրան: Շատերի հետ անազնիվ մի եղիր. բնակարանից առաջ և ամեն ինչից առաջ բարեկամներ պատրաստիր: Եթե խաղաղարարը Աստծո որդի է, ապա որքան առավել է նա, ով բարեկամներ է արարում: Եթե սոսկ հաշտեցնողը կոչվում է Աստծո որդի, ապա ինչ պարզևի է արժանի նա, ով հաշտեցնում է բարեկամներին:

Սատանան դրդում է մեզ բոլորի հետ թշնամանալ, Աստված մեզ հրամայում է բոլորին բարեկամ համարել և սիրել. առաջինը, բեռեւելով մեզ անցավորին և կավին (այսպիսին է հարստութիւնը), չի թողնում փոքր-ինչ շունչ քաշել անգամ գիշերները, իսկ Նա, ազատելով մեզ այդպիսի ավելորդ և աննպատակ հոգսից, պատվիրում է հարստութիւն դիզել երկնքում և ոչ թե ուրիշներին նեղութիւն պատճառելու գնով, այլ սեփական առաքինութեամբ. առաջինը, այդքան չարչարանքներից ու դառնութիւններից հետո, ոչ միայն չի կարող պաշտպանել մեզ, երբ մենք այն աշխարհում պատիժներ ենք կրում և Աստծո օրենքները չպահպա-

նելու պատճառով տառապանքների ենթարկվում, այլև ավելի է բորբոքում կրակը, իսկ Նա՝ պատվիրելով մեզ մի ըմպանակ սառը ջուր տալ, թույլ չի տալիս, որ մենք նույնիսկ այդ չնչին ողորմության համար զրկվենք պարգևներից, և դա անում է մեծ առատաձեռնությունով:

Այդքանից հետո ծայր խելագարությունն չէ՞ չսիրել այդքան հեղաբարո և այդքան առատ բարիքներ ունեցող Տիրոջը, և ստրկանալ այդքան երախտամոռ և դաժան տիրակալին, ով ոչ այստեղ, ոչ էլ այնտեղ որևէ օգուտ չի բերում իրեն հնազանդածներին և հավատարիմներին:

Մի՛ տրտնջացեք իմ խոսքերի համար: Չէ՞ որ, ես էլ ինձ սիրողին կասեի, որ նա ոչ միայն այն ժամանակ, երբ ինձ գովում է, այլև այն ժամանակ, երբ ուղղելու նպատակով նախատում է, հատկապես այդ ժամանակ է ավելի շատ սիրում: Առանց խտրություն ամեն ինչ՝ լավը և վատը, գովաբանելը ոչ թե բարեկամի վարք է, այլ՝ շողոքորթի և զագրախոսի. ընդհակառակը, լավ գործի գովաբանումը և վատ արարքի ծանակումը՝ ահա ընկերոջ և բարեկամի պարտքը:

Ահա թե ինչու անհաճո է թշնամին, երբ գովաբանում է, և հաճո է բարեկամը, անգամ երբ նախատում է ինձ: Նա, ով թեպետև համբուրում է ինձ, անհաճո է, նա, ով թեպետև վիրավորում է ինձ, հաճո է: Ծշմարիտ է ասված՝ «լավ է բարեկամի ապտակը, քան թշնամու անց համբույրը» (Առակ. 27, 6):

Մեկը՝ արդարացիորեն կամ անարդարացի, հանդիմանում է, բայց չի անում, որպեսզի խոցի, այլ ուղղելու համար, մյուսը թեկուզև արդարացիորեն է նախատում, բայց չի անում, որպեսզի ուղղի, այլ ավելի ջանում է նսեմացել:

Այնպես որ, ո՛վ սիրեցյալներ, ոչինչ չի կարող համեմատվել համախոհություն հետ. ըստ այդմ մեկը կարող է հավասար լինել շատերին: Եթե, օրինակ, միաբան լինեն եր-

կուսը կամ տասը, ապա մեկը դադարում է մեկ լինել, այլ նրանցից յուրաքանչյուրը տասնապատիկ շատ է, և դու տասի մեջ կգտնես մեկին, իսկ մեկի մեջ՝ տասին: Եթե նրանք թշնամի ունեն, նա արդեն հարձակում է գործում ոչ թե մեկի վրա, և, պատահում է՝ պարտվում է այնպես, ասես, հարձակվել է տասի վրա:

Եթե մեկը աղքատանում է, նա չքավորություն մեջ չէ, որովհետև չունևոր փոքր մասը հատուցվում է ունևոր մեծով: Նրանցից յուրաքանչյուրն ունի քսան ձեռք, քսան աչք և նույնքան ոտք, ամեն մեկն ունի տասը հոգի, որովհետև նա ամեն ինչ անում է ոչ միայն իր անդամներով, այլև մյուսների: Եթե նրանք լինեին հարյուր, նույնը կլիներ:

Միևնույնը կարող է լինել և՛ Պարսկաստանում, և՛ Հռոմում, ու ինչ որ չի կարող անել բնությունը, անում է սիրո ուժը: Եթե նա ունի հազար կամ երկու հազար բարեկամներ, հապա մտածիր, թե որքանով կմեծանա նրա ուժը: Իսկապես հրաշք է մեկը հազար դարձնելը: Արդ, ինչու՞ ձեռք չենք բերում սիրո ուժը և ապահովում մեր անվտանգությունը: Մինչև ե՞րբ մեզ պիտի սահմանափակենք մեկով կամ երկուսով: Նա, ով ունի բազմաթիվ բարեկամներ, թեկուզև աղքատ լինի, հարուստներից ավելի հարուստ է. ինչ չի հանդգնի ասել իր համար, նրա փոխարեն կասեն բարեկամները, ինչ չի կարող ձեռք բերել իր համար, ձեռք կբերի մյուսների շնորհիվ:

Հնարավոր չէ որևէ չարիք պատճառել նրան, ով շրջապատված է այդքան զինակիրներով. այդքան զգոն չեն թագավորի թիկնապահները, որքան սրանք: Նրանք պաշտպանում են կարիքից և վախից, իսկ սրանք՝ կամավորությամբ և սիրով: Ընդ որում, թագավորը երկյուղում է իր պահապաններից, իսկ նա, ով բարեկամներ ունի, նրանց ավելի է վստահում, քան ինքն իրեն:

Եվ, բացի այդ, կա՞ այնպիսի պատ՝ այդքան անկործանելի, այդքան վիթխարի քարերով ամրակուռ, թշնամիների համար այդքան անմատչելի, միաբանություն մեզ համար այդքան անմախճաբ, ինչպես իրար սիրողների միությունը: Այն սատանայի դավադրության խափանումն է, և միանգամայն բնական:

Իրար հետ միասնաբար ըմբոստանալով սատանայի դեմ՝ այդպիսի մարդիկ անպարտելի են նրա խորամանկություններից և կարողանում են կանգնեցնել սիրո հոյակապ տաճարը: Եվ ինչպես քնարի լարերը թեպետև բազմաթիվ են, սակայն գործում են համաձայնություն ու հնչում են չափազանց հաճելի ձայնով, ճիշտ այդպիսի համաբանություն միավորվածները արձակում են սիրո քաղցրահունչ բարբառը:

Ո՛չ, չէ՞ որ սիրուց ավելի քաղցր բան չկա: Ինչե՞ր չի առնի անկեղծ ընկերը: Ի՞նչ հաճույքներ չի պատճառի նա, ինչպիսի՞ օգուտներ, ի՞նչ ապահովություն: Հազարավոր գանձեր էլ ցուցանես, մեկ է, ոչինչ համեմատելի չէ իսկական ընկերոջ հետ:

Նման այն բանին, որ փայլ ունեցող մարմինները իրենց փայլն են տարածում շրջակա միջավայրի վրա, այդպես և ընկերները՝ ուր էլ լինեն, ամենուր շռայլում են իրենց բարեհաճությունը:

Այդու, լավ է բնակվել խավարում, քան ապրել առանց ընկերների: Տենդն այդպես չի վառում մարմինը, որքան սիրելիից բաժանումը՝ հոգին: Սիրո կիրքն այնպիսին է, որ հարկադրում է մեզ ամեն օր պատկերացնել մեր սիրելիներին, երբ նրանք մեզ հետ չեն, այլ բացակայում են. այն սիրածի հոգին շեղում է աչքի առաջ ներկա բոլոր դեմքերից և կապում միայն սիրելիի հետ:

Իսկ եթե նա, ով տեսնում է սիրելիին կամ թե նույնիսկ

հիշում է նրան, հոգով աշխուժանում և մտքով բարձրանում և, հաճույք ստանալով հիշողություններից, ամեն ինչ թեթևություններ է տանում, ապա Նրան իր մտքերում ունեցողը, ով հաճեցավ իսկապես սիրել մեզ, և Նրան հիշողը երբևէ կարո՞ղ է ինչ-որ տրտմություններ ունենալ կամ կարո՞ղ է երկյուղել ինչ-որ ահալի և վտանգավոր բանից: Իհարկե, երբե՛ք:

Եթե օգտվելով ուժեղ մարդկանց սիրուց՝ մենք ահազդու ենք դառնում բոլորի համար, ապա ավելին ենք՝ Աստծո սերն ունենալով: Եվ եթե հարկ լինի այդ սիրո համար վճարել դրամով կամ մարմնով, կամ թե՛ անգամ հոգով, մենք ոչինչ չենք խնայի: Չէ՞ որ բավարար չէ սոսկ խոսքերով հայտնել մեր սերը, այլ հարկ է այն ապացուցել նաև գործով, ինչպես և Նա առ մեզ ունեցած սերը լուր խոսքով չապացուցեց, այլև՝ գործով: Եթե երևելի մարդկանց տան ծառան բարեգործություն է անում, իսկ իրականում ոչ թե իր ինչքով է բարի գործ կատարում, այլ տիրոջ ունեցածով և միևնույն ձևով օգտվում է և՛ իր, և՛ տիրոջ ունեցածից, ապա ինչու այդ ծառաներից շատերը ավելի երկյուղում են դրանից, քան տիրոջից և եթե ի հետևանք դրա քամահարում են իրենց ինչքը, մինչդեռ իրականում չեն քամահարում այն, այլ ավելին են ստանում, ապա առավել ևս նույնը կատարվում է հոգևոր գործերում:

Այդ պատճառով պետք չէ հոգ տանել վասն սեփական շահի, որպեսզի իսկապես հոգ տանենք առ այն, այլ պետք է քամահարենք, որպեսզի ունենանք: Եթե մենք արհամարհում ենք այն, Աստված հոգ է տանում, որ ունենանք, իսկ եթե ինքներս հոգ տանենք, Աստված կարհամարհի:

Եթե որևէ մեկը ցանկանում է անկեղծորեն սիրել և ճանաչել սիրո ուժը, ապա թող փութա նրա հոգեզավակի՝ երանելի Պողոսի մոտ, և նա կուսուցանի, թե ինչ արիություն

յուն է տանել սիրելիից բաժանումը, և ինչ մեծ հոգի է հարկավոր ունենալ: Իրոք, այդ Պողոսը, օտարելով և հրաժարվելով մարմնից, պատելով ողջ աշխարհը գրեթե մերկ հոգով, ոգուց զատելով ցանկացած կիրք, նմանակելով անմարմին ուժերի անխռովությունը, թեպետև կարծես թե տառապելով օտար մարմնի մեջ, հեշտությունը տանում էր մնացյալ նեղությունները՝ և՛ զնդանները, և՛ շղթաները, և՛ արտաքսումները, և՛ խարազանումները, և՛ սպառնալիքները, և՛ մահը, և՛ պատժի բոլոր ձևերը, սակայն հոգով բաժանված լինելով մեկից, որին սիրում էր, այնպես տրտմեց և խռովվեց, որ իսկույն հեռացավ քաղաքից, որտեղ պետք է տեսներ սիրելի էակին և չգտավ:

Ի՞նչ եղավ քեզ, երանելի Պողոս: Բանտարկված ջրհորում, ապրելով զնդանում, մարմնին ունենալով խարազանի հետքեր, կռնակից հոսող արյուն՝ դու խորհրդին հաղորդակից էիր դարձնում, կնքում, զոհեր մատուցում, և անգամ որևէ մեկին չէիր արհամարհում, ով փրկություն կարոտ էր, իսկ գալով Տրոյա և տեսնելով, որ արտը մաքրված է և պատրաստ՝ սերմ ընդունելու, դու ձեռքից բաց թողեցիր այդպիսի մեծ շահույթը և անմիջապես հեռացար:

Այո, ասում է, որովհետև տրտմած էի, որովհետև ոգիս շատ էր շփոթահար իմ սիրելի Տիտոսի բացակայությունից և թախիծն ինձ այնպես տիրապետեց, այնպես հաղթեց, որ ստիպեց անել դա:

Տեսնում ես, թե ինչ մեծ սխրանք է անխռով տանել սիրելիից բաժանումը, ինչ դառն է ու թախծալի և ինչպիսի վեճ ու արի հոգի է պահանջում: Սիրահարներ համար բավական չէ սոսկ հոգիներով միանալը, նրանք դրանով չեն հանգստանում, և միմյանց մարմնական ներկայության կարիքն ունեն, իսկ եթե դա չկա, ապա իրենց ուրախությունը

նվազում է: Օ՛, հրաբորբոք սեր:

Պողոսը, չերկյուղելով հրից, ամրակուռ, անհողողող, անդրդվելի, անսասան, ասում է. «Ո՞վ պիտի բաժանի մեզ Քրիստոսի սիրուց. Աեդուությունը, թե՞ անձկությունը, թե՞ հալածանքը, թե՞ սովը, թե՞ մերկությունը, թե՞ վտանգները, թե՞ սուրը» (Հռոմ. 8, 35), հանդգնորեն կոխտեսելով հողն ու ծովերը, ծանակելով մահվան երկաթակուռ դարպասները՝ այդ նույն Պողոսը, երբ արցունքներ էր տեսնում սիրելի մարդկանց աչքերին, այնպես էր տրտմում և խռովվում, որ անգամ չէր թաքցնում անձկությունը, այլ անմիջապես ասում էր. «Ի՞նչ եք անում, ինչու՞ եք լաց լիճում և իմ սիրտն էլ ճմլում» (Գործք 21, 13):

Օ՛, զարմանք: Ջրերի անհունությունը չէր ճմլում նրան, իսկ չնչին արցունքները ճմլում և կոտրում էին: Ի՞նչ եք անում, ինչու՞ եք լաց լինում և իմ սիրտն էլ ճմլում: Այդ ի՞նչ ես ասում, պատասխանի՛ր ինձ: Այդ ամրակուռ հոգին արցունքներից կարող է ճմլվե՞լ:

Այո՛, ասում է նա, որովհետև մեծ է սիրո ուժը, այն հաղթում և պարտություն է մատնում ինձ, ամեն ինչի կարող եմ դիմանալ, բացի սիրուց: Ո՞վ չի զմայլվի: Ո՞վ չի զարմանա: Ավելի լավ է ասել, թե ով կարող է արժանիորեն զմայլվել և զարմանալ այդ՝ մինչև երկինք հասնող հոգու արիությունից, մտածելով այն մասին, որ փակված լինելով զնդանում և շղթաների մեջ, ուղերձ ուղարկեց փրկիչապեցիների՝ այդքան հեռու տեղից: Չէ՞ որ դուք զիտեք, թե Մակեդոնիան որքան հեռու է Հռոմից:

Սակայն ո՛չ ճանապարհի հեռավորությունը, ո՛չ ժամանակի տևականությունը, ո՛չ բազում գործերը, ո՛չ վտանգավորությունը, ո՛չ հավերժող աղքատությունը, ո՛չ էլ որևէ այլ բան չմարեցին նրա սերն ու հիշատակը աշակերտների նկատմամբ, ընդհակառակը, նա նրանց բոլորին մտա-

պահանջ: Եվ նրա ձեռքերն այդքան շղթայված չէին, որքան կապկպված և գամված էր նրա հոգին սիրով առ իր աշակերտները:

Ինչպես թագավորը, առավոտյան գահ բարձրանալով և տեղավորվելով ապարանքում, անմիջապես ընդունում է ամեն տեղից ուղարկված հազարավոր նամակներ, այդպես և նա, նստած լինելով գնդանում, ինչպես արքայական ապարանքում, ամեն տեղից մշտապես և՛ ուղարկում, և՛ ստանում էր ավելի շատ նամակներ, որոնցով մարդիկ դիմում էին նրա իմաստնությունը և իրենց գործերի մասին տեղեկացնում, և որքանով թագավորի համեմատ շատ գործեր էր գլուխ բերում, այդքանով նրան ավելի մեծ իշխանություն էր տրվում:

Այսպիսին է սիրո ուժը. այն ոչ միայն ընդգրկում, միացնում և կապում է ներկաներին, որոնք կան մեր շրջապատում և մեր աչքի առջև են, այլև մեզնից հեռու գտնվողներին, և ո՛չ ժամանակի տեականությունը, ո՛չ ճանապարհների հեռավորությունը և նման այլ կարգի բաներ չեն կարող կտրել և խզել հոգևոր բարեկամությունը:

Սիրողին պետք է այնպես սիրել, որ նրանից հոգին խնդրելու դեպքում, եթե հնարավոր լինի, նա չմերժի, որովհետև անկեղծ ընկերոջից թանկ բան չկա: Տեսնելով սիրելիին՝ սիրողը ուրախանում և հավիվում է հիացմունքից, հյուսվում նրա հետ հոգու անխզելի հյուսվածքով, որ անճառելի հաճույք է պատճառում: Եթե լոկ նրան հիշելիս նրա հոգին աշխուժանում է և թևավորվում, ամեն օր տեսնելով՝ նա չի հագնում, նա ոչինչ չունի, որ չպատկանի ընկերոջը, նա նրան ցանկանում է այն նույնը, որ կցանկանա իրեն:

Ես մի մարդ գիտեի, որը, սուրբ այրերից խնդրելով ընկերոջ համար, հորդորում էր աղոթել նախ նրա, այնուհետև

տե իր համար: Գիտեմ և Պողոսին, որ առանց խնդրելու էլ պատրաստ էր հոգին տալ և սիրելիների համար դժոխք նետվել: Հրաբորբոք սիրտը պետք է այնպես սիրի, որպեսզի սիրվողին թվա, որ ոչ թե սիրելին է քեզ պարտապան, այլ դու ես նրան պարտապան այն բանի համար, որ նրա նման պարտապան ունես:

Սիրողը կամենում է ոչ միայն, որ ինքը հրամայի, այլև իրեն հրամայեն, նա ավելի է ուրախանում, երբ իրեն հրամայում են, քան երբ ինքն է հրամայում: Սիրողը կամենում է ավելի շատ տալ, քան ստանալ, ցանկանում է, որ ընկերն իրեն ավելի պարտք լինի, քան ինքը պարտք լինի ընկերոջը: Սիրողը ցանկանում է և՛ բարեգործություն անել սիրելիին, և՛ չի ցանկանում բարեգործ երեւալ, ցանկանում է և՛ բարեգործության մեղավորը լինել, և՛ չի ցանկանում դրա մեղավորը լինել:

Ես ձեզ խնդրում եմ իմ ասածներից չհասկանալ պարզապես ընկերներ, որոնք խնջույքի մասնակիցներ են և ընկերներ են կոչվում սոսկ անվանաբար. ով ընկեր ունի, որի մասին ես եմ խոսում, նա կհասկանա իմ ասածները:

Ընկերը իսկական կյանքից քաղցր է: Ահա թե ինչու շատերը, ընկերոջ կորստից հետո, չեն ցանկանում այլևս ապրել: Ճշմարիտ եմ ասում, ընկերը տենչալի է լույսից: Մեզ համար ավելի լավ է, որ արեգակը մարի, քան զրկվենք ընկերներից: Շատերը, որոնք թեպետև տեսնում են արևը, մնում են խավարում, իսկ ով բազում ընկերներ ունի, նա չի կարող որևէ վիշտ ունենալ: Սակայն եթե որևէ մեկի ընկերությունը քեզ վնասում է, հեռացրու նրան քեզանից:

Եթե մենք հաճախ հեռացնում ենք մեզնից մեր այս կամ այն մարմնամասերը, որոնք անհուսալի հիվանդ են և վնասում են մյուսներին, ապա նույնը կարելի է անել նաև ընկերների դեպքում: Ոչինչ այնքան վնասակար չէ, որքան

վատ ընկերակցությունը: Այն, ինչ ի վիճակի չէ անել անհարժեշտությունը, հաճախ կարող է անել բարեկամությունը՝ ինչպես վնասակար, այնպես էլ օգտակարություն տեսակետից:

Նա, ով բարեկամություն է անում թագավորի թշնամիների հետ, չի կարող բարեկամ լինել թագավորին: Ատելությունը հանուն Քրիստոսի շատ ավելի լավ է, քան բարեկամությունը հանուն Նրա: Երբ մեզ սիրում են հանուն Աստծո, մենք հանուն մեր պատվի դառնում ենք Նրա պարտապանը:

Այսպիսով, մենք բոլորս, նույնիսկ հանուն Քրիստոսի, ավելի ճիշտ՝ հանուն ինքներս մեզ, փողն արհամարհողներս, մտքում պատկերացնելով առ Քրիստոս ունեցած Պողոսի սերը, դողում ենք: Նա Քրիստոսին սիրում էր ոչ թե Քրիստոսի պարգևած բարիքների համար, այլ այդ վերջիններն էր սիրում հանուն Քրիստոսի և միայն մի երկյուղ ունենալով՝ չկորցնել առ Նա ունեցած սերը:

Սա նրա համար սարսափելի էր անգամ դժոխքից և պահպանել այդ սերը շատ ավելի տենչալի էր թագավորությունից:

Այսպիսով, երբ նա հանուն Աստծո նկատմամբ ունեցած սիրո պատրաստ էր դժոխք նետվել, զրկվել թագավորությունից, եթե առիթ լիներ, իսկ մենք անգամ ի գորու չենք արհամարհելու ներկա կյանքը, ապա արժանի՞ ենք մենք նրա ներբաններին՝ այդքան հեռու լինելով նրա հոգու վեհությունից:

Այդ պատճառով էր Քրիստոս ասում. «Ով իր անձը կորցրեց ինձ համար, այն կգտնի» (Մատթ. 10, 39), և՝ «Ով որ ինձ կխոստովանի մարդկանց առաջ, ես էլ կխոստովանեմ նրան իմ չոր առաջ, որ երկնքում է» (Մատթ. 10, 32):

Իսկապես, մեծ է այդ քաջություն գինը, այն գրեթե գե-

րագանցում է բնությունը: Եվ դա շատ լավ գիտեն նրանք, ովքեր արժանացել են հիշյալ պսակին: Ոչ մի խոսք ի գորու չէ արտահայտել այդ սխրանքը. հոգուց այդքան քաջություն պահանջող և այդքան արժանի զարմանքի: Եվ, սակայն, այդ հրաշալի սխրանքը, ըստ Պողոսի, ոչ մի օգուտ չի բերի սիրո բացակայությամբ, թեկուզև այն միացված լինի ընչազրկությունը:

Ինչու՞ այդպես ասաց (Պողոսը), կփորձեմ հիմա բացատրել, նախապես լուծելով այն խնդիրը, թե ինչու մարդը, որ բաժանում է իր ողջ ունեցվածքը կարիքավորներին, կարող է սեր չունենալ:

Որպեսզի մարդը, որ պատրաստ է խարույկ բարձրանալ և հոգևոր շնորհներ ունի, չսիրի, դեռ հնարավոր է ենթադրել, սակայն նա, ով ոչ միայն տալիս է ունեցվածքը, այլև օգտագործում է այն ուրիշներին կերակրելու համար, ինչպես՞ կարող է չսիրել: Ի՞նչ կարելի է ասել այդ մասին: Կամ այն, որ նա գոյություն չունեցողը պատկերացնում է որպես գոյություն ունեցող, կամ նա սիրում և անում է այն, երբ ցանկանում է որևէ բանի անչափությունը պատկերացնել:

Այսպես, օրինակ, գաղատացիներին ուղղված ուղերձում նա ասում է. «Եթե անցնիսկ մենք կամ երկնքից մի հրեշտակ ավետարանի ձեզ ավելի, քան այն, որ մենք ավետարանեցինք ձեզ, անոյալ լինի» (Գաղատ. 1, 8), թեպետև ո՛չ ինքը, ո՛չ էլ հրեշտակը չէին կարող այդ անել, սակայն որպեսզի դա ցույց տա չափազանցված տեսքով, նա այնպես է ցույց տալիս, որ հնարավոր չէ, որ այդպես կատարվի:

Նույն կերպ, երբ առ հոմեացիներ ուղերձում ասում է. «Ո՛չ հրեշտակները և ո՛չ իշխանությունները և ո՛չ մի ուրիշ արարած չի կարող մեզ բաժանել Աստծո այդ սիրուց, որ կա Քրիստոս չխոստով» (Հռոմ. 8, 38-39), թեպետև հրեշտակները չեն կա-

րող այդ անել, այնուամենայնիվ, առաքյալն այստեղ ևս պատկերացնում է գոյությունն չունեցողը ճիշտ այնպես, ինչպես և ո՛չ մի ուրիշ արարած, հետագա խոսքերում, թեպետ և, անշուշտ, ոչ մի ուրիշ արարած չկա, քանի որ անվանելով բոլոր բարձրություններն ու խորությունները՝ դրանով իսկ ընդգրկում է բոլոր արարածներին, սակայն, որպեսզի ցույց տա իր սիրո անհունությունը, առավել ևս այստեղ ենթադրում է գոյություն չունեցողը:

Նույն բանը նա անում նաև այստեղ, ասելով, որ թեկուզև «որևէ մեկը ամեն ինչ տա, բայց սեր չունենա, ոչ մի օգուտ չի ունենա» (Ա Կորնթ. 13, 3):

Այսպիսով, կամ այս պետք է հասկանալ, կամ այն, որ առաքյալն ուզում է, որպեսզի տվողները միասնական լինեն ստացողների հետ և ոչ թե պարզապես առանց կարեկցանքի տան, այլ խղճալով կարիքավորներին, խոնարհումով գթաշարժվեն և նրանց պետքերին իսկապես կարեկցեն:

Չէ՞ որ հենց այդ պատճառով է Աստված ողորմությունը հաստատել: Կերակրել աղքատներին Աստված կարող է նաև առանց դրա, բայց կամենում է, որպեսզի մենք կապվենք սիրո համագործակցությամբ և միմյանց բորբոքենք սիրով: Նա պատվիրել է, որ կերակրենք իրար: Ահա թե ինչու մի տեղ ասվում է. «ավելի լավ է բարի խոսքը, քան ողորմությունը և այդ խոսքը ավելի է ողորմությունից» (Միրաք. 18, 16-17): Եւ ինքը (Աստված) է ասում. «Ողորմություն եմ կամենում և ոչ՝ զոհ» (Մատթ. 9, 13):

Քանի որ սովորաբար մենք սիրում ենք նրանց, ում համար բարի գործ ենք կատարում, իսկ բարերարություն ստացողները բարեկամաբար են տրամադրված բարերարների հանդեպ, ապա հաստատելով բարեկամության միությունը՝ Աստված այդպիսի օրենք դրեց: Եվ որպեսզի դուք իմանաք, թե ինչքան մեծ և կարևոր է այդ առաքի-

նությունը, ապա այն արտահայտենք խոսքով, քանի որ այն որևէ տեղ չի երևում գործով, և մտովի պատկերացնենք, թե ինչ բարի գործեր կկատարվեին, եթե այն ամենուր առատ լիներ:

Չէ՞ որ այդ ժամանակ ո՛չ օրենքների, ո՛չ դատարանների, ո՛չ պատիժների, ո՛չ մահապատժի, ո՛չ էլ որևէ նման բաների կարիք կլիներ:

Իրոք, եթե բոլորը սիրեին և սիրված լինեին, ապա ոչ ոք ոչ մեկին չէր նեղացնի. սպանությունները, հայհոյանքը, պատերազմները, բարկությունը, հափշտակումները, շահախնդրությունները և բոլոր մյուս արատները կանհետանային, և չարը միայն անվանապես գոյություն կունենար:

Դա չեն կարող անել անգամ հրաշքները, հակառակը՝ անզգույշ մարդկանց կհասցնեն փառասիրության և ամբարտավանության: Եվ ահա թե որն է զարմանալի սիրո մեջ. այնժամ, երբ բոլոր բարիքները միահյուսված են չարի հետ, օրինակ, ընչազուրկը, հաճախ նկատի ունենալով իր աղքատությունը, հպարտանում է, ճարտարախոսը արատավորվում է փառասիրությամբ, խոնարհը հենց այն պատճառով, որ այդպիսին է, հաճախ հոգու խորքում ինքն իրեն փառաբանում է, մինչդեռ սերն ազատ է այդպիսի արատներից, որովհետև ոչ ոք երբեք չի մեծամտանա սիրած էակի հանդեպ:

Եվ պատկերացրու, թե սերը եզակի չէ, և բոլորը միատեսակ են սիրում, և այդժամ կտեսնես սիրո ուժը: Ի միջի այլոց, եթե հարմար է, սկզբում պատկերացրու մեկ սիրողի և մեկ սիրվածի, ճիշտ այնպիսի սիրողի, որ իսկապես սիրում է: Այդպիսի մարդը երկրի վրա կապրի այնպես, ինչպես երկնքում՝ ամենուր վայելելով խաղաղություն և իր համար անհամար պսակներ հյուսելով: Այդպիսի մարդը իր հոգին անարատ կպահի և՛ նախանձից, և՛ բարկությունից, և՛

զրպարտանքից, և՛ հպարտութիւնից, և՛ փառասիրութիւնից, և՛ չարակամութիւնից, և՛ սիրուն անարժան բոլոր բաներից, և՛ բոլոր արատներից:

Նման այն բանին, որ ոչ ոք իրեն չարիք չի պատճառում, այդպիսի մարդը նույնը չի անի իր մերձավորին: Եվ այդպիսին լինելով՝ նա կքայլի երկրի վրա՝ կանգնելով Գաբրիելի կողքին: Ահա թե ով է նա, ով սեր ունի:

Իսկ նա, ով նշաններ է ստեղծում և իմացութեամբ կատարյալ է, սակայն զուրկ է սիրուց, թեկուզև հազարավոր մեռյալների է հարութիւն տվել, ոչ մի օգուտ չի բերի՝ լինելով բաժանված բոլորից և Աստծո արարածներից որևէ մեկի հետ միութիւն չկազմելով:

Այդ պատճառով և Քրիստոս ասաց, որ առ ինքն իսկական սիրո նշանը մերձավորի հանդեպ սերն է:

Եթե, ասում է, սիրում ես ինձ, Պետրոս, «ավելի, քան որսնք, արածացրու իմ ոչխարներին» (Հովհ. 21, 15-17):

Տեսնում ես, որ այստեղ Նա վերստին հասկացնել է տալիս, որ սերն ավելին է, քան նահատակութիւնը:

Եթե մեկն ունենա սիրելի որդի, որի համար պատրաստ է անգամ հոգին տալ, իսկ որևէ մեկը սիրի հորը, սակայն ուշադրութիւն չդարձնի որդուն, ապա նա խորապես կդառնացնի հորը, այնքան, որ իր նկատմամբ էլ սեր չի զգա՝ ի հետևանք որդու նկատմամբ եղած արհամարհանքի:

Եթե այդպես է հոր և որդու վերաբերյալ, ապա առավել ևս է Աստծո և մարդկանց վերաբերյալ, որովհետև Աստված բոլոր հայրերից սիրառատ է:

Ահա թե ինչու ասելով՝ «այս է մեծը և առաջին պատվիրանը. պիտի սիրես քո Տեր Աստծուն», ավելացրեց՝ «և երկրորդը, - առանց ընդմիջման շարունակելով. արա մնան է. պիտի սիրես քո ընկերոջը, ինչպես քո անձը» (Մատթ. 22, 37-39):

Եվ տես, որ Նա գրեթե նույն խստապահանջութեամբ

կամենում է այս պատվիրանի կատարումը:

Աստծո մասին Նա ասում է. «քո ամբողջ սրտով», իսկ քո մերձավորի մասին՝ «ինչպես քո անձը», որ համազոր է քո ամբողջ սրտով արտահայտութեանը:

Եթե դա ճշտութեամբ կատարվեր, ո՛չ ծառա կլիներ, ո՛չ ազատ, ո՛չ ղեկավար, ո՛չ ենթակա, ո՛չ հարուստ, ո՛չ աղքատ, ո՛չ փոքր, ո՛չ մեծ, երբեք հայտնի չէր լինի նաև սատանան, չեմ ուզում այդպես ասել, բայց եթե դրա նման մեկը լիներ, կամ եթե սատանաների թիվը անհամար լիներ, նրանք ոչ մի զորութիւն չէին ունենալու սիրո տիրապետութեան դեպքում:

Իրոք, չոր խոտն ավելի հեշտ կդիմանա կրակին, քան սատանան սիրո բոցերին:

Սերը պինդ է պատից, ամուր է պողպատից, և եթե դու ուրիշ ամուր նյութ ցույց տայիր, սիրո ամրութիւնը կգերազանցեր նաև դրան:

Նրան չի կարող հաղթել ո՛չ հարստութիւնը և ո՛չ էլ աղքատութիւնը, ավելի ճիշտ կլինի ասել՝ չէր լինի ո՛չ աղքատութիւն, ո՛չ ավելորդ հարստութիւն, եթե սեր լիներ, կունենայինք և՛ դրանից, և՛ մյուսից միմիայն լավը, որովհետև վերջինից կունենայինք առատութիւն, իսկ առաջինից՝ անխռովութիւն, և ո՛չ հարստութեան հոգսը կունենայինք, ո՛չ աղքատութեան կարիքավորութիւնը:

Սակայն ի՞նչ կարող եմ ասել սիրո օգուտների մասին: Մտածիր, թե ինքնին ինչ մեծ բարիք է սերը, ինչ ուրախութիւն է պարգևում և ինչ երանութիւն է հոգուն հաղորդում: Հենց այդ է սիրո յուրահատուկ առավելութիւնը: Մյուս բոլոր առաքինութիւնները միահյուսված են վշտալի վիճակների հետ, ինչպես, օրինակ, պահեցողութիւնը, ողջախոհութիւնը, հսկումը՝ նախանձը, տռիփը, հպարտութիւնը, իսկ սերը, բացի օգուտից, ունի նաև մեծ

հաճույք և ոչ մի տրտմութիւն, և ինչպէս բարի մեղու, բոլոր տեղերից բարիք հավաքելով, դրանք հյուսուում է սիրողի հոգուն: Ով որ գտնվում է ստրկութեան մեջ, այն ստրկութեանը ազատութեանից հաճելի է դարձնում, որովհետև սիրողը այնքան չի ուրախանում, երբ հրամայում է, որքան այնժամ, երբ ենթարկվում է:

Անշուշտ, հրամայելը հաճելի է: Սակայն սերը փոխում է իրերի բնույթը և բոլոր բարիքներով օգնութեան է հասնում, այն սիրալիր է բոլոր մայրերից, հարուստ է բոլոր թագուհիներից և բոլոր դժվարութեանները դարձնում է հեշտ և հարմար՝ բոլոր առաքինութեանները մեզ համար դարձնելով հրապուրիչ, իսկ արատները՝ ծայրագույնս անհաճո:

Տես՝ ինչքի կորուստը տխուր բան է, իսկ սերը դա նույնիսկ դարձնում է հաճելի, ուրիշի ունեցվածքը վերցնելը հաճելի է թվում, սակայն սերը թույլ չի տալիս, որ այն հաճելի լինի, այլ հարկադրում է խուսափել դրանից՝ որպէս ցածր արարք:

Բամբասանքը բոլորին հաճելի գործ է թվում, մինչդեռ սերը այն դարձնում է հակակրեւի, իսկ գովքը՝ հաճելի, որովհետև մեզ համար ոչինչ այնքան հաճելի չէ, որքան սիրած էակին գովաբանելը:

Նույն կերպ՝ զայրույթն ունի որոշ հաճելիութիւն, սակայն սիրելիս այն արդեն չքանում է, քանի որ բարկութեան բոլոր ջղերն արդեն սպանված են, և եթե սիրելին տրտմեցնում է սիրածին, զայրույթը ոչ մի բանով չի արտահայտվում, այլ լինում են արցունքներ, հորդորներ և պաղատանքներ՝ այնքան հեռու է սիրողը զայրույթից: Եթե նա իր հանդեպ մեղանշում է տեսնում, ապա վշտանում և տկարանում է, սակայն հենց այդ վիշտը շատ ավելի հաճույք է պատճառում, որովհետև և՛ արցունքները, և՛ տխրութիւնը հաճելի են ցանկացած ծիծաղից և խնդրութեանից:

Իսկապէս այնքան հաճույք չի ստանում ծիծաղողը, որքան սիրած էակի համար արցունք թափողը, իսկ եթե ասածիս չես հավատում, արգելիր նրանց արտասովել և դու կտեսնես, որ նրանք այնքան վատ են տրամադրվում, կարծես անդառնալի դժբախտութիւն է պատահել:

Սակայն կարող ես ասել, թե սերը նաև պիղծ հաճույքներ ունի: Վերջացրու՛, մի՛ չարախոսիր, ո՛վ մարդ. այդ կրքից ավելի մաքուր հաճույք չկա, քան իսկական սերն է պարգևում: Ինձ մի պատմիր այդ ցածրակարգ, փողոցային սիրո մասին, որն ավելի շուտ հիվանդութիւն է, քան սեր, այլ խոսիր այն սիրո մասին, որ պահանջում է Պողոսը, այն սիրո, որ ցանկանում է սիրելիի լավը, և կտեսնես, որ այդպիսի սեր ունեցողը գորովալից է հորից: Եվ ինչպէս փողի հանդեպ կիրք ունեցողները չեն կարողանում զսպել այն և համաձայն են նեղութիւն կրել, քան տեսնել դրանց նվազումը, այնպէս և նա, ով ուրիշի հանդեպ սեր է տածում և համաձայն է հազար նեղութիւն ունենալ, քան տեսնել, որ սիրելիին վատ բան է պատահել:

Ի՞նչ կարող ես ասել՝ մի՞ թե պետք է ատել թշնամիներին և հեթանոսներին: Պետք է ատել, միայն ոչ թե նրանց, այլ նրանց վարդապետութիւնը, ոչ թե մարդուն, այլ նրանց գործունեութիւնը և ապականված կամքը:

Մարդը Աստծո արարած է, իսկ մոլորութիւնը սատանայի գործն է: Չէ՞ որ եթե հարկ է ատել Աստծո թշնամիներին, ապա պետք է ատել ոչ միայն անօրեններին, այլև մեղանշածներին, իսկ այդ դեպքում մենք գաղաններից վատը կլինենք՝ փարիսեցիների նման երես թեքելով բոլորից և հպարտութեամբ մեծամտանալով:

Սակայն այդպէս չի պատվիրել Պողոսը, այլ՝ «խրատեսցե՛ք ստահակներին, մխիթարեցե՛ք արտնդաժներին, պատուպարա՛ն եղեք տկարներին, համբերատա՛ր եղեք միմյանց հանդեպ»:

(Ա Թեսաղ. 5, 14): Բայց այդ դեպքում կհարցնես, թե ի՞նչ են նշանակում նրա հետևյալ խոսքերը. «Եթե որևէ մեկը չհնազանդվի այս թղթի մեջ ասած խոսքիս, Առեցե՛ք նրան և մի հարաբերվե՛ք նրա հետ» (Բ Թեսաղ. 3, 14):

Ճշմարիտ է նաև ինչ ասված է եղբայրների մասին, սակայն այս դեպքում ևս ոչ թե հենց այնպես, այլ խոնարհուլթյամբ: Այդ խոսքերից մի անջատիր հաջորդողները՝ ավելացնելով և այն, ինչ ասվում է շարունակուլթյան մեջ. ասելով՝ «մի՛ հարաբերվե՛ք», նա հավելում է. «Բայց նրան որպես թշնամի մի՛ համարեք, այլ խրատեցե՛ք որպես եղբայր» (Բ Թեսաղ. 3, 15):

Տեսնու՞մ ես, որ նա պատվիրում է ատել վատ արարքը և ոչ թե՛ մարդուն: Սատանայի գործը մեզ իրարից բաժանելն է, նա մեծ ջանք է թափում, որպեսզի ոչնչացնի սերը՝ դրանով խոտորելով ուղղվելու ճանապարհը և պահելով մոլորության մեջ, իսկ քեզ գցի անհավատության և թշնամանքի մեջ՝ այդ կերպ փակելով փրկության ուղին:

Եթե բժիշկն ատի և երես թեքի հիվանդից, իսկ հիվանդը խուսափի բժշկից, ապա կարո՞ղ է հիվանդը բուժվել, երբ բժիշկ չկանչի, իսկ բժիշկը չայցելի նրան:

Ինչու՞ ես դու խուսափում և երես թեքում նրանից: Որովհետև նա պի՞ղծ է: Հենց այդ պատճառով հարկ է գալ և բժշկել, որպեսզի վերականգնվի հիվանդի առողջութունը: Թեկուզև նա տառապի անբուժելի հիվանդությամբ, միևնույն է, դու պետք է քո գործն անես: Հուզան նույնպես բռնված էր անբուժելի հիվանդությամբ, սակայն Աստված չդադարեց նրան բժշկել:

Այդ պատճառով դու մի թուլացիր: Թեկուզև ջանքեր թափելով դու անկարող ես նրան ազատել պղծութունից, միևնույն է, դու պարզև կստանաս՝ կարծես թե ազատել ես նրան և կստիպես նրան զարմանալ քո խոնարհուլթյամբ՝

դրանով իսկ փառաբանելով Աստծուն: Թեկուզև հրաշքներ գործես, թեկուզև հարուլթյուն տաս մեռյալներին, թեկուզև նման այլ բաներ կատարես, հեթանոսները երբեք այդքան չեն զարմանա քեզ վրա, որքան երբ քեզ տեսնեն այդպես խոնարհ, այդքան բարի և սիրալիր վարվեցողությամբ:

Իսկ դա պակաս կարևոր է, որովհետև շատերն այդ կերպ կարող են ազատվել արատներից: Ոչինչ այնպես չի կարող գրավել, քան սերը:

Այլ բաների պատճառով, այսինքն՝ նշանների և հրաշքների, կարող է և նախանձեն քեզ, իսկ դրա (սիրո) պատճառով կսկսեն և՛ զարմանալ, և՛ սիրել, իսկ սիրելով՝ կամաց-կամաց կընդունեն ճշմարտությունը:

Ի դեպ, եթե հեթանոսը շուտափուլթ հավատացյալ չի դառնում, մի զարմացիր և մի շտապիր, ամեն ինչ փութով մի պահանջիր, թող որ նա առայժմ գովաբանի, սիրի, և կամաց-կամաց կհասնի և դրան:

Այսպիսով, եթե սերը առաքիլնության մեղավորն է, ապա ջանք չխնայենք, որ նա բնակվի մեր հոգիներում, որպեսզի նա մեզ պարզև բազում բարիքներ, և որպեսզի մենք մշտապես հավաքենք նրա հավերժ ծաղկող և երբեք չթառամող առատության պտուղները: Այդ կերպ մենք հասուկլինենք և հավերժական բարիքներին, որոնցով և կարժանանանք մենք բոլորս՝ բարեչնորհ և մարդասեր մեր Տեր Հիսուս Քրիստոսին, Նրանով և Հորը և Սուրբ Հոգուն՝ փառք այժմ և միշտ, և հավիտյանս հավիտենից. Ամեն:



ԱՂՈԹՔԻ ՄԱՍԻՆ

Մեծ բարիք է աղոթքը, եթե լինում է երախտագիտութ-
յան զգացումով, եթե մենք սովորում ենք երախտա-
գիտություն հայտնել Աստծուն ոչ միայն ստանալիս
(խնդրածը), այլև չստանալիս:

Աստված և՛ տալիս (խնդրածը) և՛ չի տալիս, և՛ այն, և՛
այս անում է օգուտի համար, այնպես որ, ստացար կամ
չստացար՝ դու ստանում ես շնորհիվ այն բանի, որ չստա-
ցար, հաջողեցիր կամ թե չհաջողեցիր՝ դու հաջողեցիր
շնորհիվ այն բանի, որ չհաջողեցիր:

Երբեմն օգտակար է չստանալը: Եթե մեզ համար հա-
ճախ օգտակար չլիներ չստանալը, Աստված անկասկած
կտար. այնինչ օգուտով չստանալը նշանակում է ստանալ:
Եկեք չտրտնջանք խնդրածն ստանալու ուշացման համար,
այլ այդ առիթով ցուցաբերենք մեծ համբերատարություն
և կամք:

Մի՞թե Աստված չէր կարող ավելի շուտ (կատարել) մեր
խնդրածը: Բայց Նա չի շտապում, որպեսզի հենց մեզնից
առիթ ստանա արդարաբար արժանացնել մեզ Իր խնամ-
քին:

Այդ պատճառով կստանանք մեր խնդրածը թե չենք
ստանա, համառ լինենք մեր խնդրածներով և երախտագետ
լինենք ոչ միայն հաջողելու, այլև չհաջողելու դեպքում:

Չստանալ, երբ այդպես է կամենում Աստված, կնշանա-
կի ոչ պակաս, քան ստանալ, որովհետև ինքներս այնպես
չգիտենք, թե ինչն է օգտակար մեզ համար, ինչպես Նա գի-
տի:

Ուրեմն, կստանանք թե չենք ստանա, մենք պետք է հա-

վասարապես երախտապարտ լինենք և ուրախությամբ ըն-
դունենք այն, ինչ Նրան հաճո է:

Այն պատճառով չէ Աստված դանդաղում կատարել մեր
խնդրածները, որ մերժում է դրանք, այլ կամենում է ուսու-
ցանել մեզ անհողդողություն և գրավել առ Ինքը: Այդ-
պես է վարվում որդուն քնքշորեն սիրող հայրը՝ հաճախ
հավանություն չտալով որդու խնդրանքներին, ոչ թե այն
պատճառով, որ չի ցանկանում տալ, այլ դրանով կամենում
է նրան համառությամբ ամրապնդել:

Աղերսածն ստանալը կախված է, առաջին՝ այն բանից,
եթե մենք արժանի ենք ստանալու, երկրորդ՝ եթե մենք ա-
ղոթում ենք Աստծո օրենքների համաձայն, երրորդ՝ եթե ա-
ղոթում ենք անդադար, չորրորդ՝ եթե առօրեական բան
չենք խնդրում, հինգերորդ՝ եթե մեր կողմից կատարում
ենք, ինչ հարկ է, և վերջապես՝ եթե օգտակար բան ենք
խնդրում: Ինչպես այս պայմաններից է կախված աղոթքի
լսվելը, այդպես էլ հակառակ պայմաններից է կախված
չլսվելը, թեկուզև աղոթողները արդարամիտ լինեն:

Ո՞վ էր Պողոսից ավելի արդար: Բայց երբ անօգուտ բան
էր աղաչում, չլսվեց. «Եվ դրա համար, - ասում է առաքյալը, -
երեք անգամ աղաչեցի Տիրոջը... բայց ասաց ինձ. «Իմ շնորհը քեզ
բավ է» (Բ Կորնթ. 12, 8-9):

Նմանապես ո՞վ է ավելի արդար, քան Մովսեսը: Եվ նա
նույնպես չլսվեց, և Աստված նրան ասաց՝ բավական է (Բ
Օր. 3, 26):

Քանի որ նա խնդրում էր առ այն, որ ինքը մտնի ավետ-
յաց երկիր, իսկ դա անօգուտ կլիներ, ապա և Աստված
թույլ չտվեց:

Բացի այդ՝ մենք չենք լսվում նաև այլ պատճառով. լի-
նելով մեղքերի մեջ հենց այն ժամանակ, երբ խնդրում ենք:

Այդ մասին Աստված ցույց է տալիս, երբ հրեաների մա-

սին ասում է Երեմիային. «Իսկ դու մի՛ աղոթիր այդ ժողովրդի համար... Չե՞ս տեսնում, թե ինչե՛ր են կատարում» (Երեմիա 7, 16-17): Նրանք, ասում է Նա, պիղծ բաներ են անում, իսկ դու նրանց համար խնդրում ես: Բայց ես չեմ լսելու քեզ: Հավասարապես, երբ մենք մեր թշնամիների դեմ ինչ-որ բան ենք խնդրում, ապա ոչ միայն չենք լսվում, այլև բարկացնում ենք Աստծուն:

Աղոթքը բժշկություն է, սակայն երբ չգիտենք ինչպես օգտագործել այդ բժշկությունը, ապա չենք կարող օգտվել նրա բուժական զորությունից:

Այսպիսով, մեծ բարօրություն է աղոթքի մշտականությունը, ինչպես ուսանում է մեզ քանանուհու հետ կատարվածը. իրոք, այն, ինչին համաձայն չէր Քրիստոս, երբ նրան առաքյալները խնդրում էին, քանանուհին հաջողեց՝ իր համառությունը հասնելով խնդրածի իրագործմանը:

Աստված շատ ավելի կամենում է, որ մենք խնդրենք մեր մեղքերի համար, քան ուրիշներն անեն մեր փոխարեն: Երբ մենք խնդրում ենք մարդկանց, մեզ հարկ է լինում և՛ դրամ ծախսել, և՛ ստրկաբար շողոքորթել, և՛ շատ անգամներ գնալ-գալ, և՛ նեղություններ քաշել, որովհետև հաճախ անհնար և անմատչելի է լինում անմիջապես զրուցել վերևում կանգնածների հետ, այլ նախ անհրաժեշտ է լինում և՛ դրամով, և՛ զանազան զրույցներով գրավել նրանց ծառաների, կառավարիչների և վստահված անձանց ուշադրությունը և նրանց միջոցով ստանալ խնդրածը:

Աստծո համար այդպես չէ: Երբ Նրան խնդրում են, Նա կարիք չի զգում միջնորդների, և այնքան հակված չէ ողորմածություն, երբ խնդրում են ուրիշները (մեզ համար), որքան այնժամ, երբ մենք ինքներս ենք Նրան խնդրում: Աստված կամենում է, որ մենք հաճախ խնդրենք Իրեն, և դրա համար շատ շնորհակալ է լինում, որովհետև Նա միակ

պարտատերն է, ով, երբ Իրենից խնդրում են, շնորհակալ է լինում, և տալիս է այն, ինչ մենք պարտք չենք տալիս:

Իսկ երբ տեսնում է ուժգին և ջանասեր խնդրողին, ապա տալիս է և այն, ինչ չի ստացել մեզանից, իսկ երբ տեսնում է ծուլին, ապա Ինքն էլ է հապաղում, բայց ոչ այն պատճառով, որ չի ցանկանում տալ, այլ որովհետև Նրան հաճելի է, երբ մենք ենք խնդրում:

Ոչ այն պատճառով է Աստված հապաղում, որ ատում կամ երես է թեքում մեզանից. Նա հապաղում է տալ խնդրածը՝ պարզևի ուշացումով ցանկանալով մշտապես մեզ պահել Իր կողքին:

Այդպես են վարվում նաև քնքշորեն սիրող հայրերը. նրանք նույնպես խնդրանքի կատարման հետաձգումով ցանկանում են անհոգ երեխաներին ջանասիրության վարժեցնել:

Լավում է քո խնդրանքը: Երախտապարտ եղիր, որ լսվել ես: Չի՞ լսվել: Եղիր համառ, որպեսզի լսվես: Դու միջնորդների կարիք չունես, կարիք չունես ո՛չ նեղություն քաշելու, ո՛չ որևէ մեկին շողոքորթելու. ընդհակառակը, թեկուզև կատարելապես մենակ լինես, թեկուզև չունենաս հովանավոր, դու անպայմանորեն կհասնես քո ուզածին, եթե ինքդ խնդրես Աստծուն:

Եթե մարդկանց դեպքում լինում է այնպես, որ չնայած բյուր վիրավորանքներին, երբ և՛ առավոտյան, և՛ ցերեկը, և երեկոյան գալիս ենք մեզ վրա զայրացածների մոտ, մենք համառությամբ ու ամենօրյա այցելությամբ հեշտությամբ մարում ենք նրանց աչքերի թշնամանքը, ապա առավել ևս այդպես է Աստծո դեպքում:

Սովորաբար այդպիսի ակնածություն չունի Աստված, երբ Նրան մեր փոխարեն խնդրում են ուրիշները, քան երբ մենք ինքներս ենք Նրան խնդրում, թեկուզև լեցուն լինենք

անհամար չարություններով: Թող ինձ լսեն նրանք, ովքեր աղոթում են անփութորեն և տրտնջում խնդրած պարզևի ուշացման համար:

Երբ ես ասում եմ՝ կանչիր Աստծուն, խնդրիր Նրան, աղաչիր Նրան, դու պատասխանում ես՝ ես խնդրեցի մեկ, երկու, երեք, տասը, հարյուր անգամներ և չստացա:

Սակայն մի դադարիր, քանի դեռ չես ստացել. երբ կստանաս, այդժամ դադարիր, կամ ավելի ճիշտ՝ այդժամ նույնպես մի դադարիր, այլ մնա աղոթքի մեջ. եթե չես ստացել, ապա աղոթիր, որ ստանաս, եթե արդեն ստացել ես, շնորհակալ եղիր, որ ստացել ես: Շատերը մտնում են եկեղեցի, հազարավոր աղոթքներ են անում, և դուրս են գալիս՝ չիմանալով, թե ինչ են ասել. շրթունքները շարժվում են, իսկ ականջը չի լսում:

Դու ինքդ չես լսում քո աղոթքը, ուզում ես, որ Աստված լսի՞: Ես ծնրադրեցի, ասում ես: Սակայն միտքդ հեռու կողմեր թռավ: Մարմինդ եկեղեցու ներսում էր, իսկ ոգիդ՝ դրսում, շրթունքներդ աղոթք էին մրմնջում, իսկ ուշք ու միտքդ տոկոսներ էր հաշվում, պարտավորություններ, առևտրական շրջանառություններ, ձեռքբերումներ, ընկերական հավաքույթներ:

Ստանան, լինելով նենգ, և իմանալով, որ աղոթելիս մեծ հաջողությունների ենք հասնում, այդ պահին գալիս է մեզ մոտ. չէ՞ որ հաճախ՝ անհոգորեն մահճակալին պառկած, մենք ոչ մի բանի մասին չենք մտածում, իսկ գալով աղոթքի՝ հենց այդ պահին մեր գլխին են թափվում բազում մտածումներ, որպեսզի մեզ զրկեն աղոթքի պտուղներից և դրանք կատարելապես ապարդյուն դարձնեն:

Եվ հաճախ է պատահում, որ ավարտելով աղոթքը՝ մենք հեռանում ենք՝ չլսելով այն, ինչ ասել ենք:

Այդպիսով, երբ նկատում ենք, որ այդպես է, ապա ան-

միջապես պետք է կրկնենք աղոթքը, իսկ եթե մեզ հետ նորից պատահում է նույնը, ապա վերստին պետք է աղոթենք երրորդ, չորրորդ անգամ և չդադարեցնենք այնքան ժամանակ, քանի դեռ խնամքով և սթափ հոգով սիրտներս Աստծո առջև չենք բացել:

Եվ եթե սատանան նկատի, որ ավելի շուտ չենք ավարտում աղոթքը, քան այն արտասանել ենք ջանադրաբար և զգաստ հոգով, ապա վերջապես մեզ կազատի իր խարդավանքներից՝ իմանալով, որ իր խորամանկությունները ոչ մի նպատակի չեն հասել՝ բացի այն, որ մենք միևնույն աղոթքը բազմիցս կրկնել ենք:

Եթե գալով որևէ մարդու մոտ, մեր մեջ հայտնաբերում ենք այնպիսի ինքնասուզություն, որ անգամ չենք նկատում կողքի կանգնածներին, այլ կենտրոնանալով խորհում ենք միայն այն մասին, ում մոտ եկել ենք, ապա առավել ևս նույնը պետք է անենք Աստծո հանդեպ՝ պետք է ուշադիր լինել աղոթելիս և չմտածել այլ բաների մասին:

Եթե լեզուն արտասանում է բառեր, իսկ միտքը թափառում է այլուրեք՝ խորհելով տան և հասարակաց գործերի մասին, ապա մեզ համար ոչ միայն օգուտ չի լինի, այլ հակառակը՝ դատապարտությունը ավելին կլինի:

Եթե մարդկանց այդքան ժամանակ ենք հատկացնում՝ ծառայելով բանակում, տանելով բազում դժվարություններ և ստրկաբար կատարելով պարտավորություններ, և, վերջի վերջո, հաճախ կորցնում ենք անգամ հույսը, ապա մի՞թե մեր Տեր Աստծու համար, Ումից անպայմանորեն կստանանք պարգևներ, առավել շատ արդյունքներ, արիություն չունենք նույն կերպ վարվելու: Եվ ի՞նչ պատժի արժանի բան է դա:

Չէ՞ որ անգամ չստանալու դեպքում, Աստծու հետ մշտական զրույցն ինքնին բազում բարիքներ է պարունա-

կում: Իսկապես մեծ բարիք է աղոթելը և դրա միջոցով Աստծու հետ զրուցելը: Եթե առաքիլնի մարդու հետ զրուցելը օգտակար է, ապա ինչ հաճույք է ստանում նա, ով արժանանում է Աստծո հետ զրուցելուն:

Անմատուցյու^ն չէ ծառաներին հրամայել, որ անդուլ ծառայեն մեզ, իսկ ինքներս փոքր-ինչ ժամանակ չենք տրամադրում Աստծուն:

Դու քո օգուտը չգիտես, մա՛րդ, և հաճախ վնասակարն ու խաբեականն ես խնդրում: Սակայն նա, որ ավելի է մտահոգ քո փրկությամբ, ոչ թե քո աղոթքներին է ուշք դարձնում, այլ դրանից առաջ նախատեսում է քո օգուտը:

Արդարև, եթե մարմնավոր հայրերը իրենց երեխաներին իսկույն չեն տալիս նրանց խնդրածը և ոչ այն պատճառով, որ զանցառում են խնդրողին, այլ որովհետև, հակառակը, ավելի հոգածու են, ապա առավել ևս այդպես է վարվում Աստված, Ով բոլորից շատ է սիրում և բոլորից շատ գիտի, թե որն է մեզ համար օգտակար:

Երբ դու նվազեցնում ես աղոթքիդ ջերմեռանդությունը, որովհետև չես ստանում, ապա հիշիր, թե քանի անգամ քեզ դիմեց աղքատը, և դու չլսեցիր նրան, մինչդեռ նա դրա համար չատեց և չվիրավորեց քեզ, ընդ որում դու դա արեցիր դաժանորեն, իսկ Աստված անում է մարդասիրաբար:

Այսպիսով, եթե դու ինքդ քո դաժանություն պատճառով չլսեցիր թշվառին և քեզ մեղավոր չես ճանաչում, ապա ինչպե՞ս ես մեղադրում Տիրոջը, որ մարդասիրաբար ծառային զանցառում է:

Եթե երանելի Դավիթը, լինելով թագավոր և խրված հոգսերի ու բազմազբաղության մեջ, օրվա ընթացքում յոթ անգամ աղոթում էր Աստծուն, ապա ի՞նչ արդարացում և ներում ունենք մենք, որ այդքան պարապ ժամանակ ու-

նենք և Նրան մշտապես չենք աղոթում, չնայած անգամ այն բանին, որ կարող ենք դրանից մեծ օգուտներ ստանալ:

Անհնար, իսկապես անհնար է, որ անհրաժեշտ ջանասիրությամբ աղոթող և Աստծուն անդուլ կանչող մարդը երբևէ ընկնի մեղքի մեջ: Ով բորբոքել է միտքը և գրգռել հոգին՝ տեղափոխվել է երկինք, և այդպիսով կանչել իր Տիրոջը. ով, հիշելով մեղքերը, զրուցում է Նրա հետ և դրանց համար թողություն խնդրում և աղերսում է Նրանից ողորմածություն և ներողամտություն, նա, տրվելով այդպիսի զրույցի, հետաձգում է առօրյա բոլոր հոգսերը, ոգևորվում է և մարդկային կրքերից բարձրանում:

Ակունքի ջրերը այդքան ծաղկուն չեն դարձնում այգին, ինչպես արցունքի ակունքը, ոռոգելով աղոթքի ծառը, այն հասցնում է մեծագույն բարձրության և աղոթողին կանգնեցնում Աստծո առջև:

Հենց ամենից շատ դրանից է կախված մեր ձայնի տեղ հասնելը: Հիրավի, նա, ում մարմինը այն ժամանակ, երբ մեկնված է գետնին և բերանը անիմաստորեն բարբառում է, հոգին թափառում է ամենուր՝ տանը, հրապարակներում, նա կարո՞ղ է ասել, որ աղոթում է Աստծուն:

Աստծուն աղոթում է նա, ով իր հոգին կատարելապես կենտրոնացրել է և ոչ մի ընդհանուր բան չունի երկրի հետ, այլ վերաբնակվել է երկնքում և հոգուց արտաքսել մարդկային ցանկացած դիտավորություն: Աղոթողը պետք է աղոթի այնպես, որպեսզի կենտրոնանալով և լարելով միտքը՝ տրտում հոգով կանչի Աստծուն՝ չբազմապատկելով բառերը և համառոտելով աղոթքը, այլ քիչ և պարզ բառերով աղոթի, որովհետև ոչ թե բառերի շատությունից, այլ հոգու զգաստությունից է կախված աղոթքի տեղ հասնելը:

Եվ դա կարելի է տեսնել Աննայի՝ Սամուելի մոր օրինա-

կով: Աննան ասում է. «Իսրայելի Տե՛ր Աստված, զորություննե-
րի՛ Տեր, եթե կամենաս տեսնել քո աղախնի տառապանքները, ինձ
հիշես ու արու գավակ տաս քո աղախնի, մինչև նրա մահվան օրը
քեզ կնվիրես նրան, նա գինի չի խմի ու չի հարբի և նրա գլխին ա-
ծելի չի դիպչի» (Ա. Թագ. 1, 11): Շատ բառե՞ր կան այստեղ:
Բայց քանի որ նա աղոթում է ուշադրությամբ և սթափ, ա-
պա հասնում է այն ամենին, ինչ կամենում է. և՛ փչացած
բնությունն է վերականգնում, և՛ փորկապությունն է բա-
ցում, ապա իրեն բերում է բարեհոգ վիճակի՝ անպտուղ
քարից լեցուն հասկ քաղելով:

Այսպիսով, աղոթողը չպետք է երկարաբանի և մշտապես
աղոթի: Ստեղծել փոքր դադարներ ունեցող կարճ և հաճա-
խական աղոթքներ պատվիրել են և՛ Քրիստոս, և՛ Պողոսը:
Եթե դու երկարաբանես՝ հաճախ դա անելով առանց հա-
տուկ ուշադրության, ապա սատանային մեծ ազատություն
կընձեռես քեզ մոտենալու և դավեր նյութելու՝ ուշադ-
րությունը շեղելով արտասանվող խոսքերից:

Իսկ եթե հորինես հաճախական և մշտական աղոթքներ՝
ամբողջ ժամանակ մշտապես կրկնելով դրանք, ապա հեշ-
տությունք կպահպանես ուշադրությունը և կաղոթես ան-
գամ մեծ զգաստությամբ:

Ցանկանու՞մ ես իմանալ, թե ինչ բան է աղոթքի արթու-
նությունը, սթափությունն ու համառությունը: Գնա Ան-
նայի մոտ և իմացիր, թե ինչ արեց նա:

Բոլորը, ասում են, ճաշկերույթից վեր կացան (Ա. Թագ.
1, 9) և նա անմիջապես չզնաց քնելու, ոչ էլ հանգստանա-
լու, այդ պատճառով ինձ թվում է, որ, նույնիսկ խնջուքի
նստած լինելով՝ նա զուսպ էր և իրեն չէր ծանրաբեռնում
որևէ քաղցրավենիքով, հակառակ դեպքում այդպիսի ար-
ցունքներ չէր թափի:

Արդարև, եթե մենք՝ պաս պահելով և հրաժարվելով կե-

րակուրներից, հազիվ թե կարողանանք այդպես աղոթել,
ավելի ճիշտ՝ երբեք այդպես չենք աղոթի, ապա առավել ևս
նա չէր կարողանա այդպես աղոթել խնջուքից հետո, եթե
խնջուքին իրեն չպահեր պաս պահողի նման:

Համոթ մեզ՝ այրերիս և կանանց, մեզ, որ, աղոթում ենք
արքայություն համար՝ հորանջում ենք քնեածությունից,
ամաչենք նրանից, ով աղոթում էր որդու համար և ար-
տասվում:

Տես, թե նա որքան բարեպաշտ է նաև այլ առումով:
«Նրա ձայնը, - ասվում է - լսելի չէր, իսկ շրթունքները չէին
շարժվում» (Ա. Թագ. 1, 13):

Այդպես վարվում է Աստծո հետ նա, ով ցանկանում է ո-
րևէ բան ստանալ առանց պրկման և հորանջի, առանց
քնկոտություն, առանց լեզու քորելու և առանց անփու-
թություն:

Մի՞թե Աստված չէր կարող տալ առանց աղոթքի: Մի՞թե
Նա նրա խնդրանքից առաջ չգիտեր կնոջ ուղածը:

Բայց եթե Նա տար խնդրելուց առաջ, ապա կնոջ ջանքը
չէր բացահայտվի, չէր բացահայտվի նրա բարեպաշտու-
թունը, և դրա համար այդպիսի պարգևի չէր արժանանա:

Սակայն քննենք նաև նրա իմաստասիրությունը: Երբ Ե-
ղիա քահանան նրան հարբածի տեղ ընդունեց, տես, թե նա
ինչ ասաց նրան. «Քո աղախնի անգամ կիմ մի՛ համարիր, ես
իմ բազում տրտմությունից և իմ տխրությունից մտամոլոր կանգնել
եմ մինչև այժմ» (Ա. Թագ. 1, 16):

Դա իսկապես սրտի հոգեցունց արարք է, երբ մենք չենք
զայրանում ու բարկանում մեզ վիրավորողների վրա, այլ
նույնիսկ արդարանում ենք:

Իրոք ոչ մի բան սիրտն այդպես չի դարձնում իմաստա-
սեր, քան Աստծո համար տրտմությունն ու թախիծը:

Այդպիսով, մենք պետք է և՛ խնջուքից առաջ, և՛

խնջուլքից հետո երախտապարտ լինենք Աստծուն: Ով իրեն պատրաստել է դրան, նա երբեք չի արբենա և անկարգություններ չի անի, երբեք չի կրի թունավորման հետևանքները, այլ աղոթքի սպասումով զսպելով իր դիտավորությունները և կարծես սանձելով իրեն՝ անհրաժեշտ չափով կօգտվի բոլոր առաջարկվածներից, և դրանով մեծ հաճույք կպատճառի և՛ մարմնի, և՛ հոգու բարեկեցությունը:

Աղոթքով սկսվող և ավարտվող սեղանից ոչինչ չի պակասի և, ինչպես հորդառատ աղբյուրից, մեզ կտրվեն բոլոր բարիքները:

Եկեք չանտեսենք այդ օգուտները: Տարօրինակ է, որ մեր ծառաները, մեր սեղանից ինչ-որ բան ստանալով, շնորհակալություն են հայտնում և բարի խոսք ասելով՝ հեռանում, իսկ մենք, հաճույք ստանալով այդքան առատ բարիքներից, Աստծուն այդպես չենք փառաբանում:

Այդ պատճառով մեր և հասարակաց, և անձնական գործերը ընթանում են հակառակ մեր սպասման, որովհետև սկզբից ոչ թե հոգևոր գործերի մասին ենք հոգ տանում, այլ առօրեական: Թե՞ դու չգիտես, որ եթե գալիս ես երկրպագելու Աստծուն և մասնակցություն ես բերում այստեղի (եկեղեցական) գործերին, ապա քեզ համար ավելի հեշտ կդառնան սպասվող (առօրեական) գործերը:

Սակայն դու ունե՞ս առօրյա գործեր: Հենց դրանց համար էլ արի այստեղ, որպեսզի, այստեղ գալով, գրավես Աստծո բարեհաճությունը՝ անվտանգ դուրս գաս, որպեսզի ունենաս Աստծո դաշնակցությունը, որպեսզի երկնային աջի օգնությամբ դեռի համար անհաղթահարելի դառնաս:

Եթե դու հաղորդակցվես հոգևոր աղոթքներին, եթե մշակես ընդհանուր աղոթքը, եթե առ քեզ գրավես Աստծո

օգնությունը, եթե այստեղից դուրս գաս՝ պաշտպանված Աստծո զորություններ, ապա քեզ չեն համարձակվի առնչվել ո՛չ սատանան, ո՛չ էլ չարակամ մարդիկ, որոնք ձգտում են վիրավորել ու զրպարտել քեզ: Եթե դու տնից դուրս գաս փողոց և զրկված լինես այդ զորությունից, ապա հեշտ թիրախ կլինես քեզ վիրավորողների համար:

Եվ թող ինձ չասեն, թե ծառայություն մեջ գտնվող աշխարհիկ մարդու համար անհնար է մշտապես աղոթել ցերեկով և եկեղեցի գալ: Հնարավոր է, և այն էլ՝ բավական հեշտ: Եթե հեշտ չէ եկեղեցի գալը, ապա կարելի է աղոթել առանց թողնելու ծառայությունը՝ կանգնելով այնտեղ՝ դատարանի դռների առջև: Եվ այդպես հաճախ շատերն են վարվում:

Երբ ղեկավարը ներսից (դատարանի) գոռգոռում է, սպառնում, համբերությունից դուրս գալիս, կատաղում, նրանք՝ դուան առաջ խաչանշաններով իրենց անջրպետելով, մտքում աղոթքի մի քանի բառ մրմնջալով, ներս են մտնում և դատավորին հարկադրում փոխվել, սանձել նրանց բարկությունը և վայրենաբարո մարդուն վերածել հնազանդի, և ո՛չ տեղը, ո՛չ ժամանակը, ո՛չ լռությունը այդպիսի աղոթքի համար խոչընդոտ չեն դառնում: Չէ՞ որ աղոթքի համար այնքան բառերը կարևոր չեն, որքան միտքը, ոչ այնքան ձեռքերի շարժումներն են պետք, որքան հոգու լարվածությունը, ոչ այնքան մարմնի զրուկություն է կարևոր, որքան ոգու տրամադրությունը:

Այդպես և Աննան, Սամուելի մայրը, լսելի եղավ ոչ այն պատճառով, որ արտասանեց պերճ և բարձրագույն բառեր, այլ որովհետև շատ բաներ ոգեկոչեց ամբողջ սրտով: «Ձայնը լսելի չէր, բայց Տերը լսեց նրան» (Ա. Թագ. 1, 13):

Եկեք չարդարանանք՝ ասելով, թե աղոթելը հեշտ չէ այն մարդուն, ով թաղված է առօրյա գործերում և չըջակայ-

քում մոտիկ աղոթատունն չի գտնում: Որտեղ էլ լինես՝ դու կարող ես ունենալ սեփական աղոթասեղան. դա ոչ մեծ տեղ է պահանջում, ոչ էլ երկար ժամանակ: Թեպետև դու ծնկի չես գալիս, կուրծք չես ծեծում, ձեռքերդ երկինք չես կարկառում, այլ լուկ ջերմ հոգիդ ես ցուցանում, ապա դրանով իսկ կատարում ես այն, ինչ անհրաժեշտ է աղոթքին: Չէ՞ որ կարելի է, ի վերջո, փողոց դուրս գալ և մեն-մենակ քայլելով՝ ջերմագին աղոթել: Կարելի է և նստել արհեստանոցում կոշիկ կարել, սակայն հոգին բացել Տիրոջ առաջ: Կարելի է և՛ ծառայելիս, և՛ առևտուր անելիս, ներքև կամ վերև բարձրանալ-իջնելիս, խոհանոցում գործ անելիս, երբ անհնար է եկեղեցի գնալը, անկեղծ և ջերմագին աղոթել: Աստված չի խորշում տեղից, այլ միայն մեկ պահանջ ունի՝ բորբոք սիրտ և կենտրոնացած հոգի:

Այդպես և Պողոսը՝ ոչ թե աղոթատանը, այլ գնդանում ձեռքերը տարածած և ուղիղ չկարողանալով կանգնել և ծնկի եկած, որովհետև դրան խանգարում էին ոտքերի կալանակոճղերը, գրեթե պառկած վիճակում ջերմագին աղոթելով՝ ցնցեց գնդանը, սասանեց նրա հիմքերը, սարսափեցրեց գնդանի պահապանին, այնուհետև նրան հաղորդակից դարձրեց սուրբ խորհրդին:

Նույն կերպ նաև Եզեկիան՝ ոչ ուղիղ կանգնած և չծնկելով, այլ հիվանդության պատճառով թեք ընկած անկողնին և դեմքը պատի կողմն արած, տենդագին և խոնարհ հոգով կանչում էր Աստծուն, որով բեկանեց արդեն իսկ որոշված դատավճիռը և գրավելով Նրա ողորմածությունը, վերականգնեց նախկին առողջությունը: Իսկ խաչված ավազակը մի քանի բառով ընկավ երկնային արքայություն:

Ե՛վ Երեմիան տիղմի և գուբի մեջ, և՛ Դանիելը գուբի և գազանների մեջ, և՛ Հովնանը կետի փորում կանչեցին Աստծուն և հաղթահարելով բոլոր սարսափելի աղետները,

ունեցան Նրա բարձր ողորմածությունը:

Ի՞նչ բառեր պիտի ասես, երբ աղոթում ես: Այն նույնը, ինչ քանանուհին: Իսկ նա ասում էր. «Ողորմի՛ր ինձ, Տե՛ր, աղջիկս չարաչար դիվահարվում է» (Մատթ. ԺԵ, 22). այդպես և դու ասա՝ ողորմի՛ր ինձ, հոգիս դաժանորեն դիվահարվում է:

Մեղքը մեծ դե է: Դիվահարը գուլթ է առաջացնում, իսկ մեղսավորը՝ ատելություն: Ողորմի՛ր ինձ կարճ խոսք է, սակայն (առաջ բերեց) ծով մարդասիրություն, որովհետև որտեղ ողորմածություն կա, այնտեղ ամեն տեսակ բարիքներ կան: Եթե եկեղեցում չես, ձայն տուր Աստծուն և ասա՝ ողորմի՛ր ինձ, թեկուզ և չչարթելով բերանդ, այլ կանչելով մտքով: Աստված լսում է նաև լռողներին: Ոչ թե տեղն է կարևոր, այլ բարեպաշտության հիմքը:

Երեմիան թաղված էր տիղմի մեջ և գրավեց Աստծուն, Հորը կորած էր պալարների մեջ և Աստծու մոտ ողորմածություն գտավ, Հովնանը կետի փորում էր, և Աստված ուշք դարձրեց նրան:

Իսկ դու թեկուզ բաղնիքում լինես՝ աղոթիր, որտեղ էլ գտնվելու լինես՝ աղոթիր: Դու Աստծո տաճարն ես, ուստի տեղ մի որոնիր: Ծովը առջևում էր, եգիպտացիք՝ ետևում, իսկ Մովսեսը մեջտեղում կանգնած լռում էր՝ աղոթելու մեծ դժվարություններ կային: Եվ Աստված նրան ասաց. «Ինչու՞ ես կանչում ինձ» (Ելք 14, 15):

Այդպես և դու վարվիր, երբ փորձություն մեջ ես՝ դիմիր Աստծուն, կանչիր Տիրոջը: Մի՞թե Նա մարդ է, որ ինչ-որ տեղ փնտրես: Աստված «միշտ մոտիկ է: Այն ժամանակ պիտի կանչես, և Աստված պիտի լսի քեզ» (Եսայի 58, 9):

Դու դեռ չես ավարտել աղոթքը, իսկ Նա արդեն բժշկում է: Եթե հոգիդ մաքուր է անպարկեշտ կրքերից, ապա փողոցում լինես կամ ճանապարհին, դատարանում կամ ծովում,

Հյուրանոցում կամ արհեստանոցում, միևնույն է, որտեղ էլ լինես, դու կարող ես կանչել Աստծուն և ստանալ խնդրածդ:

Ի՞նչ է նշանակում կարկառած ձեռքեր աղոթքի ժամանակ: Սովորաբար, ձեռքերը բազմաթիվ չար գործերի համար ծառայում են որպես գործիք, այդ պատճառով մեզնից պահանջվում է դրանք կարկառել, որպեսզի աղոթքը խոչընդոտի դրանց չար գործեր կատարելուն և զսպի արատավոր բաներ անելը, և որպեսզի դու, երբ մտադրվես առևանգել կամ յուրացնել ուրիշի ինչքը, կամ հարվածել ուրե՛կ մեկին, հիշես, որ պետք է ձեռքերդ խնդրառու կարկառես առ Աստված և դրանցով հոգևոր զոհաբերություն կատարես, և չանարգես դրանք և անպատասխանատու չդարձնես անպարկեշտ բաների ծառայեցնելու միջոցով:

Ուստի մաքրիր ձեռքերդ ողորմածությունքով, մարդասիրությունքով, կարիքավորներին օգնելով, և այնժամ կարկառիր դրանք աղոթելիս: Եթե դու քեզ թույլ չես տալիս անմաքուր ձեռքերով կանգնել աղոթքի, ապա առավել ևս չպետք է դրանք անարգես մեղքերով: Եթե դու երկյուղ ունես փոքրից՝ անմաքուր ձեռքերով աղոթելուց, ապա առավել ևս վախեցիր մեծերից: Անմաքուր ձեռքերով աղոթելը այնքան անվայել է, իսկ բազում մեղքեր ունենալով՝ կարկառել դրանք, կնշանակի՝ բերել Աստծո մեծ բարկությունը և կործանում: Ուզու՞մ ես իմանալ, թե ինչ մեծ զորություն ունի եկեղեցում աղոթելը: Մի անգամ Պետրոսը կապկպված էր ամուր կապանքներով: «Իսկ եկեղեցում նրա համար ստեպ-ստեպ աղոթքներ էին արվում» (Գործք 12, 5), որոնք նրան անմիջապես ազատեցին բանտից:

Այսպիսով, ինչը կարող է ավելի հզոր լինել այդ աղոթքից, որ օգնեց եկեղեցու վեմին և սյանը: Կոչյալներին դեռևս չի թույլատրվում այդպիսի աղոթք, քանի որ նրանք

չեն ստացել այդպիսի շնորհ, սակայն ձեզ հրամայվում է աղոթել և՛ ողջ աշխարհի համար, և՛ եկեղեցու համար, որ տարածվում է երկրի սահմաններից դուրս, և՛ նրա կառավարիչների համար, և՛ գալիքի համար: Եվ դուք հոժարությամբ հնազանդվում եք՝ գործով հաստատելով, որ աղոթքի զորությունը մեծ է, որ ժողովրդի միահամառությունքով հնչում է եկեղեցում:

Եթե առ մարդիկ այդպես է պատահում, որ ժողովուրդը ներում է մահվան դատապարտված հանցագործներին, և թագավորը, զիջելով ամբոխին, չեղյալ է հայտարարում դատավճիռը, ապա առավել ևս երկնային թագավորը, գլխաշարժվելով, կկատարի ձեր աղաչանքը:

Ձե՞ք լսել, թե ինչպես Պետրոսը ազատվեց բանտից եկեղեցու ջանադիր աղոթքի շնորհով: Դիմել Աստծուն և այդքան մարդկանց համար աղերսել, չե՞ք կարծում, որ դրա համար մենք շատ փոքր ենք: Իրոք, եթե ես հանդգնություն չունեմ աղերսելու ինձ համար, ապա առավել ևս չեմ կարող ուրիշների համար. դա կարող են անել մարդիկ, ովքեր արժանանում են համընդհանուր հավանություն:

Այսպիսով, եթե ես ինքս եմ արժանացել զայրույթի, ապա ինչպե՞ս կարող եմ աղոթել ուրիշների համար: Մեն-մենակ շատերի համար աղոթելը չափազանց մեծ համարձակություն է և պահանջում է մեծ հանդգնություն, սակայն շատերի համար, որ հավաքվում են միասին, մեկի համար աղոթելը այնքան էլ անմիտ բան չէ: Իհարկե, կարելի է և աղոթել տանը, սակայն հնարավոր չէ այնպես աղոթել, ինչպես դա հնարավոր է անել եկեղեցում, որտեղ հայրերի այդպիսի մեծ բազմություն կա և որտեղ բոլորի միահամուռ ձայնը հասնում է առ Աստված:

Աստված քեզ չի լսում այնպես, երբ դու մենակ ես աղոթում, ինչպես, երբ աղոթում ես քո եղբայրների հետ, որով-

Հետև այստեղ մի բան էլ կա՝ միահամուռուլություն և համաձայնություն, երեցների սիրո և աղոթքի միությունը: Երեցները Հենց նրա համար են, որպեսզի ժողովրդի թույլ աղոթքը միանա իրենց ուժեղ աղոթքներին և դրանց հետ միասին բարձրանա երկինք:

Եթե եկեղեցու աղոթքը օգտակար եղավ Պետրոսին, և եկեղեցու սյունը ազատվեց բանտից, ապա ասա ինձ, դու ինչպե՞ս ես արհամարհում նրա գորությունը: Նման այն բանին, որ սիրո ուժը դիմանում է հեռավորությունը, այդպես էլ՝ աղոթքի ազդեցությունը, սակայն ինչպես առաջինը միացնում է իրարից հեռու գտնվողներին, այդպես և վերջինը կարող է մեծ օգուտներ բերել հեռվում գտնվողներին:

Մովսեսը թեպետև մարմնով չէր գտնվում կովոզների հետ, սակայն սակավ, եթե ոչ ավելի, չեղավ նրա օգնությունը այդ ճակատամարտում՝ իր վերև կարկառած ձեռքերով ուժ տալով յուրայիններին և վախ ներշնչելով թշնամիներին:

Ոչ մի սխրանք չի կարող բավականաչափ մեծ լինել, եթե դրանից ուրիշների համար օգուտ չկա: Թեկուզև դու լինես ծոմապահ, թեկուզև քնես հողին, թեկուզև մոխրով կերակրվես, թեկուզև անդադար լաց լինես, սակայն եթե օգուտ չես բերում որևէ մեկին, դու մեծ գործ չես կատարում:

Մովսեսը բազմաթիվ մեծ նշաններ ցույց տվեց և հրաշքներ, սակայն ոչ մի այլ բան նրան այդքան մեծ չէր դարձնի, որքան Աստծուն ուղղված նրա հետևյալ խոսքերը. «Եթե Աերելու ես իրենց մեղքերը, Աերի՛ր, իսկ եթե չես Աերելու, ուրեմն իմ անունը ջնջի՛ր քո մատյանից» (Ելք, 32, 32-33): Եվ Դավիթը, ցույց տալով նույնը, ասում է. «Ես եմ մեղավոր, ես հովիվս եմ հանցավոր, այս ոչխարներն ի՞նչ եմ արել: Թող քո ձեռքը

բարձրանա իմ ու իմ հոր տան վրա» (Բ Թագ. 24, 17):

Մեծ են, անշուշտ, և այդ գործերը, և հրեշտակներին արժանի, սակայն Պողոսի արարքը մեծ առավելություն ունի և դրանց համեմատությամբ, քանի որ նա հանուն ուրիշների փրկություն, կարողացավ հրաժարվել ապագա փառքից: Մինչդեռ Հովհանն այն բանի համար, որ փնտրեց իր սեփական օգուտը, ենթարկվեց անգամ մահվան վտանգին, և այնժամ, երբ սկսվեց տարափը, ջրասույզ եղավ ալիքների մեջ:

Այդպես մեծ են նաև Մովսեսի մյուս առաքինի գործերը, բայց այդ սրբազան հոգու արածների թագն ու պսակն այն է, որ նա ցանկացավ հանուն հրեաների փրկության, նույնիսկ մատյանում հիշատակ չունենալ:

Սակայն Պողոսի ցանկությունը մեծապես գերազանցեց նաև այդ: Մովսեսն ուզում էր մեռնել մյուսների հետ, իսկ Պողոսը չէր աղոթում այն բանի համար, որ ցանկանում է մեռնել ուրիշների հետ, այլ հանուն նրանց փրկության զրկվեց հավիտենական փառքից: Այսպիսով, սրբերի աղոթքներից օգտվելը լավ է, սակայն մի պայմանով, որ ինքներս էլ պարապ չենք նստում, իսկ եթե այդպես չէ, ապա մեզ չի օգնի նաև ուրիշների օգնությունը, ընդհակառակը, դա ունենալով անգամ՝ կկործանվենք:

Ի՞նչ օգուտ բերեց Երեմիան հրեաներին: Երիցս չգիմե՞ց Աստծուն և երիցս լսեց. «Մի՛ աղոթիր այդ ժողովրդի համար, որովհետև քեզ չես լսելու» (Երեմիա, 7, 16):

Ի՞նչ օգուտ բերեց Սավուղին Սամուելը. մինչև վերջին օրը չվշտացա՞վ և չաղոթե՞ց նրա համար: Նույն կերպ ի՞նչ օգուտ տվեց նա իսրայելցիներին: Չասա՞ց. «Բավ լիցի, որ ես մեղանչեմ Տիրոջ դեմ՝ հրաժարվելով ձեզ համար աղոթելուց» (Ա Թագ. 12, 23): Մի՞թե նրանք բոլորը չկործանվեցին:

Լսիր, թե ինչ է ասում Աստված մարգարեի միջոցով. «Ե-

թե այնտեղ լինեն Նոյը, Հոբն ու Դանիելը, նրանք իրենց արդարության համար փրկվելու են» (Եզեկ. 14, 14), քանի որ շատացել են ապականությունները:

Եվ ի՞նչ: Մի՞թե աղոթքները ոչ մի օգուտ չեն բերում: Բերում են և այն էլ՝ վիթխարի, սակայն այնժամ, երբ մենք աջակցում ենք: Իսկ եթե ուզում ես իմանալ, ապա հիշիր Կորնելիային և Թաբիթոսին: Լսիր այն, ինչ Աստված է ասում. «Այս քաղաքը պիտի հովանավորեմ, որպեսզի այն ազատեմ ինձ ու իմ ծառա Դավթի համար» (Դ. Թագ. 19, 34: Եսայի 37, 35): Բայց ե՞րբ: Առաքիլնի Եզեկիայի օրոք: Հակառակ դեպքում, այսինքն, եթե և՛ մեծ մեղսավորների աղոթքը զորություն ունենար, ապա ինչու՞ Աստված նույնը չասաց, երբ եկավ Նաբուգոդոնոսորը, սակայն հանձնեց քաղաքը:

Որովհետև ապականությունները շատացել էին: Նույն կերպ և այդ Սամուելը աղոթեց իսրայելցիների համար և հաջողություն ունեցավ: Բայց ե՞րբ: Երբ նրանք առաքիլնի էին, այնժամ նրանք հաղթեցին թշնամիներին:

Սակայն կասես, թե ինչի՞ համար են ուրիշի աղոթքները, երբ ինքս կարող եմ հաճո լինել Աստծուն: Ի՞նչ ես խոսում, մարդ արարած: Պողոսը չասաց՝ ինչի՞ս է պետք աղոթքը, չնայած աղոթողները ոչ միայն արժանի չէին նրան, այլև նույնիսկ հավասար չէին, իսկ դու ասում ես՝ ինչիս են պետք աղոթքները:

Պետրոսը չասաց, թե ինչիս են պետք աղոթքները, չէ՞ որ ասված է. «Իսկ եկեղեցում նրա համար ստեպ-ստեպ աղոթքներ էին արվում առ Աստված» (Գործք, 12, 5), որը անմիջապես նրան ազատեց կապանքներից, իսկ դու ասում ես՝ ինչիս են պետք աղոթքները: Հենց այն պատճառով են դրանք պետք, որ դու կարծում ես, թե քեզ պետք չեն:

Եթե Աստված փորձեր մեզ աղոթքի ժամանակ իր դատաստանով մեր անհոգությունը և անփութությունը, փոր-

ձեր, թե մենք, կանգնելով Նրա առջև և պաղատելով Նրան, չենք պատվում անգամ այնքան, որքան ծառաներն՝ իրենց տերերին, զինվորներն՝ իրենց հրամանատարներին, ընկերն՝ իր ընկերոջը, որովհետև զրուցելով ընկերոջ հետ դու ուշադիր ես, իսկ Աստծուն դիմելիս և մեղքերիդ համար աղոթելիս, քո մեծ հանցանքների համար ներողամտություն խնդրելիս, ներում հայցելիս, ցրված ես և հաճախ, ծնկի գալով գետնին, մտքիդ թույլ ես տալիս թափառել փողոցներում և տան շուրջը, այնպես որ, քո բերանը դուրս է տալիս ապարդյուն և իզուր, ինչը մեզ հետ պատահում է ոչ մեկ և ոչ էլ երկու անգամ, այլ գրեթե միշտ. եթե Աստված միայն այդ ցանկանար փորձել, ապա մենք երբևէ թողութուն կստանայի՞նք: Կարո՞ղ էինք մենք ներվել: Չեմ կարծում:

Եթե Աստված փորձում է մեր վավաչոտ դեմքը և մեր հոգում եղած դեչ ցանկությունները, որոնք զրգովում են նողկալի և անմաքուր մտադրություններով և առաջանում են աչքերի՝ թեթևամիտ աջ ու ձախ շաղ տալուց, եթե դատապարտում է այն բոլոր չարախոսությունները, որոնցով մենք ամեն օր հանդիմանում ենք միմյանց, անամոթ բամբասանքները, որոնցով պարապությունից դատափետում ենք մեր մերձավորներին, այն նենգությունները, որ լարում ենք իրար դեմ, գովաբանում ենք մեր եղբորը և զրուցում նրա հետ, երբ ներկա է, իսկ երբ բացակա է՝ կշտամբում, մի՞թե այդ բոլորի համար մենք պատասխան չենք տալու:

Իսկ ի՞նչ ասեմ այն նախանձի մասին, որ հաճախ ունենում ենք պատվարժան մարդկանց նկատմամբ՝ ոչ միայն թշնամիների, այլև բարեկամների հանդեպ, այն մասին, երբ մենք ուրախանում ենք, երբ ուրիշները դժբախտություն մեջ են, և ուրիշի դժբախտությունը մեզ համար մխիթարություն ենք համարում:

Եթե մեզ պատվիրանված է չափավոր լինել առօրյա հաճույքներում և այնժամ, երբ դրանք կան, ապա մենք ինչքան խղճուկ և դժբախտ ենք, որ Աստուծոց խնդրում ենք այն, ինչ Նա պատվիրել և ունենալով՝ մերժել է: Եթե մեզ հրամայված է աղոթել ոչ միայն հավատացյալների, այլև անհավատների համար, ապա մտածիր, թե ինչ մեծ չարություն է ընդդեմ եղբայրների աղոթելը: Ի՞նչ ես անում, ո՞վ մարդ արարած: Գալիս ես Աստուծոց ողորմածություն խնդրելու և ուրիշի համար չար բա՞ն ես խնդրում: Եթե դու թողությունն չես տալիս, ապա ինքդ թողությունն չես ստանա, իսկ դու ոչ միայն ինքդ թողությունն չես տալիս, այլև Աստուծոց խնդրում ես թողությունն չտալ: Եթե թողությունն չի ստանում նա, ով ինքը թողությունն չի տալիս, ապա ինչպե՞ս թողությունն ստանա նա, ով դեռ Տիրոջն էլ խնդրում է թողությունն չտալ:

Եթե թշնամիներ ունենալը արդեն հանցանք է, ապա խորհիր, թե ինչ հանցանք է աղոթել ի վնաս նրանց: Դու պետք է ներում խնդրես առ այն, որ թշնամիներ ունես, իսկ դու դեռ մեղադրում ես նրանց: Իսկ դու ինչպե՞ս կարող ես ներում ստանալ, երբ մեղադրում ես ուրիշներին, ընդ որում այնժամ, երբ ինքդ մեծ ողորմածություն կարիք ունես: Չէ՞ որ դու գալիս ես քո մեղքերի համար ներում խնդրելու, ուստի մի հիշիր ուրիշի մեղքերը, որպեսզի քո մեղքերը չհիշեցնեն:

Եթե դու ասում ես՝ ոչնչացրու՛ թշնամուն, ապա դրանով փակում ես քո բերանը և լեզվիդ կապ դնում, նախ այն պատճառով, որ աղոթքի հենց սկզբից բարկացնում ես Դատավորին, երկրորդ՝ աղոթքի բնույթին հակառակ բան ես խնդրում: Արդարև, եթե դու մեղքերիդ թողությունն ես խնդրում, ապա ինչպե՞ս կարող ես խոսք բացել պատժի մասին:

Այնինչ, հարկ է վարվել ճիշտ հակառակ կերպ՝ աղոթել նաև թշնամիների համար, որպեսզի հանդգնես աղոթել նաև քեզ համար: Եթե դու աղոթես նրանց համար, թեկուզև քո մեղքերի մասին ոչ մի խոսք չասես, ուրեմն դու ամեն ինչ արել ես, ինչպես հարկն է:

Այսպիսով, եթե ավելի արհամարհելի բան չկա, քան այն հոգին, որը աղոթքներում անիծում է ուրիշներին, և ավելի խորշելի լեզու, որ այդպիսի անեծքներ է տալիս, ապա ինչու՞ քո ողջ գորությունք ջանք չես թափում, որպեսզի աղոթելիս չասես այնպիսի բաներ, որոնք զայրացնում են Տիրոջը:

Դու մարդ ես, ուստի իժի թույն մի՛ թափիր: Դու մարդ ես, գազան մի՛ եղիր: Բերանը քեզ տրված չէ, որպեսզի խոցես մարդկանց, այլ որպեսզի բուժես ուրիշների խոցերը: Հիշիր, թե ի՞նչ է ասում Աստված. Ես պատվիրել եմ քեզ թողությունն տալ և ներել: Իսկ դու պաղատում ես, որ Ես էլ դառնամ քո գործակիցը Իմ իսկ պատվիրանները խախտելու գործում, և խժռում ես եղբորդ, լեզուդ թաթախում ես արյան մեջ դիվոտածների նման, որոնք պատառոտում են իրենց իսկ մարմինը:

Արդյոք, խորհե՞լ ես այն մասին, թե ինչպես է սատանան հռհռում և հրճվում, երբ լսում է այդպիսի աղոթք: Եվ հակառակը, խորհե՞լ ես այն մասին, թե ինչպես է զայրանում, խորշում և ատում Աստված, երբ դու այդպես ես աղոթում: Հիշիր, մարդ, թե դու ում ես աղոթքով դիմում թշնամիներիդ կորստյան մասին: Մի՞թե դու ուրիշ Աստծո ես դիմում: Դու դիմում ես այն նույն Աստծուն, Ով ասում է. «Միրեցե՛ք ձեր թշնամիներին, աղոթեցե՛ք նրանց համար, որ չարչարու՞մ եմ ձեզ» (Մատթ. 5, 44): Ինչպե՞ս ես դու աղաղակում ընդդեմ նրանց: Ինչպե՞ս ես Աստուծոց պահանջում, որ Նա հակառակ գնա Իր օրենքին: Այդ վարքը անվայել է աղո-

Թող ծառային. ամենքը պետք է աղոթեն ոչ թե իրենց թշնամիներին կորստյան համար, այլ սեփական փրկության: Ինչու՞ ես ընդունում աղոթող ծառայի տեսք, իսկ խոսում ես որպես մեղադրող:

Ընդ որում, երբ մենք աղոթում ենք մեզ համար, ապա և՛ քորվում ենք, և՛ հորանջում ենք, և՛ հրապուրվում հազարավոր դիտավորություններով, իսկ թշնամու կորստի համար աղոթում ենք առանձնակի ուշադրությամբ: Քանի որ սատանան այդ պահին գիտի, որ դրանով սուր ենք բարձրացնում ինքներս մեզ վրա, ապա նա չի ցրում մեր ուշադրությունը և մեզ չի կանգնեցնում, որպեսզի ավելի վնասի մեզ: Սակայն, առարկում ես դու՝ ինձ վիրավորել և վշտացրել եմ: Այդ դեպքում աղոթիր սատանայի կորստյան համար, որովհետև նա անհամեմատ ավելի է վիրավորել մեզ. չէ՞ որ հենց սատանան է ծնել թշնամիներին: Եթե դու կաղոթես թշնամիներիդ կորստյան մատնելու աղոթքով, ապա դու կաղոթես մի աղոթքով, որ ցանկանում է սատանան, և ընդհակառակը՝ եթե դու կսկսես աղոթել թշնամիներիդ համար, ապա քո աղոթքը դեմ կլինի սատանայի ցանկությունը: Արդարև, միայն սատանան է մեր միակ անհաշտ թշնամին, իսկ մարդը, ինչ էլ նա արած լինի, մնում է մեր եղբայրն ու բարեկամը: Հապա ինչու՞ ես իսկական թշնամուն թողած, չարչարում սեփական մարմինդ:

Այսպիսով, սիրելիներս, իմանալով այդ՝ փորձենք վարվել ըստ Աստծո պատվիրանների և կամքի, որպեսզի մեզ հասու լինի երկնային արքայությունը, մեր Տեր Հիսուս Քրիստոսով, Որին և փառք և զորություն՝ Հոր և Սուրբ Հոգու հետ, այժմ և հավիտյանս հավիտենից. Ամեն:



ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Այն պատճառով եմ հաճախակի խոսում ապաշխարության մասին, որպեսզի ո՛չ մեղավորը հուսահատվի, ո՛չ էլ արդարը՝ մեծամտանա: Մի՛ անկանիր: Մեղավո՞ր ես: Մի՛ հուսահատվիր: Եթե ամեն օր մեղք ես գործում, ամեն օր զղջա: Նման այն խարխուլ տներին, որոնք փտում են, և մենք հեռացնում ենք փտած մասերը և նորերով փոխարինում և երբեք այդ կարգի հոգսերը չենք անտեսում, ճիշտ այդպես և դու վարվիր. թե խարխուլվել ես մեղքերից, նորոգիր քեզ ապաշխարությամբ:

«Սակայն հնարավո՞ր է փրկություն գտնել՝ ապաշխարելով», - հարցնում ես դու: Միանգամայն հնարավոր է: Սակայն ես ողջ կյանքս անցկացրել եմ մեղքերի մեջ, և եթե ապաշխարեմ՝ արդյոք կփրկվե՞մ: Անկասկած: Ինչո՞վ կարելի է դա ապացուցել: Տիրոջ ողորմածությամբ:

Հույսդ միայն ապաշխարության վրա մի դիր: Մի՞թե քո ապաշխարությունը կարող է քեզ մաքրել մեղքերից: Եթե միայն ապաշխարությամբ լինեք, իրոք վախենալու պատճառ կունենայիր, բայց քանի որ ապաշխարությանը միանում է Աստծո ողորմածությունը, ապա հուսա, որովհետև այն գերազանցում է քո չարությունը:

Բազմողորմ է Աստված, այնքան ողորմած, որ չխնայեց անգամ Միածինին, որպեսզի քավի անշնորհակալ ծառաների մեղքերը: Այնպես որ, մի ասա՝ այնքան մեծ մեղքեր եմ գործել, ինչպե՞ս կարող եմ փրկվել: Դու չես կարող, քո Տերը կարող է և այնպես կսրբի մեղքերդ, որ անգամ հետք էլ չի մնա:

Մարմնի հետ այդպես չի կարող պատահել. որքան էլ

Չանք թափի բժիշկը, վերքին որքան էլ բալասան դնի, միայն վերքը կփակվի, սակայն սպին կմնա և արտաքին այլանդակությունը կցուցանի նախկին վերքը: Բժիշկը բոլոր հնարավոր միջոցներով փորձում է վերացնել նաև սպին, սակայն չի գորում, որովհետև դրան հակառակում է և՛ բնությունը թուլությունը, և՛ արհեստի անգորությունը, և՛ դեղերի չնչինությունը:

Երբ Աստված սրբում է մեղքերը, ապա սպի չի թողնում և թույլ չի տալիս, որ որևէ հետք մնա, և առողջություն հետ միասին պարգևում է նաև բարետեսություն, պատժից ազատագրելու հետ միասին տալիս է և արդարացում և մեղավորին հավասարեցնում է անմեղին: Թեկուզև մարդը հազարավոր վերքեր ունենա, բայց երբ ապաշխարում է և ինչ-որ բարի գործ կատարում, Աստված այնպես է հարթեցնում դրանք, որ ո՛չ սպի է մնում, ո՛չ հետք, ո՛չ էլ մեղքի որևէ նշույլ:

Այսպիսով, ինչը մարմնի համար խոց է և բալասան, ապա նույն են մեղքն ու ապաշխարությունը հոգու համար: Անչափ ուշադիր եղիր խոսքերիս հանդեպ. խոց և բալասան, մեղք և ապաշխարություն: Խոցը մեղք է, ապաշխարումը՝ բալասան: Խոցը շարավն է, բալասանը ի վիճակի է մաքրել շարավը: Արդյոք, բալասանի մե՞ջ է շարավը, խոցի մե՞ջ է բուժիչ գորությունը: Արդյոք, դրանք չունե՞ն սեփական հատկություններ: Կարո՞ղ է առաջինը փոխանցվել երկրորդին կամ երկրորդը՝ առաջինին: Ոչ մի դեպքում:

Հիմա անցնենք հոգու մեղքերին: Մեղքը միացած է ամոթի հետ, ապաշխարությունը հյուսված է արիությանը: Ուրեմն, սատանան, իմանալով, որ մեղքը միանում է ամոթին, որ կարող է հեշտությամբ վանել մեղսագործին, իսկ ապաշխարանքը միանում է արիությանը, որը կարող է գրավել ապաշխարողին, աղավաղում է բնական կարգը և ամոթը

տալիս է ապաշխարանքին, իսկ արիությունը՝ մեղքին: Մեղքի մեջ եղող մարդուն թույլ չի տալիս ամոթ զգալ, որովհետև գիտի, որ եթե մեղավորը ամոթ զգա, ապա կփախչի մեղքից, իսկ ապաշխարանքը հարկադրում է նրան ամաչել, իմանալով, որ ամաչողը չի ապաշխարում:

Նա, ով կատարած մեղքերի համար զղջում է, թեպետև զղջումը ցույց չի տալիս՝ ըստ կատարած մեղքի չափի, այնուամենայնիվ, հատուցում է ստանում անգամ այդքան ապաշխարության համար:

Այսպիսով, նրանց, ում դեռևս արատը չի հաղթել, հորդորում եմ չհնազանդվել, որովհետև ավելի դյուրին է հեռու մնալ ապականության մեջ ընկնելուց, քան ընկնելուց հետո՝ ազատվել, իսկ նրանց, ովքեր արդեն գերություն մեջ են և խորտակված, լիակատար փրկության հույս եմ հորդորում, եթե նրանք փութեռանդ են առ ապաշխարանքը:

Ե՛վ բարին, և՛ չարը ինչքան տևական են մնում մեղ հետ, այնքան զորանում են: Ինչպես ծառը, որ նոր-նոր է տնկվել, հեշտությամբ է հողից պոկվում, իսկ երկար ժամանակ արմատներ ձգածին անհնար է դուրս քաշել: Եվ շինությունը, որ նոր է հիմնարկվել, հեշտությամբ է փլուզվում, եթե ցնցում ենք, իսկ եթե լավ է ամրացված, ապա փլուզել ցանկացողներից մեծ ջանքեր է պահանջում: Եվ գազաններին չափազանց դժվար է փախցնել այն վայրերից, որտեղ երկար ժամանակ նրանց համար հաճելի է եղել:

Եվ ինչպես տենդը սկզբում առանձնապես ուժգին է զորանով բռնվածների համար, իսկ երբ ուժեղանում է, և ջերմությունը բարձրանում, հիվանդին ստիպում է անտանելի ծարավ զգալ, և թեկուզ որևէ մեկը նրան անվերջ ջուր տա, միևնույն է, նա ոչ թե կիջեցնի ջերմը, այլ առավել ևս կբորբոքի այն, ճիշտ այդպես է լինում կրքի դեպքում. եթե ամենասկզբում, երբ այն ներխուժում է մեր հոգու մեջ,

մենք չենք խոչընդոտում և նրա առջև չենք կողպում դռները, ապա ներս մտնելով՝ թողնողին այսուհետ պատճառում է անբուժելի ցավ:

Ինչպես հույլ և անհոգ բնությամբ մարդը ոչ մի մեծ բան չի անում և իր անհոգության պատճառով Աստծո հետ չի հաշտվում, այդպես էլ, ընդհակառակը՝ աշխույժ հոգով և բորբոք ձգտումով ապաշխարողը կարող է կարճ ակնթարթում մաքրվել երկար տարիների ընթացքում գործած մեղքերից: Եվ ահա թե ինչպես: Մի՞թե երեք անգամ չուրացավ Պետրոսը, իսկ երրորդ անգամ՝ նույնիսկ երգում տալուց հետո: Չվախեցա՞վ հասարակ ծառայի խոսքերից: Եվ՞ ի՞նչ: Արդյոք, շա՞տ ժամանակ պահանջվեց ապաշխարելու համար: Ամենեկին՝ ոչ: Ընդհակառակը, միևնույն գիշերվա ընթացքում և՛ ընկավ, և՛ բարձրացավ:

Այդպիսի ծանրագույն անկումից հետո (ուրացումից ավելի մեծ մեղք չկա), ապաշխարումը նրան վերադարձրեց նախկին փառքը, և վստահվեց ողջ աշխարհի եկեղեցու ղեկավարումը, և, որ ավելի կարևոր է՝ մեզ ցուցանեց, որ առաքյալներից բոլորից շատ ինքն էր սիրում Տիրոջը:

Իսկ ի՞նչ կարելի է ասել նինվեցիների մասին: Սրանց մոտ գալիս է մարգարեն, հայտարարում, ասես թե, թագավորական ուղերձ-դատավճիռը, որ պատիժ է սահմանում, և բացական չու՞մ է. «Եվս երեք օր, և նիմվեա պիտի կործանվի» (Հովնան, 3, 4):

Լսում են քաղաքի բնակիչները և ոչ անհավատություն են ցուցաբերում, ոչ արհամարհանք, այլ իսկույն բոլորը՝ տղամարդիկ, կանայք, երեխաները, սկսում են պահեցողություն հայտարարել, նույնիսկ համբերը մասնակցում են հանրային այդ սխրանքին. ամենուր՝ քուրճ ու խորդ, ամենուր՝ հող ու մոխիր, ամենուր՝ լաց ու կական: Նույնիսկ ինքը՝ թագավորը ելավ իր գահից, հանեց պատմուճանը,

քուրճը անկողին սարքեց և նստեց մոխրի վրա: Աչքիդ առաջ բացվում էր տարօրինակ և անսովոր տեսարան. ծիրանին գիջում էր ցնցոտիներին:

Իրոք, ինչ ի վիճակի չէր անել ծիրանին, անում էր ցնցոտին, ինչ չէր կարող անել թագը, անում էր մոխիրը:

Ուրեմն, խորհենք, թե մեղքերի ինչ բեռ ունի յուրաքանչյուրս, և մարդասիրության հավասարազոր գործեր կատարենք, կամ ավելի լավ է շատ ավելին անենք, որպեսզի ոչ միայն սրբվեն մեր մեղքերը, այլև որպեսզի մեր ողորմությունները ճշմարիտ համարվեն:

Եթե բարի գործերը այդքան բազմաքանակ չլինեն, որպեսզի նրանց միջոցով հանվեն մեղադրանքները, և որոշակի մնացորդը ճշմարիտ համարվի, ապա ոչ ոք մեզ պատժից չի ազատի: Երբ որևէ մեկին բարկացնելով՝ դու և՛ ընկերներիդ, և՛ հարևաններիդ, և՛ դռնապաններին խնդրում ես, փող ես ծախսում, օրեր ես կորցնում դնալ-գալու և պաղատանքների վրա, որպեսզի ներում ստանաս, և թեպետ քեզնից վիրավորվածը ո՛չ մեկ, ո՛չ երկու, այլ հազար անգամ քեզ մերժում է, դու ամենեկին չես ընկճվում, այլ, ընդհակառակը՝ ավելի համառ ես դառնում և բազմապատկում խնդրանքներդ, իսկ երբ Աստված է բարկանում, մենք ծուլանում ենք, տրվում անհոգության և հաճույքների:

Այդպես վարվելով՝ մենք երբեք կարո՞ղ ենք ակնկալել Նրա ողորմածությունը: Դրանով, արդյոք, ավելի շատ չե՞նք բարկացնելու: Չէ՞ որ մեղքի մասին տրտմության բացակայությունը ավելի ուժգին է առաջացնում Աստծո դժգոհությունն ու բարկությունը, քան բուն մեղանչումը: Մի ասա՝ ես շատ մեղքեր եմ գործել և չեմ կարող ինձ վրա բարկացած Աստծուն դիմել: Եթե այրին անեծք թափեց դատավորի գլխին, որը ո՛չ Աստծուց երկյուղ ունեք, ո՛չ էլ մարդկանցից էր ամաչում, ապա առավել ևս ջանադիր էր

խնդրանքներով բարի Դատավորի ողորմածութիւնը շար-
ժել:

Հետեւաբար, թեկուզև դու ընկեր չես եղել, թեկուզև դու
պահանջում ես իրավունքով քեզ չպատկանողը, թեկուզև
դու ծախսել ու մսխել ես Հայրական ժառանգութիւնը և
երկար ժամանակ հեռու ես եղել Հայրական աչքից, թեկու-
զև վերադարձել ես քեզ վրա զայրացած և դժգոհող (Աստ-
ծու) մոտ՝ լուկ ցանկացիր վերադառնալ և դու ամեն ինչ
կատանաս և իսկույն կմարես զայրույթն ու նախատինքնե-
րը:

Եղբայրներ՛ր, Աստծո նպատակների հիմքում դրված է մե-
ղավորներին ինչքան հնարավոր է հանդուրժելը: Նա ողոր-
մած է երկու փրկիչ նպատակներով. ապաշխարանքի շնոր-
հիվ նախապատրաստել մեղավորների փրկութիւնը և
նրանց սերունդների համար պատրաստել բարեգործութ-
յուն, որոնք պետք է հաջողութեան հասնեն առաքինութեան
մեջ:

Աստված, նորից կրկնում եմ, համբերատար է մեղավոր-
ների հանդեպ, որպեսզի և՛ մեղավորը ապաշխարի, և՛ չփա-
կի նրա սերունդների փրկութեան ճանապարհը: Չնայած
մեղսագործը չի ապաշխարում, Աստված հաճախ խնայում
է արմատը, որպեսզի պահպանի պտուղը, հաճախ նաև
սպասելով, որ մեղավորն ինքը ապաշխարի:

Իսկ թե ինչպես՝ լսիր: Թարան՝ Աբրահամի հայրը, կուռ-
քերի երկրպագուն և շինարարը, սակայն, պատիժ չստա-
ցավ իր անօրեննութեան համար և արդարացիորեն, քանի որ
որտեղի՞ց կաճեր հավատի այդպիսի պտուղ, եթե Աստված
կտրեր արմատը:

Ո՞վ է Եսավից ավելի վատը: Կա՞ ավելի անօրեն ու ա-
նամոթ: Նա՞ չէր այն պոռնիկն ու պիղծը, ինչպես ասում է
Պողոսը (Եբր. 12, 16): Մայրասպան և հայրասպան չէ՞ր: Եղ-

բայրասպան չէ՞ր, ծայրահեղ դեպքում՝ մտքում: Նա չէ՞ր,
որին Աստված այդպես ասում էր և սուրբ Գրքի վկայութե-
ամբ. «Հակոբիմ սիրեցի և Եսավիմ ատեցի» (Հռոմ. 9, 13):

Եթե նա և՛ պոռնիկ էր, և՛ եղբայրասպան, և՛ պիղծ, և՛
Աստծուց ատված, ապա ինչու՞ չի հեռանում (աշխարհից),
ինչու՞ չի վտարվում և ինչու՞ անմիջապես արժանի պատիժ
չի ստանում: Ինչու՞: Հարկ է ճշմարիտ պատասխան գտնել:
Եթե Աստված կործաներ նրան, ապա աշխարհը կզրկվեր
ճշմարտութեան մեծագույն պտղից, իսկ թե որից՝ ասեմ: Ե-
սավը ծնեց Ռազուելին, Ռազուելը ծնեց Զարեհին, Զարեհը
ծնեց Հովբաբին:

Տեսնու՞մ ես, թե ինչպիսի վախճան կունենար համբե-
րութեան ծաղիկը, եթե Աստված նախօրոք պատժեր արմա-
տը: Այսպիսով, ով մեղքի մեջ է հայտնվում, թող չհուսա-
հատվի, նա, ով հայտնվել է առաքինութեան մեջ, թող
չհանգստանա: Թող որ հատկապես վերջինն այդքան հույ-
սը չզրնի իր վրա, որովհետև հաճախ պոռնիկուհին կարող է
կանխել նրան, իսկ առաջինը թող չհուսահատվի, որովհե-
տև նա կարող է գերազանցել ավելի կատարյալներին:

Երբ արդեն բորբոքուն սեր ենք տածում առ Աստված,
Նա այլևս չի հիշում նախկինում եղածը: Չէ՞ որ Աստված
մարդ չէ: Եթե մենք զղջում ենք, Նա չի նախատում անց-
յալի համար և չի ասում՝ դու ինչու՞ էիր հեռացել Ինձնից:
Ընդհակառակը՝ Նա մեզ սիրով է ընդունում, երբ դառնում
ենք դեպի Նա, եթե, իհարկե, դառնում ենք, ինչպես հարկն
է: Կա՞ Մանասեից ավելի վատը: Մյուս կողմից՝ ով՞ է ավե-
լի երանելի, քան Սողոմոնը: Այնուամենայնիվ, առաջինն
ստացավ Աստծո ողորմածութիւնը, իսկ վերջինը, տրվելով
քնի, ընկավ: Այդ պատճառով և Եսավը թողութիւն չստա-
ցավ, քանի որ չապաշխարեց, ինչպես հարկն է. նրա ար-
ցունքները զղջման արցունքներ չէին, այլ զայրույթի և վի-

րավորանքի: Զղջաց նաև Հուդան, բայց ոչ այնպես, ինչպես կարգն է, որովհետև կախվեց:

Եթե ուզում ես իմանալ, թե ինչ բան է իսկական ապաշխարանքը, օրինակ առ Պետրոսի ապաշխարանքը ուրացումից հետո: Քանի որ նա, հավանաբար, իր մասին բարձր կարծիք ուներ, թե ինքը բոլորից շատ է սիրում Հիսուսին, ապա հեռանալով՝ դառնորեն լաց եղավ, բացի այդ, դրանից հետո իրեն ենթարկեց բազմաթիվ վտանգների: Զղջաց նաև երանելի Դավիթը՝ ասելով. «Ամեն զիշեր հեծեծանքով լվացի մահիճն իմ և իմ արտասուքով անկողինս թրջեցի» (Սաղմ. 6, 7) և վաղուց կատարված մեղքերը այդքան տարիներ անց, այդքան սերունդներ հետո ողբում է այնպես, ասես, հենց նոր գործված լինեն:

Զղջացողը պետք է ո՛չ գայրանա և ո՛չ էլ բարկանա, այլ այնպես ցնցվի, ինչպես մեղավորը, որպես արիությունը կորցրած մեկը, ինչպես դատապարտվածը, որը պետք է փրկություն գտնի միայն ողորմածություն շնորհիվ, որպես մի մարդ, որ անշնորհակալ է գտնվել բարերարի հանդեպ, որպես մերժված և արժանի անհամար պատիժների:

Ուրեմն, թող որ ոչ կյանքը բեմում անցկացրածը հուսահատվի, ոչ էլ եկեղեցում ծառայածը հույսն իր վրա դնի, քանի որ վերջինիս մասին Աստված ասում է. «Ով կարծում է, թե կանգնած է հաստատ, թող զգույշ լինի, գուցե թե ընկնի» (Ա Կորնթ. 10, 12), իսկ երկրորդի մասին՝ «Նա, որ գլորվում է, մի՞թե չի ելնում» (Երեմ. 8, 4):

Մեկը պետք է պահպանի այն, ինչ ունի, երկրորդը դառնա այն, ինչ ինքը չէ, մեկը պետք է պահպանի առողջութունը, մյուսը ազատվի տկարությունից, որովհետև դրանից տառապում է: Մեկին, հետևաբար, Նա ասում է. «Ահավասիկ առողջացար, այլևս մի՛ մեղանչիր, որպեսզի մի ավելի չար բան չպատահի քեզ» (Հովհ. 5, 14), իսկ մյուսին՝ «Կամե-

նու՞մ ես առողջ լինել, վե՛ր կաց, վերցրու քո մահիճը և գնա՛» (Հովհ. 5, 6 և 8):

Եվ եթե դու երեսուներեք տարի հիվանդություն ունես, ինչպես այն անդամալույծը, ապա ոչ ոք չի խոչընդոտի, եթե դու ցանկանում ես առողջանալ, միայն կամեցիր վեր կենալ, միայն թե բռնիր այն ճանապարհը, որ բերում է այստեղ, և շուտով հաջողության կհասնես, լոկ մի ծածկիր դուռը և մի փակիր մուտքը: Ներկա ժամանակը կարճ է, մեծ նեղություն չէ, սակայն եթե անգամ այն մեծ լիներ, ապա այդ դեպքում նույնպես հարկ չկար ընկճվելու: Եթե դու քրտինք չթափես այդ գեղեցկագույն աշխատանքով, ինչպիսին ապաշխարությունն է, ապա գալիք աշխատհույս կունենաս այլ որակի ավելի ծանր փորձություններ և տառապալից աշխատանք:

Եթե և՛ այստեղ, և՛ այնտեղ աշխատանք է, ապա ինչու՞ չենք ընտրում այն, որ բերում է առատ բերք և մեծ պարգև: Եթե Աստված մեզ բարեգործություն է անում, երբ արժանի չենք դրան, և ողորմած է մեղանչածների նկատմամբ, ապա ինչերի՞ կհասնենք, ի՞նչ հաճույքներ կունենանք, եթե հեռու մնանք անօրենություններից և բռնենք առաքինության ուղին: Նրանց, ովքեր խելք ունեն, հրապուրում են ավելի շատ պատվիրանների կատարման բարեբերությունը, քան պատիժները:

Աստված մեզ արժանացրել է այնպիսի բարերարության, որ դրանից հետո, երբ մենք երախտապարտ կլինենք, Նրան շնորհակալություն կհայտնենք նախկինում տրված բարիքների համար և ցույց կտանք, որ դեպի լավն ենք փոխվել, այդ դեպքում էլ նույնպիսի առատաձեռնություն մեզ կարժանացնի:

Եթե մեր առջև մեղանչած ծառաներին ներում ենք և վերադարձնում իրենց տեղերը, երբ խոստանում են ուղղվել,

իսկ հաճախ նույնիսկ ավելի ենք վստահում, ապա առավել ևս այդպես մեզ հետ կվարվի Աստված, եթե մեր մեղքերին համապատասխան ապաշխարենք:

Եվ դա երևում է երանելի Դավթի հետ կատարված օրինակից: Նա սայթաքեց և ընկավ, մեղանչեց շնությամբ և սպանությամբ, բայց քանի որ անկումից հետո չմնաց պառկած, այլ ոտքի կանգնեց և Աստծո օգնությամբ զինվեց թշնամու դեմ, և այնպիսի խիզախությամբ հաղթեց, որ մահվամբ անգամ դարձավ իր սերունդների հովանավորը:

Այսպես, Սողոմոնին, որ մեծ անօրեննություններ կատարեց և արժանացավ հազարավոր մահերի, Աստված ասում է, որ հանուն Դավթի պահպանում է նրա թագավորությունը. «Ես կխլեմ թագավորությունը քո ձեռքից և այն կտամ քո ծառային: Բայց հանուն քո հայր Դավթի, քո կենդանության ժամանակ չեմ անի դա, այլ որդուդ ձեռքից կխլեմ թագավորությունը» (Գ Թագ. 11, 11-12):

Եվ Եզեկիային, որ հայտնվում է ծայրահեղ վտանգի մեջ, թեկուզև առաքինի էր, նույնպես օգնություն է խոստանում հանուն երանելու. «Այս քաղաքը պիտի հովանավորեմ, որպեսզի այն ազատեմ ինձ ու իմ ծառա Դավթի համար» (Գ Թագ. 19, 34):

Ինչպես նրանց նկատմամբ, ովքեր ցուցաբերում են հոգու ազնվություն, Աստված Իրեն հատուկ բարերարություններ փոխում է դատավճիռները, ընդունում է զղջացողներին և ազատում սպառնացող պատիժներից, այդպես էլ հակառակը՝ երբ Նա խոստանում է նվիրել կա՛մ որևէ բարիք, կա՛մ ժամանակ ապաշխարելու համար, բայց տեսնում է, որ խոստում ստացածը անարժան է դառնում, նույն կերպ փոխում է խոստումը: Այնքան հանցավոր բան չէ մեղք գործելը, որքան մեղքի մեջ մնալը: Չէ՞ որ հենց այդ պատճառով է Աստված մեզ նախապես բարերարություն

անում և մեղանչածներին վերստին ներման արժանացնում և պատիժը անմիջապես ի կատար չի ածում, որպեսզի բոլոր միջոցներով՝ և՛ բարերարություններ, և՛ համբերատարություններ, մեզ մղի ապաշխարության, հաճախ նաև պատիժներով, որոնցով պատժում է ոմանց, որպեսզի մյուսներին ապաշխարության օրինակ տա, որպեսզի վախից խելքի գան և խուսափեն մեղանչելուց:

Դու չա՞տ ես մեղանչել: Վերջապես կանգ առ, բռնիր հակառակ ճանապարհը, երախտապարտ եղիր Աստծուն, որ Նա չարտաքսեց քեզ (ողջերից) մեղք կատարելու պահին, և մի ցանկացիր, որ քեզ նորից չարիք կատարելու ժամանակ տրվի: Մի ասա՝ դեռ ժամանակ կլինի, որպեսզի դարձի գամ: Շատերը կորստյան մատնվեցին հենց այն պահին, երբ տրվեցին շահամուլության և դատապարտվեցին տաժանքի: Երկյուղ ունեցիր, որպեսզի և դու չենթարկվես դատապարտման՝ առանց արդարացման հույսի:

Բայց շատերին, ասում ես, Աստված ժամանակ տվեց մինչև խոր ծերություն: Ի՞նչ ես ուզում ասել, քեզ էլ տա՞: Հնարավոր է և տա՝ ասում ես դու: Ի՞նչ են նշանակում «հնարավոր է», «երբեմն», «հաճախ» բառերը: Մտածիր, որ խոսքը հոգուդ մասին է, պատկերացրու նաև հակառակը, կշռադատիր և ասա՝ իսկ եթե չտա՞:

Իսկ եթե հանկարծ տա՝ ասում ես դու: Ենթադրենք, թե Աստված կարող է և տալ, սակայն անմիջական դարձը և՛ անվտանգ է, և՛ օգտակար ու շարվածից: Իրոք, եթե արդեն սկսել ես այն, ապա բոլոր դեպքերում քեզ համար օգտակար է և կարևոր չէ՝ տարկետում կունենա՞ս, թե՞ չես ունենա: Եթե դու անընդհատ հետաձգում ես, գուցե հենց այդ պատճառով չես ստանում: Գնալով պատերազմ՝ դու չես ասում. «Պետք չէ հոգևոր կտակ գրել, հնարավոր է վերադառնամ», պատրաստվելով ամուսնանալ՝ չես ասում.

«Կնուլթյան վերցնեմ աղքատի, շատերը, չնայած դրան, ակնկալածից ավելի հարստացան», սկսելով տուն կառուցել, դու չես ասում. «Տունս կառուցեմ խարխուլ հիմքի վրա, շատ տներ այդպես էլ կանգուն են մնում»:

Իսկ երբ խոսքը վերաբերում է հոգուն, դու փորձում ես հաստատվել խարխուլ հիմքի՞, «հնարավոր է», «երբեմն», «հաճախ» բառերի վրա՞ և քեզ հանձնում ես անհայտի՞ն: «Ոչ թե անհայտին, - ասում ես դու, - այլ Աստծո ողորմածուլթյանը, որովհետև Աստված ողորմած է»:

Ես էլ գիտեմ, որ այդպես է, սակայն այդ ողորմածը արտաքսեց (ողջերից) և՛ նրանց, որոնց մասին ես ասացի: Ուզում ես իմանալ, թե մեր Տերը ինչ բարի՞ է: Գալիս է Նրա մոտ մաքսավորը՝ լի անհամար արատներով և միայն ասում է՝ «Աստված Աերի՛ր ինձ» (Ղուկ. 18, 13) և հեռանում է արդարացված: Եվ մարգարեի միջոցով էլ է Աստված ասում. «Մեղքի պատճառով սակավ ժամանակ տրտմություն հասցրի նրան, ես տեսա նրա սրտի ճանապարհները և բժշկեցի նրան» (Եսայի, 57, 17, 18):

Ի՞նչը կարող է համեմատվել այսպիսի մարգասիրուլթյան հետ: Միայն այն պատճառով, որ նա տրտմում է, Նա ներում է մեղքերը: Իսկ մենք նույնիսկ դա չենք անում և այդ պատճառով հատկապես բարկացնում ենք Նրան: Նա ամենաողորմածը լինելով, երբ չի տեսնում անգամ դա, արդարացիորեն բարկանում է և մեզ ենթարկում մեծագույն պատիժների, որովհետև դա ցույց է տալիս մեր ծայրահեղ անփութությունը: Ո՞վ է երբևէ վշտացել մեղքերի համար: Ո՞վ է տրտնջացել: Ո՞վ է կուրծք ծեծել: Ես չգիտեմ որևէ մեկին:

Մարդիկ անվերջորեն ողբում են մեռած ծառաների, ունեցվածքի կորստի և, ամեն օր կործանելով սեփական հոգին, այդ մասին ամենևին չեն մտածում: Ինչպե՞ս կարող

ես Աստծո գուլթը շարժել, երբ անգամ չգիտես, որ մեղք ես գործել: Ճիշտ է, ասում ես դու, որ մեղավոր ես: Բայց դա դու ասում ես լոկ լեզվով, ասա և սրտով, և խոսքի հետ ախքաշիր, որպեսզի մշտապես լավ տրամադրուլթյան մեջ լինես: Չէ՞ որ եթե մենք մշտապես տրտմեինք մեղքերի համար, եթե զղջայինք գործած մեղքերի համար, ապա ուրիշ ոչ մի բան մեզ չէր վշտացնի, որովհետև այդ վիշտը ի դերև է անում ցանկացած տրտմուլթյուն: Ինչպես թռչնին, որ ցանցն է ընկնում, թևերից օգուտ չկա, և նա միանգամայն անտեղի է թափահարում, ճիշտ այդպես դու էլ ոչ մի օգուտ չունես խելքից, եթե գերի ես դարձել սեփական չար կրքերիդ:

Եթե իրական կյանքում մենք չենք կամենում մեկնումեկի առաջ խայտառակ լինել, ապա ի՞նչ կարող ենք անել այն աշխարհում բյուրավորների առաջ: Ապաշխարանք է համարվում ոչ այն, որ հրաժարվում ենք նախկին չարուլթյուններից, այլև հարկ է նաև բարի գործեր կատարել. «Խուսափի՛ր չարից, - ասում է, - և բարություն՛ն արա» (Սաղմ. 36, 27):

Ապաքինվելու համար բավական չէ միայն նետը հանել, այլ պահանջվում է նաև դեղ դնել վերքին: Պատահում է, որ մեկը ապաշխարանքից հետո բազմաթիվ բարի գործեր է կատարում, մինչդեռ վերստին հայտնվում է մեղքի մեջ, որ համազոր է այդ բարի գործերին, և դա բավական է, որ նրան մղի հուսահատուլթյան, կարծես թե բոլոր արածները կորսված են, և նրա բոլոր ջանքերն ապարդյուն էին: Այդ միտքը հարկավոր է մի կողմ դնել և մտածել այն մասին, որ եթե մենք հասցնում ենք բարի գործերի չափավոր պաշար ստեղծել, որոնք համազոր են հետո կատարած մեղքերին, ապա ոչ մի բան չի կարող անխուսափ դարձնել մեր ամբողջական կործանումը:

Իսկ հիմա (բարի գործերը) կարծես թե ամուր գրահի պես թույլ չեն տալիս սուր, մահացու նետին իր գործն անել, և անգամ ճեղքված լինելով դրանով, մարմինը պաշտպանում են մեծ վտանգից...

Այսպիսով, դժբախտությունն այն չէ, որ մարտնչելով վիրավորվում ենք, այլ այն, որ պարտությունից հետո հուսահատվում և հոգ չենք տանում վերքի մասին:

Ոչ մի առևտրական, ենթարկվելով նավաբեկության և կորցնելով ողջ ունեցվածքը, չի թողնում ծովագնացությունը, այլ կրկին ճամփորդում է ծովերով և լայնատարած անհուններով և վերստին ձեռք բերում նախկին հարստությունը: Բազմաթիվ պարտություններից հետո էլ լինում են ըմբիշներ, որոնք հաղթանակում են, և զինվորներ, որոնք բազում անգամներ փախուստ տալով մարտադաշտից, վերջի վերջո, հերոսանում են և հաղթում թշնամիներին: Քրիստոսին ուրացողներից շատերը չարչարանքների երկյուղից կրկին մարտի են բռնվում և հեռանում՝ մարտիրոսություն պսակով զարդարված: Բայց եթե նրանցից յուրաքանչյուրը առաջին իսկ զարկից հետո հուսահատվեր, ապա չէին ստանա հետագա բարիքները:

Եւ թող որ մենք բոլորս նմանվենք նրանց, ողորմածությունամբ և մարդասիրությամբ մեր Տեր Հիսուս Քրիստոսի, Որին փառք և զորություն հավիտյանս հավիտենից. Ամեն:



ԵՐՁԱՆԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԺԲԱԽՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Կատ մարդիկ կարծում են, որ երբ իրենք հարստանում են, երբ հասել են փառքի, երբ իրենց գործերը հաջող ընթացք ունեն, երբ հաղթում են իրենց թշնամիներին, այնժամ Աստված իրենց հիշում է, այդ պատճառով նրանք չգիտեն, թե Աստված երբ է իրենց մոռացություն մատնում: Չիմանալով Աստծո հիշելու բնույթը՝ նրանք չեն իմանում Նրա մոռանալու բնույթը:

Աստծո՝ մեր մասին հիշելը որևէ այլ բանից չի գալիս, քան առաքինության մեջ վարժվելու ջանադիր վարքից, իսկ մեզ մոռացություն մատնելը որևէ այլ բանից չի գալիս, քան մեղքի մեջ հայտնվելուց:

Այդ պատճառով և դու, մարդ արարած, երբ գտնվում ես դժբախտության մեջ, մի ասա՝ Աստված ինձ մոռացել է, ընդհակառակը՝ Նա քեզ մոռանում է այնժամ, երբ մեղքերի մեջ ես, և հատկապես այնժամ, երբ ամեն ինչ հաջող է ընթանում: Զգաստ և արթուն հոգին ցույց է տալիս իր բարեպաշտությունը ոչ միայն այնժամ, երբ գործերը հաջող են, այլև դժբախտության դեպքում հավասարապես չնորհապարտ է Աստծուն, ամենևին չթուլացնելով իր վերաբերմունքը անգամ այն ժամանակ, երբ հանգամանքները փոխվում են:

Ինչպես ջրառատ հոսանքը, իր մեջ ներառելով վտակի ջրերը, պղպղակներ է առաջացնում, որոնց մի մասը անմիջապես պայթում է, իսկ մյուսները, թեպետև որոշ ժամանակ ուռչում են, սակայն, ի վերջո, նույնպես պայթում, այդպիսին է նաև կյանքի իրական ծովը՝ ոմանց անմիջա-

պես կուլ է տալիս, իսկ ոմանց, որոնց ուժը հերիքում է որոշ ժամանակ ղիմանալ, սակայն, այնուամենայնիվ, կուլ են գնում:

Իսկ դու ինչու՞ ես շփոթվում, երբ մեկը կյանքից հեռանում է, իսկ մեկ ուրիշը աշխարհ է գալիս: Քրիստոսին խաչեցին, իսկ ավագակ Բարաբբային խնդրեցին ազատել. մարդասպանին նախընտրեցին Փրկչից:

Երբ վատ փոփոխություններ են կատարվում, այնժամ շողորթյունների ղիմակը պատռվում է, այնժամ մերկացվում է երեսպաշտների ամբոխը և կեղծավորությունը, և բոլոր բերանները բացվում են ու ասում՝ արհամարհելի, դարձելի, ստորի մեկը, դու նա չէի՞ր, որ քծնում էր, դու չէի՞ր, որ լիզում էիր նրա ձեռքերը: Ասում են՝ այն ղիմակ էր, եկավ ժամանակը, և ես դեն նետեցի ղիմակը ու լեզուս բացվեց:

Շատերը կարեկցում են ընկերներին, երբ դժբախտություն է պատահում, սակայն նրանց հետ ուրախանալ, երբ նրանք փառքի մեջ են, չեն կարողանում: Իսկպպես, «ուրախացողների հետ ուրախանալը» ոչ միայն փոքր առաքինություն է, այլև շատ ավելին է, քան «լացողների հետ լալը» (Հռոմ. 12, 15) և վտանգի ժամանակ պաշտպանելը:

Շատերը կիսում են վտանգը վտանգի մեջ հայտնվածների հետ, սակայն երջանկության մեջ հայտնվածների հետ չեն ուրախանում, այլ ընդհակառակը՝ նույնիսկ դառնանում են և այդպիսով ավելի դժվարին ղիմանալով, անզորանում են ավելի հեշտի ժամանակ:

Իրոք, ոչ մի բան մարդկանց այդքան անմիտ և հանցավոր չի դարձնում, որքան փառքի հետ կապվածությունը, և ոչինչ նրանց ավելի հարգարժան և հաստատակամ չի դարձնում, որքան արհամարհանքը փառքի նկատմամբ: Այդ պատճառով բավական արի հոգի է անհրաժեշտ նրան, ով ցանկանում է ղիմանալ այդքան սաստիկ քամու ուժով

նությանն ու ճնշմանը:

Երբ փառքին կապված մարդը երջանկանում է, իրեն բարձր է համարում ուրիշներից, իսկ երբ հակառակը՝ անհաջողություն է մատնվում, վշտից պատրաստ է գետինը մտնել: Երեք պատանիների նետում են հնոց, և չնայած դրան, նրանք իրենց բարեպաշտությունը չեն մոռանում: Որովհետև կրակը նրանց համար դառնում է պատ, բոցը՝ հագուստ, հնոցը՝ աղբյուր. նրանց կապկպված ընդունելով՝ ազատ է արձակում, ընդունում է նրանց մահկանացու մարմինները և չի դիպչում՝ որպես անմահների, չի ճանաչում բնությունը, բայց հարգում է բարեպաշտությունը: Չարհարողը կապում է ոտքերը, իսկ ոտքերը կապում են կրակի ուժը: Օ՛, դյուրթիչ հրաշք: Կալանվածներին կրակն ազատ է արձակում, իսկ ինքն այնուհետև կալանվում է կալանվածներից:

Պատանիների բարեպաշտությունը փոխում է իրերի բնույթը, ավելի լավ է ասել՝ ոչ թե բնությունն է փոխում, այլ, որ ավելի զարմանալի է, բնությունը չի փոխում, դադարեցվում է նրա գործունեությունը. այն չի հանգցնում կրակը, այլ ստիպում է՝ վառվելով ցույց չտալ իր ուժը: Եվ որն է ամենից հրաշալի՝ դա պատահում է ոչ միայն սրբերի մարմինների, այլև հագուստների հետ:

Ինչպես առաքյալների մոտ Պողոսի հագուստները վերացնում են հիվանդությունները և հալածում դեերին, և Պետրոսի ստվերը փախուստի է մատնում մահվանը, այնպես էլ այստեղ՝ պատանիների ոտնամանները մարում են կրակի գորությունը:

Չգիտեմ, էլ ինչպե՞ս ասեմ, որովհետև հրաշքը գերազանցում է բոլոր բառերին: Կրակը և՛ մարում է, և՛ չի մարում: Երբ դիպչում է սուրբ պատանիների մարմիններին, մարում է, իսկ երբ հարկ է լինում արձակել հանգուցյնե-

ըր, չի մարում, կապերն արձակում է, իսկ կրունկներին չի դիպչում:

Տեսնո՞ւմ ես ինչքան մոտիկ է, և կրակը չի սխալվում ու չի հանդգնում կապանքներից այն կողմ անցնել: Ինչի՞ համար էր չարչարողը կապել նրանց՝ կրակը նետելու մտադրությունը: Որպեսզի հրաշքն ավելի փառավոր լիներ, որպեսզի նշանն ավելի զարմանալի լիներ, որպեսզի տեսածը դու չընդունեիր տեսողական խաբկանք:

Եթե կրակը կրակ չլիներ, ապա չէր ոչնչացնի կապանքները, չէր այրի կրակի մոտ նստածներին (զինվորներին): Իսկ հիմա կրակից դուրս գտնվողներին ցույց էր տալիս իր ուժը, իսկ կրակի մեջ գտնվողներին՝ իր հնազանդությունը: Եվ երբ չարչարողը տեսավ, որ պատանիները ամենևին չեն վնասվում, լսիր, թե ինչպես վերափոխվեց. «Բարձրյալ Աստծու ծառայանք, - ասում է, - ելե՛ք և եկե՛ք» (Դանիել, 3, 93): Մինչդեռ անմիջապես դրանից առաջ ասում էր. «Ո՞վ է այն աստվածը, որ կփրկի ձեզ իմ ձեռքից» (Դանիել, 3, 15):

Իսկ ի՞նչ էր պատահել: Որտեղի՞ց այդ փոփոխությունը: Դու տեսար, թե ինչպես վախճանվեցին հնոցից դուրս գտնվողները և ձայն ես տալիս ներսում գտնվողներին: Որտեղի՞ց իջավ քեզ վրա այդպիսի իմաստասիրություն: Տեսա՞ր, թե ինչ փոփոխություն կատարվեց թագավորի հետ: Հենց այդ պատճառով թույլ տվեց Աստված, որ այդ ամենը այդպես կատարվի, ինչ ցանկանում էր չարչարողը, որպեսզի ցույց տա, թե նրանց, ում Աստված պահպանում է, ոչ ոք չի կարող վնաս պատճառել:

Նույնը Նա կատարեց Հոբի հետ: Աստված թույլ տվեց աստանային, որ սա ցույց տա իր ողջ զորությունը, և երբ նա սպառեց իր բոլոր միջոցները, և երբ խարդավանքի ոչ մի տեսակ չմնաց, ասպարեզից հանեց երանելուն, որպեսզի հաղթանակը փառավոր և անկասկածելի լինի:

Եվ երանելի Պողոսը, որ լուսավորեց ողջ աշխարհը, առաքելություն ստանալու պահին կուրացավ, սակայն նրա կուրացումը լուսավորեց ողջ աշխարհը: Քանի որ նա վատ էր տեսնում, ապա Աստված նրան լավ կուրացրեց, որպեսզի ավելի ճշմարիտ տեսնի և որովհետև չափազանց ուժգին էր հալածում եկեղեցուն ու զորավոր և անսանձ մարդ էր, ապա նրան ուժեղ սանձ դրեց, որպեսզի նա, հրապուրված իր կրքերով, ականջալուր լիներ իրեն ասվածներին, ինչպես նաև իմանալ, թե Ում դեմ պայքարում է, չի կարող տանել ոչ միայն Նրանից ստացած պատիժները, այլև բարեգործությունը, քանի որ ոչ թե խավարն է կուրացնում նրան, այլ լույսի ուժգին պայծառությունն է նետում խավարի մեջ:

Իսկ ի՞նչ ասեմ Պետրոսի մասին: «Նա մտավ, - ասվում է, - անվակներից մեկի մեջ, որ Սիմոնիսն էր, և խնդրեց նրան, որ ցամաքից փոքր-ինչ հեռացնի այն» (Ղուկ. 5, 3): Տեսնո՞ւմ ես, թե ինչպես է մտնում նավ՝ նավի կարիք ամենևին չունենալով, որպեսզի որսի նավի տիրոջը: Իսկապես, ինչու՞ է Տերը խնդրում Սիմոնին: Ինչու՞ է Սիմոնը, ողջ գիշեր չարչարվելով և այդպես էլ ոչինչ չբռնելով, մնում անգործ: Նա չափազանց սրտնեղում էր և դատարկ ձեռքերով լվանում ուռկանը ու կարգի բերում, և քանի որ ոչինչ չէր բռնել, վշտացած էր: Այդ պատճառով Տերը, նայելով նրա տրտմած դեմքին, ասում է. «Ձկնորս, կարճ ժամանակով փոխ տուր նավակդ, որպեսզի նրա վրայից քարոզեմ ժողովրդին, որ գալիս է իմ ետևից»:

Իսկ Սիմոնը, որ անհաջողությունից վշտացած էր, ասում է Տիրոջը. «Որտեղի՞ց հայտնվեցիր, մարդ: Ինչու՞ ես ինձ նեղություն տալիս: Ուրիշ նավակ փնտրիր, եթե կամենում ես ծովում մնալ: Չե՞ս տեսնում՝ ես վշտացած եմ, քանի որ ուտելու ոչինչ չունեմ, իսկ դու հացի փոխարեն խոստա-

նում ես Աստծո խոսքը: Ես չգիտեմ որտեղից փող ճարեմ, որպեսզի կերակրեմ զոքանչիս և կնոջս, քեզ տամ նավակս, որ ցերեկը նուշնպես ձեռնունայն աշխատեմ, ինչպես գիշերը: Եթե տեղափոխելու համար կվճարես, մտիր նավ, իսկ եթե չես վճարելու, ապա խնդրում եմ, հեռացիր, որովհետև ինձ կերակրում է իմ արհեստը և ոչ թե խոսքը»:

«Մի տրտնջա, Սիմոն, - պատասխանում է Տերը, - ճշմարիտ եմ ասում, դու խոսում ես, ինչպես նավավար, Իմ ներկայությունը քեզ ոչնչից չի զրկի, այն քեզ ավելի շուտ լիովնություն կրերի, քան պակասություն»:

Լսելով այդ և պարզեւ ստանալու հուշից փոքր-ինչ ուրախանալով՝ Սիմոնը նավ է ընդունում Տիրոջը: Իսկ Հիսուս, ասվում է, «նավակի միջից ուսուցանում էր ժողովրդին» (Ղուկ. 5, 3): Բայց Սիմոնը, լսելով քարոզը, սկսում է տրտնջալ՝ ինքն իրեն ասելով. «Մի՞թե դրանից պետք է վճար ստանամ: Գիշերը նուշնպես անհաջողություն ունեցա, իսկ ո՞վ է նա, որին հանդիպեցի այսօր: Նա, ով խոսում է անընչաքաղցության մասին, քարոզում է, որ ոչ ոք ոչինչ չպիտի ունենա, կարո՞ղ է Նա ցանկանում է, որ ես ծախեմ նավակս, որպեսզի ամեն ինչ բաժանեմ աղքատներին: Մի՞թե նրանից հնարավոր է որևէ բան ստանալ»: Այնուհետև, մոտենալով Տիրոջը, ասում է. «Քո ասածներդ հրաշալի են, խոսքդ հաճելի է, վարդապետությունդ արժանի է հարգանքի, սակայն կատարիր մեր պայմանը»: Եվ Տերն ասում է Սիմոնին. «Ինձնից պարզե՞ս ուզում ստանալ: Քչի՞ր տար դեպի խորերը, և ձեր ուռկանները գցեցե՛ք որսալու համար»: Իսկ Սիմոնը Տիրոջը ասում է. «Մի՞թե նորից պիտի որս անեմ, ուռկան գցեմ և նեղություն քաշեմ: Օ՛ր, եթե գիշերը ձեռնունայն չմնայի: Մի՞թե դու ինձանից նավարկության արվեստում ավելի փորձառու ես: Կամ ինչ-որ բան ունես անտեսանելի խորքերո՞ւմ: Կարող ես լի-

նել ուսուցիչ, բայց մի՞թե նաև ձկնորս ես: Հեռացիր ինձանից: Տեսնում եմ, որ ոչինչ չես կարող վճարել: Ինչ է, ժամանակ պիտի կորցնեմ: Այդ մասին ես սկզբից չասացի՞»:

Այնժամ Տերն ասաց Սիմոնին. «Ինձ մի՛ նայիր, Սիմոն, որպես ոչինչ չունեցողի, ո՛չ Իմ ձեռքերին նայիր, ո՛չ էլ ծոցիս հայացք նետիր, ո՛չ թե ձեռքերիս, այլ Իմ բերանում է քո վարձը: Քչիր դեպի խորերը, և ձեր ուռկանները գցեցեք որսալու համար»: Բայց սա պատասխանում է. «Վարդապե՛տ, ամբողջ այս գիշեր չարչարվեցի՞մք և ոչինչ չքոնեցի՞մք: Բայց քո խոսքի համար ուռկանները կոցե՞մք: Երբ այդ արեցի՞մ, ձկների մի մեծ բազմություն՝ անբնականորեն, այնքան որ արանց ուռկանները պատույում էին» (Ղուկ. 5, 5-6):

Օ՛ հրաշք: Սակայն Պետրոսին չի լքում մտահոգությունը, ուռկանները պատուվում են, իսկ նա նայում է Քրիստոսին, խորհում ձկների և խորհրդածում հրաշքի մասին: Նա անզոր է դուրս քաշել ծանրությունը և որսակիցներին օգնություն է կանչում: Մյուս նավակում գտնվողները, որտեղ նաև Հակոբն ու Հովհաննեսն էին, գալիս են, սկսում հավաքել ձկները և ինչքան շատ են հավաքում, այնքան ձկները շատանում են: Ձկները, մեկը մյուսից առաջ ընկնելով, շտապում են կատարել Տիրոջ հրամանը. փոքրերը շրջանցում են մեծերին, միջինները առաջ են ընկնում ավելի խոշորներից, մեծերը թռչում են փոքրերի վրայով, նրանք չեն սպասում որսորդներին, այլ իրենք են նետվում նավակի մեջ: Ծովի հատակը դատարկվում է, ոչ մի ձուկ չի ցանկանում մնալ ներքևում և, քանի որ ուռկանները պատուվում են, որոշները իրենք են նետվում նավակ, մյուսները մնում են ուռկանների կողքին, որպեսզի բռնվեն՝ չուզենալով հեռանալ:

Իսկ Սիմոնը: Երկու հանգամանքների՝ գիշերային անհաջող և Հիսուսի խոսքով կատարված ցերեկային հաջող

որսի տպավորութեան տակ, Սիմոնը՝ տեսնելով այդ, Տիրոջ ծնկներին ընկավ և ասաց. «Ինչպիսիք հեռու՛ գնա, Տե՛ր, որովհետև ես մեղավոր մարդ եմ» (Ղուկ. 5, 8), վերջապես ես իմացա, թե ով ես Դու: Երբեք ձկների այդպիսի որս չեմ տեսել: Տե՛ր, ձկները, սովորաբար, ներփակվում են ուռիների մեջ, իսկ ես տեսնում եմ հակառակը՝ երբևէ չեղած հրաշք՝ զրսից իրենց նետում են ուռիների մեջ: Վերջապես դադարեցրու քո աստվածային հրամանը, ծովում գոնե երկու ձուկ թող բազմացման համար: «Ինչպիսիք հեռու՛ գնա, Տե՛ր», այդ քե՛զ չեմ մերժում, այլ ինքս ինձ եմ համարում անարժան: «Ինչպիսիք հեռու՛ գնա, Տե՛ր, որովհետև ես մեղավոր մարդ եմ»: Իսկ Հիսուսը՝ «Մի՛ վախեցիր, Պետրոս՛, այսուհետև դու մարդկա՛նց պիտի որսաս կյանքի համար» (Ղուկ. 5, 10): Օ՛ր աստվածային զորութուն: Օ՛ր Պետրոսի խոհանոցություն: Հենց որ լսեց Տիրոջ հրամանը, իսկույն հնազանդեց: Ո՛չ ձուկը վաճառեց, ո՛չ կնոջը հրաժեշտ տվեց, և նավակը ցամաք հանելով, ամեն ինչ թողեց և հետևեց Քրիստոսին:

Այդպես և Ղազարոսին մեծահարուստը տեսավ Աբրահամի գոգում. որպեսզի ինչպես առաջինին ծանրագույն փորձութեան ենթարկեց նրա համար, որ նա պառկել էր մեծահարուստի դռան առաջ և տեսել ուրիշների բարիքները, այդպես և վերջինին ենթարկեց այժմ դժոխքից ավելի ծանր պատժի, որ նա տեսել էր Ղազարոսի երանութունը, որպեսզի ոչ միայն տառապանքի բնույթով, այլև Ղազարոսի պարզևի համեմատությամբ, ստանա դաժանագույն պատիժ:

Ինչպես և Ադամին՝ արտաքսելով դրախտից, Աստված բնակեցրեց զրախտի դեմհանդիման, որպեսզի, զրախտը ամեն օր տեսնելով՝ նա կրկին ու կրկին տրտմի, ստիպվի՝ վերստին զգալու զրախտի բարիքների կորուստը, այդպես և մեծահարուստին տեղավորեց Ղազարոսի դիմաց, որպես-

զի տեսնի, թե ինչ բարիքներից է զրկվել: Սակայն ինչու՞ մեծահարուստը խնդրանքով դիմում է ոչ թե Ղազարոսին, այլ Աբրահամին: Պարզապես ամաչում և շփոթվում է, քանի որ սեփական փորձից զիտեր, որ նա անկասկած հիշում է վիրավորանքը:

«Եթե ես, - խորհում է նա, - այդպիսի հարստության տեր եմ դարձել՝ առանց չարչարանքի, և արհամարհեցի ծայր աղքատության մեջ գտնվող մարդուն և նրան անգամ փշրանքի չարժանացրի, ապա առավել ևս նա, որ այդքան արհամարհված էր ինձնից, իմ նկատմամբ ներողամտութուն չի ունենա»: Այդ պատճառով նա դիմում է Աբրահամին, ով, ինչպես մեծահարուստն էր մտածում, անտեղյակ էր կատարվածին՝ չիմանալով, որ նահապետը խոսում է ոչ թե իր անունից, այլ բարբառում է Աստծո օրհնքները, և խնդրում է Ղազարոսի մատի ծայրը, մի մարդու, որին հաճախ ինքը թողել էր շների լիզանքին:

Սակայն տես, թե ինչ ողորմած է արդարակյացը: Նա չի ասում՝ տմարդի, դաժան, պիղծ, ինչքան չարիքներ ես պատճառել նրան, իսկ հիմա հիշել ես մարդասիրության, ողորմածության, ներողամտության մասին: Եվ դեռ չե՞ս ամաչում և կարմրում: Ոչ մի այդպիսի բան չի ասում, այլ. «Հիշի՛ր, որ դու ստացար քո բարիքները» (Ղուկ. 16, 25):

Վերստին մի խոռվիր հնազանդ հոգուն՝ ասում է նա, նրա չարչարանքները բավական են, այլևս չենք հիշելու նրա դժբախտությունները: Ինչ կարող եմ, ասում է, այն էլ տալիս եմ քեզ, սակայն այստեղից ձեզ մոտ անցնել՝ մեր իշխանութունից վեր է:

Լսենք, թե ինչ է ասում մեծահարուստը Աբրահամին. «Հայր Աբրահամ, ողորմի՛ր ինձ և ուղարկի՛ր Ղազարոսին, որ իր մատի ծայրը թրջի ջրով և գովացնի լեզուս, որովհետև այս տապից պապակում եմ» (Ղուկ. 16, 24): Այսպիսով, ինչու՞ է նա

խնդրում Աբրահամին և ոչ թե Ղազարոսին: Միանգամայն բնական է՝ աղքատին չի էլ համարձակվում նայել: Հիշելով իր անմարդկայնությունն ու խստասրտությունը Ղազարոսի նկատմամբ՝ կարծում է, որ նա իրեն նույնիսկ պատասխանի չի արժանացնի: Այդ պատճառով նա դիմում է ոչ թե նրան, այլ՝ նահապետին: Եվ չնայած դրան՝ ոչ մի արդյունքի չի հասնում:

Տեսնո՞ւմ ես, թե ինչ պատվի և աստիճանի է արժանանում նա, ով պառկած էր դռան առաջ, արհամարհված մի մոլորացկան, որ մշտապես պայքարում էր քաղցի դեմ և ծածկված էր վերքերով, որոնց լիզում էին շները:

Մեծագույն հաճույքով ես մշտապես խոսում եմ այդ մասին, որպեսզի ոչ ոք, ով գտնվում է աղքատության մեջ կամ տանում է ամեն տեսակ հիվանդություններ և սով, իրեն դժբախտ չհամարի, այլ ամեն ինչ համբերությամբ և երախտագիտությամբ տանելով՝ սնվի բարի հույսերով և սպասի ապագա անճառելի պարգևների և ողորմածության այն նեղությունների դիմաց, որոնց մենք բոլորս կարժանանաք մեր Տեր Հիսուս Քրիստոսի մարդասիրությանը, Ում փառք, զորություն, պատիվ և երկրպագություն, Հոր և Սուրբ Հոգու հետ, այժմ և միշտ, հավիտյանս հավիտենից. Ամեն:



ՀԱՐՍՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՂԲԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երբ տեսնում ես, որ ինչ-որ մեկը հանիրավի հարստություն է արժանացել, նրան երջանիկ մի կարծիր, արժանի մրցակից մի համարիր, մի փնովիր Աստծո նախախնամությունը, մի մտածիր, որ իսկական կյանքն ընթանում է անպատճառ ու աննպատակ: Հիշիր մեծահարուստի և Ղազարոսի առակը, թե ինչպես առաջինն ուներ անչափ մեծ հարստություն և չքեղ ապրուստ՝ լինելով չափազանց դաժան, արյունարբու, անմարդկային և ավելի կատաղի, քան բոլոր շները, և իրոք, վերջիններս խղճում ու ծառայում էին Ղազարոսին՝ չալարելով լիզել նրա վերքերը, որոնցով պատված էր ողջ մարմինը, իսկ մեծահարուստը նույնիսկ փշրանքներ չէր տալիս, այն դեպքում, երբ Ղազարոսը՝ այդ ճշմարիտ մեծահարուստը, այդ ճշմարիտ բավականության մեջ ապրողը, ծայր աղքատության մեջ էր ընկել, զրկվել անգամ ամենաանհրաժեշտ սննդից և պայքարում էր հիվանդությունների ու սովի դեմ:

Մեկն ուներ ավելին, քան պետք էր, մյուսը զուրկ էր ապրուստի անհրաժեշտ միջոցներից: Եվ, սակայն, նա չտրտնջաց, չսկսեց Աստծուն նախատել և բողոքել նախախնամությունից: Այսպիսով, արդյոք, անմտություն չէ՞, որ այնժամ, երբ իրենք՝ աղքատները ամեն ինչի համար այդպես օրհնաբանում են Տիրոջը, իսկ դու, որ սխրանքներից հեռու ես, հայհոյում ես Աստծուն այն բանի համար, ինչ ուրիշները տանում են երախտագիտությամբ:

Նա, ով համբերում է դժբախտությանը, եթե անգամ որևէ ծանր և դաժան խոսք է ասում Աստծուն, այնուամեն-

նայնիվ, թեկուզև նվազագույն չափով, ներողամտությամբ է արժանի, քան մյուսը, սակայն նա, ով հեռու է աղքատ լինելուց և իր հոգին կործանում է հանուն ուրիշների, արժանի կլինի՞ ներման, որ հայհոյում է Աստուծուն այն պատճառով, ինչի համար ինքը՝ դժբախտը, երախտապարտ է Նրան և երբեք չի դադարում փառաբանել:

Ինչու՞, ով մարդ, հարստությունը քեզ ցանկալի է թվում: Անշուշտ, լավ սեղանից ստացած հաճույքի համար, ամբոխի և թիկնապահների կողմից արժանացած հարգանքի համար, բաղկացած այն մարդկանցից, ովքեր ծառայում են քեզ հանուն հարստության, այն բանի համար, որ դու կարող ես վրեժխնդիր լինել քեզ վիրավորողներից և սարսափ տարածել բոլորի վրա: Ուրիշ այլ պատճառներ դու չես կարող նշել, բացի՝ հաճույքն ու շողոքորթությունը, ահն ու վրեժխնդրությունը: Իսկապես, սովորաբար հարստությունը ո՛չ ավելի իմաստուն է դարձնում, ո՛չ ավելի զուսպ, ո՛չ բարի, ո՛չ մարդասեր և հոգու մեջ ոչ մի այլ առաքինություն չի դնում կամ պատվաստում: Եվ դու չես կարող ասել, որ այն ցանկալի կամ գայթակղիչ է քեզ համար հանուն այդ բարիքներից որևէ մեկի, որովհետև այն ոչ միայն չի կարող դրանցից մեկը սերմանել ու մշակել քո մեջ, այլև ընդհակառակը՝ անգամ վնասում և խանդարում է, եթե դրանք նախապես արդեն առկա են, իսկ որոշներին նույնիսկ դուրս է վտարում և մտցնում այն, ինչ ներհակ է դրանց:

Սակայն չեմ ուզում խոսել այդ մասին, որովհետև այդ տկարությունները բռնկվածները ի վիճակի չեն լսելու, թե ինչպես են իրենք իրենց մեղադրում և մերկացնում՝ լիովին տրվելով հաճույքներին ու դրանով իսկ դառնալով ծառաներ:

Այսպիսով, ասացեք ինձ, ա՞յն պատճառով է հարս-

տությունը ձեզ համար ցանկալի և բարձրարժեք, որ այն սերմանում է ձեր մեջ ուժգին կրքեր, զայրույթը վերածում գործի, վիթխարի չափերի հասցնում հիվանդագին փառասիրությունը և մղում մեծամտության:

Այդ պատճառով ինքներդ պետք է առանց ետ նայելու փախչեք նրանից, որովհետև այն ձեր հոգին բնակեցնում է վայրի և սարսափազդու գազաններով, որոնց շնորհիվ այն զրկվում է բոլորի կողմից ընդունված պատվից, կեղծապատիր ծաղիկներով զարդարելով վերջինիս արժանապատվությունը, այն ներկայացնում այնպիսի խաբուսիկ տեսքով և ներշնչում, որ վերջինս առաջինից ավելի է, թեպետ նա այդպիսին չէ բնությամբ, այլ երևում է սոսկ արտաքուստ:

Նման այն բանին, որ ինչպես քսուքներով և ներկերով շպարված պոռնիկ կանանց գեղեցկությունը իրապես զուրկ է գեղեցկությունից, և իրականում տգեղ և այլանդակ դեմքը խաբվածներին գեղեցիկ և բարեսես է թվում, ճիշտ այդպես էլ հարստությունը պատվի փոխարեն անպատվություն է բացահայտում:

Մի՛ նայիր այն գովասանքներին, որոնք շռայլվում են բացահայտորեն՝ ի հետևանք վախի և շողոքորթության, այլ մերկացրու շողոքորթողներից յուրաքանչյուրի խիղճը և դու կտեսնես հազարավոր մեղադրողների, որոնք հոգեպես աղաղակում են քո դեմ, խորշում են քեզնից և ատում ավելի, քան քո բոլոր կատաղի թշնամիները կամ չարակամները:

Եվ եթե երբևէ հանգամանքների փոփոխությունը ետ կտանի դիմակը ու կմերկացնի վախի դեմքը, նման այն բանին, երբ արևի պայծառ ճառագայթը ցուցանում է շպարված դեմքը, այնժամ պարզ կտեսնես, որ դրան նախորդած ժամանակներում դու պատիվ չունեիր նրանց մոտ, որոնք

ծառայում էին քեզ և, ինչպես քեզ էր թվում, մեծ հարգանք էիր վայելում այն մարդկանց կողմից, որոնք առավելապես քեզ ատում էին և ամենից շատ ցանկանում, որ հայտնվես դժբախտություն մեջ: Ինչպես մարդն է չնչին կենդանի և կործանման ենթակա ու ժամանակավոր, այդպիսին է և հարստությունը, ավելի ճիշտ ասած՝ դրանից էլ ավելի չնչին է:

Հաճախ այն ոչնչանում է ոչ թե մարդու հետ միասին, այլ նրանից առաջ, և դուք բոլորդ գիտեք նման բազմաթիվ օրինակներ, երբ այդպես է եղել: Հաճախ պատահում է նաև, որ մեծահարուստը ողջ է մնում, իսկ հարստությունը ոչնչանում է. օ՛հ, եթե ոչնչանար միայն հարստությունը և ոչ թե՝ տիրոջ հետ միասին:

Ահա թե ինչու էի մեղանչում նա, ով հարստությունն անվանում է երախտամոռ ծառա, արյունուռչտ և մարդասպան ծառա, որ իր տիրոջը փոխհատուցում է սպանությունամբ, և որ ամենից ծանրն է, այն վտանգի է ենթարկում ունեցողին ոչ միայն՝ երբ անհետանում է, այլև այնժամ, երբ առկա է, դառնալով անվերջ տագնապի և անհանգստություն պատճառ:

Օրինակ՝ ո՞վ էր Եվթրոպիայից ավելի բարձր: Իր ունեցվածքով ողջ աշխարհում կա՞ր նրան հավասարը: Նա չէ՞ր, որ վայելում էր ամենաբարձր մեծարանքները: Եվ բոլորը չէի՞ն վախենում և դողում նրանից: Եվ ահա, նա դարձավ ամենադժբախտը նույնիսկ բանտարկյալների մեջ, ավելի խղճուկ, քան ծառան, ավելի կարիքավոր, քան սովից տանջվող մուրացկանը, երբ ամեն օր գլխավերևում տեսնում էր սրված սրեր, առջևում՝ գուր, դահիճներ, որոնք մարդկանց մահապատժի են տանում: Նա անգամ չի հիշում, թե երբևէ օգտվե՞լ է հարստության հաճույքներից, նույնիսկ արևի ճառագայթները չի զգում, կարծես շրջա-

պատված է անթափանց գիշերով և կեսօրին գրկված է տեսնելու հնարավորությունից:

Ի դեպ, որքան էլ մենք ջանք թափենք, ի դորու չենք նկարագրել այն տառապանքները, որ պետք է ունենար նա՝ ամեն օր սպասելով, թե երբ են թուցնելու գլուխը: Տեսնում եմ նրա բզեզի նման դեղնած դեմքը, որ ավելի վատ տեսք ունի, քան ընդմիշտ կյանքից գրկվածը: Դրան ավելացրեք ատամների կափկափյունը և կրճտոցը, ողջ մարմնի դողը, ձայնի խղումը, հազիվ թոթովող լեզուն և կերպարանքը, որ կարող է ունենալ միայն քարացած հոգով մարդը: Չե՞մ ասել քեզ, թե հարստությունը որքան փութանցիկ է: Սակայն ասածներիս հասու չեղար: Չե՞մ ասել, որ այն երախտամոռ ծառա է, նաև մարդասպան, քանի որ հենց հիմա քեզ ստիպեց տագնապել և վախենալ:

Արդյոք, քեզ չե՞մ ասել՝ այնժամ, երբ դու անընդհատ նախատում էիր ինձ, որ միշտ ճշմարտությունն եմ ասում, որ քեզ ավելի շատ եմ սիրում, քան քո շողոքորթները: Որ ես՝ մերկացնողս, քեզ համար ավելի հոգ եմ տանում, քան քեզ սիրաշահողները: Այդ խոսքերին չե՞մ հավելել, որ «լավ է բարեկամի աստուկը, քան թշնամու անձ համբույրը» (Առակ. 27, 6):

Եթե դու դիմանայիր իմ ապտակներին, ապա նրանց համբույրները մահվան պատճառ չէին դառնա, որովհետև ապտակները առողջություն են բերում, իսկ նրանց համբույրները ծնում են անբուժելի հիվանդություններ: Իսկապես, որտեղի՞ց է գալիս: Այն բանից, որ դու չես խորհել մարդկային գործերի փոփոխական լինելու մասին: Եթե դու երկյուղ ունենայիր երջանկության դավաճանությունից, ապա դավաճանությունը չէր լինի: Բայց քանի որ դու ոչ ինքդ քեզ համար և ոչ էլ ուրիշներից ավելի լավը չդարձար, ապա իրոք պատահեց այն, ինչ ասվում էր խոսքով:

Ես միշտ ասում եմ, թե Հարստութիւնը դավաճանաբար փոխում է նրանց, ովքեր վատ են օգտագործում այն. ահա գալիս է ժամանակը, որ ապացուցում է այդ խոսքերի իրավացիութիւնը: Ինչու՞ ես պահպանում այն, երբ փորձութիւնն պահին քեզ օգուտ չի բերում: Եթե այն գորութիւնն ունի, ապա թող քեզ հետ լինի, երբ դրա կարիքն զգում ես, և եթե այն քեզնից փախչում է, ապա ինչի՞ դէպք է պետք:

Ասել և կշարունակեմ ասել այդ, թեպետ շատերը հանդիմանում են ինձ (ասելով). նա միշտ խոսում է և հարուստների գլուխը տանում: Բայց չէ՞ որ հարուստներն էլ աղքատներին են հոգեհան անում: Իսկ ես հարուստներին հոգեհան եմ անում, ավելի ճիշտ ոչ թե հարուստներին, այլ նրանց, ովքեր չեն կարողանում օգտվել Հարստութիւննից: Միշտ էլ ասում եմ, բայց ոչ թե մեղադրելով հարուստին, այլ գիշատչին: Այլ բան է հարուստը, այլ՝ գիշատիչը. տարբերի՛ր այդ բաները և մի՛ խառնիր անմիավորելին:

Դու հարուստ ես: Ձե՛մ արգելում: Հափշտակու՞մ ես: Մեղադրում եմ: Քո՞նն է: Օգտվի՛ր: Վերցնու՞մ ես ուրիշին: Ձե՛մ լուի: Յանկանում ես ինձ սպանե՞լ: Պատրաստ եմ արյունահեղել, միայն թե քեզ հեռու պահեմ մեղք գործելուց: Ուշք չեմ դարձնում ատելութեանը, ուշք չեմ դարձնում թշնամանքին, լուկ մի բանի եմ հոգ տանում՝ ունկնդիրների առաջընթացին: Ե՛վ աղքատներն են իմ երեխաները, և՛ հարուստները. միևնույն արգանդն է երկուսի համար ցավ գգացել, միևնույն տանջանքներով են նրանք աշխարհ եկել: Թող սպանի նա, ով ցանկանում է, թող ատի նա, ով ցանկանում է, թող չարիք նյութի նա, ով ցանկանում է:

Դավերն ինձ համար լուսապսակի գրավականն են, ստացած վերքերը՝ պարզեանքի հաշիվը: Դավերից երկյուղ չունեմ, միայն մի բանից եմ վախենում՝ մեղքից: Միայն թե ոչ

րևէ մեկը ինձ չմեղադրի մեղքերի մեջ, և թող ողջ աշխարհը մարտնչի ինձ հետ:

Տեսնու՞մ եք մարդկային գործերի ոչնչութիւնը: Տեսնու՞մ եք իշխանութեան թուլութիւնը: Տեսնու՞մ եք Հարստութիւնը, որին ես մշտապես փախստական եմ համարել, ոչ միայն փախստական է, այլև՝ մարդասպան: Ձէ՞ որ այն ոչ միայն լքում է տիրոջը, այլև սպանում նրան: Երբ ինչո՞ր մեկը հոգ է տանում նրա մասին, հենց այդ ժամանակ դավադրաբար դավաճանում է: Ինչու՞ ես այդքան հոգ տանում հարստութեան մասին, երբ այն երբեք հնարավոր չէ պահպանել: Յանկանու՞մ ես պահպանել այն: Ուրեմն՝ մի թաքցրու, այլ բաժանիր աղքատներին:

Հարստութիւնը վայրի գազան է. եթե այն փորձում են պահել՝ փախչում է, եթե հալածում են՝ մնում է: Մսխիր հարստութիւնը, որպեսզի մնա, հողում մի թաղիր, որ չփախչի:

Որտե՞ղ է Հարստութիւնը: Մեծ հաճույքով կհարցնեի մեռյալներին՝ որտե՞ղ է Հարստութիւնը: Սա որպես հանդիմանութիւն չեմ ասում, ո՛չ, և ոչ էլ այն բանի համար, որ բորբոքեմ վերքերը, այլ այն պատճառով, որպեսզի ուրիշների կործանումից ձեզ համար խաղաղ հանգրվան պատրաստեմ:

Իսկապես, ով այսօր հարուստ է, վաղը դառնալու է աղքատ: Այդ պատճառով հաճախ խնդում էի՝ կարդալով այսպիսի պայմանագրեր. այսինչին են պատկանում հետևյալ կալվածքները կամ տները, իսկ օգտագործումը՝ ուրիշին: Մենք բոլորս սոսկ օգտագործող ենք և ոչ ունևոր: Թեկուզև մեր ողջ կյանքի ընթացքում հարստութիւնը մնա մեր ձեռքին, և ոչ մի դժբախտութիւն չպատահի, միևնույն է, մահից հետո կամա-ակամա այն զիջում ենք ուրիշին, դրանից միայն օգտվելով, սակայն նրա վրա իշխանութիւնն չու-

նենալով, և վերաբնակվում ենք անդրշիրիմյան կյանքում՝ լինելով միանգամայն մերկ ու ոչինչ չունենալով:

Այստեղից պարզ է դառնում, որ միայն նրանք են տիրում հարստությունը, ովքեր քամահրել են և՛ դրա օգտագործումը, և՛ խնդացել դրանից ստացած հաճույքների վրա: Միայն նա, ով մերժել է հարստությունը և բաժանել աղքատներին, այն օգտագործել է ինչպես հարկն է և հեռանալով այս աշխարհից՝ նրա վրա ունեցել է կատարյալ իշխանություն:

Ուրեմն, ով կամենում է և՛ տիրել, և՛ օգտագործել, և՛ կատարյալ իշխանություն ունենալ իր ունեցվածքի վրա, թող երես թեքի ցանկացած ինչքից, իսկ նա, ով այդպես չի վարվում, մեռնելիս ամբողջությամբ կզրկվի դրանից, երբեմն նաև մահից առաջ կկորցնի՝ անհամար դժբախտությունների և վտանգների ենթարկվելով:

Եվ ցավը միայն այն չէ, որ հարստության հետ դժբախտություններ են պատահում, ընդ որում՝ անսպասելիորեն, այլև այն, որ հարուստը միանգամայն անպատրաստ է աղքատ դառնալու նեղություններին:

Ուրեմն հանուն ինչի՞ ես հարստությունը համարում մեր թափած ջանքերին արժանի և երջանիկ ես կարծում ու նախանձում նրանց, ովքեր ձեռք են բերում այն: Ինչո՞վ է հարուստը տարբերվում աղքատից: Միևնույն միա ու արյունից չե՞ն: Միևնույն որովայնը չե՞ն կերակրում: Ինչի՞ դ են պետք այդքան ծառաները: Ինչպես հագուստի և սննդի ընտրությունը պետք է ըստ անհրաժեշտության լինի, այնպես էլ ծառաների քանակը: Մեկ տիրոջը հարկավոր է ընդամենը մեկ ծառա, ավելի ճիշտ՝ երկու-երեքին պետք է ընդամենը մեկը: Եթե դա բավարար չի թվում, հիշիր նրանց, ովքեր մեկն էլ չունեն և բավարարվում են ամենափոքրիկ ծառայություններով:

Չէ՞ որ Աստված մեզ ոտ ու ձեռ է տվել, որպեսզի ծառաների կարիք չունենանք: Հիրավի, հանուն կարիքի չէ, որ աշխարհում ծառաներ կան, այլպես Ադամի հետ միասին կստեղծվեր նաև ծառա, այլ՝ որպես պատիժ և հատուցում մեղքի ու անհնազանդության համար: Եվ եթե արդեն անհրաժեշտություն է ծառա ունենալը, ապա հարկ է բավարարվել մեկով, կամ ծայրահեղ դեպքում երկուսով: Իսկապես, ինչի՞ դ են պետք այդքան բազմաթիվ ծառաները և փողոցներում այդպես կարևոր-կարևոր քայլելը: Մի՞թե գազանների միջով ես անցնում, որ հալածում ես հանդիպողներին: Մի՛ վախեցիր, մոտեցողներից և կողքից անցնողներից, քեզ ոչ ոք չի կծի: Թե՞ դու քեզ համար վիրավորական ես համարում բոլորի հետ քայլելը: Սակայն ինչ անմտություն է կարծել, որ կողքովդ վարգող ձին քեզ չի վիրավորում, իսկ մարդը, որին եթե չես փախցնում հազարավոր վերստեր, կարող է քեզ անպատվություն բերել: Ավելի անհեթեթ բան կա՞, քան մարդկանց այս ու այն կողմ քշել, որպեսզի ճանապարհ բացվի անասունների համար:

Աստծո իմաստությունը մեզ համար հաստատված է փոխադարձաբար իրար ծառայելու անհրաժեշտությունը, այնպես որ, թեպետ որևէ մեկը կարող է հարուստ լինել մյուսներից, նույնիսկ այդ դեպքում չկարողանա գլուխ հանել առանց փոխադարձ հաղորդակցման ու փոքր բաների կարիք չունենա: Չէ՞ որ, ոչ միայն աղքատները հարուստների կարիքն ունեն, այլև հարուստները՝ աղքատների, և հարուստները վերջիններիս կարիքը շատ ավելի ունեն, քան աղքատները՝ նրանց:

Եվ որպեսզի սա քեզ համար ավելի տեսանելի լինի, պատկերացնենք երկու քաղաք՝ մեկը՝ միայն հարուստների, մյուսը՝ միմիայն աղքատների համար, և թող հարուստների քաղաքում ոչ մի աղքատ չլինի, աղքատների քաղա-

քում՝ որևէ հարուստ, ու տեսնենք, թե դրանցից որն է ավելի ինքնաբավ: Եվ այսպես, առաջին՝ հարուստների քաղաքում ոչ մի արհեստավոր չկա՝ ո՛չ շինարար, ո՛չ հյուան, ո՛չ կոշիկակար, ո՛չ հացթուխ, ո՛չ մշակ, ո՛չ դարբին, ո՛չ թուկագործ, ո՛չ էլ նման որևէ մեկը: Հարուստներից այդ ո՞ր մեկը կցանկանա զբաղվել այդ գործերով, եթե նույնիսկ արհեստավորը, որ այդ գործն անում է, հարուստ դառնալուց հետո դադարում է այդպիսի ծանր գործով զբաղվել: Այդ դեպքում ինչպե՞ս կարող է գոյատևել այդպիսի քաղաքը: Կասես, թե հարուստները արծաթով կգնեն հարուստներից: Բայց այդ դեպքում ինչպե՞ս են տուն կառուցելու: Թե՞ դա էլ են առնելու: Սակայն, ըստ էության, դա հնարավոր չէ:

Հետևաբար, անհրաժեշտ է այնտեղ կանչել վարպետների և այդպիսով խախտել օրենքը, ինչը սահմանված էր սկզբում՝ հիմնելով այդպիսի քաղաք:

Հիմա տեսնենք, թե աղքատների քաղաքում նույն անբավարարություն վիճակը կստեղծվի՞՞ զրկված լինելով հարուստներից: Նախապես ճշտենք, թե ինչ է նշանակում հարստություն՝ դրա տակ հասկանալով ոսկի, արծաթ, թանկարժեք քարեր, մետաքսյա, ոսկեհյուս հագուստներ: Եվ ի՞նչ: Եթե այդ ամենը հեռացնենք աղքատների քաղաքից, ասա ինձ, դրանով այն կզրկվի՞ ինքնաբավությունից: Ամենևին:

Իսկապես, եթե պետք է տուն կառուցել կամ դարբնել երկաթը, կամ հագուստ կարել, դրանց համար ո՛չ ոսկի է անհրաժեշտ, ո՛չ արծաթ, ո՛չ մարգարիտ, այլ՝ արհեստ և ձեռքեր: Նույն կերպ, եթե պետք է հող մշակել կամ փորել, դրա համար հարու՞ստ մարդ է պահանջվում, թե՞ աղքատ: Պարզ է՝ աղքատ: Վերջապես, մենք ե՞րբ հարուստի կարիք կունենանք, եթե ոչ այնժամ, երբ պետք է ավերել այդ քա-

ղաքը: Այսպիսով, եթե դու տեսնում ես, որ ինչ-որ մեկը փայլում է հագուստներով և շրջապատված է թիկնապահներով, բաց արա նրա խիղճը և այնտեղ բազում աղտեղուկություններ կգտնես:

Հիշիր Պողոսին, Պետրոսին, հիշիր Հովհաննեսին, Եղիաշին, և ամենքից առաջ՝ Աստծո Որդուն, որ գլուխը դնելու տեղ չունեիր (Մատթ. 19, 23), ընդօրինակիր Նրան և Նրա ծառաներին ու պատկերացրու նրանց անճառելի հարստությունը: Եթե դու արդեն փոքր-ինչ պայծառացել ես, այնուհետև կրկին՝ մոռացվել, ինչպես նավաբեկության ժամանակ փոթորկի հարվածներից, ապա հիշիր Քրիստոսի խոսքը, որ ազդարարում է, թե մեծատունը դժվարություններ կմտնի երկնքի արքայությունը (Մատթ. 19, 23): Այդ խոսքին միացրու լեռներ, հող և ծով, և այն ամենը, ինչ ցանկանում ես, մտքում դրանք վերածիր ոսկու և դու կտեսնես, որ ոչինչ չի կարող համեմատվել այն վնասի հետ, որ դու կունենաս: Իսկապես, եթե հարուստներից յուրաքանչյուրը մի ողջ աշխարհ ունենա, յուրաքանչյուրն ունենա այնքան ծառաներ, որքան հիմա ապրում են ողջ աշխարհում՝ ցամաքում և ծովերում, յուրաքանչյուրն ունենա կալվածքներ և ծովեր ու գոյություն ունեցող բոլոր շինությունները, քաղաքները, ազգերը, և բոլոր կողմերից ջրերի ու աղբյուրների փոխարեն ոսկի հոսի դեպի նրանց, ապա ես այդ հարուստներին երեք լումայի արժեք չէի տա, եթե նրանք զրկված են երկնային արքայությունից:

Եթե այժմ՝ ձգտելով փող ունենալ, որ, ի վերջո, կորչում է, նրանք տառապում են, երբ հաջողության չեն հասնում, ապա ի՞նչը ի վիճակի կլինի նրանց մխիթարություն բերել, երբ նրանք կզգան այնկողմնայինի բարիքները: Ասա ինձ, եթե որևէ մեկը քեզ մտցնի արքայական պալատ, հնարավորություն ընձեռի բոլորի ներկայությունը թա-

գավորի հետ, մասնակցել նրա ճաշկերույթին և լինել նրա բնակակիցը, քեզ չէի՞ր համարի բոլորից երջանիկ մարդ:

Մինչդեռ, եթե քեզ հաջողվեք մտնել երկիրնք, կանգնել Արքայի առջև ամենայնի, փայլել հրեշտակների առաջ և բավականություն ստանալ այնտեղի անհասանելի փառքից, մի՞թե կկասկածելիք հարստությունդ զոհաբերել, և եթե անգամ կարիք լինեք հրաժարվել կյանքից ու հրճվել, ցնծալ և թեւավորվել ուրախությունամբ:

Իշխանություն ստանալու համար, ինչը հնարավորություն է տալիս կողոպտելու (չէ որ այդպիսի արարքները ես գյուտ չեմ համարում), դու ծախսում ես և՛ սեփական ունեցվածքդ, և՛ ուրիշներից պարտք ես վերցնում ու, եթե պետք է, առանց երկմտելու անգամ կնոջդ և երեխաներիդ ես զրավ դնում, իսկ երբ քո առջև ընկած է երկնային արքայությունը, որ իշխանություն ոչ մի ժառանգորդ չունի, մի՞թե դու երկմտում ես, դանդաղում և ափսոսում փողդ:

Բայց, ավա՛ղ, ինչքան մեծ է անզգայությունը: Այնժամ, երբ մեզ սպասում են այդպիսի բարիքներ, մենք շարունակում ենք հակվել դեպի ներկան, և չենք խորհում սատանայի նենգություն մասին, որ փոքրի միջոցով մեզ զրկում է մեծից, տալիս է ցեխը, որպեսզի առևանգի երկիրնքը, ցույց է տալիս ստվերը, որպեսզի շեղի ճշմարտությունից, գայթակղում է երազատեսությունամբ (միանգամայն այլ բան է իսկական հարստությունը), որպեսզի, երբ օրը գա, մեզ բոլորից աղքատ ցույց տա:

Իսկապես, արդյոք, կա՞ ևս մի այդպիսի մշտական և անհազ թշնամի, քան հարստությունը: Երբ մենք ապրում ենք, այն սպանում է մեր հոգին, իսկ երբ մեռնում ենք, անպատվում է նաև մարմինը՝ թույլ չտալով թաղվել հողում, որպիսի ճակատագիր է սպասվում դատապարտյալներին: Ընդ որում, օրենքների պահապանները, վերջիններիս են-

թարկելով մահապատժի, այնուհետև նրանց ոչ մի բան չեն անում, իսկ հարստությունը իր տերերին մեռնելիս անգամ ենթարկում է դաժան պատժի՝ նրանց ցուցադրելով ողջ մերկությունը և անթաղ թողնելով: Ահավոր և գուժի արժանի տեսարան է: Ճշմարիտ որ, նրանք ավելի ծանր բախտի են արժանանում, քան հանցագործները դատավորի գայրալի դատավճուխից: Մրանք, առաջին երկու օրերին անթաղ մնալով, այնուհետև հանձնվում են հողին, իսկ հարուստները այն բանից հետո երբ թաղվում են, մերկացվում և դիակապտիչների կողմից պղծվում են: Եթե դրանից հետո չեն տանում նաև դագաղը, ապա այստեղ շնորհակալ պիտի լինել ոչ թե հարստությանը, այլ աղքատությանը, որովհետև եթե մենք վստահեինք հարստությանը և այն չպատրաստեինք քարից, այլ ոսկուց, ապա կկորցնեինք նաև այն:

Այսպիսով, ինչը կարող է հարուստից ավելի դժբախտ լինել, երբ մահն անգամ նրան անվտանգ չի դարձնում, և նրա խղճուկ մարմինը, զրկված անգամ կենդանությունից, չի կարողանում ազատվել իրական կյանքի չարությունից, ենթարկվում է թալանի ու կողոպուտի փողի նկատմամբ ընչաքաղցությունը դրդված չարագործների ու դիակապտների կողմից, և շատ ավելի դաժանությունամբ, քան հարուստի կենդանության օրոք: Իրոք, նախկինում, մտնելով շիրմատուն, նրանք դատարկում էին դագաղը, սակայն դիակին ձեռք չէին տալիս, նույնիսկ չէին կարողանում այնքան տանել, որ դիակը մերկանար, իսկ այժմ դրան էլ չեն խնայում, շուռումուռ են տալիս և ծանր հայհոյանքներ տալիս: Հողին հանձնելուց հետո, նրան զրկելով և՛ ծածկող հողաչերտից, և՛ հանդերձներից, այդպես էլ թողնում են անպաշտպան: Եվ այն ժամանակ, երբ բնությունը հաշտեցնում է նրա հետ անգամ թշնամիներին, հարստությունն,

ընդհակառակը, ռիսով է լցնում նաև նրանց, ովքեր նրա դեմ ոչինչ չունեն, և այն աստիճանի է գրգռում չարագործների կատաղությունը մեռած ու անշարժ մարդու հանդեպ, որ նրանք չեն խնայի անգամ մարմինը, եթե այն որևէ բանի պիտանի լինի:

Այդ պատճառով, եկեք հարստությունը մեծ բարիք չհամարենք: Մեծ բարիքն այն է, որ շատ փող ունենք, այլ որ Աստծո երկյուղ ունենք: Ահա հիմա, եթե լիներ որևէ արդար մարդ, որ Աստծո նկատմամբ մեծ անվեհերություն ունենար, ապա կարող էր, եթե անգամ լիներ ամենաաղքատ մեկը, դադարեցնել իսկական աղետները. բավական էր, որ նա առ երկինք կարկառեք ձեռքերը և Աստված կանչեր, և այս ամպը կհեռանար, իսկ պահուստում որքան ոսկի կա, դառնում է անօգուտ ցանկացած աղբից, պատուհասներից մեզ փրկելու համար:

Եվ վտանգը միայն այս է, այլ նաև մյուս դեպքերում՝ հիվանդանալիս կամ երբ վրա է հասնում մահը, փողն իր ուժը կորցնում է՝ ի վիճակի չլինելով փոքր-ինչ թեթևություն բերել դժբախտության ժամին: Հիմա որտե՞ղ են այն հարուստները, որոնք տոկոսներ էին հաշվում, տոկոսը տոկոսի վրա բերում, բոլորից խլում էին և չէին կշտանում: Լսե՞լ եք Պետրոսի կանչը, որ ասում էր, թե աղքատությունը հարստության մայրն է, Պետրոսի, որ ոչինչ չուներ և բոլոր թագակիրներից հարուստ էր: Իրոք որ, ոչինչ չունենալով, նա և՛ մեռյալներին էր հարուցություն տալիս, և՛ կաղերին էր բուժում, և՛ դեերին էր հալածում, և՛ այնպիսի բարիքներ էր պարգևում, որ ի զորու չէին տալու ո՛չ թագավորները, ո՛չ էլ բազմաքանակ ու սարսափելի բանակների զորավարները: Իսկ ի՞նչ է ասում: «Արծաթ և ոսկի չունեմ» (Գործք, 3, 6):

Ի՞նչը կարող է այս խոսքերից ավելի արժեքավոր լինել:

Ի՞նչը կարող է ավելի երանելի և բավարար լինել: Այնժամ, երբ ուրիշները պարծենում են՝ ասելով, թե այսքան տաղանդ ոսկի ունեմ, անհամար սաթեններով կալվածքներ ունեմ, տներ և ծառաներ, նա հպարտանում է նրանով, որ ոչինչ չունի, և ոչ միայն չի նեղվում կամ ամաչում իր աղքատությունից, այլև պարծենում է:

Այդպես ոչինչ չունեցողը կարող է ունենալ ամեն ինչ, քանի որ կարող է ունենալ բոլորի ունեցած բարիքները, իսկ եթե մենք կարող ենք ձեռք բերել բոլորի բարիքները, ապա ամեն ինչից կզրկվենք:

Այսպիսով, նա, ով իր ունեցվածքը իրենը չի համարում, այլ ընդհանուրինը, կարող է օգտվել ոչ միայն իր ունեցածից, այլև ուրիշների ունեցվածքից, ինչպես սեփականից, իսկ նա, ով անջատում է իրենը և դառնում միայն իր ունեցվածքի տերը, չի կարող իր ունեցվածքի տերը լինել: Ով ամենևին ոչինչ չունի՝ ո՛չ տուն, ո՛չ սեղան, ո՛չ ավելորդ շապիկ, և հանուն Աստծու իրեն ամեն ինչից զրկել է, նա օգտվում է ընդհանուրի ունեցածից, ինչպես սեփականից, և բոլորից ստանում է այն, ինչ ցանկանում է:

Այսպիսով, ոչինչ չունեցողը, ունենում է բոլորի ունեցածը: Մինչդեռ նա, ով ինչ-որ բան ունի, չի կարող տերը լինել այդ ունեցվածքի, որովհետև ունեցողին ոչ ոք ոչինչ չի տա, և նրա ունեցածը ավելի շուտ կդառնա ավազակների, գողերի, զրպարտիչների, դժբախտ հանգամանքների բաժին, մի խոսքով, կպատկանի բոլորին, քան նրան:

Եվ եթե ցանկանում ես, կներկայացնեմ հենց նրան, ով դա ասել է և գործով ցույց տվել, մի կիրիկիացու վկայություն, մի մարդու, որի ծագումն ու ծննդավայրը անհայտ են: Նա շրջել է ողջ աշխարհը, սով, ծարավ և աղքատություն է տեսել, իր հետ ոչինչ չի վերցրել, ընդ որում գնացել է ոչ թե ընկերոջ կամ մերձավորների մոտ, որովհետև

սկզբում եղել է բոլորի ընդհանուր թշնամին, այնուամենայնիվ, ունեցել է ամեն ինչ, երբ գնացել է: Մինչդեռ Անանիան և Սապփիրան, իրենց ունեցվածքի մի փոքր մասին տիրանալու պատճառով, զրկվում են ամեն ինչից, անգամ կյանքից: Այսպիսով, բաժանվիր քո ունեցվածքից, որպեսզի օգտվես ուրիշներից, ինչպես սեփականից: Ինչպես այն մարդը, որ խղճի խայթ է գգում, թեպետև ունի աշխարհի բոլոր հարստությունները, բոլոր մարդկանցից ամենազոքախտն է, այդպես, ընդհակառակը, նա, ով մաքուր խիղճ ունի, թեպետև քրջերի մեջ է ու սովահար, իրենց հաճույքների համար ապրող մարդկանցից երջանիկ է:

Քո ունեցած փողը նրա համար է, որ թեթևացնես աղքատություն բեռը և ոչ նրա համար, որ աղքատություն առևտրով զբաղվես, իսկ դու թեթևացնելու անվան տակ ավելի մեծ դժբախտություն ես պատճառում և մարդասիրությունը փողով ես ծախում: Չեմ արգելում, ծախիր, միայն թե հանուն երկնային արքայության: Այդքան մեծ հերոսություն համար փոքր գին մի վերցրու, հարյուրապատիկ շահույթ, այլ ապագա հավիտենական կյանքը:

Ինչու՞ ես դու շարունակում մնալ աղքատ ու մուրացկան և զբաղվում մանրիկ բաներով՝ մեծը որպես փոքր, ունայն փողերով ծախելով: Ինչու՞ ես դու, Աստծուն թողնելով՝ զբաղվում մարդկային չնչին շահերով: Ինչու՞ ես դու՝ չըջանցելով հարուստին, ճնշում ընչազուրկին և, լքելով պարտքը տվողին, գործ բռնում անչնորհակալի հետ: Այն մեկը ցանկանում է վերադարձնել պարտքը, իսկ սա անգամ քրթմնջում է՝ տալով այն: Այս մեկը հազիվ վճարում է մեկ հարյուրերորդական մասը, իսկ սա տալիս է հարյուրապատիկը և հավերժական կյանքը, սա՝ կշտամբանքներով ու հայհոյանքներով, իսկ նա՝ չնորհակալությունը և գովասանքներով, այն մեկը քեզ նախանձում է, իսկ նա քեզ հա-

մար պսակներ է գործում, այս մեկը հազիվ այստեղ է (հատուցում), իսկ նա՝ և՛ այնտեղ, և՛ այստեղ:

Ուրեմն, ծայր անմտությունն չէ անգամ շահույթ ստանալ չկարողանալը: Փող պետք է ունենալ, ինչպես սազական է տիրոջը և ոչ թե ծառայի հանգույն, այնպես, որ կարողանաս իշխել նրա վրա, և ոչ թե փողն իշխի մեզ վրա:

Փողը այդպես է կոչվում, որպեսզի մենք օգտագործենք այն մեր կարիքների համար և ոչ թե պահենք բարձի տակ: Չէ՞ որ պահելը ծառայի հատկություն է, իսկ ծախսելը և նրա վրա լիակատար իշխելը հատուկ է տիրոջը: Ահա թե ինչու ավելի անհեթեթ բան չկա, քան ծառայի փող ունենալը՝ իրականում լինելով տիրապետվող, կարծում է, թե տիրում է՝ լինելով ծառա, կարծում է, թե տեր է՝ իրեն շղթաներ դնելով, ինքն իրեն մեծարում է, կարծես թե իշխում է բոլորի վրա, իր դեմ բորբոքելով գազանին՝ հրճվում և ուրախանում է՝ դառնալով նրա գերին, տեսնելով կատաղած շանը, որ հարձակվում է իր հոգու վրա, փոխանակ նրան կապի ու սովի մատնի, առատորեն կերակրում է, որպեսզի սա ավելի հաճախ հարձակվի և ավելի սարսափելի լինի:

Այսպիսով, մի կարծիր, թե մեծ հարստություն ունենալով՝ քեզ հետ ինչ-որ հաճելի բան է կատարվում, ընդհակառակը, այն կարող է լինել միայն հարուստ լինել չցանկանալու դեպքում: Իրոք, եթե դու ցանկանում ես հարուստ լինել, ապա երբեք չես դադարի տանջվել, որովհետև հարստության նկատմամբ սերը անվերջ է, և ինչքան հեռու գնաս, այնքան հեռու կլինես վերջից և ինչքան շատ ցանկանաս ուրիշի ունեցվածքը, այնքան կուժղանան տանջանքները: Ծիշտ այնպես, ինչպես ծարավ զգալիս մենք հագենում ենք միայն այն ժամանակ, երբ խմում ենք այնքան, ինչքան ցանկանում ենք, իսկ քանի դեռ ծարավ ենք,

ապա, թեկուզև սպառենք բոլոր աղբյուրները, մեկ է, մեր տանջանքները ավելի կուժեղանան:

Եվ նման այն բանին, որ բանտարկյալին հատկապես դժբախտ ես համարում, երբ նրան տեսնում ես շղթայված ոտքերով ու մեջքով, հաճախ նաև ձեռքերով, ճիշտ այդպես էլ, երբ տեսնում ես անհամար կալվածքներ ունեցող հարուստին, դրանով նրան հարուստ մի համարիր, իսկ հենց այդ պատճառով քեզ՝ դժբախտ: Այդ կապանքների հետ միասին նա ունի նաև մի դաժան բանտապահ՝ դժբախտ սեր առ փողը, որը նրան թուլյլ չի տալիս դուրս գալ բանտի շեմից և օրավուր ավելացնում է անհամար հանգուլցաներ և պահակներ, դռներ ու փականներ և նրան մղում ամենաներքևում գտնվող բանտը, համոզում է հաճույք ստանալ այդ կապանքներից, որպեսզի նա գոնե հույս փայփայի, թե երբեք ազատվելու է ճնշող չարությունից:

Արդարև, այնքան աղքատը չի ցանկանում անհրաժեշտը, որքան հարուստը՝ ավելին, հավասարապես՝ այնքան ուժ չունի չար բան անելու առաջինը, որքան վերջինս՝ հնարավորութուն: Եթե նա և՛ ցանկանում, և՛ կարող է ավելին, ապա ակնհայտ է, որ կանի շատ արագ ու շատ ավելի:

Աստված քեզ հարուստ է դարձրել, որպեսզի դու օգնես կարիքավորներին, որպեսզի ուրիշներին փրկելով՝ քավես մեղքերդ, քեզ փող է տվել ոչ այն բանի համար, որպեսզի դու փականք դնես քո կորստյան վրա, այլ որպեսզի ծախսես քո փրկության համար:

Այդ պատճառով և՛ փող ունենալը նա դարձրեց կասկածելի ու անհաստատ, որպեսզի դրանով թուլացնի խելագար սերը առ այն: Եթե այժմ, երբ փող ունեցողները չեն կարող վստահաբար հույս դնել հարստության վրա, նույնիսկ տեսնում են, թե դրանց պատճառով որքան չար դավեր են

նյութվում, նրանք այնքան մեծ կիրք են տաժում փողի նկատմամբ, ապա ու՞մ կխնայեին, ինչի՞ց կհրաժարվեին, եթե հարստությանը միանար նաև հաստատունությունն ու անվտանգությունը:

Ասա ինձ, ո՞վ կարող էր Եղիայից աղքատ լինել: Բայց հենց այն պատճառով, որ նա բոլորից աղքատ էր, հաղթեց բոլոր հարուստներին և հենց այդ աղքատությունն ընտրեց հոգու հարստությունից ու ցանկացած զրամական հարստություն ցածր համարեց իր հոգու վեհությունից և անարժան իր իմաստասիրությանը: Իրոք, եթե նա ներկա բարիքները մեծ բան համարեր, ապա լոկ վերարկու չէր ունենա: Նա այնպես էր արհամարհում իրական կյանքի ունայնությունը, որ ոսկին դիտում էր որպես դեռ նետված աղբ: Ահա թե ինչու ինքը թագավորը այդ աղքատի կարիքն ուներ և, մեծ քանակությամբ ոսկի ունենալով, զարմանքով էր նայում նրա բերանին, որ ոչինչ չուներ՝ վերարկուից բացի: Ինչքան փառավոր էր նրա վերարկուն ծիրանիից, և արքայական պալատներից՝ արդարակյացի քարայրը: Այդ պատճառով, երկինք համբարձվելով, նա իր աշակերտին ոչինչ չի թողնում վերարկուից բացի: Դրանով, ասում է, ես պայքարեցի սատանայի հետ, ստանալով այն՝ զինվիր նրանով ընդդեմ նրա, անընչաքաղցությունը ուժեղ զենք է և անհաղթահարելի պաշտպանություն:

Եվ Եղիսեն ընդունեց այդ վերարկուն որպես մեծագույն պարգև, և իսկապես այն մեծագույն հարստություն էր, ցանկացած ոսկուց ավելի արժեքավոր: Եվ այդ Եղիան բացառիկ էր՝ Եղիան վերևում էր և Եղիան ներքևում էր: Գիտեմ, որ դուք սիրաշահում եք այդ արդարին, և ամենքդ կցանկանայիք Եղիա լինել: Բայց ես կարող եմ ապացուցել, որ մենք նրանից ավելին ենք ստացել:

Իրոք, Եղիան իր աշակերտին թողեց վերարկուն, մինչ-

դեռ Մարդու Որդին, համբարձվելով երկինք, մեզ թողեց իր մարմինը: Այսպիսով, եթե մենք լսում ենք մեր հարստութ-
յան կորստի մասին, չպետք է շփոթվենք, այլ ասենք՝ օրհն-
յալ է Աստված, և կգտնենք ավելի մեծ հարստություն: Ար-
դարև, այնքան չես ստանա, եթե քո հարստությունը ծախ-
սես միայն կարիքավորների վրա, չըջելով ու որոնելով աղ-
քատներին, և բաշխել ունեցվածքդ ազահներին, ինչքան
կուներես այդ խոսքի շնորհիվ:

Այդ պատճառով Հոբի վրա ես այնքան չեմ զարմանում
այն դեպքում, երբ նա բաց արեց իր տան դուռը կարիքա-
վորների առջև, որքան զարմանում և փառաբանում եմ այն
բանի համար, որ շնորհակալությամբ տարավ ունեցվածքի
կորուստը: Նա, ով, զսպելով իր բնության խռովքը, կարող
է առանց արցունքի ասել Հոբի բառերով. «Տերը տվեց, Տերն
էլ ճետ առավ» (Հոբ, 1, 22), միայն դրա համար կհայտնվի
Աբրահամի կողքին և կփառաբանվի Հոբի հետ միասին:

Այսպիսով, երբ սատանան կա՛մ ավազակների, կա՛մ էլ
թե այլ խարդախության միջոցով քեզ զրկում է հարստութ-
յունից, փառք տուր Տիրոջը և դու կուներես ավելին, և
թշնամուղ կրկնակի հարված կհասցնես նրանով, որ չես
տրտնջացել, այլ շնորհակալ ես եղել: Եթե նա տեսնում է,
որ հարստության կորուստը դառնացնում է քեզ և մղում
տրտնջալ Տիրոջից, ապա երբեք չի դադարի դա անել, իսկ
եթե տեսնի, որ դու ոչ միայն չես հայհոյում քո արարիչ
Աստծուն, այլ նույնիսկ շնորհակալ ես նրան յուրաքանչ-
յուր դժբախտության համար, ապա վերջ կտա քեզ գայ-
թակղեցնելուն, իմանալով, որ պատահած դժբախտությու-
նը քեզ համար շնորհակալության առիթ է և ավելի մեծ
փայլ է տալիս քեզ համար պատրաստված պսակներին:

Այդպես եղավ և Հոբի հետ: Զրկելով ունեցվածքից և
ախտահարելով մարմինը, և տեսնելով, որ դրանով նրան ա-

վելի մեծ շնորհակալության է մղում, սատանան արդեն չի
հանդգնում շարունակել գրոհը և հեռանում է՝ կրելով ա-
մոթալի և լիակատար պարտություն, իսկ Աստծո մարտի-
կին ավելի փառաբանված դարձնում: Իսկ Հոբը, այն բանից
հետո, երբ պսակվում է համբերության ու արիության բո-
լոր պսակներով, վերստին կորցրածի փոխարեն կրկնակին է
ստանում, իսկ դու, եթե ամեն ինչ արիաբար տանես, ամեն
ինչ կստանաս ոչ թե կրկնակի, ոչ թե եռակի, այլ հարյու-
րապատիկ և կժառանգես հավիտենական կյանք, որին ար-
ժանի լինենք մենք բոլորս՝ ողորմածությամբ և մարդասի-
րությամբ մեր Տեր Աստծո՝ Հիսուս Քրիստոսի, որին փառք
և զորություն, հավիտյանս հավիտենից. Ամեն:



ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԺԻՇԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ո՛վ մարդ, երբ դու ենթարկվում ես հիվանդության, հիշիր Հոբի մարմինը, նրա սուրբ մարմինը, քանի որ այն թեկուզև ծածկված էր խոցերով, սուրբ և անարատ էր: Իրոք, ո՞վ է երբևէ նրա նման հիվանդացել: Ու՞մ է դժբախտությունն այդպես պատուհասել կամ ավելի դժբախտ մեկին տեսել: Այո՛, ոչ ոք: Աստիճանաբար հյուսվում է նրա մարմինը, ճիճուներով և պալարներով է ծածկվում, և սրանց հոսքը անկանգ է, ամենուր տարածվում է մարմնի ժանտահոտությունը, մարմինը ծվեն-ծվեն է լինում, և այդպիսի նեխումից քայքայվելով, սնունդն անգամ անհաճո է դարձնում: Եվ նրա սովը անսովոր և չլաված էր, որովհետև նա չէր կարողանում ուտել առաջարկվող ուտելիքը: «Շարավոտ եմ տեսնում կերակուրս», ~ ասում է նա (Հոբ, 6, 7):

Բայց կարող ես ասել, որ նա բավարար մխիթարություն և թեթևություն ուներ այն գիտակցությունամբ, որ այդ աղետները իր գլխին Աստված է բերում: Ընդհակառակը, հենց այդ հանգամանքը նրան հատկապես էր շփոթեցնում ու սարսափեցնում, որ արդար Աստված, Որին ամեն կերպ ծառայում էր, թշնամություն ունի իր հանդեպ՝ ինչպես ինքն էր մտածում, քանի որ պատահածի համար ոչ մի բանական պատճառ չէր գտնում:

Եթե դու կարծում ես, թե այդպիսի մխիթարությունը բավական է, ապա քեզ էլ այդպիսի մխիթարություն եմ մաղթում: Թեկուզև դու հանդուրժել ես ինչ-որ աղետ ոչ հանուն Աստծո, այլ մարդկանց չարությունից, բայց եթե դու չես հայտնում, այլ շնորհակալ ես նրան, Ով կարող էր

խանգարել դրան, սակայն թույլ է տալիս հանուն քեզ փորձելու, ապա նման այն բանին, որ հանուն Աստծո տառապածները փառքով են պսակվում, դու ևս կստանաս այդ նույն պարգևները այն բանի համար, որ քաջաբար տարար մարդկանց պատճառած դժբախտությունները, ու շնորհակալ եղար նրան, ով կարող էր, բայց չկամեցավ դրանք թույլ չտալ:

Չկա ոչ մի բարի մարդ, որ մեղք չունենա, և ոչ էլ որևէ չար, որ ճշմարտություն չունենա. հատուցում և վարձատրություն ունենում է և՛ նա, և՛ մյուսը: Եթե ինչ-որ արդար մեկը չար բան է անում և հիվանդանում կամ պատժի ենթարկվում, մի շփոթվիր, այլ ասա. այս արդարը երբևէ ինչ-որ փոքրիկ չար գործ է կատարել և արժանին է ստանում այստեղ, որպեսզի չպատժվի այնտեղ: Հավասարապես, եթե տեսնում ես, որ մեղավորը հափշտակում է, խաբում, հազարավոր չարություններ է անում, և չնայած դրան՝ շարունակում է երջանիկ ապրել, ճիշտ նույն կերպ մի շփոթվիր, այլ ասա. այս մեղավորը, հազարավոր չարություններ անելով, ինչ-որ ժամանակ մի բարի գործ է կատարել և արժանի հատուցում է ստանում այստեղ, որպեսզի վարձատրություն չպահանջի այնտեղ:

Դա կարելի է տեսնել Ղազարոսի օրինակով: Քանի որ նա էլ ինչ-ինչ մեղքեր էր գործել, և մեծահարուստը իր հերթին ինչ-որ բարի բան էր արել, ապա լսիր, թե ինչ է ասում Աբրահամը. «Հիշի՛ր, որ դու ստացար քո բարիքները այնտեղ, «Իսկ Ղազարոսն էլ՝ չարչարանքները» (Ղուկ. 16, 25): Իսկ ի՞նչ: Դու ինչ-որ բարի բան ես արել: Դու դրա համար ստացել ես հարստություն, առողջություն, բավականություն, իշխանություն, հարգանք, և քեզ ոչ մի պարտք չմնաց: Իսկ Ղազարոս՞ը: Ոչ մի մեղք չի՞ գործել: Ո՛չ: Հենց այդ պատճառով էլ ասում է՝ «Իսկ Ղազարոսն էլ՝ չարչա-

րանքները», որովհետև երբ դու ստացար «քո բարիքները», Ղազարոսն էլ ստացավ չարչարանքները:

Այսպիսով, երբ դու տեսնում ես, որ արդարը պատժվում է, նրան երանելի անվանիր և ասա. այս արդարը ինչ-որ մեղք է գործել, հատուցում է ստանում դրա համար և այն աշխարհ է գնում մաքրված: Եթե ավելի մեծ պատիժ է ստանում, քան գործած մեղքն է, դա բազմապատկում է նրա արդարությունը: Եվ լսիր, թե ես ինչ եմ ասում: Հորն արդար էր, անարատ, ճշմարիտ, աստվածապաշտ (Հոբ, 1, 1) և նրա մարմինը պատժի ենթարկվեց այստեղ, որպեսզի վարձատրվի այնտեղ: «Այլ ազդարարության մը չեմ հայտնվել, ասում է, քան այնպես, որ դու արդար երևաս» (Հոբ, 40, 3):

Այսպիսով, կնոջ խորհուրդը մոլորեցրե՞ց այդ սուրբ մարդուն: Ընդհակառակը՝ ավելի շուտ արեց հակառակը, նրան ավելի ամրապնդեց, այնպես որ, նա անգամ հանդիմանեց կնոջը: Նա նախընտրեց, որ ավելի լավ է տրտմել, տանջվել և հազարավոր դժբախտություններ տանել, քան այդ չարիքներից ազատություն գտնել հայհոյելու միջոցով: Մինչդեռ մարդկանց մեծամասնությունը, երբ ինչ-որ հիվանդություն է ստանում, իսկույն լուտանքներ է թափում, և այդպիսով հիվանդության ծանրությունը տանում է, իսկ դրանից սպասվող օգուտից, որ կարող էր ունենալ համբերատարության շնորհիվ, զրկվում է:

Ի՞նչ ես անում, մա՛րդ: Վատաբանում ես քո բարերարի՞ն, փրկչի՞ն, պաշտպանի՞ն, խնամարկուհի՞ն: Չե՞ս նկատում, որ գլորվում ես անդունդ և քեզ փոսի, ծայր կորստյան մատնում: Չէ՞ որ հենց դրա համար է սատանան հազարավոր դժբախտություններ բերում, որպեսզի քեզ նետի այդ փոսը: Եվ երբ նա տեսնում է, որ դու վատաբանում ես, ապա հեշտությամբ բազմապատկում ու ուժեղացնում է տրտմությունը, որպեսզի տանջանքների ազդեցություն

տակ վերստին հանձնվես տրտունջներին, իսկ երբ տեսնում է, որ արիաբար ես տանում կատարվածը, ու ինչքան ուժեղանանում են տառապանքները, այնքան ավելի ես շնորհակալություն հայտնում Աստծուն, ապա անմիջապես քեզ բաց է թողնում՝ արդեն տեսնելով իր դավերի ապարդյունությունն ու անմտությունը:

Ինչու՞ ես տրտնջում, մա՛րդ, և լուտանքներ թափում, երբ երբեք ենթարկվելու ես ինչ-որ անսպասելի դժբախտություն: Մի՞թե դու թեթևացնում ես տանջանքներդ, երբ վատաբանում ես: Ընդհակառակը, ուժեղացնում ես և տրտմությունը դարձնում շատ ավելի ծանր: Բայց դու չես կարող լուել՝ խոցված լինելով վշտերից: Այդժամ լուտանքի փոխարեն շնորհակալ եղիր Աստծուն, գովաբանիր ու փառաբանիր Նրան: Եթե լուտանքներ թափես, ապա Աստծու օգնությունը կվանես քեզնից և սատանային ավելի ուժեղ կդարձնես քո դեմ, իսկ եթե շնորհակալ լինես, ապա նենգ դեկ խարդավանքները ետ կմղես և Աստծու խնամարկուհի հովանավորությունը քեզ կգրավես:

Սակայն լեզուն հաճա՞խ է, սովորության համաճայն, արտասանում անգործածելի բառեր: Իսկ դու, երբ նկատում ես դա, ատամներով ամուր կծիր լեզուդ, քանի դեռ չի հասցրել ասել այդ բառերը: Ավելի լավ է այն այժմ արնակոլով լինի, քան այն օրը, երբ կցանկանա մի կաթիլ ջուր և հնարավորություն չի ունենա թեթևացնել վիճակը, ինչպես պատահեց մեծահարուստին. լավ է անցողիկ ցավ զգա, քան այն աշխարհում անընդմեջ ու հավերժորեն վառվի կրակի մեջ:

Այսպիսով, երբ դու կենթարկվես ծանր հիվանդության և շատերը քեզ կհարկադրեն թեթևացնել տանջանքները՝ ումանք հմայախոսություններ, ուրիշները՝ հուռուժներով, երրորդները՝ կախարդության զանազան միջոցներով, իսկ

դու, Հանուն Աստծո նկատմամբ ունեցած երկյուղի, արիաբար ու անհողդողդ կտանես հիվանդության ծանրությունը ու կնախընտրես ամեն ինչի դիմանալ, քան որոշել նման բան անել, այն քեզ նահատակության պսակ կպարզվի:

Եվ մի կասկածիր. ինչպես նահատակն է տանում տանջանքների տառապանքը, որպեսզի չերկրպագի կուռքերին, այդպես և դու կտանես հիվանդության նեղությունները, որպեսզի ոչ մի բանի կարիք չզգաս, որ գալիս է նրանից, և չանես այն, որ նա հրամայում է: Բայց այդ տանջանքները ավելի ուժեղ են: Փոխարենը սրանք տևական են, այնպես որ, հավասարվում են նրանց, հաճախ նույնիսկ ավելի ուժեղ են: Իրոք, եթե տենդը ներսից տանջում և այրում է քեզ, իսկ դու՝ չնայած ուրիշների հորդորներին, մերժում ես կախարդանքները, ապա դրանով քեզ չե՞ս արժանացնում նահատակի լուսապսակի:

Երբ դու մեծ խայտառակությամբ տնից քշում ես կախարդներին, ապա բոլորը, ովքեր լսում են, կգովեն քեզ և կզարմանան և իրար մեջ կխոսեն. այսինչը, տառապելով հիվանդությամբ, չնայած այն բանին, որ ոմանք բազում անգամներ նրան համոզում, հորդորում և խորհուրդ էին տալիս օգտվել կախարդական հմայախոսություններից, թույլ չտվեց, այլ ասաց. ավելի լավ է այսպես մեռնել, քան հրաժարվել բարեպաշտությունից:

Իսկ եթե այստեղ այդքան դովասանքների ես արժանանում, ապա պատկերացրու, ինչպիսի պսակների կարժանանաս այնտեղ, երբ հրեշտակների և հրեշտակապետերի ներկայությամբ, Քրիստոս կմոտենա քեզ, և ձեռքդ բռնելով դուրս կբերի բոլորի առաջ և ի լուր ամենքի կասի. այս մարդը հիվանդ լինելով տենդով, չնայած բազում-բազում մարդկանց խորհուրդներին՝ կախարդությամբ ազատվել տենդի տանջանքներից, սակայն որպեսզի մեղք չգործի ու

Հանուն Ինձ և Իմ նկատմամբ ունեցած երկյուղի, նա իրեն այդ կերպ բուժում խոստացողներին մեծ խայտառակությամբ դուրս վճռեց և նախընտրեց մեռնել հիվանդությունից, քան հրաժարվել ինձ ծառայելուց:

Իրոք, եթե Նա նրան Հանում է նրանց առջև, ովքեր խմեցրել, կերակրել և հագցրել են Նրան, ապա ավելին է նրանցից, ովքեր վճռել են Հանուն Նրա դիմանալ տենդին: Չէ՞ որ նույնը չէ հաց և հագուստ տալը կամ հիվանդությամբ դիմանալը. վերջինը շատ ավելի է, քան առաջինը, այդ պատճառով պսակն ավելի փառավոր կլինի:

Այդ մասին կշարունակենք խորհել և իրար հետ զրուցել, նույնիսկ առողջ ժամանակ: Հիշիր երանելի Տիմոթեոսին, որին հիվանդությունը երբեք հանգիստ չէր տալիս և մարմնից չէր հեռանում: Եթե այդ արդարը և սուրբը, որին վստահվում էր աշխարհի խնամքը, ով հարություն էր տալիս մեռյալներին, հալածում էր դեերին և ուրիշների անհամար հիվանդություններն էր բուժում, այդպիսի տառապանքների դիմացավ, ապա ի՞նչ ներում կունենաս դու, որ գայրանում ու տրտնջում ես կարճատև հիվանդությունից: Զավակներին, որոնց հաճախ հայրերը անարդարացիորեն պատժում են, հարկադրում են համբերատար դիմանալ պատիժներին, իսկ դու չես կարողանում դիմանալ, երբ քեզ պատժում է Աստված, Նա, Ով հայրերից ավելի է սիրում քեզ և ամեն ինչ քո օգտին է անում, բայց հենց ամենաչնչին հիվանդությունն է պատահում, իսկույն դուրս ես գալիս Նրա տիրապետությունից և վազում դեերի մոտ:

Եվ ի՞նչ ներում կարող ես ունենալ դու: Ինչպե՞ս կարող ես արդարանալ Քրիստոսի առաջ: Ինչպե՞ս կարող ես դիմել Նրան աղոթքներում: Դրանից հետո ի՞նչ երեսով պիտի երևաս եկեղեցում: Ի՞նչ աչքով պիտի նայես երեցին: Ո՞ր ձեռքով պիտի դիպչես սրբազան մասունքներին: Ի՞նչ ա-

կանջներով պիտի լսես այնտեղ կարդացվող Սուրբ Գիրքը՝ ինքդ քո հանդեպ այդպիսի մեղքեր գործելով: Ինչպե՞ս կարող ես աղաչել Աստծուն: Եվ ոչ ոք, թեպետև ունենա Մովսեսի հանդգնությունը, չի կարող աղոթել քեզ համար: Թե՞ դու չես լսում, թե ինչ է ասում Աստված Երեմիային հրեաների վերաբերյալ. «Եթե Մովսեսն ու Սամուելն իսկ իմ դիմաց կանգնեն, ես հոգով այդ ժողովրդի հետ չեմ լինի. այդ ժողովրդին հեռու վանիր ինձանից, թող հեռանա» (Երեմիա, 15, 1):

Նման այն բանին, որ ստրուկների առևտրով զբաղվողները, փոքրիկ երեխաներին առաջարկելով բլիթներ, քաղցր մրգեր և այլն, հաճախ այդպիսի խայծերով գայթակղում են և զրկում ազատությունից ու անգամ կյանքից, ճիշտ այդպես և կախարհները, խոստանալով բուժել հիվանդ անդամը, թաղում են հոգու փրկությունը: Շատերն, ընկնելով ծայր խելագարություն մեջ, Աստծուց խնդրում են ոչ միայն ամեն կարգի հարստություն, իշխանություն ու նման այլ բաներ, այլև անիծում են թշնամիներին և պաղատում, որ նրանք պատիժ ստանան, նրանք ցանկանում են, որ հենց Նա, Ում խնդրում են ներողամիտ ու ողորմած լինել իրենց հանդեպ, սակայն խստասիրտ և անմարդկային՝ իրենց թշնամիների նկատմամբ:

Ծովերում նավարկողները նավավարին չեն հրամայում ղեկը բռնել այնպես, ինչպես հարկն է, և նավին ուղղություն տալ, այլ նստած տախտակամածին՝ վստահում են նրան, ոչ միայն այն ժամանակ, երբ նավը բարեհաջող է ընթանում, այլև այնժամ, երբ նրան սպառնում են վտանգները, և միայն Աստծուն, որ մշտապես հոգ է տանում մեր օգուտի համար, չեն վստահում, նմանվելով այն հիվանդին, որ հորդորում է բժշկին իրեն տալ ոչ այն, ինչը բուժում է հիվանդությունը, այլ այն, որ սնում է նյութը, որ հիվանդությունն աղբյուրն է: Սակայն բժիշկը չի լսում հիվանդի

խնդրանքը, թեկուզ վերջինս աղիողորմ արցունք թափի և պաղատի, և ավելի շուտ հետևում է իր արվեստի օրենքներին, քան ականջ է դնում նրա թախանձանքներին:

Եվ այդպիսի անտարբերությունը մենք խստասրտություն չենք համարում, այլ մարդասիրություն, որովհետև, եթե նա լսի հիվանդին և բավարարի նրա պահանջը, ապա նա նրա հետ կվարվի որպես թշնամի, իսկ եթե համառում և դիմադրում է նրա ցանկությունը, ապա բացահայտում է իր բարեսրտությունն ու սերը: Նույն կերպ և քնքշորեն սիրող հայրերը ոչ մի դեպքում իրենց թույլ չեն տա որդուն դանակ կամ այրվող ածուխ տալ, երբ նրանք նույնիսկ խնդրում են, որովհետև լավ գիտեն, որ այդպիսի ցանկությունն անարարումը նրանց համար կորստաբեր է:

Ճիշտ այդպես էլ և Աստված չի կարող տալ վտանգավորը օգտակարի փոխարեն, որովհետև գիտի, որ այն կորստաբեր է: Կարծում եմ, որ և հին բժիշկները, ոչ ապարդյուն և ոչ առանց պատճառի, օրենքով հաստատեցին տարբեր գործիքների կիրառման հրապարակային ցուցադրումը այն բանի համար, որպեսզի նախապես ցուցադրելով դրանք՝ առողջներին նախազգուշացնեն, թե ինչի կարիք կունենան, եթե անկարգ կյանք վարեն:

Այսպիսով, Քրիստոս մեզ համար պիտի լինի ավելի ասեղ, քան դժոխքը, ավելի ցանկալի երկնային արքայությունից, և եթե մենք հիվանդանում ենք, լավ է հիվանդ մնալ, քան ազատվելով տկարությունից՝ ընկնել անբարեպաշտություն մեջ: Եթե անգամ կախարդը բուժում է քեզ, շատ ավելի վնասում է, քան օգուտ տալիս: Նա հաճախ է օգտակար լինում մարմնին, որը, միևնույն է, ավելի ուշ մեռնելու է ու փտելու, սակայն վնաս է պատճառում անմահ հոգուն:

Նա, ով բժիշկ չէ, լավ է և դեղ չունենա: Նա, ով չունի, չի փրկում, չի կործանում, իսկ կործանել կարողացողը չի իմանում ինչպես դրանից օգտվել, որովհետև փրկությունը միայն դեղի զորությունից չէ, այլև նրա արվեստից, ով կիրառում է:

Հետևաբար, բժիշկ կոչվել, դեռ չի նշանակում բժիշկ լինել: Լսե՞լ ես Ղազարոսի պատմությունը, թե նա ինչպես էր ողջ կյանքում պայքարում սովի, հիվանդությունների և լիակատար մենակության դեմ, այնպես որ, մեռավ մեծահարուստի դռան առաջ՝ արհամարհված, սովալլուկ և կերակրվելով շների թողած փշրանքներով: Մարմնով նա այնքան է ուժասպառվում, որ չի կարողանում անգամ շներին քշել, որոնք հարձակվում էին նրա վրա ու լիզում վերքերը: Սակայն նա չի փնտրում կախարդներին, ձեռք չի պարզում մուրալու, կախարդության չի դիմում, հմայախոսներին չի կանչում և ոչ մի արգելված բան չի անում, այլ նախընտրում է մեռնել այդ չարչարանքների մեջ, քան դուլզն-ինչ դավաճանել բարեպաշտությունը:

Եվ ահա, երբ նա դիմանում է այդքան նեղությունների և արիաբար տանում, ի՞նչ ներում կարող ենք ունենալ մենք, եթե հանուն տենդի կամ թեթև վերքի տուն ենք կանչում հեքիմներին և կախարդներին: Շատերը հաճախ հիվանդանում են, սակայն անհրաժեշտ սնունդի պակաս չեն զգում, ուրիշները մշտապես ապրում են ծայր աղքատություն մեջ, սակայն առողջ են, Ղազարոսը այն աստիճան ուժասպառվել էր, որ չէր կարողանում անգամ շներին քշել, այլ պառկում էր, ինչպես կենդանի մեռյալ, տեսնելով, թե նրանք ինչպես են հարձակվում իր վրա, իսկ քշելու համար ուժ չէր գտնում՝ այնքան անուժ էին նրա անդամները, այնպես հյուծված էին հիվանդությունից, այնպես ուժասպառվել էին փորձություններից:

Եթե այդ դժբախտություններից յուրաքանչյուրն ինքնին անտանելի ու սարսափելի էր, ապա ադամանդ չէ՞ր այն մարդը, որ կարողանում էր այդ բոլորին դիմանալ: Եթե նա դիմանար այդ ամբողջին և զուրկ լիներ որևէ խնամքից, պառկելով ամայի ու անբնակ տեղում, ապա նա այդպիսի տրտմություն չէր զգա, որովհետև ուրիշ որևէ մեկի բացակայությունը նրան կստիպեր ակամա տանել պատահած դժբախտությունը, բայց այն հանգամանքը, որ նա պառկած էր այդքան մարդկանց աչքի առաջ, ընդ որում՝ մեծահարուստների, և ոչ մեկից չարժանացավ չնչին խնամքի, նրա տառապանքները ավելի էին սրում:

Պատկերացրու, թե ինչ կզգար նա տեսնելով, թե անբաններն ու շողոքորթները ինչպես են վերև-ներքև, ներս ու դուրս անում, աղմկում ու ուտում-խմում: Մենք թեկուզև հազարավոր դժբախտություններ ենք տարել, դիտելով նրան, կարող ենք բավականաչափ մխիթարություն գտնել, որովհետև տրտմողների համար մեծ մխիթարություն է և այն, որ նրանք իրենց տառապանքներին ընկերակից ունեն, մինչդեռ Ղազարոսը աչքի առաջ ոչ մեկը չունի, որ կիսեր նրա չարչարանքները, ընդ որում՝ նույնիսկ կարծում էր, թե բոլոր գործերն ավարտվում են այստեղի կյանքով, քանի որ նա այն մարդկանց թվին էր պատկանում, ով ապրում էր մինչև վերին օգնությունը:

Եթե հիմա, մեր ժամանակներում, Աստծո այդպիսի իմացությունից հետո, հարություն բարի հույսեր ունենալուց հետո և այն բարիքներից, որ սպասում են ջանադիրներին, ոմանք այնքան փոքրոգի են գտնվում, որ չեն ուղղվում անգամ այդ հույսերից, ապա ի՞նչ պիտի զգար Ղազարոսը:

Նրան պետք է ընդօրինակեն բոլորը՝ և՛ հարուստները, և՛ աղքատները: Նա, ի հակադրություն մեծահարուստի,

կարողացավ արիաբար դիմանալ բարեպաշտության ոչ մեկ, ոչ երկու, ոչ էլ երեք փորձությունների, այլ շատ ավելի ին՝ աղքատությանը, հովանավորների բացակայությանը, հիվանդություններին, այն էլ ոչ թե մեկ կամ երեք օր, այլ ողջ կյանքում մնաց նույն վիճակում: Եվ, որ էջը կարող տեսնել ուրիշ Ղազարոսի, էջը կարող կանխատեսել հատուկ մասին, և վերջապես այն, որ թվարկված դժբախտություններով հանդերձ, ի հետևանք հենց այդ դժբախտությունների, մարդկանց մեջ վատ համարում ունենում:

Այսպիսով, երբ նա այդպես արիաբար դիմացավ բոլոր այդ աղետներին, ի՞նչ ներողամտության կարժանանանք մենք, երբ չենք կարողանում դիմանալ դրանց կեսին: Իրոք, դու չես կարող ո՛չ ցույց տալ, ո՛չ անվանել մեկ ուրիշին, ով այդքան բանի դիմացավ, այն էլ այդպիսի չարչարանքների: Հենց այդ պատճառով է Քրիստոս նրան ներկայացնում առակով, որպեսզի մենք, ինչ դժբախտության մեջ էլ ընկնենք՝ տեսնելով նրան պատահածը, դրա իմաստնությունից մխիթարություն և թեթևություն ունենանք:

Արդարև, նա ողջ աշխարհի համընդհանուր ուսուցիչն է, որ, թողնելով բոլոր տառապալներին, բոլորին հաղթում է սեփական տառապանքների առատությամբ:

Այդպես և խելացի բժիշկները, երբ ցանկանում են կտրել հիվանդ անդամը կամ հեռացնել անոթները խցանող քարերը, կամ ուղղել ի ծնե արատավորությունը, անում են՝ ոչ թե հիվանդին որևէ անկյուն տանելով, այլ ընդհակառակը՝ ներկայացնում են հրապարակայնորեն և անցորդ հանդիսատեսների ամբոխի առաջ վիրահատում: Եվ դա անում են ոչ այն նպատակով, որ կամենում են բոլորի աչքի առաջ խայտառակել մարդկային տկարությունները, այլ որպեսզի ուրիշների մարմնի օրինակով ուսուցանեն նրանց, ովքեր այդ պահին ներկա են, հոգ տանել սեփական առողջությա-

նը: Ուրեմն, երբ տեսնում ես, որ արդարը գտնվում է աղքատության մեջ, ենթարկվում վիրավորանքների և կյանքն ավարտում հիվանդությամբ և բազում այլ դժբախտությունների մեջ, ապա ինքդ քեզ ասա. եթե չլինեիր հարուստ և դատաստան, ապա Աստված էջը թույլատրի նրան, ով հանուն Իրեն այդքան չարչարանքներ է կրել, այստեղից հեռանալ առանց որևէ բարիք ստանալու:

Այստեղից պարզ է դառնում, որ Նա նրանց համար ուրիշ կյանք է պատրաստել՝ այստեղի կյանքից ավելի հաճելի և ավելի տանելի: Այլ կերպ, բանական կլինե՞ր, որ անառակներից շատերին Նա թույլ է տալիս ներկա կյանքում հաճույքներ ստանալ, իսկ արդարներից շատերին թողնում անհամար չարիքների մեջ, Նա, Ով կոչվում է արդար և իրոք այդպիսին է ու զորություն ունի յուրաքանչյուրին արդարությամբ տալ ըստ արժանվույն: Ուստի Նրան փառք, զորություն, պատիվ և երկրպագություն այժմ և միշտ, հավիտյանս հավիտենից. Ամեն:



ՆԱԽԱՆՁԻ ՄԱՍԻՆ

Սովորաբար, մեզ ոչինչ այնպես չի միավորում և բաժանում իրարից, ինչպես նախանձն ու անբարյացակամությունը, դաժան մի ախտ, որ կատարելապես աններելի է և շատ ավելի ծանր, քան չարի արմատը՝ արծաթասիրությունը:

Իրոք, արծաթասերը գոնե ուրախանում է այնժամ, երբ ինքն է ստանում, իսկ նախանձը միայն այն ժամանակ է ուրախանում, երբ ուրիշները չեն ստանում՝ ուրիշի անհաջողությունը համարելով իր հաջողությունը: Ավելի անմիտ բան պատկերացնում էք: Քամահրելով սեփական դժբախտությունները՝ նա հայրամաշ է լինում ուրիշի բարիքների պատճառով, դրա հետևանքով իր համար անհասանելի դարձնելով երկինքը, իսկ դրանից առաջ ապրած կյանքը դարձնելով միանգամայն անտանելի:

Արդարև, թրթուրն այնպես չի ուտում ծառը, ցեցը՝ բուրդը, ինչպես նախանձի հուրը խժռում է նախաձողի ոսկորները և ապականում հոգին: Մեղք չի գործի նա, ով նախանձներին գազաններից ու դևերից ավելի վատը կհամարի: Գազանները հարձակվում են մեզ վրա, երբ սննդի կարիք ունեն, կամ երբ մենք կանխավ գրգռել ենք, իսկ այդ մարդիկ, երբ անգամ բարեգործություն են ստացել, հաճախ իրենց բարերարներին վերաբերվում են որպես վիրավորվածների: Հավասարապես նաև դևերը, թեպետ նրանց նկատմամբ տածում են անհաշտ թշնամություն, սակայն իրենց բնույթն ունենցողների հանդեպ չարություն չեն անում, իսկ այդ մարդիկ ո՛չ նույնական բնույթից են ամաչում, ո՛չ իրենց սեփական փրկությունն են խնայում, և նրանցից առաջ, ում նախանձում են, սեփական հոգին են-

թարկում են պատժի՝ առանց որևէ դրդապատճառի այն լցնելով ծայր խռովությունը ու տրտմությունը:

Նախանձն այնպիսի արատ է, որ նրանից վատը չկա: Օրինակ՝ շնացողը և՛ որոշակի հաճույք է ստանում, և՛ կարճ ժամանակում է իր մեղքը գործում, մինչդեռ նախանձողը նրանից առաջ, ում նախանձում է, իրեն ենթարկում է պատժի և տանջանքների, և երբեք ետ չի կանգնում իր մեղքից, այլ մշտապես կատարում է: Ինչպես խոզն է հրճվում ցեխ տեսնելիս, և դևն է ուրախանում մեր կորստից, ճիշտ այդպես նախանձը ցնծում է մերձավորի դժբախտությունից, իսկ եթե վերջինիս տհաճ բան է պատահում, այնժամ նա հանգստանում է և ազատ շունչ քաշում՝ ուրիշի դառնությունները համարելով իր ուրախությունները, իսկ ուրիշի բարիքները՝ իր դժբախտությունը: Եվ ինչպես որոշ բզեզներ սնվում են թրիքով, այդպես և նախանձները՝ ուրիշների դժբախտություններով՝ դառնալով թշնամիները և չարակամները (մարդկային) բնություն:

Մյուս մարդիկ, երբ անասուն կենդանիներ են սպանում, խղճում են, իսկ սրանք, երբ տեսնում են մարդու, որին բարեգործություն են արել, կատաղություն մեջ են ընկնում, զայրույթից դողում են ու գունատվում: Եվ ի՞նչը կարող է այդպիսի խելագարությունից վատը լինել: Ինչո՞ւ ես գուշնդ գցում, դողում և վախով բռնված՝ այդպես ցցվել, ասա՛ ինձ: Ի՞նչ սարսափելի բան է պատահել: Մի՞թե այն պատճառով, որ եղբայրդ փառաբանվում է, մեծ համբավ ունի և բարի անուն: Այդ առիթով ինքդ պիտի զարգարվեիր պսակներով, ուրախանայիր ու փառք տայիր Աստծուն, որ արյունակիցդ հռչակավոր և նշանավոր է: Գուցե վշտանում ես, որ Աստված փառաբանվում է: Նայիր, թե ուր կարող է հասցնել թշնամանքը: Ասում ես, թե այդ չէ քեզ վշտացնում, այլ կցանկանայիր, որ Աստված քեզնով

փառավորվեր: Այդ դեպքում ուրախացիր, որ եղբայրդ բարի համբավ ունի և կրկին քեզնով է փառավորվում Աստված: Եթե անգամ քո թշնամին և հակառակորդն է ու Աստված փառավորվում է նրանով, ապա հարկ է, որ հանուն այդ բանի նա բարեկամ համարվի, իսկ դու ընկերոջդ դարձնում ես թշնամի, միմիայն այն պատճառով, որ նրա բարի անվամբ Աստված փառավորվում է: Ուրիշ ի՞նչ կերպ պետք ցույց տայիր թշնամանքդ առ Քրիստոս:

Այդ պատճառով, թեկուզև ով էլ կատարած լինի նշանավորումը, թեկուզև բարեպաշտության սխրանքներ ցույց տա կամ պաս պահի, կամ մերկ հողին պառկի, իսկ այդպիսի բարեպաշտը համեմատվում է հրեշտակների հետ, սակայն եթե նա ենթակա է նախանձի կրքին, բոլորից նողկալին է: Եթե սիրողների նկատմամբ սերը մեզ ոչ մի առավելություն չի տալիս հեթանոսների նկատմամբ, ապա որտե՞ղ կհայտնվի նա, ով նախանձում է սիրողներին:

Նախանձն ավելի վատ է, քան թշնամանքը: Թշնամին, երբ մոռացվում է վեճի առիթ դարձած թշնամանքի պատճառը, վերջ է տալիս թշնամությանը, իսկ նախանձ մարդը երբեք բարեկամ չի դառնում: Ընդ որում՝ առաջինը բաց պայքար է մղում, իսկ երկրորդը պայքարում է թաքուն, առաջինը հաճախ կարող է հիմնավորել թշնամանքի պատճառը, մինչդեռ երկրորդը այլ բան չի կարող ցույց տալ, բացի իր խելագարությունն ու առ սատանա հակվածությունը:

Եվ ինչպես անարգողը ոչ թե ուրիշին է անարգում, այլ միմիայն իրեն, ճիշտ այդպես մերձավորի նկատմամբ դավեր նյութողը կործանում է իրեն: Եվ նման այն բանին, որ երբ վիրավորելով մերձավորին՝ վիրավորում ենք ինքներս մեզ, այդպես էլ հակառակը, նրանց բարություն անելով՝ բարիք ենք գործում մեզ համար:

Նա, ով իր մասին վատ, բայց ոչ ճիշտ բաներ է լսում, ոչ միայն դրանից չի նեղանում, այլև մեծագույն պարգևների է արժանի: Ոչ թե, ով դիմանում է, այլ նա, ով չար բան է անում, արժանի է պատժի, եթե միայն առաջինը կշտամբանքի բավարար առիթներ չի տվել: Եվ ինչպես անհնարին է, որ պարկեշտ մարդը իր մասին միայն լավ կարծիքներ լսի բոլորից, ճիշտ այդպես և անհնարին է բոլորից լսել միմիայն վատ-վատ բաներ, եթե միայն ինքը տարբեր հանգամանքներում բազում առիթներ չի տալիս:

Իսկ հանդիմանանքները, որոնք համաժողովրդական են, հաճախ մարդկանց դարձնում են լկտի ու անամոթ: Մեղսագործներից շատերը, քանի դեռ տեսնում են, որ կարելի է թաքնվել, հեշտորեն մտածում են ուղղվել, իսկ երբ հասարակության մեջ կորցնում են իրենց բարի անունը, հուսահատվում ու լկտիանում են: Բայց դու նրանից վիրավորա՞նք ես ստացել: Հապա այդ դեպքում ինչու՞ ես ինքդ էլ քեզ վիրավորում: Նա, ով վրեժխնդիր է լինում վիրավորանքի համար, դանակն ուղղում է հենց իր դեմ:

Այդ պատճառով, եթե ցանկանում ես և՛ քեզ բարեգործություն անել, և՛ վրեժխնդիր լինել քեզ վիրավորողից, ապա նրա մասին լավ արտահայտվիր. իսկ եթե նրա մասին վատ արտահայտվես, ապա քեզ չեն հավատա որպես մի մարդու, որ կասկածվում է թշնամանք տածելու մեջ: Չէ՞ որ թշնամանքը, բախվելով լսողների դիտավորություն հետ, թույլ չի տալիս նրանց ականջներում տպավորվել այն, ինչ ասվում է:

Այսպիսով, ուրիշների մասին վատ մի արտահայտվիր, որպեսզի չպատվազրկես և քեզ, տիղմը մի խառնիր ցեխի ու աղբի հետ, այլ պսակներ հյուսիր վարդերից, մանուշակներից և այլ ծաղիկներից. բերանիցդ աղտեղություններ մի թափիր՝ նմանվելով բզեզներին, իսկ այդպիսիները նրանք

են, ովքեր վատ են արտահայտվում ուրիշների մասին: Նրանք առաջինն իրենք են զգում իրենց գարշահոտությունը հետևանքը:

Իսկապես չարալեզու մարդուց բոլորը խուսափում են, ինչպես նեխահոտից, ինչպես սողունից կամ կոյաբզեզից, որ թրիքով է սնվում՝ ուրիշի դժբախտություններ, և ընդհանրապես մարդուն, որ քաղցրաբարբառ բերան ունի, բոլորն ընդունում են որպես սեփական անդամի և հարազատ եղբոր: Ի՞նչ վիրավորանք պատճառեց Կայենն Աբելին: Հակառակ իր կամքի, նրան ավելի շուտ չարժանացրե՞ց երկնքի՝ իրեն անհամար չարչարանքների տանելով: Ի՞նչ վնաս պատճառեց Նսավը Հակոբին: Վերջինս չունեցա՞վ հարստություն և անհամար բարիքներից չօգտվե՞ց, իսկ նա հայրական տնից անգամ զրկվեց և չար մտադրություն ունենալուց հետո թափառում էր երկրեերկիր: Ի՞նչ վատություն արեցին Հովսեփին հարազատ եղբայրները՝ համելով անգամ արնագործության: Հենց նրանք չէի՞ն, որ եթարկվեցին դաժան սովի ու ծայր վտանգների, մինչդեռ Հովսեփը դարձավ ողջ Եգիպտոսի թագավորը:

Ինչքան շատ ես նախանձում, այնքան ավելի շատ բարիքներ ես գործում նրա համար, ում նախանձում ես: Աստված ամեն ինչ տեսնում է, իսկ երբ տեսնում է, որ նեղացնում են մարդու, ով ոչ մեկին չի վիրավորում, ապա առավել ևս բարձրացնում է նրան և հռչակավոր դարձնում, և դրանով իսկ պատժում քեզ:

Եթե Նա թույլ չի տալիս, որ անպատիժ մնան նրանք, ովքեր անարգում են թշնամիներին, ապա առավել ևս նրանց, ովքեր նախանձում են մարդկանց, որոնք իրենց ոչ մի վիրավորանք չեն հասցրել: Եթե նա, ով սիրում է իրեն սիրողներին, ոչ մի առավելություն չունի խաբեբաների նկատմամբ, ապա ինչպիսի՞ ներողամտություն է արժանի

նա, ով ատում է իրեն ոչ մի չարություն չանողներին:

Այսպիսով, ինչի՞ համար ես տրտմում դու, ո՞վ մարդ արարած, մերձավորիդ բարօրություն պատճառով: Եթե հարկ կա տրտմելու, ապա միայն դժբախտությունների համար, որոնց մենք դիմանում ենք, բայց ոչ երբեք այն պատճառով, որ ուրիշները բարի համբավ ունեն: Թե՞ դու չգիտես, որ այդ մեղքը աններելի է:

Եվ արդարացիորեն: Իսկապես, ցոփասերը կարող է արդարանալ ցանկություններ, գողը՝ աղքատություններ, մարդասպանը՝ բարկություններ, մի խոսքով, բոլորը կարող են այս կամ առիթը մատնացույց անել, թեպետև դատարկ ու անհիմն պատճառաբանություններով, իսկ դու, ասա ինձ, դու ի՞նչ պատճառ ունես: Ոչ մի, գուցե բացառություններ՝ ծայրահեղ անպարկեշտություններ: Եթե մեզ պատվիրված է սիրել թշնամուն, ապա ի՞նչ պատժի ենք արժանի մենք, երբ ատում ենք մեզ սիրողներին: Եթե նա, ով սիրում է իրեն սիրողներին, ավելի լավ վիճակում չէ հեթանոսներից, ապա ի՞նչ թողություն կարժանանա նա, ով անարգում է իրեն չանարգողներին: Դեռ նախանձում է, բայց մարդկանց և ոչ թե դեերին, իսկ դու, մարդ լինելով, նախանձում ես մարդկանց: Եւ ի՞նչ ներում կարող ես ունենալ դու:

Ծանր, շատ ծանր մեղք է նախանձը. այն քամահրում է սեփական փրկությունը: Այդ կերպ Սավուղը առ իր հոգին զրավեց չարամիտ դեհին, և այն բանից հետո, երբ զրավեց, իր բշչի հանդեպ նորից բռնվեց նախանձով: Այդպիսին է նախանձը. նա գիտեր, որ փրկություն պարտական է Դավթին, այնուամենայնիվ, ցանկանում էր, որ ավելի լավ կլինի, որ իր փրկիչը մեռնի, քան տեսնի նրա հռչակը:

Իսկ եթե ցանկանում եք, ես կպատմեմ, թե ինչպիսի բարերարություն արեց Դավիթը Սավուղի համար, և ինչով հատուկեց վերջինս նրան: Հրեաները պատուհասվեցին

դաժան պատերազմով, իսկ երբ բոլորը ահ ու սարսափից թաքնվեցին, և ոչ մեկը չհանդգնեց առաջ ընկնել, երբ ողջ քաղաքին մեծ վտանգ էր սպառնում, ու յուրաքանչյուրը միայն սեփական մահն էր տեսնում, և ամեն օր բոլորը կործանում էին սպասում, իր ոչխարներին թողած՝ զորաբանակ է հայտնվում Դավիթը ու իր վրա է վերցնում մարտը, որ բոլորին էր սպասում, ընդ որում՝ դրանում չտեսնելով ոչ մի հրամայական անհրաժեշտություն, ընդհակառակը, շատերի կողմից խոչընդոտների հանդիպելով (այդպես՝ և՛ եղբայրն է արգելում նրան, և՛ թագավորը՝ տեսնելով նրա դեռահասությունը, չի թողնում և հրամայում է մնալ) և ինքն իր հոգում բորբոքվելով՝ վազում է այլազգիների վրա և դրանով հանդերձ այնպիսի հոգածություն հանդես բերելով թագավորի հանդեպ, որ դեռ մենամարտից ու հաղթանակից առաջ, ոգևորում է նրան, որը բերանքսիվայր պառկած, ասում էր. «Իմ տիրոջ սիրտը թող չկոտրվի: Քո ծառան կզնա ու կմենամարտի այդ այլազգու դեմ» (Ա թագ. 17, 32):

Արդյոք, պակաս կարևոր է, ասա ինձ, որ նա, դրա համար ոչ մի անհրաժեշտություն չունենալով, տալիս է իր հոգին և նետվում թշնամիների վրա հանուն այն մարդկանց, որոնցից ոչ մի բարիք չէր ստացել:

Այսքանից հետո պետք չէ՞ր նրան կոչել տեր և հռչակել ողջ թագավորության փրկիչ, որպես մարդու, որ Աստծո շնորհների օգնությամբ պահպանեց բոլորի կյանքը: Դրանից ավելի մեծ բարեգործություն կա՞: Իրոք, դրանով Դավիթը բարերարություն արեց Սավուղի համար ո՛չ ունեցվածքի, ո՛չ փառքի կամ զորություն առումով, այլ հենց նրա կյանքի համար. նա նրան դուրս քաշեց մահվան շեմից, և միայն նրա շնորհիվ թագավորը կենդանի մնաց ու պահպանեց իր իշխանությունը:

Դրանից հետո ինչո՞վ հատուցեց թագավորը: Եթե որևէ

մեկը ուշադրություն առնի ծառայություն մեծությունը, ապա եթե անգամ Սավուղը հաներ թագը և դներ Դավիթի գլխին, դա դեռևս արժանի պարգև չէր լինի, այլ դարձյալ մեծ պարտքի տակ կմնար: Իսկապես, Դավիթը նրան նվերեց և՛ կյանք, և՛ թագավորություն, իսկ Սավուղն ընդամենը կզիջեր լուրջ թագավորությունը:

Այնուամենայնիվ, տեսնե՞ք, թե նա ինչ պարգևներ տվեց: Այն բանից հետո, երբ Դավիթը կտրեց այլազգու գլուխը և ավարով վերադարձավ, պատմում են, որ կույսերը նրան դիմավորեցին երգ ու պարով՝ բացականչելով. «Սավուղը հազար, իսկ Դավիթը բազմահազար մարդկանց սպանեց» (Ա թագ. 18, 7): Եւ մոլեգնեց Սավուղը ու այդ օրվանից սկսեց կասկածանքով նայել Դավիթին:

Ասա ինձ, ինչի՞ համար: Չէ՞ որ, եթե անսովոր բան ասելու լինե՞ք, աղաղակողները այդպես վարվեցին ավելի շուտ Սավուղին, քան Դավիթին դուր գալու համար, և դեռ Սավուղը պետք է գոհ մնար, որ իր համար գոնե «հազար» ասացին, ի՞նչ է, նա դժգոհում է, որ մյուսին «տասը հազար» են ասում: Եթե նա ինչ-որ բան արած լիներ մարտի համար, եթե իր մասնակցությունը գեթ փոքր լուծման ունենար, ապա արդարացի կլիներ «Սավուղը հազար, իսկ Դավիթը բազմահազար մարդկանց սպանեց» արտահայտությունը, իսկ եթե ահուգողով նստած էր տանը՝ ամեն վայրկյան սպասելով մահվան, իսկ Դավիթն ամեն ինչ արեց, ապա անմտություն չէ՞ նրա կողմից, որ, ոչինչ չանելով վտանգի դեմն առնելու համար, զայրանում է, որ մեծ գովասանքների չի արժանանում: Եթե որևէ մեկն իրավունք ուներ դժգոհելու, ապա դա Դավիթն էր լինելու, քանի որ միայնակ կատարելով ողջ սխրանքը՝ փառքը կիսում է ուրիշի հետ: Բայց այդպիսին է նախանձը. նա չի կարող անխռով ընդունել ուրիշի հաջողությունը, իսկ մերձավորի բարեկե-

ցուլթյունը համարում է անձնական դժբախտութիւնն և տառապում մերձավորի հաջողութիւնից:

Նման մի բան պատահեց Գերարայի թագավորի հետ. տեսնելով, թե ինչպես է օրավուր մեծանում Իսահակի հարստութիւնը, նա սկսում է վախենալ և ստիպում արդարին հեռանալ այնտեղից: Սակայն այստեղ հարկ է հիշել Սուրբ Գրքի խոսքերը, որպեսզի պարզ դառնա, թե ինչպիսի բարի կամեցողութիւնն ունի Աստված իր ծառաների հանդեպ. «Իսահակը գարի ցանեց այդ երկրում և նույն տարում էլ հարյուրապատիկ բերք ստացավ» (Ծննդ. 26, 12):

Տեսնու՞մ ես Տիրոջ առատաձեռնութիւնը: Տեսնու՞մ ես բարերարութեան լիութիւնը: Սակայն ուշադրութեան առնենք թագավորի նախանձը, որ առաջանում է արդարի հարստութեան պատճառով. «Հեռացիր մեր մոտից, - ասում է նա, - որովհետև մեզանից շատ ավելի գորավոր եղար» (Ծննդ. 26, 16):

Եվ իրոք, նա նրանցից զորավոր էր՝ ամեն ինչում ունենալով վերին օգնութիւն և Աստծո աջի հովանին:

Այսպիսով, ու՞ր ես հալածում արդար մարդուն: Կամ գուցե չգիտե՞ս, որ ուր էլ նա գնալու լինի, նրան անհրաժեշտ է լինել այնտեղ, որ պատկանում է նրա Տիրոջը: Եթե անգամ նրան հարկադրեիր անապատ գնալ, նա այնպիսի հզոր Տեր ունի, որ ընդունակ է այնտեղ ևս նրան էլ ավելի փառավոր դարձնել: Նա հենց հակառակի միջոցով է հակառակը հաստատում:

Ուրեմն փառք Նրան, զորութիւն, պատիվ և երկրպագութիւն, Հոր և Սուրբ Հոգու հետ, հավիտյանս հավիտենից. Ամեն:



ՏԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՐՏՄՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Աստված մեր մեջ տրտմութիւնն է դրել ոչ այն բանի համար, որպեսզի մենք տրվենք նրան անմտորեն և ընդմիջտ՝ դժբախտ հանգամանքներում, ոչ այն բանի համար, որ կործանենք մեզ, այլ որպեսզի նրանից մեծագույն օգուտ քաղենք:

Տրտմութեան ժամանակն այն չէ, երբ մեզ դժբախտութիւնն է պատահում, այլ երբ մենք վատ գործեր ենք անում: Մինչդեռ մենք ազավաղել ենք այդ կարգը և փոխել եղանակները. կատարելով բոլոր չարութիւններ՝ մենք չենք կործանվում նույնիսկ կարճ ժամանակով, իսկ եթե որևէ մեկի կողմից ինչ-որ չնչին բան ենք սպասում, ընկճվում ենք, խռովվում և պաղատում մեզ ազատել ներկա կյանքից, չիմանալով, որ տրտմութիւններն ու փորձութիւնները, մեզ հետ պատահած տխրութիւնները ոչ պակաս, քան բարիքները, բացահայտում են մեր նկատմամբ ունեցած Աստծո խնամակալութիւնը:

Բայց դե, ի՞նչ եմ ասում այսկողմնային տրտմութիւնների մասին: Նույնիսկ դժոխքի սպառնալիքը ոչ ավելի, քան երկնային արքայութիւնը, ցույց են տալիս Նրա մարդասիրութիւնը, որովհետև, եթե Նա չսպառնար դժոխքով, ոչ ոք այդքան հեշտութեամբ չէր հասնի երկնային երանութեան:

Իրոք, սոսկ երանութեան խոստումը բավական չէր առաքիլի դառնալու համար, եթե առավել անփութութեամբ դրան վերաբերողները պատժվելու երկյուղ չունենային: Բացի այդ, թախիժն ու տրտմութիւնը այն բանի համար

չեն, որպեսզի մենք վշտանանք մահվան առիթով, հարստութեան կորստի առիթով կամ նման այլ բաների առիթով, այլ որպեսզի, օգտվելով դրանից, քավենք մեր մեղքերը: Ձէ՞ որ անգամ զինվորը, երկյուղելով մահից, ոչ մի հերոսական բան չի անի:

Այսպիսով, տրամոզը պետք է վշտանա ոչ այն բանի համար, որ ինքը պատժվում է, այլ այն բանի համար, որ իր մեղքերով բարկացնում է Աստծուն: Առաջին տեսակի տրամոլթյունը մեզ հեռացնում է Աստծուց և Նրան մեզ թշնամի դարձնում, երկրորդ տեսակի տրամոլթյունը առավելապես Նրան հաշտեցնում է մեզ հետ ու ավելի մերձեցնում:

Այն բանի համար չես եկել աշխարհ, ո՛վ մարդ, որ հենց այնպես ապրես, ոչ էլ այն բանի համար, որ ոչ մի դժբախտութիւն չպատահի, այլ այն բանի համար, որպեսզի փառավորվես տառապանքներով: Քաջարի մարդը չպետք է խաղաղութիւն և հաճուքներ փնտրի, այդպիսի ձգտումը շատ ավելի հատուկ է ճիճվին, քան բանականութիւն ունեցող (մարդուն): Անշուշտ, պետք է ազոթես, որ փորձանքի մեջ չընկնես, բայց եթե երբևէ ընկնես, մի տրտնջա, մի խռովվիր ու ընկճվիր, այլ ողջ կարողութեամբ ջանա, որ ավելի փառավոր լինես: Մի՞թե չես տեսնում, որ ամենաքաջարի զինվորները, երբ լսում են փողերի կանչը, խորհում են ավարի, հաղթանակի ու նախնիների սխրանքների մասին:

Այդպես և դու, հոգևոր փողի ձայնը լսելիս, առյուծից ավելի ուժեղ եղիր. հանդես արի, թեկուզ առջևդ կրակ է, թեկուզ՝ երկաթ, տարերքներն անգամ կարողանում են հարգել այդպիսի խիզախութիւնը, և զազաններն են վախենում այդպիսի քաջարի մարտիկներից, և որքան էլ նրանք կատաղած լինեն, ասենք, սովից կամ էլ ըստ իրենց

բնույթի, նրանք ամեն ինչ մոռանում են և հաղթահարում իրենց ցասումը:

Ուրեմն, քրիստոնյան, եթե նա տրտմում է, կարող է ունենալ երկու առիթ՝ կամ երբ նա ինքն է զայրացնում Աստծուն, կամ երբ նույնը անում է մերձավորը: Ոչ թե նրանք, ովքեր ենթարկվում են անարգանքի, պետք է սարսափեն ու դողան, այլ նրանք, ովքեր անարգում են, որովհետև ոչ թե առաջինները կարիք ունեն արդարանալ վատ խոսքերի համար, որ լսել են, այլ վերջինները, որ վատ են արտահայտվել. ողջ վտանգը սպառնում է վերջիններին:

Ուրեմն, նրանք, ովքեր իրենց մասին վատ խոսքեր են լսում, պետք է մնան անտրտմելի, որովհետև նրանք հաշիվ չեն տալու այն բանի համար, որ ուրիշն է վատ խոսքեր ասել, այլ ընդհակառակը, նրանք, ովքեր վատ են խոսում, պետք է վախենան և դողան, քանի որ նրանք դրա համար կենթարկվեն ահեղ դատաստանի:

Այդ պատճառով մենք պետք է տրտմենք ոչ թե առ այն, որ մեր մասին վատ խոսքեր ենք լսում, այլ առ այն, որ այդ խոսքերը մենք վաստակել ենք. եթե մենք արատավոր կյանքով ենք ապրում, ապա, թեկուզև ոչ ոք մեզ չանարգի, միևնույն է, մենք ամենադժբախտն ենք, և ընդհակառակը՝ եթե առաքինի դառնալ ենք ցանկանում, ապա թեկուզ ողջ աշխարհը մեր մասին վատ արտահայտվի, մենք բոլորից երջանիկ կլինենք:

Եթե մեր ոգին բարձր է, ապա թեկուզ ամեն կողմից բարձրանան անհամար փոթորիկներ, մենք մշտապես կհասնենք խաղաղ հանգրվան, և ընդհակառակը՝ եթե տրամադրութիւններս ընկած է, ապա թեկուզ ամեն ինչ նպաստի մեր հաջողութեանը, մենք, միևնույն է, կհայտնվենք այն վիճակում, որ քիչ բանով կտարբերվի նավաբեկութիւնից:

Այս կարելի է դիտարկել նաև սննդի առումով: Երբ մեր

ստամոքսը ուժեղ և ամուր է, ապա որքան էլ կոշտ կամ հում կերակուր ընդունի, այն ամեն ինչ կվերածի կազդուրիչ հյուսվածքի, քանի որ բնական տարրալուծումը հաղթահարում է սննդի վատ հատկությունները, և, ընդհակառակը, եթե նրա ուժը նվազել է ու ամեն ինչ անում է հուլորեն, ապա թեկուզ նրան առաջարկես ամենաորակյալ սնունդը, այն վերածում է վատթարագույնի և լիովին փչացնում է, քանի որ նրա թուլությունը ոչնչացնում է սննդի լավագույն հատկությունները:

Հոգին, որ վարակված է տրտմությամբ և ընդելուզված թախծի ամպերով, ընդունակ չէ անխռով որևէ օգտակար բան լսելու, կամ էլ ասելու: Տրտմությամբ վշտաբեկ հոգին չի ցանկանում երկար-բարակ խոսել, սակայն նման այն բանին, որ երբ թանձր ամպը հանկարծ հայտնվելով արևի ճառագայթների տակ, դրանք ետ է շարժում, ճիշտ այդպես և թախծի ամպը, երբ հայտնվում է մեր հոգու առաջ, խոչընդոտում է խոսքի ազատ ելքը, շնչահեղձ անում և բռնություն պահում է ներսում: Եվ դա պատահում է ոչ միայն խոսողների, այլև լսողների հետ:

Նման այն բանին, որ տրտմությունը թուլյլ չի տալիս ազատորեն թռչել խոսողի հոգուց, ճիշտ այդպես չի թուլյլատրում նրան իրեն հատուկ ուժով ներթափանցել լսողի հոգու մեջ: Այսպես, օրինակ, երբ Հոբել մոտ գալիս են նրա ընկերները, իմանում են նրա տանը պատահած դժբախտությունների մեջ և արդարակյացին տեսնում են թարախապալարների մեջ նստած, ամբողջովին պատված խոցերով, ապա պատահում են իրենց հանդերձները, հեծկտում և լուռ նստում են նրա կողքին, դրանով ցույց տալով, որ վշտաբեկ մարդու համար սկզբում ավելի օգտակար բան չկա, քան անդորրն ու լուռությունը:

Այսպիսով, իմացիր, Նա, Ով թուլյլատրում է փորձույթ-

յան գոյությունը, հենց ինքը գիտի փորձույթյան ավարտի ժամանակը: Աստված զորավոր է վերջ տալու բոլոր դժբախտությունները, սակայն քանի դեռ չի տեսել կատարվելիք դարձը, վերջ չի տալիս տրտմությանը: Զարմացիր նրանց վրա, ովքեր ենթարկվում են փորձույթունների և արիաբար տանում են դրանք, ինչպես, օրինակ, երեք պատանիները: Վերջիններս վրա ոչ ոք չէր զարմանա այն բանի համար, որ նրանք չվառվեցին, եթե նրանք հեռու լինեին բաբելոնյան հնոցից, բայց բոլորի համար ապշեցուցիչն այն է, որ այդքան ժամանակ գտնվելով կրակի մեջ, ավելի անվնաս դուրս եկան այնտեղից, քան նրանք, ովքեր կրակի մեջ չէին:

Նույն բանը կարելի է ասել նաև սրբերի վերաբերյալ. եթե նրանց գլխին փորձություններ չթափվեին, ապա մենք ամենևին չէինք զարմանա, որ նրանք անընդմեջ ուրախանում են: Մինչդեռ, բոլոր կողմերից շրջապատված լինելով բազում ալիքներով, նրանք իրենց ավելի լավ էին զգում այն մարդկանցից, ովքեր զվարճանում էին անխռով լուռությամբ: Եթե չլինեիր ոչ մի բան, որ կվշտացներ նրանց, ապա նրանց համար ոչ մի մեծ բան չէր լինի այն բանում, որ կարողանում են մշտապես ուրախանալ, սակայն երբ նրանք բազում վտանգների դեպքում, որոնք կարող էին հուսահատության մեջ գցել, բոլորից բարձր մնացին և ուրախացան հենց վշտերի մեջ, ապա դա արժանի է ամեն կարգի զարմանքի:

Իրոք, մի^օթե մահը ամենամահալի բանը չէ: Մինչդեռ նրա սպասումը ոչ միայն չի վշտացնում նրանց, այլև ավելի քան ուրախացնում է: Նրանք գիտեն, որ մահվան գալուստը բոլոր գործերի վերջն է, որ մարդասեր Աստված միշտ էլ հարգում է իր ծառաներին, և հաճախ նրանց նվիրում է փրկություն և ուրիշ բաներ: Այդպես Նա վարվեց

սուրբ Պողոսի հետ, աշխարհի ուսուցչի, որ ամենուր տարածում է իր վարդապետությունների: Այսպես, երբ նրան Հռոմ էին տանում, մի անգամ ծովում մեծ փոթորիկ բարձրացավ, այնպես որ, նավում գտնվողները դողում էին իրենց փրկության համար և ծայր տագնապից հույսները կորցրել էին, այնժամ Պողոսը, դիմելով բոլորին, ասաց. «Արդ, ձեզ խրատում եմ, որ քաջավերվեք, որովհետև բացի նավից, ձեզանից և ոչ մեկի անձի՞ն վնաս չպիտի հասնի, որովհետև այս գիշեր Աստծո հրեշտակը, որի՞ն պատկանում եմ ես ու ծառայում, երևաց ինձ ու ասաց. «Մի՛ վախեցիր, Պողոս՛ս, դու կայսեր առաջ էլ պետք է անդադրես. և ահա բոլոր նրանց, որ այդ նավի մեջ քեզ հետ եմ, Աստված քեզ է շնորհել» (Գործք, 27, 22, 24): Միշտ պետք է հիշենք այդ մասին:

Արդարև, ոչ մի բան մեզ համար այնքան օգտակար չէ, որքան Աստծո բարեգործությունների ամենօրյա հիշեցումը, ինչպես ընդհանուր, այնպես էլ մասնավոր դեպքերում: Եթե մենք ընկերոջ բարեգործությունները հիշելիս, կամ հաճելի խոսքի կամ գործի մասին լսելիս մեր հոգին ջերմանում է, ապա առավել ևս մեծ ջանադրությամբ կվերաբերվենք այն առաքիլություններին, երբ գիտակցենք, թե ինչ փտանգների կենթարկվեինք և ինչպես այդ բոլորից Աստված մեզ ազատեց:

Այդպես պատահեց և Պողոսի հետ: Այն մասին, թե ինչեր տարավ այդ երանելին հանուն քարոզչության՝ սով, ծարավ, մերկություն, նավաբեկություն, փտանգներ, դավեր, զնդան, խարազանում և այլն, կարծում եմ ոչինչ պետք չէ և ասել:

Այդ նեղություններից յուրաքանչյուրը բավական էր, որ շփոթության մեջ գցեր ու կործաներ այդ սուրբ մարդուն: Սակայն երբ նա ասում է. «Ո՞վ է տկար, որ ես էլ տկար չլինեմ, ո՞վ է գայթակղվում, որ ես էլ չայրվեմ» (Ա Կորնթ. 11,

29), այս խոսքերում մատնանշվում է, թե ինչն էր ամենից առաջ նրա մեջ առաջացնում մշտական և անտանելի տրտմություն:

Իսկապես, եթե նա այրվեր յուրաքանչյուր գայթակղությունից, ապա նրա հոգում երբեք չէր մարի այդ կրակը, որովհետև գայթակղությունների պակաս երբեք չէր լինի և այդ կերպ նա մշտապես սնունդ կտար կրակին: Բացի այդ, տեսնելով անհավատ հրեաներին, կարո՞ղ էր նա ունենալ թեկուզ չնչին դադար տառապանքներից ու վշտից: «Քրիստոսից հեռացած, երդումով խնդրում էի, - ասում է նա, - ինքս իսկ նզովք լինել իմ եղբայրների և մարմնով ազգակիցների համար, որ իսրայելցիներն են» (Հռոմ. 9, 3), այսինքն՝ ինձ համար ցանկալի կլիներ դժոխք ընկնել, քան տեսնել անհավատ իսրայելցիներին:

Եթե նա համաձայն է տանջվել դժոխքում, որպեսզի հավատի բերի բոլոր հրեաներին, ապա պարզ է, որ չհասնելով նպատակին, ավելի ուժեղ է տառապում նրանցից, ովքեր տանջվում են դժոխքում: Հենց նրան են ասվում հետևյալ խոսքերը. «Իմ շնորհը քեզ բավ է, որովհետև իմ գործությունը տկարության մեջ է ամբողջանում» (Ա Կորնթ. 12, 9), այսինքն՝ բավական է և այն, որ դու մեռյալներին հարություն ես տալիս, բժշկում ես կույրերին, մաքրում բորոտներին և կատարում ես այլ հրաշքներ, այլևս մի փնտրիր և այն, որպեսզի անվտանգ ու անհոգ ապրես, և քարոզես առանց դժվարությունների:

Բայց դու տառապում ու տրտմում ես: Սակայն իմ անգործության նշանը մի համարիր այն, որ շատերը չարություն են պատճառում, ծեծում, հալածում և խարազանում են քեզ, ընդհակառակը՝ հենց այդտեղ է երևում իմ գործությունը («Իմ գործությունը, - ասում է, - տկարության մեջ է»), երբ դուք հետապնդվելով՝ հաղթում եք ձեզ հետապնդող-

ներին, հալածված լինելով՝ հաղթահարում եք հալածողներին, շղթայված լինելով՝ դարձի եք բերում ձեզ շղթայողներին:

Անշուշտ, ծանր է լսել հանդիմանանքները՝ ում կողմից էլ, որ լինեն. երբ դա անում է բարեգործվածներից ինչ-որ մեկը, երբ նա հանդիմանում ու անարգում է իրեն արված բարերարությունը, այդժամ հատկապես վիրավորանքը դառնում է անտանելի, և բացի տրտմությունից այնպես է զայրացնում, որ կարող է նույնիսկ խեղդել վիրավորողին:

Նա, ով որևէ մեծ մարդուց վիրավորանք է ստանում, քիչ բավարարություն չի գտնում նրա հպարտության զգացումը այն առավելությունից, որ նա ունենում է իրեն չարություն պատճառողից, իսկ նա, ով նույնը ստանում է չնչին և արհամարհելի մեկից, առավել մեծ դառնություն է զգում և իր տրտմությունը անտանելի է համարում:

Բայց դու ուշադրություն ան ոչ թե այն, որ մարդիկ մեզ վրա ծիծաղում են, այլ ծիծաղում են արդարացիորեն և արժանիորեն. իսկ եթե արդարացի են, ապա թեկուզև չծիծաղեն, մենք պետք է լաց լինենք, իսկ եթե անարդարացի են, ապա թեկուզև բոլորը ծիծաղեն մեզ վրա, մեզ երջանիկ կհամարենք, իսկ նրանց համար լաց կլինենք՝ որպես ամենադժբախտ մարդկանց, որոնք ոչ մի բանով չեն տարբերվում դիվահարներից. չնայած տրտմությամբ վշտաբեկ մարդկանց համար ավելի անտանելի բան չկա, քան այն խոսքը, որ կարող է խոցել հոգին: Այդ մասին հարմար առիթով ամեն օր կրկնեք ուրիշների ու ինքներդ ձեզ համար:

Եթե մտադրություն կա ինչ-որ մեկին խնդրելու, թեկուզև նրա խնդրանքը լինի խելամիտ, նա սպասում է հարմար առիթի, որպեսզի մոտենա այն մարդուն, որից կախված է խնդրանքի իրագործումը, այսինքն՝ երբ նա գտնվում է անխուռվ և լավ տրամադրություն մեջ, և շնորհիվ հաջող

ընտրված ժամանակի ստանում է խնդրելիքը, ապա առավել ևս խոսողին է հարկավոր գտնել նպաստավոր պահ:

Մենք պետք է այնպես հոգ տանենք իրար, ինչպես հոգ ենք տանում ինքներս մեզ, և գթանք մեր մերձավորներին ճիշտ այնպես, ինչպես Աստված՝ մեզ: Իսկապես, ոչ ոք իրեն այնպես չի գթում, ինչպես Աստված ամենքիս, Ով մեզնից ավելի շատ է ցանկանում, որ մեզ ոչ մի չարիք չպատահի:

Ուրեմն փառք, զորություն, պատիվ և երկրպագություն, այժմ և հավիտյանս հավիտենից. Ամեն:



ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ, ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՓԱՌՔԻ ՍԱՍԻՆ

Պատմում են, որ երբ մի անգամ փշրեցին երանելի Կոստանդինոսի արձանը, և շատերը նրանից պահանջում էին վրեժ լուծել և պատժել անարգողներին, ասելով՝ թե նրանք քարերով լիովին ջնջվել են նրա դեմքը, երանելին ձեռքով շոշափեց դեմքը ու թեթևակի ժպտալով՝ ասաց. «ես ոչ մի տեղ չեմ նկատում հարվածների հետքը, հակառակը, և՛ գլուխս է ողջ, և՛ ամբողջ դեմքս է անվնաս», և այդ կերպ անգոսնելով ու ծանակելով նրանց՝ հարկադրեց հրաժարվել այդպիսի կործանարար խորհրդից:

Եթե այդ խոսքերի շնորհիվ մարդկանց մոտ այդպիսի փառք վաստակեց, ապա ինչպիսի՞ բարիքներ կստանա մարդասեր Աստուծոց: Ըշմարիտ է այն թագավորը, ով իշխում է բարկությունը, նախանձին և հաճույքներին, և ամեն ինչ ենթարկում է Աստծո օրենքներին ու ազատ պահելով միտքը՝ թույլ չի տալիս, որ հոգում բնակվի հաճույքի իշխանությունը. այդպիսի մարդուն ես հաճույքով կուզենայի տեսնել ծովերի ու երկրների, քաղաքների, ժողովուրդների ու բանակների առաջնորդ:

Իսկապես, ով, հոգու կրքերի վրա ղեկավար է կարգել բանականությունը, նա հեշտությամբ կղեկավարի նաև մարդկանց վրա՝ համաձայն Աստծո օրենքների, այնպես որ, ենթակաների համար կարող է լինել հոր նման մեկը, ով քաղաքացիներին վերաբերվում է ամենայն խոնարհությամբ:

Իսկ նա, ով երևութապես իշխում է մարդկանց վրա,

բայց ինքը ծառայում է զայրույթին, իշխանասիրությունը և հաճույքներին, առաջին՝ կարող է ենթակաների աչքին ծիծաղելի թվալ, որ կրում է թանկագին քարերով զարդարված ոսկե թագ, սակայն խոհեմությամբ չի թագադրված, որ ողջ մարմինը շողշողում է ծիրանիով, իսկ հոգին մնացել է անզարդ, երկրորդ՝ նա կարող է չիմանալ, թե ինչպես տնօրինի իշխանությունը, որովհետև նա, ով ի վիճակի չէ կառավարել իրեն, ինչպե՞ս կարող է ուրիշներին կառավարել օրենքներով:

Պետք է ձգտել ոչ այն բանին, որ օգտվենք մեծարանքներից ու իշխանությունից, այլ նրան, որպեսզի լինենք առաքինություն ու իմաստասիրության մեջ: Ուժն ու իշխանությունը հաճախ դրդում են Աստծուն անհաճո բաներ անել և հարկավոր է ունենալ չափազանց արի հոգի, որպեսզի կարողանանք օգտվել մեծարանքից, փառքից և իշխանությունից:

Նա, ով զուրկ է բարձր արժանապատվությունից, ակամա իմաստակում է, իսկ նա, ով ունի այն, ունենում է զգացողություն՝ նման այն բանին, որ ինչ-որ մեկը, ապրելով բարեստես և գեղեցիկ կույսի հետ, իր համար սովորություն է դարձրել երբեք նրան չնայել անպատկառ հայացքով: Այսպիսին է իշխանության բնույթը:

Ահա թե ինչու, նույնիսկ ակամա շատերին դրդում է վիրավորանքներ հասցնել, բորբոքում է զայրույթը, լեզում անսանձ է դարձնում, բացում է բերանը և, ասես, ալեկոծելով հոգին՝ մղում անհուն չարությունների:

Արժանապատվության վեհությունը այն մարդկանց համար, ովքեր հանդգնում են արժանի լինել դրան, նպաստում է պատիժների շատացմանը: Համբավն ու հաջողությունը ժողովրդի մեջ, որքան ավելի հռչակում են մարդուն, էլ ավելի վտանգավոր են դարձնում նրան, որովհետև այդ-

պիսի մարդը չի կարող անգամ դադար առնել ու ազատ շնչել՝ ունենալով այդպիսի դաժան ու ծանր տեր:

Բայց ի՞նչ եմ ասում. դադա՞ր առնել ու շնչե՞լ: Այդպիսի մարդը, թեկուզև կատարի հազարավոր բարի գործեր, մեծ դժվարություններ կմտնի երկնային թագավորություն, որովհետև սովորաբար ոչինչ այնքան ամբարտավան չի դարձնում, որքան ամբոխից ստացած փառքը: Կարողանալ տանել անպատվությունը մեծ և ազնիվ բան է, սակայն փառքի տիրանալը պահանջում է կորովի և չափազանց մեծ հոգի, որպեսզի ունենալով դրանք՝ չմեծամտանալ:

Եթե ցանկանում ես փառք վաստակել՝ մերժիր այն, իսկ եթե ընկնես փառքի ետևից՝ կկորցնես այն: Տեսնելով պատկերված հացը՝ ոչ ոք անմիջապես վրա չի նետվում, որքան էլ սոված լինի: Ուրեմն, նրանք, ովքեր ասում են, որ ամեն ինչ ստացել են ներկայում, իրենց ամեն ինչից զրկվում են ապագայում:

Այդպես և Ադամը, ի հետևանք մեծ փառքի հույսի՝ կորցրեց նաև այն, ինչ ուներ: Այդպես և շատերը, ցանկանալով ավելի շատը, կորցնում են նաև ունեցածը, և ցանկանալով տիրանալ այստեղի բոլոր բարիքներին, զրկվում են դրանց մի մասից:

Ինչքան բարձր և փայլուն է լինում հաջողությունը մարդկային գործերում, նույնքան մեծ անկում է նախապատրաստվում. և այդպես պատահում է ոչ միայն հպատակների, այլև թագավորների հետ, ու սովորական տան մեջ այնքան դժբախտություններ չեն լինում, որքան թագավորական պալատներում:

Ասա ինձ, այդ պատճառով չէ՞, որ նախանձում ես մերձավորիդ, երբ տեսնում ես, թե նա ինչպիսի հարգանքի ու մեծ փառքի է արժանանում: Իսկ դու չե՞ս խորհում, թե դրանք որքան փութանցիկ են, և այնտեղից որքան չարիք-

ներ են ծնվում: Սակայն ամենից ծանրն այն է, որ դրանցից ծնված դժբախտությունները հավիտենապես մնում են, մինչդեռ հաճույքը՝ չհայտնված, արդեն ցնդում է: Այն մեծ գորություն ունի՞ թագավորի համար, որտեղ ցանկանում, ավերում ու ամայացնում է ամեն ինչ, ճնշում է թշնամիներին և բարեկեցիկ դարձնում շողոքորթների՞ն և ամեն ինչ կարո՞ղ է: Սակայն ի՞նչ չարություն կարող է այն պատճառել: Արժանապատվությունից կզրկի՞: Հետո ինչ: Եթե արդարացի է, ապա այն կարող է անգամ օգտակար լինել, որովհետև ոչ ոք այդպես չի զայրացնում Աստծուն, որքան անվաստակ մեծարանքը, իսկ եթե անարդար է, ապա մեղքն ընկնում է նրա վրա և ոչ թե անարգվածի. նա, ով անարդարություն է տանում և հերոսաբար դիմանում է անարգանքներին, դրանով մեծ շնորհի է արժանանում Աստծու առաջ: Նա, ով հնազանդվում է իշխանություններին, ապա նրանց չի հպատակվում, այլ Աստծուն, որ հաստատել է նրանց, իսկ ով չի հնազանդվում, հակառակում է Աստծուն: Ասված է՝ «իշխանությունը այլ տեղից չէ, եթե ոչ Աստծուց» (Հռոմ. 13, 1):

Այն, որ գոյություն ունեն իշխանություններ, և ոմանք դեկավարում են, իսկ ուրիշները՝ ենթարկվում, ու ամեն ինչ չի ընթանում առանց կարգ ու կանոնի, և ժողովուրդները չեն թափառում, ինչպես անկարգ ալիքներ, Աստծո իմաստությունից գործն է: Այդ պատճառով և Աստված խստորեն պատժում է, ով արհամարհում է իշխանություններին: Եթե դու չհնազանդվես նրանց, նա ոչ թե քեզ համար ինչ-որ չնչին պատիժ կտա, այլ ծանրագույն, և ոչ ոք քեզ չի ազատի, եթե դու սկսես առարկել, այսպիսով և մարդկանց կողմից կարժանանաս ծանրագույն պատժի և Աստծուն չափազանց կզայրացնես:

Նման այն բանին, որ եթե դու նավավարին հեռացնես նավից, կխորտակես նավը, կամ եթե բանակից խլես զորավարին, դրանով զինվորներին կմատնես թշնամու ձեռքը, ճիշտ այդպես, եթե դու քաղաքներում ոչնչացնես ղեկավարներին, մեր կյանքը կանցկացնենք անբան գազաններից ավելի անկարգ վիճակում: Ինչպես չորսուների կապն է տների համար, այդպես էլ ղեկավարները՝ պետությունների համար:

Երբ կառավարիչն անթերի է ամեն ինչում, այնժամ նա կարող է ինչպես հարկն է և՛ պատժել, և՛ ներել բոլոր հպատակներին, որովհետև չպատժել մեղավորներին և ներել նրանց, ովքեր կատարել են ներման չարժանի հանցագործություն, հատուկ է միայն մեկ-երկու մարդու, առանձնապես երբ խուսքը վերաբերում է անարգանքի ենթարկված թագավորին:

Մարդկանց հեշտ է ենթարկեցնել վախով, սակայն բոլորին դարձնել կողմնակից և ստիպել, որ նրանք անկեղծորեն տրամադրվեն իշխանությունների հանդեպ, չափազանց դժվար գործ է, և որքան էլ որևէ մեկը փողեր ծախսի, որքան էլ բանակներ շարժի, ինչ էլ որ անելու լինի, նա հեշտություն է չի կարող գրավել բազմություն տրամադրությունը: Ոչինչ այնքան լավ չի ցուցանում ղեկավարին դրական կողմից, որքան նրա՝ հնազանդների նկատմամբ ունեցած հոգածությունը: Չէ՞ որ հորն անգամ հայր է դարձնում ոչ միայն երեխայի ծնունդը, այլև սերը ծնունդից հետո:

Եթե այնտեղ, որտեղ բնությունն է գործում, սեր է պահանջվում, ապա առավել ևս (պահանջվում) է այնտեղ, որտեղ բարի տրամադրվածությունն է: Արդարև, հոգևորականություն իշխանությունն ավելի մեծ է թագավորական իշխանությունից, և որքանով մեծ է, այդքանով թագավորին

վստահված է մարմինը, իսկ հոգևորականին՝ հոգին: Մեկը սահմանում է դրամական պարտքերը, մյուսը՝ մեղքերի պարտքը, առաջինը գործում է հարկադրանքով, երկրորդը՝ հորդորանքով, առաջինը տիրում է զգայական գործիքների, երկրորդը՝ հոգևոր, առաջինը պատերազմում է բարբարոսների դեմ, երկրորդը՝ դեերի:

Ահա թե ինչու, Հին Կտակարանում թագավորներին օժտում էին հոգևորականները, և հիմա էլ Աստված նրանց գլուխը խոնարհեցնում է հոգևորականների աջի առջև, ուսուցանելով մեզ, որ վերջիններս ավելի մեծ իշխանություն ունեն, քան թագավորը, քանի որ «Ավաստն է բարձրից օրհնվում» (Եբր. 7, 7):

Մի անգամ Օզիաս թագավորը մտնում է Տիրոջ տաճարը՝ ցանկանալով խուսնկ ծխել, նրա հետևից մտնում է Ազարիա երեցը, որպեսզի նրան վռնդի այնտեղից ոչ թե որպես թագավոր, այլ որպես փախստական ու անչնորհակալ ծառայի, վազում է նրա հետևից ողջ հանդգնությամբ, ինչպես անվախ շունն է նետվում վայրի գազանի հետևից, որպեսզի վռնդի նրան Տիրոջ տաճարից: Նա չի նկատում իշխանավորի վեհությունը, չի լսում Սողոմոնին, որ ասում էր. «Թագավորի սպառնալիքը անան է առյուծի մոնչյունի» (Առակ. 19, 12), այլ հայացք նետելով երկնային ճշմարիտ թագավորին և ամրապնդվելով Նրա նկատմամբ ունեցած երկյուղով՝ հարձակվում է բռնակալի վրա:

Ի դեպ, եթե ուզում եք՝ ներս մտնենք նաև մենք, որպեսզի տեսնենք, թե ինչ է ասում նա թագավորին: «Օզիա՛ս, - ասում է, - դու Տիրոջը խուսնկ ծխելու իրավունք չունես» (ԲՄնաց. 26, 18): Նրան թագավոր չի անվանում, քանի որ նա ինքն իրեն զրկել էր այդ արժանիքից, քանի որ նա, ով մեղք է գործում, ծառա է, թեկուզև գլխին հազարավոր թագեր ունենա, իսկ նա, ով ճշմարտություն է արարում, թեկուզև

լինի մարդկանցից վերջինը, արքայից ավելի արքա է:

Եվ լսիր, թե այդ առիթով ես ինչ կասեմ: Այնժամ հարկավոր էր հրեաներին թագավոր նշանակել, քանի որ նախկինը արժանի չէր թագավորելու: Եւ ահա Սամուելն ուղարկվում է Հեղիի մոտ և ասում է. ինձ Աստված է ուղարկել, որպեսզի քո որդիներից մեկին թագավոր նշանակեմ: Լսելով այդ մասին՝ Հեղին բերում է անդրանիկ որդուն՝ կարծելով, որ նա արժանի է ստանալ այդպիսի աստիճան: Տար նրան, ասում է Սամուելը, նրան Աստված չի ընտրում: Բերում է երկրորդին. սա էլ չէ: Բերում է երրորդին, և սա՝ նույնպես: Չորրորդին է բերում, հինգերորդին, վեցերորդին. սրանք էլ չէ: Որդիները վերջանում են, իսկ որոնելին չկա:

Ուրիշ որդի չունե՞ս, հարցնում է Սամուելը: Հայրն ամաչում է: Մի փոքրն էլ կա, ասում է, որ ուշադրություն արժանի չէ, հովիվ է: Հետո ի՞նչ: Դու կամենում ես թագավոր հաստատել և փոքրին լավերից լավագու՞յնն ես համարում: Մարդը մարդուն ոչնչացնում է, իսկ Աստված թագադրում է. «Աստված այնպես չի ակատում, ինչպես ակատում են մարդիկ. մարդիկ երեսին են անայում, իսկ Աստված՝ սրտին» (Ա թագ. 16, 7):

Մի՞թե մենք մարմնական քաջություն ենք փնտրում: Հոգու ազնվություն ենք կամենում մենք: Բայց ինչու՞ այդ մասին պարզ չի ասում՝ զնա և ինձ համար թագավոր օծիր Դավիթին, բայց ասում է՝ Հեղիի որդիներից մեկին: Որպեսզի Դավիթին չպատահի այն, ինչ կատարվեց Հովսեփի հետ:

Նման այն բանին, որ վերջինիս եղբայրները, իմանալով, որ նա թագավոր է հաստատվելու, նրա դեմ չարություն են նյութում, ճիշտ այդպես էլ երկյուղ ունի, որ նույնը կանեն Դավիթի եղբայրները: Այդ կերպ անորոշությունը Դավիթի համար դառնում է անվտանգություն երաշխիք:

Ահա և գալիս է Դավիթը, ճիթայուղով օծվում է և գնում թագավորական իշխանությունը օժտված՝ պաշտպանված լինելով ո՛չ թե զրահով, ո՛չ թե վահանով ու գեղարդով, այլ ամենազոր Աստծո օրհնանքով: Եվ ահա, պատերազմից դրդված, գալիս է նա՝ տեսնելու ճակատամարտը, և գտնում է այլազգուն, որ մենամարտի է կանչում, ու ոչ ոք չի հանդգնում դուրս գալ ու մենամարտել նրա հետ: Այնժամ նա ասում է. «Ո՞վ է այդ անթլիատ այլագոհն, որը կենդանի Աստծու գործին վիրավորանք է հասցնում» (Ա թագ. 17, 26):

Եվ նրան ասում են՝ որտեղի՞ց քեզ այդ մեծամտությունը: Ո՛չ, պատասխանում է նա, ո՛չ թե մեծամտությամբ, այլ հավատով, ո՛չ թե զրահով, այլ բարեպաշտությունով եմ զինված ես. ես նայում եմ ոչ թե նրա ահռելիությունը, այլ խելքի խելճությունը, նայում եմ ոչ թե որքան մեծ է նավը, այլ որ նա չունի նավվար:

Իսկ եղբայրներ՞ըր: Նորից չարություն, նորից նախանձ: «Անապատում ու՞մ ես հանձնել այն փոքրաթիվ ոչխարները: Ես գիտեմ քո մեծամտությունը և սրտի չարությունը, դու պատերազմը դիտելու համար ես եկել» (Ա թագ. 17, 28): Իսկ նա, թույն տեսնելով, հեռանում է նրանցից, և գալով ճակատամարտի մի այլ տեղ, ասում է՝ ի՞նչ է սպասում այն մարդուն, ով կկտրի այլազգու գլուխը:

Նրան բերում են թագավորի մոտ: Իր առջև տեսնելով ընկճված թագավորին՝ բռնված ահ ու սարսափով, Դավիթն ասում է. ինչու՞ է տրտմել իմ տիրոջ դեմքը: Եվ այդպիսով ճիշտ ժամանակին նրան հայտարարում է իր հավատարմությունը: Սա ո՞վ է: Թե՞ ես չեմ գնալու և կտրելու այլազգու գլուխը:

Իսկ թագավո՞րը: Գուցե չկարողանաս գնալ կովել այլազգու դեմ, ասում է Սամուելը, քանզի պատանի ես, իսկ նա մանկությունից ի վեր պատերազմող մարդ է եղել: Թա-

գաՎորը չի հավատում. Դավիթն ստիպված պատմում է իր քաջագործությունների մասին:

Քո ծառան, պատմում է նա, իր հոր ոչխարներն էր արածացնում, «Եւ երբ առյուծ կամ արջ էր գալիս և հոտից ոչխար էր տանում, ես նրան հետապնդում էի, զարկում ու կորզում ոչխարը նրա երախից: Իսկ եթե ինձ վրա էր հարձակվում, բռնում էի նրա կոկորդից, հարվածում ու սպանում նրան: Քո ծառան առյուծ էլ է սատկեցրել, արջ էլ: Նույն կերպ կվարվեմ ես այդ անթլփատ այլազգու հետ: Արդ, ինչու՞ չգնամ, չսպանեմ նրան և այսօր ևեթ վերացնեմ Իսրայելի անխատիները: Ո՞վ է այդ անթլփատը, որ կենդանի Աստծու գործն է անխատել: Դավիթն ասաց. Եթե Տեր Աստված ինձ փրկել է առյուծի ու արջի ճանկերից, ինձ կփրկի նաև այդ անթլփատ այլազգու ձեռքից: Սավուղն ասաց. «Գնա՛, Տերը քեզ հետ թող լինի» (Ա. Թագ. 17, 34-38):

ԹագաՎորը նրան տալիս է իր զրահները, սակայն Դավիթը չի կարողանում դրանք կրել: Ինչու՞: Որովհետև Աստված թույլ չի տալիս, որ հաղթական քաջագործությունը ինչ-որ չափով վերագրվի զրահներին, որպեսզի թագաՎորը չասի՝ իմ զրահները հաղթեցին:

Այսպիսով, Դավիթը մի կողմ է նետում զրահները ու գինվում հավատով. քարը նետում է և այլազգին գետին է տապալվում: Ոչ թե մարմնի ուժով, այլ ոգու զորությունը է նա կռում հաղթանակը: Այնուհետև, նա մոտենում է ախոյանին, վերցնում նրա սուրն ու կտրում գլուխը: Եվ կատարվում է Սուրբ Գրքի ասածը. «Եվ մեղավորները կպատժվեն ըստ իրենց ձեռքի գործերի» (Սաղմ. 9, 17):

Ուրեմն, եթե դու փառք ու պատիվ ես սիրում, ապա ախոյանի դարձարել ոչ թե տունը, ոչ թե ձիուն, այլ հոգիդ, այնինչ, ինչպես հիմա, քեզնից ավելի արհամարհելի բան չկա, երբ հոգիդ դատարկ է, իսկ դու երևեցնում ես տանդ ու ձիուդ գեղեցկությունը:

Սակայն և՛ այն, և՛ այս ունեմ՝ ասում ես դու: Ի՞նչ ես ասում: Մի՞թե դու չես վախենում այդպիսի խոսքեր ասելուց, երբ Քրիստոսին դնում ես ձիերի ու քարերի հետ նույն շարքում: Թե՞ չգիտես, որ Նա և՛ մարմին ստեղծեց, և՛ հոգի պարգևեց, և՛ ողջ աշխարհը մատուցեց քեզ: Իսկ դու դրա համար անգամ չնորհակալություն չես հայտնում: Եթե դու վարձով ես տալիս նույնիսկ մի փոքրիկ խրճիթ, ապա ամենայն խստություն պահանջում ես վճարել, մինչդեռ օգտագործելով Նրա ողջ արարչությունը և ապրելով այդպիսի հարմարավետ աշխարհում՝ չես ցանկանում գոնե շնորհակալություն պճարել: Մի՞թե դու դուրսդն-ինչ ներողամտության արժանի ես:

Նման այն մարդուն, որ քար է նետում վերև, բայց չի կարող ո՛չ երկնակամարը ճեղքել, ո՛չ նրա բարձունքներին հասնել, այլ այն ընկնում է սեփական գլխին, քանի որ քարը ետ է ընկնում վերև նետողի վրա, ճիշտ այդպես էլ Աստծո երանելի էակին անարգողը ոչ մի վնաս չի պատճառի նրան, քանի որ նա ավելի մեծ ու բարձր է նրանից, որպեսզի որևէ վիրավորանք ստանա, այլ սուրն իր գլխին է սրում՝ անշնորհակալ լինելով իր բարեգործից:

Թող լսեն նրանք, ովքեր ավելորդ հետաքրքրասիրություն ուսումնասիրում են Աստծո երանելի էությունը և պնդում, որ այդ անքննելի բնությունը քննելի է, որպեսզի իմանան, որ մարդու համար, առանց իրեն վտանգի ենթարկելու, անհնար է տեսնել անգամ հրեշտակի էությունը:

Սուրբ մարգարե Դանիելը, Աստծո սիրելին, որ մեծ շնորհ ուներ Աստծու մոտ, երեք շաբաթ ծոմ պահեց, ցանկալի հաց չէր ուտում, միս և գինի բերանը չէր առնում և իրեն անուշահոտ յուղերով չէր օծում, և երբ նրա հոգին ծոմի շնորհիվ դարձավ ավելի թեթև ու հոգևոր, դարձավ ավելի ընդունակ՝ ընկալելու այդպիսի տեսիլք, այնժամ նա

տեսավ հրեշտակին և ասաց. «Աղիքներս գալարվեցին, ուժ չկար մեջս: Ես այլևս գորոություն չունեմ, և շունչ չմնաց իմ մեջ» (Դան. 10, 16-17, 8): Քանի որ նա բարետես պատանի էր, իսկ հրեշտակի ներկայության ահը նրան մեռածի նման դարձրեց՝ դեմքին տալով ահավոր գունատություն և վերացնելով պատանեկան շառագույնը, ու ամբողջովին ջնջելով երեսի առողջ գույնը, այսինքն՝ այն, ինչ ասում է. «Բայց իմ մեջ էլ ուժ չմնաց»:

Եվ ահա, հրեշտակը նրան բարձրացնում է, և նա դողդողալով ոտքի է կանգնում, բայց հենց հրեշտակն սկսեց խոսել նրա հետ, նա կրկին ուշաթափվեց: Եվ ինչպես վախից խոցվածները, այն բանից հետո, երբ դուրս են ելնում ընդարմացումից, ուշքի են գալիս ու արթնանում, երբ մենք դեռ շարունակում ենք նրանց դեմքը ցողել սառը ջրով, հաճախ մահանում են մեր ձեռքերի վրա, դրա նման բան կատարվեց մարգարեի հետ: Ահից չորացած նրա հոգին, չկարողանալով տանել հրեշտակի ներկայության տեսարանը ու ի վիճակի չլինելով դիմանալ այդ լույսին, գտնվում էր չփոթություն մեջ և փորձում էր շտապ ազատվել, կարծես թե շղթաներից, մարմնի կապանքներից, սակայն վերջինս բաց էր թողնում:

Եթե Դանիելը, որից առյուծները հայացքները փախցնում էին, Դանիելը, որը մարդկային մարմնով կարող էր վերամարդկային գործեր անել, որը հուշակված էր իմաստունությամբ և այլևայլ առաքինություններով, չկարողացավ դիմանալ հրեշտակի ներկայությանը, այլ անշունչ փուվեց, ապա ինչի կդիմանան նրանք, ովքեր, այդքան հեռու լինելով այդ արդարակյացի առաքինություններից, ավերորդ հետաքրքրասիրություն են ցուցաբերում հրեշտակների Տիրոջ նկատմամբ, երազելով ողջ ճշգրտությամբ իմանալ Նրա բուն էությունը, այդ բարձրագույն և առաջին էությունը,

յունը, որ արարեց այն բյուրավոր հրեշտակներին, որոնցից մեկին անզոր եղավ տեսնելու Դանիելը:

Նման այն բանին, որ արևի անհասանելի ճառագայթները այնպես չգիտի կույրը, ինչպես տեսողություն ունեցողը, ճիշտ այդպես էլ Աստծո անիմանալի էությունը մենք այնպես չգիտենք, որքան հրեշտակները, քանի որ նրանք անարատ են, իմաստուն և խորաթափանց մարդկային բնությունից:

Ինչքանով տարբերվում է կույրը տեսողից, նույնքանով էլ մենք ենք տարբերվում նրանցից: Այդ պատճառով, երբ լսում ես մարգարեին, որ ասում է՝ «Տեսա Տիրոջը» (Եսայի, 6, 1), ապա հասկացիր, որ նա տեսել է ոչ թե նրա բուն էությունը, այլ որոշ բարեհաճություն, և, ընդ որում՝ առավել թաքուցյալ ձևով, քան երկնային ուժերը: Դա պարզ տեսանելի է առաքյալների օրինակով. «Նա լեռ ելավ, արա երեսի տեսքը այլակերպվեց» (Ղուկ. 9, 28, Մատթ. 17, 2):

Ի՞նչ է նշանակում այլակերպվեց: Փոքր-ինչ բացեց աստվածությունը և նրանց ցույց տվեց Նրա մեջ ապրող Աստծուն: «Եվ արա դեմքը փայլեց ինչպես արեգակը և արա զգեստները դարձան սպիտակ, ինչպես լույսը»: Ավետարանիչը ցանկանում է ցույց տալ Նրա փայլը և ասում է. փայլեց: Ինչպե՞ս փայլեց: Չափազանց ուժեղ: Բայց ինչպե՞ս, ասա ինձ: Ինչպես արեգակը: Ինչպես արեգակը: Այո՛: Իսկ ինչու՞: Որովհետև ես չգիտեմ ավելի լուսավոր և փայլող լուսատու: Նա լուսավոր էր և էր ինչպես ձյունը. չգիտեմ ավելի սպիտակ բան, քան ձյունը: Իսկ որ Նա այնպես չի փայլել, երևում է հետագա խոսքերից: «Երբ աշակերտները այս լսեցին, իրենց երեսի վրա ընկան» (Մատթ. 17, 6):

Եթե Նա փայլեր ինչպես արեգակը, աշակերտները երեսի վրա չէին ընկնի, որովհետև արեգակ նրանք տեսնում էին ամեն օր և չէին ընկնում, բայց քանի որ Նա արեգա-

կից ավելի ուժեղ էր փայլում և ճյուղից պայծառ, ապա չզբիմանալով երեսի վրա ընկան: Բայց ես ի՞նչ անեմ: Ես մարդ եմ ու մարդկանց հետ եմ զրուցում, կավե լեզու ունեմ: Թողուլթյուն եմ խնդրում Տիրոջից, քանի որ հանդգնուլթյունից չէ, որ խոսում եմ այդպիսի բառերով, այլ մեր լեզվի աղքատուլթյունից ու թուլուլթյունից: Ողորմած եղիր, Տեր, որովհետև այս խոսքերն ասում եմ ոչ թե հպարտուլթյունից, այլ ուրիշ խոսքեր չունեմ, և ընդ որում՝ կանգ չեմ առնում բառերի անփոփոխելիության վրա, այլ սլանում եմ վերև մտքի թևերով:

Հենց այդ պատճառով դա ասացինք, հավասարապես հաղորդեցինք պատմությունը և երանելի Դանիելի մասին, և երկար խոսեցինք այն մասին, թե ինչպես կարկամեց, տազնապեց և հայտնվեց մեռած մարդու վիճակում, երբ հոգին ձգտում էր ազատվել մարմնի կապանքներից, որպեսզի դուք, որ Աստծուն հասանելի եք համարում, լիակատար ակնառությամբ իմանաք, որ ոչ միայն անհնար է դիմանալ Աստծո տեսիլքին, այլև անգամ հրեշտակի երևալուն:

Ինչ հեղաբարո է վանդակում ապրող ձեռնասուն աղավնին, երբ հանկարծ ինչ-որ վախ է զգում, տազնապով վերև է թռչում և դռների միջով որևէ ելք փնտրում՝ ցանկանալով ազատվել վախից, ճիշտ այդպես և երանելու հոգին շտապում էր դուրս գալ մարմնից և հեռանալ: Եվ այն դուրս կգար ու կթռչեր, ամբողջովին կլքեր մարմինը, եթե հրեշտակը անմիջապես չազատեր նրան ահից և վերադարձներ իր բնակատեղին:

Եթե այդքան խիզախություն ունեցող այդ արդարը չկարողացավ դիմանալ հրեշտակի տեսիլքին, ապա ի՞նչ կպատահի նրանց, ովքեր զգալիորեն զիջելով նրան, ավելորդ հետաքրքրասիրություն են ցուցաբերում նույնիսկ ոչ

թե հրեշտակի նկատմամբ, այլ հենց հրեշտակների Տիրոջ նկատմամբ: Նա սանձահարում էր առյուծների ցասումը, իսկ մենք չենք կարող հաղթել անգամ աղվեսներին, նա գետին տապալեց վիշապին, իսկ մենք սովորական օձերից ենք վախենում: Եվ եթե այդքան մեծ ու այդքան խիզախ այրը, տեսնելով հայտնված հրեշտակին, ուշադրուլթյուն եղավ, ապա ինչ փրկուլթյուն կունենան նրանք, ովքեր փորձում են թափանցել Աստվածության բուն բնության մեջ:

Ահա թե ինչու Պողոսը զարմանքով ասում է. «Օ՛, խորություն Աստծո հարստության և իմաստության և գիտության: Ինչքան անքննելի են Նրա դատաստանները և անգննելի՝ Նրա ճանապարհները» (Հռոմ. 11, 33): Չի ասում՝ անհասանելի, այլ՝ անքննելի: Եթե դրանք չի կարելի քննել, ապա առավել ևս անհնար է հասնել: «Եվ անգննելի են Նրա ճանապարհները»:

Նրա ճանապարհները անզննելի են, այդ դեպքում ասա ինձ՝ Ինքը հասանելի՞ է: Ի՞նչ ես ասում: Նրա դատաստանները անքննելի են, ճանապարհները՝ անզննելի, բարիքները, որ պատրաստեց Նա Իրեն սիրողների համար, մարդու սրտում տեղ չգտան, Նրա վեհությունը անսահման է, Նրա բանականությունը հաշիվ չունի, ամեն ինչ անհասանելի է, և միայն Ինքն է հասանելի: Անչափելի անմտություն չէ՞:

Ուրեմն եկեք, սիրելիներս, մեր ուժերի չափով մերժենք այդ միտքը՝ մեր աչքերի առաջ պատկերացնելով Պողոսին, որ զարմանքով բացականչում էր. «Ինչքան անքննելի են Նրա դատաստանները, և անգննելի՝ Նրա ճանապարհները»: Փառք Նրան հավիտյանս հավիտենից. Ամեն:



ՈՂՈՐՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՕՏԱՐԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ողորմության մասին ճառը, սիրելիներս, միայն հարուստներին չի վերաբերում, այլև աղքատներին. թեկուզև նույնիսկ որևէ մեկը ապրել է ողորմությամբ, և նրան է վերաբերում այս ճառը, որովհետև չկա մի այնպիսի աղքատ մարդ, որքան էլ նա չքավոր լինի, որ չունենա թեկուզ և երկու գրոշ: Այդ պատճառով քչից քիչ տվողը կարող է ավելի բարձր լինել նրանցից, ովքեր առատ ողորմություն են տալիս իրենց մեծ ունեցվածքից, ինչպես դա պատահեց ավետարանական այրու հետ:

Ողորմության մեծությունը որոշվում է ոչ թե տրված ողորմության չափով, այլ ողորմացողների հոժարությամբ ու տրամադրվածությամբ: Պետք է նայել այն բանին, որ այդքին երկու լումա է տալիս, այլ նրան, որ ունենալով ընդամենը երկու լումա՝ նա չի փսոսում, այլ զոհում է իր ողջ ունեցածը:

Հետևաբար, մեզնից պահանջվում է ոչ թե առատաձեռնություն, այլ ջերմեռանդություն: Եվ եթե ջերմեռանդություն ունենք, ապա ոչ մի վնաս չկա աղքատ լինելու մեջ, իսկ եթե չունենք, ապա հարստությունից էլ ոչ մի օգուտ չկա:

Հարուստները, եթե շարունակում են չար մնալ, աղքատներից ավելի շատ պատիժներ կստանան այն բանի համար, որ խոնարհ չեղան անգամ առատություն մեջ: Մի ասա, թե նրանք ողորմություն տվեցին, միևնույն է, չեն խուսափի պատժից, եթե դա չեն արել իրենց ունեցվածքին համապատասխան, որովհետև ողորմությունը գնահատվում է

ոչ թե տրվածի չափով, այլ հոժարության առատությամբ:

Իսկ հնարավոր է, որ հարուստը փրկվի՝ հարցնում ես դու: Միանգամայն հնարավոր է: Աբրահամը հարուստ էր: Տեսնու՞մ ես նրա հարստությունը: Տե՛ս նաև նրա օտարասիրությունը: Միջօրեին, երբ նա նստած էր Մամբրեի կաղնու տակ, երեք այրերի տեսքով նրան է հայտնվում Տերը: Եվ ոտքի կանգնելով (նա չի մտածում, որ իր առջև Աստված է՝ կարող էր, չէ՞, այդպես մտածել)՝ նա խոնարհվում է նրանց առջև, ասելով՝ եթե դուք արժանի կհամարեք, մտեք իմ խորանը:

Տեսնու՞մ ես, թե ինչպես է վարվում ծերունին միջօրեին: Հարուստ և հայտնի՝ նա չի նստում տան հարկի տակ, այլ որպես ասպնջական ու թափառական՝ թողնելով տունը, կնոջը, երեխաներին, ծառաներին, դուրս է եկել որսի՝ բացելով օտարասիրության ուռկանը, որպեսզի որևէ թափառաչրջիկ, որևէ ճամփորդ հանկարծ չչրջանցի իր վրանը:

Եվ տես, թե նա ինչ է անում: Նա դա չի հանձնարարում ծառային, թեպետ ուներ երեք հարյուր տասնութ ծառա (նա տեղյակ էր նրանց անսրտացավությունը), վախենալով, որ ծառան կարող է հանկարծ նիրհել ու ճամփորդը կանցնի տան կողքով, և մենք, մտածում է նա, բաց կթողնենք որսը, այլ ինքն է նստել՝ ընդունելով կիզիչ ճառագայթները որպես շաղ տապի ժամանակ, իսկ ասպնջականության սերը՝ որպես ստվեր:

Եվ սա Աբրահամն է: Եվ սա հարուստ է: Իսկ դու արժանի համարու՞մ ես թեկուզ մի հայացք նետել աղքատի վրա, թեկուզ պատասխանել նրան, թեկուզ մի խոսք ասել: (Յանկանում ես ընդօրինակե՞լ Աբրահամին: Չեմ առարկում, ընդհակառակը, նույնիսկ կամենում եմ, չնայած մեզնից ավելին է պահանջվում, քան Աբրահամից:

Բայց կասես՝ ի՞նչ ունեւ Աբրահամը: Աբրահամը: Նա օտարասեր էր): Եվ վեր կացավ Աբրահամը ու երկրպագեց՝ չիմանալով, թե ովքեր են եկողները: Եթե նա իմանար, ապա ոչինչ զարմանալի չէր լինի նրա կողմից, այն առումով, որ նա երկրպագում է Աստծուն, ի դեպ, եկողների վերաբերյալ անտեղյակութունը հենց վկայում է ասպնջականության նկատմամբ նրա ունեցած մեծ սիրո մասին:

Նա կանչում է նաև Սառային, որպեսզի նրան ևս մասնակից դարձնի հյուրասիրութեանը: Թող ընդհանուր լինեն, ասում է նա, ինչպես բարիքները, այնպես էլ բարեպաշտութիւնը՝ գնա և երեք չափ լավագույն ցորենից ալյուր հունցիր: Եվ սա նման բաներ չասաց՝ ես այնպիսի հույսերով եկա քեզ մոտ, որպեսզի ինձ, որ այդքան հարստութիւն ունի, դարձնես ջրաղացականուհի և հացթուփ: Դու երեք հարյուր տասնութ ծառա ունես և նրանց չես կարգադրում, այլ ինձ վրա՞ ես դնում այդպիսի ծառայութիւն:

Ո՛չ, նա լսում է՝ շտապի՛ր, և իսկույն կատարում է կարգադրութիւնը: Որտե՞ղ են ժամանակակից կանայք: Նման հրամաններ ստանում են: Վերցրու այդպիսի մի կնոջ ձեռք և դու կտեսնես, որ դրսից այն զարդարված է ոսկով, իսկ ներսից՝ գիշատչութեամբ: Քանի՞ աղքատի են կողոպտել այդ ձեռքերը:

Տուր ձեռքդ, ցույց տուր, թե ինչերով է այն զարդարված: Կողոպուտո՞վ: Իսկ հիմա վերցրու Սառայի ձեռքը՝ ինչո՞վ է այն զարդարված: Օտարասիրութեամբ, ողորմութեամբ, մուրացկանասիրութեամբ, սիրով: Գնա և երեք չափ լավագույն ցորենից ալյուր հունցիր: Իսկ ինքը վագում է կովերի նախրի մոտ: Նրանք միասին բաժանում են աշխատանքը, որպեսզի բաժանեն նաև պարգևը: Այնուհետև նա հորթ է մորթում: Ծերունին հանկարծ դառնում է արա-

գոտն, որովհետև դեռևս չի գառամել մարմնի ուժը, այլ ամրացել է իմաստասիրութեան ոգով. եռանդը հաղթում է բնութեանը: Երեք հարյուր տասնութ ծառաների տերը, հորթին շալակն առած, ամենևին չի զգում բեռան ծանրութիւնը, այլ թեթևացած է մտքով և փութեռանդութեամբ: Ծերունին պետք է վագեր: Ի՞նչ նեղութիւն: Սակայն նա չի նեղվում՝ շնորհիվ օգուտ ստանալու հույսի: Իսկ եկվո՞րը: «Նույն այս օրերի՞ն կգամ քեզ մոտ ու քո կի՞ն Սառայ՝ որդի կունենա» (Ծննդ. 18, 10):

Տեսնու՞մ ես, թե ի՞նչ պտուղ տվեց խնջույքը: Ի՞նչ գեղեցիկ, շուտափույթ և հասուն: Ինչպե՞ս սևացավ և կատարելապես հասունացավ որթը: Այսպիսին են հյուրասիրութեան պտուղները:

Ուրեմն, եկեք չմտածենք, որ ողորմութիւն տալուց կպակասի մեր ունեցվածքը, այն չի նվազում, այլ մեծանում է, չի մխվում, այլ բազմապատկվում է. ողորմութիւնը կարծես թե ինչ-որ գործարք է կամ ցանք, ավելի ճիշտ ասած՝ ավելի շահավետ ու անվտանգ և՛ առաջինից, և՛ երկրորդից:

Իսկապես, առևտրական գործարքները վտանգի են ենթարկվում և՛ ծովային փոթորիկներից ու հուզումներից, և՛ հաճախական նավաբեկութիւններից, ճիշտ այդպես և ցանքն է ենթարկվում և՛ երաշտի, և՛ բազմաքանակ անձրևների, և՛ եղանակային այլ պատահարների: Մինչդեռ տուրքը, որ տրվում է Աստծուն, անհասանելի է ցանկացած նենգութեան համար, և երբ արդեն տրված է, ոչ ոք այլևս չի կարող այն հափշտակել ստացողի ձեռքից, և այն անպայմանորեն մեզ կբերի առատ ու անասելի պտուղ, ու հարկավոր պահին կտա հարուստ բերք:

Եթե մարդը, ստանալով դրանք, չի քամահրում (տվողին), այլ վճարում է երախտապարտութեամբ, ապա Քրիս-

տոսից առավել է: Իսկապես, եթե Նա չստանալով տալիս է, ապա ինչպե՞ս կարող է չտալ՝ ստանալուց հետո:

Լսիր, թե ինչ է ասում Սողոմոնը. «Ողորմություն տվողը փոխ է տալիս Աստծուն» (Առակ. 19, 17): Տեսնու՞մ ես, ինչ հրաշալի ու զարմանալի փոխառությունն է: Մեկը վերցնում է, իսկ մյուսը իր վրա է վերցնում պարտքի պատասխանատվությունը: Ինչու՞ նա չի ասում՝ աղքատին ողորմություն տվողը տալիս է Աստծուն, այլ ասում է՝ փոխ է տալիս: Որպեսզի դու չմտածես, թե դա պարզ փոխհատուցում է: Սուրբ Գիրքը գիտե մեր շահասիրությունը, ուշադրություն է առնում, որ մեր ազահությունը, ելնելով շահից, ավելին է փնտրում, և մարդը, որ փող ունի, երբեք չի ցանկանա աղքատին պարտք տալ առանց ապահովության, առանց գրավի, երաշխավորության կամ երաշխավորի:

Եվ քանի որ Աստված գիտի, որ առանց այդ պայմանների ոչ ոք պարտք չի տալիս, ոչ ոք չի առաջնորդվում մարդասիրությունամբ, այլ նայում է միայն շահույթին, մինչդեռ աղքատը այդ բոլորից զուրկ է՝ ոչ ապահովություն ունի, որովհետև ոչինչ չունի, ոչ գրավ կարող է դնել, որովհետև ընչազուրկ է, ոչ երաշխավոր կարող է ներկայացնել, որովհետև աղքատության պատճառով նրան ոչ ոք չի հավատում, և քանի որ Աստված գիտի, որ վերջինս վտանգի է ենթարկվում աղքատության, իսկ փող ունեցողը խստասրտության պատճառով, ապա նրանց արանքում դնում է ինքն իրեն՝ որպես աղքատի համար երաշխավոր և որպես գրավ՝ պարտք տվողի համար: «Ողորմություն տվողը, - ասված է, - փոխ է տալիս Աստծուն»:

Մինչդեռ մենք, երբ հարկ է լինում պարտք տալ, բծախնդրորեն այնպիսի պարտապաններ ենք փնտրում, որոնք մեծ տոկոսներ են տալիս և ճշտապահորեն վճարում պարտքերը, իսկ այստեղ վարվում ենք միանգամայն հակա-

ռակ ձևով. Աստծուն, որ երախտագիտությունը ընդունում է պարտքը և վերադարձնում է հարյուրապատիկ, լքում ենք, իսկ նա, որ չի վերադարձնում անգամ ողջ գումարը, նրանց փնտրում ենք:

Իսկապես, ի՞նչ կտա մեզ փորը, որի վրա ծախսվում է գրեթե ամեն ինչ: Թրիք և նեխում: Ի՞նչ կտա փառասիրությունը: Նախանձ և չարակամություն: Ժլատությունը՝ անհանգստություն և հոգս: Անառակությունը: Դժոխք և թունավոր որդեր: Այդպիսին են հարուստների պարտապանները, այդպիսին են տոկոսները, որ վճարվում են գումարի դիմաց. այստեղ աղքատություն և պատիժ՝ ապագա կյանքում:

Ուրեմն, ինչու՞ դու պարտք չես տալիս նրան, ով անկասկած քեզ կվճարի և շատ ավելին կհատուցի: Գուցե այն պատճառով, որ կվճարի շատ ժամանակ ա՞նց: Բայց Նա այստեղ ևս կհատուցի, որովհետև սուտ չի ասված՝ «խնդրեցե՛ք Աստծո թագավորությունը և նրա արդարությունը, և այդ բոլորը ձեզ ավելիով կտրվի» (Մատթ. 6, 33): Եվ բացի այդ, երկար ժամանակ անց վճարածը միմիայն կմեծացնի քո հարստությունը, քանի որ շահույթն ավելի մեծ է:

Եվ ինչպես տեսնում ենք, չէ՞ որ այդպես են վարվում պարտատերերը իրենց պարտապանների հետ, հաճույքով պարտք տալով հատկապես նրանց, ովքեր վճարում են երկար ժամանակ անց: Եթե պարտապանը անմիջապես ամեն ինչ վերադարձնում է, նա ընդհատում է տոկոսների հոսքը, իսկ եթե երկար ժամանակով պահում է, ապա շահույթն ավելի է մեծացնում:

Այսպիսով, երբ գործը մարդկանց է վերաբերվում, մենք ոչ միայն չենք նեղվում հետաձգումից, այլ նույնիսկ դիտմամբ այն երկարաձգում ենք, իսկ Աստծո հանդեպ մի՞թե մենք կլինենք նույնքան փոքրոգի:

«Աղքատի՛ն ողորմութիւն ստուգողը փոխ է տալիս Աստուծո՛ւն»։ Եվ դու, Տեր, ինձնից փոխ ես վերցնում, որ որպէս ողորմութիւն տաս աղքատի՛ն։ Որպէսզի երբեք Դու այն տաս, վերադարձնելու ժամանակ նշանակիր, որոշիր ստացման ժամանակը։ Ե՞րբ և որտե՞ղ պիտի տամ այդ պարտքը։ «Արդ երբ մարդու Որդի՛ն պիտի նստի իր փառքի աթոռի վրա, և ոչխարն էրը իր աջին պիտի կանգնեցնի, իսկ աջէրը՝ ձախի՛ն։ Այն ժամանակ թագավորը պիտի ասի նրանց, որ իր աջինն են։ Եկե՛ք, իմ Հոր օրհնայա՛նէ՛ր, ժառանգեցե՛ք աշխարհի սկզբից ձեզ համար պատրաստված արքայութիւնը։ Ինչի՞՞ համար, այն բանի համար, որ քաղցած էի, և ինձ ուտելիք տվիք. «ծարավ էի, և ինձ ջուր տվիք՝ խմելու, մերկ էի, և ինձ հագցրիք» (Մատթ. 15, 31, 33-36)։

Իսկ ինչու՞, Տեր, չես հիշատակում այլ ճամփաների մասին, և միայն խոսում ես ողորմութեան մասին։ Ես չեմ դատում, ասում է, մեղքը, այլ խստասրտութիւնը, չեմ դատում մեղսագործներին այն բանի համար, որ ունենալով փրկութեան այդպիսի մեծ և իրական միջոց՝ ողորմութիւնը, որով հարթվում են բոլոր մեղքերը, չեն օգտվում այդ բարեգործութիւնից։ Այն բանի համար փող չես ստացել, որ ծախսես քո հաճույքների համար, այլ որպէսզի օգտագործես ողորմութեան համար։ Մի՞թե դրանք քեզ են պատկանում։ Քեզ վստահված է աղքատների հասանելիքը, թեկուզև դրանք ձեռք ես բերել արդարների աշխատանքով, թեկուզև ժառանգութիւնն ես ստացել հորիցդ։ Եթե քեզ մեծ ողորմածութեամբ հրամայված է քո ունեցվածքից տալ, ապա այդ պատճառով մի մտածիր, որ այն քոնն է և անչափ մարդասիրութիւնը մի վերածիր աներախտագիտութեան առիթի։ Մի՞թե Աստուծո՛ւն քեզնից չի կարող ամեն ինչ խլել։ Բայց Նա դա չի անում՝ քո կամքին թողնելով կարիքավորների նկատմամբ քո ունեցած առատաձեռնութիւնը։

Ինչու՞ դու չես տալիս։ Չե՞ս հավատում, որ ես կստանաս։ Բայց կարո՞ղ է այդպէս լինել։ Նա, ով տալիս է նույնիսկ չտվողներին, մի՞թե առավել ևս չի տա այն բանից հետո, երբ ստանում է։ Այն բանի համար չէ Աստուծո՛ւն քեզ ուրիշներից շատ տվել, որպէսզի դու ծախսես անառակութեան, հարբեցողութեան, ցանկասիրութեան, թանկարժեք հագուստների և շվայտութեան վրա, այլ այն բանի համար, որ տաս կարիքավորներին։

Եթե քեզ վրա ծախսես ավելին, քան անհրաժեշտ է, ապա այն աշխարհում ամենախիստ հաշվետվութիւնն ես տալու։ Մինչդեռ ես գիտեմ, որ շատերը հասել են այնպիսի վայրենութեան, որ չնչին անհանգստութեան պատճառով հրաժարվում են օգնել սոված աղքատներին՝ ասելով հետևյալ խոսքերը՝ ինձ հետ չեն հիմա ծառաները, ես տնից հեռու եմ, այստեղ գտնվողներից ոչ ոք ծանոթ չէ։

Ի՛նչ դաժանութիւն։ Ի՛նչ ամբարտավանութիւն։ Եթե հարկ լիներ գնալ նույնիսկ տասը վերստ, նույնիսկ այդքամ պետք չէ հրաժարվել, որովհետև պարզևս էլ ավելին է։ Ի՛րոք, եթե դու տալիս ես, ապա դու պարզևս ես ստանում միայն տվածի համար, իսկ երբ դու դեռ ինքդ ես գնում, ապա պարզևս է սպասվում նաև դրա համար։

Այդպէս և Աբրահամ նահապետի վրա գլխավորապէս զարմանում ենք այն պատճառով, որ ունենալով երեք հարյուր տասնութ ծառա՝ նրանցից ոչ մեկին կարգադրութեամբ չզրկեց, այլ ինքը վազեց նախրի մոտ և վերցրեց հորթը։ Ուրեմն մի ամաչիր քո ձեռքով ծառայել աղքատներին։ Քրիստոս չի ամաչում ձեռք մեկնել ու աղքատից վերցնել ողորմութիւնը, իսկ քեզ համար ամո՞թ է մեկնել ձեռքը և փող տալ։ Մի՞թե դա ամոթ չէ։

Եթե մի բաժակ սառը ջուրը հասցնում է երկնային արքայութիւն, ապա, ասա ինձ, ինչպիսի՞ պտուղ քեզ կբերի

այն, եթե աղքատին դարձնես քո բաժակակիցը, խնջույքիդ մասնակիցը և հանգստութիւնը բերես նրան:

Ուրեմն, չպետք է ամաչենք ծառայել աղքատներին, չպետք է հրաժարվենք նրանց ծառայել սեփական ձեռքերով, որովհետև մեր ձեռքերը այդպիսի ծառայութեամբ օրհնվում են, և եթե այդպիսի ծառայութիւնից հետո դրանք մեկնում ենք առ երկինք աղոթելու, ապա Աստված, նայելով դրանց, անմիջապես մեզ ողորմում է և տալիս խնդրելիքը:

Փող տալը բավական սովորական բան է, սակայն երբ ինքդ ես օգնութիւն ցույց տալիս կարիքավորներին և դա անում ես սրտացավութեամբ՝ դրա համար անհրաժեշտ է ունենալ մեծ և իմաստասեր հոգի: Եթե ինչ-որ մեկը օգնում է քեզ կենսական գործերում, կամ օժանդակում է դատական հարցերում, կամ նման խնդիրներում, ապա դու նրան դիմավորում ու ընդունում ես լիասիրտ ուրախութեամբ և համբուրում ես նրա ձեռքերը, փող ես վճարում, հոգ տանում, իսկ երբ տեսնում ես դեպի քեզ եկող Քրիստոսին, ապա դանդաղում և հրաժարվում ես ծառայել նրան: Եթե դու որպէս Քրիստոս չես ընդունում ճամփորդին, ապա մի ընդունիր նրան, իսկ եթե ընդունում ես ինչպէս Քրիստոս, ապա մի ամաչիր լվանալ Քրիստոսի ոտքերը:

Քանի դեռ շարունակվում է սակարկումը, ողորմութիւն գնենք, իսկ ավելի ճիշտ՝ ողորմութեան շնորհիվ փրկութիւն գնենք: Քրիստոսին ես հագցնում՝ հագցնելով աղքատին: Եթե մի բաժակ սառնորակ ջուրը պարգևի է արժանանում, ապա հագուստներն ու փողերը, որոնք ողորմութիւն են տրվում, մի՞թե արժանի չեն դրան: Ընդհակառակը, դրանք արժանի են ամենամեծ պարգևի: Եթե այնտեղ, որտեղ ողորմութիւնը հյուսված չէ որևէ ծախսի հետ, այսպիսին է ծառայութեան ընդունումը, ապա արդար Դատավո-

րից ինչպիսի պարգև պիտի ստանա այնտեղ, որտեղ հագուստների առատութիւնը, փողերի ծախս և այլ բարիքների շատութիւնը կա:

Գիտեմ, որ այսպիսի և նման կարգի քարոզներ հաճախ եք լսել, սակայն, եթե դուք, որ բազմաթիվ անգամներ բարի խորհուրդ լսելով, գոնե երբեմն կատարել՝ք դրանք: Ձէ՞ որ ծայր անմտութիւն է, երբ մարդ ցանկանում է դաշտ գնել՝ բերրի հող է փնտրում, իսկ երբ հողի փոխարեն երկինք են առաջարկում ու հնարավորութիւն կա այնտեղ տեղ ձեռք բերել, մնում է երկրի վրա և իրեն դատապարտում դրա հետ կապված դժվարութիւնների հետ:

Իսկապէս ասա ինձ, եթե որևէ մեկը քեզ ասի, թե մեկ տարի անց այս քաղաքը կավերվի, իսկ մյուս քաղաքը՝ ոչ, կսկսեի՞ր տուն կառուցել այն քաղաքում, որին կործանում է սպառնում: Այդ պատճառով եկեք և մենք չկառուցենք այս աշխարհում, որովհետև քիչ անց այն կավերվի և կվերանա. բայց ի՞նչ եմ ասում՝ կվերանա՞: Նրա կործանումից առաջ ինքներս կվերանանք և աղետի կենթարկվենք:

Ուրեմն, ավելի լավ է մեր շենքը կառուցենք երկնքում, որտեղ մեզ ո՛չ ճարտարապետներ են պետք, ո՛չ շինարարներ, և որտեղ այդպիսի շենքեր կառուցում են չքավորների ձեռքերը, և դեռ քիչ է, իրենց հետ բերում են նաև երկնքի արքայութիւնը և Աստծո առաջ շնորհ անում: Սա է ողորմութեան առավելութիւնը:

Եվ նման այն բանին, երբ թագուհին ներս է մտնում, դռնապաններից ոչ մեկը չի հանդգնում հարցնել, թե նա ով է ու որտեղից եկավ, այլ ամենքը ուրախութեամբ ընդունում են նրան, ճիշտ այդպէս և ողորմութիւնը՝ այն անողին անարգելք կանգնեցնում է արքայական գահի առջև, որովհետև Աստված սիրում է նրան, և նա միշտ Նրա կողքին է, և ինչպիսի նվեր էլ խնդրելու լինի, իսկույն ստանում է:

Ողորմության գորութիւնն այնքան մեծ է, որ ոչ միայն ջնջում է մեղքերը, այլև հալածում է անգամ մահը: Բայց ողորմութիւն գործողներից ո՞վ է, որ բարձր է եղել մահից, կհարցնես դու: Չէ՞ որ, ինչպես տեսնում ենք, ամեն ինչ գտնվում է մահվան տիրապետութեան տակ: Մի անհանգստացիր, այլ գործնականում համոզվիր, թե ինչպես է ողորմութեան գորութիւնը հաղթում մահվան իշխանութեանը: Օրինակ՝ կար այսպիսի մի կին՝ Տաբիթա անունով, որ իրեն նեղութիւն էր տալիս ամենօրյա ողորմութեամբ փող հավաքել: Նա, պատմում են, հագցնում էր այրի կանանց և այլ բավականութիւններ պատճառում: «Հիվանդացավ ու մեռավ» (Գործք, 9, 37): Իսկ ի՞նչ արեցին այրիները, որոնք օգտվում էին նրա ծառայութիւններից, և որոնց նա հագցնում էր: Անհրաժեշտ պահին նրանք իրենց երախտագիտութիւնն են հայտնում բարերարին: Շրջապատելով առաքյալին՝ նրանք ցույց տվեցին հագուստներն ու զգեստները, որ մեռնողը կարել էր իրենց հետ, արցունք թափեցին և առաքյալի մեջ կարեկցանք առաջացրին: Իսկ Պետրոս՞ սը: «Օու՛ր դրեց, - ասում են, - աղոթք արեց և, դառնալով դիակիմ, ասաց. «Տաբիթա՛, հանում եմ չիսուս Քրիստոսի վե՛ր կաց կանգնիր»: Եվ նա բացեց իր աչքերն ու Պետրոսին տեսնելով ուղիղ նստեց: Պետրոսը ձեռքը մեկնեց նրան ու վեր կացրեց: Կանչեց սրբերին ու այրիներին. և նրանց առաջ կենդանի կանգնեցրեց նրան» (Գործք, 9, 40, 41):

Տեսնում ես, թե ինչ պարգև է հասնում այրիներին բարեգործութիւն անելու համար: Իրոք, ասա ինձ, թե ի՞նչ մեծ բան էր անում նա այրիների համար, որ նրանք այդպիսի պարգևի արժանացրին: Արդարև, ողորմութեան մեծութիւնը գնահատվում է ոչ տրվածի քանակով, այլ տվողների հոժարութեամբ:

Իսկապես շատ բաներ կարող են անել տուն մտնող սրբե-

րի կրուկները. դրանք օրհնյալ են դարձնում հողը, անհամար բարիքներ են բերում, բուժում են անդամալուծներին, վերջ են տալիս սովին և մեծ լիութիւն պարգևում: Այսպես, Եղիայի կրուկները, որ ներս մտան այրու տուն, ցույց տվեցին միանգամայն նոր ու հրաշալի բարեգործութեան օրինակ: Այրու տունը դարձրին՝ «սափորում այլոր չպակասեց, և կթի մեջ յուղ չնվազեց» (Գ Թագ. 17):

Այնժամ երևան եկավ ցանքսի և հունձքի նոր տեսակ: Ինչպե՞ս: Այրին ցանում է արդարի բերանի մեջ և մեծ առատութեամբ ցանածը քաղում կժից, ցանում է ցորենի ալյուր և քաղում է ցորենի ալյուր: Այրին ո՛չ եզների կարիք է զգում, ո՛չ լուծի, ո՛չ խարազանի, ո՛չ ակոսի, նրան պետք չեն գալիս ո՛չ անձրևը, ո՛չ եղանակը, ո՛չ մանգաղը, ո՛չ կալը, ո՛չ խուրձը, ո՛չ քամին, ո՛չ հատիկը մանրացնող ջրաղացը, այլ մեկ ակնթարթում այդ ամենը պատրաստի գտնում է սափորում:

Ահա թե ինչեր կարող են պարգևել սրբերը, ահա թե ինչի են ընդունակ սրբերի կրուկները, ավելի ճիշտ ասած՝ էլ ավելիին: Եվ եթե խոսքս չափազանց երկար չստացվեր, այդպիսի շատ պարգևներ կլիարկեի:

Բայց այդպես է այն դեպքերում, երբ նրանց մեծարում են, այնժամ այդպիսի պարգևներ են մատուցում և հակառակը, երբ նրանց քամահարում են, նրանք անսաստ մահ ու մոխիր են տարածում: Սակայն դա Պետրոսն էր, դա Եղիան էր և ոչ ուրիշները՝ կասես դու: Ասենք թե՛ Պետրոսն ու Եղիան էին, բայց մի՞թե նրանք միևնույն բնութիւնը չունեին: Մի՞թե նրանք միևնույն ճանապարհով, ինչպես մենք, աշխարհ չեն եկել: Մի՞թե միևնույն կերակուրներով չեն սնվել: Մի՞թե միևնույն պայմաններից չեն օգտվել: Մի՞թե նրանցից ոմանք կին և երեխաներ չեն ունեցել: Մի՞թե ոմանք սովորական արհեստներով չեն զբաղվել, իսկ

ուրիշները թաղված չեն եղել ծայր անառակության մեջ:

Կասես, թե նրանք մեծ շնորհ են ստացել: Սակայն եթե մեզ հրամայվեր հարուստներին տալ մեռյալներին, բանալ կույրերի աչքերը, մաքրել բորոտներին, բուժել կաղերին, արտաքսել դեերին և բուժել նման ախտերից, ապա մեր ո՞ր արդարացումը տեղին կլիներ. իսկ եթե հիմա խոսքը պատշաճ կերպով ապրելու, հնազանդության ու արատներից հրաժարվելու մասին է, ապա դրա նկատմամբ այդպիսի արդարացումը ի՞նչ նշանակություն ունի: Չէ՞ որ Քրիստոս անգամ պարգևներ է տալիս ոչ նրանց, ովքեր պարզապես հրաշքներ են գործում, այլ նրանց, ովքեր կատարում են Նրա պատվիրանները: Ասված է. «Եկե՛ք, իմ Հոր օրհնյալ-նե՛ր, ժառանգեցե՛ք աշխարհի սկզբից ձեզ համար պատրաստված արքայությունը», ոչ այն բանի համար, որ դուք հրաշքներ եք գործում, այլ այն բանի համար, որ «քաղցած էի, և ինձ ուտելիք տվիք, ծարավ էի, և ինձ ջուր տվիք խմելու. օտար էի ես, և ինձ ձեր մեջ առաք» (Մատթ. 25, 34, 35):

Հետևաբար, եթե հիմա շնորհը վերացրել է հրաշքը, դա ամենևին չի կարող վնասել մեզ, բայց մյուս կողմից չի կարող և արդարացնել, երբ մենք մեր արարքների մասին հաշվետու կլինենք: Արդար կյանքը առանց հրաշքների էլ պսակ է ստանում, իսկ հանցավոր կյանքը հրաշքներով հանդերձ չի կարող խուսափել պատժից:

Ուրեմն պետք է ջանանք այնպիսի առաքինություններ ձեռք բերել, որոնք մեր սեփական փրկության հետ կարող են օգտակար լինել նաև մեր մերձավորներին: Այդպիսին է ողորմությունը: Դրանից են իրենց զորությունն ստանում և՛ աղոթքը, և՛ պասը, և՛ մյուս բոլոր բարեպաշտությունները: Եթե, օրինակ, դու պաս ես պահում առանց ողորմության, այն պաս չի համարվում, այլ հղիացումից ու հարբեցողությունից ավելի վատ բան է համարվում, որքանով

դաժանությունը ավելի ծանր արատ է, քան շվայտությունը: Բայց ի՞նչու եմ միայն ասում պասի մասին: Թեկուզև դու պահպանես ողջախոհությունը, թեկուզև կույս մնաս, ամուսնական շքասրահից դուրս կլինես, եթե ողորմություն չունես:

Այնինչ ի՞նչը կարող է հավասարվել կուսությունը, որն անգամ Նոր Կտակարանում պարտադիր օրենք չդարձավ՝ ելնելով դրա հատուկ բարձրությունից: Եթե կույսերը դուրս են նետվում, երբ հարկ եղածի չափով ողորմություն չունեն, ապա ո՞վ կարող է թողություն ստանալ առանց դրա: Ոչ ոք, հիրավի, ոչ ոք. այն չունեցողը իսկույն կկործանվի: Եթե կենսական հարցերում ոչ ոք չի կարող ապրել ինքն իր համար, այլ բոլորը՝ և՛ արհեստավորը, և՛ գինվորականը, և՛ հողագործը, և՛ առևտրականը, մի խոսքով՝ բոլորը, աշխատում են ընդհանուր օգուտի ու ի բարօրություն մերձավորի, ապա շատ ավելի նույնը պետք է անել հոգևոր գործերում, չէ՞ որ գլխավորապես այստեղ է կյանքը, իսկ ով ապրում է միայն իր համար, իսկ մյուսներին քամահարում է, նա իզուր է ապրում, նա նույնիսկ մարդ է ու մեր ցեղից չէ:

Ուրեմն, ով ուզում է դառնալ հարուստ, թող աղքատ դառնա, որպեսզի դառնա հարուստ, թող վատնի, որպեսզի ստանա, թող մսխի, որպեսզի հավաքի: Եթե դա ձեզ տարօրինակ ու անհնար է թվում, ապա նայիր ցանողին ու մտածիր, որ նա այլ կերպ ավելին չի կարող հավաքել, եթե չի ցանում այն, ինչ ունի և չի մսխում պատրաստի պահուստը:

Իրոք, ինչու՞ դու ողորմություն չես տալիս կարիքավորներին: Կասես՝ ես մի տուն լիքը երեխաներ ունեմ, և ցանկանում եմ, որ նրանք հարուստ մնան: Այդ դեպքում ինչու՞ ես նրանց աղքատ դարձնում: Եթե դու ողջ ունեց-

վածքը նրանց թողնես, ապա քո ողջ հարստությունը կվստահես անհուսալի ամբարին, իսկ եթե թողնես նրանց որպես համաժառանգորդ և Աստծո պաշտպան, ապա կթողնես անհաշիվ գանձարան:

Հետևաբար, եթե դու երեխաներիդ ցանկանում ես թողնել մեծ հարստություն, ապա թո՛ղ Աստծո խնամքին: Նա, ով առանց քո օժանդակություն և՛ հոգի տվեց, և՛ մարմին ստեղծեց, և՛ կյանք պարգևեց, երբ քո կողմից այդպիսի շռայլություն է տեսնում, ինչպե՞ս կարող է նրանց առջև չբանալ հարստության ուղին:

Եթե նվազ քանակությամբ ալյուրով սնված Եղիան, երբ տեսնում է, որ այրին իրեն երեխաներից նախընտրեց, նրա բնակատեղը դարձրեց կալատեղ ու հեսանաքար, ապա խորհիր, թե ինչպիսի շնորհներ ցույց կտա Տերը Եղիային:

Եթե ցանկանում ես, որ երեխաներդ հարուստ մնան, նրանց Աստծո պարտապանը դարձրու: Եթե նրանք ստանան հարստությունը, ապա չեն իմանա, թե ինչպես վարվեն, իսկ եթե դու ինքդ նախօրոք դրանք որպես փոխառություն տաս Աստծուն, ապա հարստությունդ ոչ մի վտանգի չի ենթարկվի և հատուցումը մեծ արագությամբ կլինի:

Աստված մեզ շնորհակալ է լինում և՛ երբ պարտք է լինում, և՛ երբ վճարում է և ավելի բարեհաճություն է նայում փոխառատուններին, քան նրանց, ովքեր ոչինչ փոխառություն չեն տվել, և ում հատկապես ավելի է պարտք, նրան հատկապես ավելի է սիրում:

Հետևաբար, եթե ցանկանում ես նրան բարեկամ ունենալ, նրան պարտապան դարձրու: Արդարև, փոխառություն տվողը այնքան չի ուրախանա՝ պարտապան ունենալով, որքան կհրճվի Աստված՝ ունենալով փոխառատու, իսկ ում Նա ոչինչ պարտք չէ, նրանից հեռանում է, իսկ ում

պարտք է, նրան էլ մոտենում է:

Ուրեմն, ինչու՞ ես դու քո հարստությունը պահ տալիս մարդկանց: Քո առջև Քրիստոս է, որ պատրաստ է ընդունել և պահպանել, և ոչ միայն պահպանել, այլև բազմապատկել և քեզ հանձնել մեծ վերադիրով: Նրա ձեռքից ոչ ոք չի կարող խլել: Եվ Նա ոչ միայն պահպանում է այն, այլև հենց դրա պատճառով ազատում է ամեն կարգի վտանգներից: Իսկ մարդիկ այնպիսին են, որ, ընդունելով մեր հարստությունը, կարծում են՝ մեզ մեծ լավություն են անում՝ պահելով մեր տվածը. Քրիստոսի մոտ հակառակն է, երբ Նա քեզնից ընդունում է, ապա կարծում է, որ դրանով բարեգործություն չի անում, այլ ինքն է ստանում: Ընդ որում, քեզնից ի պահ փող ընդունելով՝ գանձապահը դրա համար քեզնից փող է ուզում, այն դեպքում, երբ Քրիստոս դրա համար նույնիսկ պարգև է տալիս:

Հենց այդ պատճառով է Աստված պատվիրել, որ փողն ուրիշներին տաս, որպեսզի ինքդ ունենաս այն, որովհետև քանի դեռ միայն դու կունենաս, ինքդ էլ դրա տերը չես լինի, իսկ երբ տաս ուրիշներին, այնժամ ինքդ կստանաս:

Նման այն բանին, երբ որևէ մեկը փող է տալիս փոքրիկ երեխային, որպեսզի նա ամուր պահի ձեռքին, կամ էլ նույնիսկ ծառային է հրամայում խստորեն հսկել, որպեսզի ցանկացողը հանկարծ չհափշտակի, ճիշտ այդպես է վարվում և Աստված, փողերդ տուր կարիքավորներին, ասում է, որպեսզի որևէ մեկը դրանք չխլի քեզնից, ինչպես, օրինակ, զրպարտիչը կամ սատանան, կամ գողը, կամ, ի վերջո՝ մահը:

Քանի դեռ դու ես տիրանում դրանց, դու տիրում ես անհուսալի, իսկ եթե ի դեմ աղքատների տաս ինձ, ապա ես մեծ խնամքով դրանք ամբողջովին կպահպանեմ քեզ համար: Ես այն պատճառով չեմ վերցնում, որ դրանցից զրկեմ

քեզ, այլ որպեսզի բազմապատկեմ և մեծ խնամքով պահպանեմ, որպեսզի պահպանեմ այն ժամանակի համար, երբ ոչ ոք արդեն պարտք չի տալիս, և ոչ ոք այլևս չի կարեկցում:

Ինչու՞ դու՝ հարուստդ, իզուր նեղութիւն ես քաշում քո պահեստներում պահ տալ աղքատների ունեցվածքը: Ինչու՞ ես դժգոհում, երբ նրանք քեզնից խնդրում են, կարծես թե սեփականութիւնդ ես կորցնում: Նրանք խնդրում են Աստծուն պատկանողը և ոչ թե քոնը, ցանկանում են այն, ինչը հանուն նրանց քեզ է վստահված և ոչ թե քեզ հետ է ծնվել: Տուր այն, ինչ ստացել ես և օգտագործումից շահույթ կորզիր, քեզ բավական է և այն, որ դու տվող ես նշանակված և ոչ՝ ստացող: Ինչու՞ ես քո գանձերը հողին պահ տալիս: Տու՛ր, ասում է, Իմ ձեռքը: Մի՞թե հողի Տերը քեզ պակաս արժանավոր է թվում, քան հողը:

Կասես՝ տվել եմ: Սակայն հարկ է, որ երբեք չդադարես անել այդ. միայն այն ժամանակ դու արդարացում կունենաս, երբ ոչնչի տեր չես լինի, երբ ոչինչ չես ունենա, իսկ հիմա, քանի դեռ ինչ-որ բան ունես, ապա թեկուզև տալու լինես հազարավոր մարդկանց, բայց դեռևս կմնան ուրիշ ցանկացողներ, դու ոչ մի արդարացում չունես:

Ուրեմն, թող ո՛չ հարուստը մեծարվի այն բանով, որ շատ է տալիս, և թող ո՛չ էլ աղքատը վհատվի, որ կարծես թե քիչ է տալիս, որովհետև վերջինը հաճախ շատ է տալիս առաջինից: Շատը և քիչը որոշվում է ոչ թե ողորմութեան չափով, այլ ողորմողի ունեցվածքի չափով: Կերակրելով հացկատակներին և շողոքորթներին՝ դու այնպես ես հրճվում, կարծես թե ինչպիսի՛ աղբյուրներ ես մխտում, իսկ երբ աղքատ մեկին ես տեսնում, իսկույն բռնվում ես աղքատ դառնալու սարսափով:

Տո՛ւր կարիքավորին և մի՛ տուր պարողին, որպեսզի քո

տված փողերի հետ չփչացնես նաև նրա հոգին, որովհետև դու նրա կործանման մեղավորն ես քո անտեղի շռայլութեան պատճառով: Չէ՞ որ, եթե պարողներն իմանային, որ իրենց արհեստը անշահավետ է, վաղուց կդադարեին զբաղվել դրանով:

Կույրը, որին կարեկցանք է ցուցաբերվում, կարող է առաջնորդել դեպի երկնային թագավորութիւն. նա, ով դեմ է առնում պատին և փոսի մեջ է ընկնում, դառնում է երկինք բարձրանալու ուղեցույց: Եթե դու անում ես ի ցույց մարդկանց, ապա թեկուզև ողջ աշխարհն իմանա քո արածների մասին, միևնույն է, ոչ ոք չի իմանա, որովհետև այդ մտադրութեամբ չես արել: Հենց այնպես չի ասել Քրիստոս՝ մարդկանց առաջ չանեք, ապա ավելացրել՝ «ի ցույց արանց» (Մատթ. 6, 1):

Օ՛, որքան մեծ է աղքատութեան արժեքը: Այն Աստծո դիմակն է: Աղքատութեան տակ է թաքնվում Աստված. աղքատն է պարզում ձեռքը, սակայն Աստված է վերցնում: Երբ քեզ ինչ-որ դժբախտութիւն է պատահում, իսկույն ողորմութիւն տուր, երախտագիտութիւն հայտնիր, որ այդպես է պատահել, և դու կտեսնես, թե ինչ ուրախութիւն է իջնում վրադ:

Հոգևոր շահույթը, թեկուզև փոքր, այնքան վիթխարի է, որ ծածկում է ցանկացած նյութական կորուստ: Իսկ եթե չեք հավատում, փորձեք, և կտեսնեք Աստծո փառքը: Բայց, օ՛, թեթևամտութիւն, օ՛, անշնորհակալութիւն: Ամբողջ ժամանակ ապրում ենք մեղքերի ու անառակութեան մեջ, իսկ եթե մի անգամ ինչ-որ չնչին բարի գործ ենք կատարում, ապա, ինչպես անշնորհակալ ծառաներ, առևտրականի մանրախնդրութեամբ քննում և հարցուփորձում ենք, թե, արդյոք, այդ մանրիկ բանի համար որևէ պարգև չի՞ սպասվում: Այնինչ պարգևն ավելի մեծ է լինում, երբ մի

բան անելիս չես առաջնորդվում պարզեի ակնկալիքով. չէ՞ որ ամեն ինչ պետք է անել հանուն Քրիստոսի և ոչ թե հանուն պարզեի:

Արդարև, եթե Աստված, ի սկզբանե մեզ արարելով՝ առանց մեր կողմից բարի գործ կատարելու, անմիջապես մեզ այնքան բարիքներ նվիրեց, ապա ինչեր չի նվիրի Նա Իր համար նեղություն քաշածներին ու այնքան գործեր և սխրանքներ գործածներին: Այն դեպքում, երբ ինքներս մեզ համար մեծ դժվարություններ ենք որոշում չնչին քանակությամբ ոսկի ծախսել, Նա զոհաբերեց մեզ նույնիսկ Իր Որդուն:

Մարդկանց հետ բարեկամություն անելու համար մենք պատրաստ ենք մեզ վտանգի ենթարկել, իսկ հանուն Աստծո մարդասիրության փող անգամ չենք զոհաբերում: Ինչ ամոթ է, որ Քրիստոս և՛ հոգին տվեց մեզ համար, և՛ թանկարժեք արյունը թափեց հանուն մեզ, ովքեր ո՛չ նվիրված էին Նրան, ո՛չ արդար էին, իսկ մենք հանուն Նրա անգամ փող չենք թափում ու անտարբեր նայում ենք մերկի և թափառաշրջիկի վրա, ով մեռավ հանուն մեզ:

Եվ ո՞վ կարող է մեզ ազատել ապագա պատիժներից: Եթե ոչ Աստված, այլ մենք ինքներս պատժեինք մեզ, ապա մեղադրական դատավճիռ չէի՞նք կայացնելու: Մեզ չէի՞նք դատապարտի դժոխքի կրակներին՝ թողնելով, որ սովից տանջվի Նա, ով հոգին մեզ համար չխնայեց:

Փողը դեռ ոչ ինչ: Եթե մենք հազարավոր հոգիներ ունենայինք, պատշաճ չէ՞ր լինի բոլորը զոհաբերել Նրան: Եթե մեզնից մեկին տանելու լինեին մահապատժի, ապա առաջարկվե՞ր տալով մեր ողջ ունեցվածքը, ազատվել, մենք դա երջանկություն կհամարեինք, այնինչ, երբ դժոխք ենք տարվում, և, հնարավոր է, թեկուզ կեսը տալով, ազատվել, մենք նախընտրում ենք պատժի ենթարկվել և անմտորորեն

պահպանել մեր ունեցվածքը, որպեսզի կործանենք մեր բարությունը: Եվ ի՞նչ արդարացում կարող ենք ունենալ, ի՞նչ ներում՝ մեզ զրկելով և՛ այստեղի, և՛ այնտեղի բարիքներից, երբ հնարավորություն կա օգտվել և՛ առաջինից, և՛ երկրորդից:

Եթե ոմանք աշխարհիկ արժանավորություն համար հաճախ տալիս են իրենց ողջ ունեցվածքը, այն արժանավորություն, որը պետք մնա այստեղ, ասենք, այստեղ նույնպես երկար ժամանակ չի մնալու, քանի որ շատերը մեռնելուց դեռ շատ առաջ զրկվում են այդ արժանավորության հետ կապված իշխանությունից, իսկ ուրիշները դրա համար զրկվում են անգամ կյանքից, և, այնուամենայնիվ, իմանալով այդ, հանուն նրա ամեն ինչ անում են, ուրեմն, եթե հանուն այդ իշխանության այդքան բան են անում, ապա կա՞, արդյոք, մեզնից ավելի դժբախտ արարած, երբ հանուն հավիտենապես առկայի և անտրոհելի արժանավորություն, մենք չենք զոհաբերում նույնիսկ փոքրը, և չենք տալիս այն, ինչը քիչ անց պետք է ակամա թողնենք այստեղ:

Ի՞նչ անմտություն է, երբ կարող ենք կամավոր տալ և վերցնել մեզ հետ այն, ինչից ակամա զրկվելու ենք, չցանկանալ: Ծառաներին և ջորիները մենք զարդարում ենք ոսկե մանյակներով, իսկ Տիրոջը, երբ Նա մերկ է, գիշերներ է անցկացնում բաց երկնքի տակ և ողորմության համար ձեռք է մեկնում, ոչ մի ուշադրություն չենք դարձնում, իսկ հաճախ նույնիսկ արժանացնում ենք դաժան հայացքի: Ի՞նչը կարող է այդ անմտությունից վատը լինել:

Իսկապես, երբ Աստված մեզ մոտ աղբատ է ուղարկում՝ հրամայելով նրան տալ Իրեն պատկանողը, իսկ մենք, քիչ է, որ չենք տալիս, դեռ հայհոյանքներով ենք ճամփու դնում, հապա մտածիր, թե ինչ կայծակի ու որոտի է արժա-

նի մեր արարքը: Եթե քո ծառան, որին դու կարգադրել ես զնալ մի ուրիշ ծառայի մոտ, որ նրանից վերցնի քեզ ունեցած պարտքը, ոչ միայն վերադառնում է ձեռնունայն, այլև անարգվում է, ապա ինչե՞ր չէիր անի անարգողին: Իսկ ի՞նչ պատիժներ չէիր տա, եթե անձամբ քեզ վիրավորեին: Եթե մարդկանց համար այդպես է, ապա որքան ավելի է նրա համար, ով Տերն է և՛ մարդկանց, և՛ բոլոր արարածների:

Եթե դու չես ցանկանում ոչինչ տալ քեզնից մուրացող աղքատին, ապա էլ ինչի՞ համար ես խոցում նրա հոգին նախատինքներով: Մի՞թե նա կմոտենար քեզ, եթե իմանար, որ այդպիսի խոսքեր է լսելու: Կասես՝ նա անպատկառ է և մոտենում է գողգոռալով: Ի՛նչ ես ասում: Ինչպես հաճախ է պատահում, երբ սեղանն արդեն պատրաստ է, կանչելով սպասարկող ծառային և նկատելով, որ նա ուշանում է, ավերից դուրս ես գալիս չնչին հապաղման համար, չնայած հրաշալի գիտես, որ եթե ոչ անմիջապես, ապա քիչ անց բավականութուն կստանաս, սակայն ինքդ քեզ, երբ չնչին առիթով կատաղում ես, անամոթ չես համարում, իսկ աղքատին, որ սարսափում և դողում է շատ ավելի լուրջ պատճառով (որովհետև նրա ողջ ահը ուշացումից չէ, այլ սովից), անվանում ես անպատկառ ու անամոթ: Մի՞թե դա ծայրահեղ անամոթություն չէ:

Եթե դու, նկատելով առաստաղից կաթող մի չնչին կաթիլ, կանչում ես և՛ ծառաներին, և՛ արհեստավորի, և տնով մեկ աղմկում ես, ապա ինչպե՞ս ես անտարբեր նայում ցնցոտիների մեջ կորած աղքատին, որ քնում է ծղոտի վրա, ցեխի ու կեղտի մեջ, ամեն կարգի ցրտի դիմանում: Ո՞ր գազանը չէր մեղմանա՝ տեսնելով այդպիսի թշվառություն: Ո՞վ կարող է այդքան դաժան և անմարդկային լինել, որպեսզի չգառնա խոնարհ և կարեկից:

Այնինչ կան մարդիկ, որ հասել են այնպիսի դաժանութ-յան, որ ոչ միայն չեն խղճում, չեն ցավակցում և թեթևաց-նում վիշտը, այլև հաճախ վիրավորում են աղքատներին, ու ասում, որ նրանք արժանի են դրան: Ո՞չ այն պատճառով, որ ցանկանում են կերակրվել և ոչ թե սոված մնալ: Ո՞չ, ասում ես դու, այլ որովհետև ծուլ էն: Իսկ դու չե՞ս ծուլանում՝ տրվելով հաճույքների: Այնպիսի գործերով չե՞ս զբաղվում, որոնք ցանկացած աղքատությունից վատ են՝ տրվելով ուրիշներին թալանալու ու ճնշելու, ընչազրկե-լու կրքերիդ: Ավելի լավ կլիներ, որ դու էլ այդպես պարապ լինեիր, որովհետև այդպես տրվել անգործությունը շատ ավելի նախընտրելի է, քան ընչազրկել ու թալանել:

Ուրեմն, երբ կտեսնես մուրացկանի և կասես՝ զարմա-նում եմ, որ երիտասարդ և այդքան առողջ՝ ոչինչ չունե-նալով, ուզում է կերակրվել՝ ոչինչ չանելով, այդ նույն բա-ռերը քեզ ասա կամ, ավելի լավ է, կանչիր մուրացկանին, և թող նա համարձակ ասի քեզ այդ խոսքերը՝ զարմանում եմ, որ դու, լինելով առողջ, տրվում ես ծուլության և չես անում բաներ, որ Աստված է պատվիրել: Դու մերժում ես նրան պարապության պատճառով, իսկ նա քեզ՝ նաև վատ արարքների, որ դու թալանում ես, կաշառակերությունը զբաղվում և ավերում ուրիշների տները: Բայց նա մեծ մա-սամբ ստում ու խաբու՞մ է: Հենց դրա համար էլ արժանի է կարեկցանքի, որ այնպիսի կարիքի մեջ է ընկել, որ ան-գամ դրանից չի ամաչում: Այնինչ, մենք ոչ միայն չենք խղճում նրան, այլ որպես վերադիր այդպիսի դաժան խոս-քեր ենք ասում՝ մեկ-երկու անգամ չե՞մ տվել: Ասենք թե:

Մի՞թե պետք չէ նորից ուտել, եթե մեկ անգամ արդեն կերել ենք: Ինչու՞ դու քո սեփական որովայնի համար չես սահմանում միևնույն օրենքները և չես ասում. դու երեկ կշտացար, այսօր չսպասես: Ընդհակառակը, այն լցնում ես

չափից դուրս, իսկ ուրիշին մերժում ես, երբ սա ընդամենը անհրաժեշտն է ուզում:

Այդքանից հետո այդ ինչպե՞ս ես ցանկանում, որ աղոթքդ տեղ հասնի: Ով արհամարհում է նեղության մեջ գտնվողին և իր ունեցվածքից նրան բաժին չի հանում, ինչպե՞ս կարող է ցանկանալ այն բարիքներից, որ իրեն չեն պատկանում: Մի՞թե պախարակման արժանի չէ այն, որ կերակրելով պորտաբույծներին և շողոքորթներին, մենք այդ կորուստ չենք համարում, իսկ երբ տեսնում ենք սովից ու ցրտից հոգնատանջ մեզ մոտեցող աղքատին, ապա ոչ միայն արհամարհում ենք, այլև կշտամբանքներով վրա տալիս:

Ինչու՞, ասում ենք, նա չի աշխատում, ինչու՞ է ուտում՝ թրև գալով: Իսկ դու աշխատելո՞ւմ ես ձեռք բերել այն, ինչ ունես: Հորիցդ ժառանգություն չե՞ս ստացել: Իսկ եթե անգամ աշխատել ես, մի՞թե դրա համար ես հանդիմանում ուրիշին: Բայց նա խաբեբա է: Ի՛նչ ես ասում: Հանուն մի կտոր հացի կամ հագուստի՝ նրան խաբեբա՞ ես անվանում: Բայց նա իսկույն, ասում ես, վաճառում է ստացածը: Իսկ դու քո բոլոր միջոցները լա՞ւմ ես տնօրինում:

Եվ մի բան էլ՝ մի՞թե բոլորը աղքատ են անգործությունից: Ոչ ոք չի՞ աղքատացել նավաբեկությունից: Իսկ դատական քաջքուկների՞ց: Թալանվածներ չկա՞ն: Բա հիվանդանալու հետևանքո՞ւմ: Համարձակ նախաձեռնությունի՞ց: Այլևայլ դժբախտ պատահարների՞ց: Այնինչ, դեռ կարգին չլսած, երբ ինչ-որ մեկը տրտնջում է իր հետ պատահած այդպիսի դժբախտություններից և ամեն ինչից զրկված աչքերը երկինք է հառում, անմիջապես նրան խարդախ, խաբեբա և կեղծաբարո ենք համարում: Ամոթ չէ՞, երբ որևէ մեկին խաբեբա ես համարում: Ավելի լավ կլինի, որ ոչինչ չտաս ու չանվանարկես աղքատին:

Բայց ասում ես՝ նա ունևոր է, սակայն աղքատ է ձևանում: Դա քո մեղքն է և ոչ նրա. նա զիտի, որ դաժան մարդկանց է մոտենում, ավելի շուտ՝ գազանների և ոչ մարդկանց, և եթե անգամ կսկսի խղճալի խոսքեր ասել, ոչ մեկի արժանապատվությունը չի դիպչի, այդ պատճառով ինքն էլ հարկադրված է լինում խղճալի տեսք ընդունել, որպեսզի քո հոգում կարեկցանք առաջացնի:

Օ՛, դաժանություն, օ՛, անգթություն, օ՛, տմարդություն: Եթե ազնվաբարո տեսքով մեզ մոտեցող աղքատի ենք տեսնում, ասում ենք՝ խաբեբա է և այդպես է մոտենում, որպեսզի նրան նշանավոր տոհմի մարդ համարենք, իսկ եթե տեսնում ենք մերկ ու ցնցոտիներով մեկին, սրան նույնպես դատապարտում ենք: Օ՛, անպատկառ գազանություն:

Եթե ուզում ես՝ տուր, եթե չես ուզում՝ վռնդիր: Ինչու՞ ես այդքան խղճուկ և դժբախտ: Ինչու՞ և ինքդ չես խղճում, իսկ ցանկացողներին էլ մտափոխում ես: Չէ՞ որ, եթե ինչ-որ մեկը քեզնից լսում է, որ այս մեկը խաբեբա է, այն մյուսը՝ կեղծավոր, ապա նա ո՛չ առաջինին կտա և ո՛չ էլ՝ մյուսին:

Բայց ինչի՞ համար են նրանք ցույց տալիս խեղճած անդամները՝ հարցնում ես դու: Քո պատճառով. եթե մենք կարեկից լինեինք, նա կարիք չէր ունենա դիմելու այդպիսի միջոցների, եթե նրանք հենց առաջին անգամից մեզ զթասրտություն մղեին, այդպիսի խորամանկությունների չէին դիմի: Ո՞վ կարող է այդքան ստոր լինել, որպեսզի ցանկություն ունենա ի լուր ամենքի բողոքել բախտից ու միաժամանակ ի ցույց անել կնոջն ու երեխաներին: Դա ցանկացած աղքատությունից ավելի վատ բան չէ՞: Եվ այդպիսի դժբախտները ոչ միայն կարեկցանքի չեն արժանանում, այլև անպատկառ են համարվում: Դու, որ թալանում ես, անպատկառ չես, իսկ նա, ով մի կտոր հաց է պաղա-

տում, անամոթ է: «Տու՛ր Արամ, ով քեզ Աից խնդրում է. և ով կամենում է քեզ Աից փոխ առնել, երես մի՛ դարձրու Արամից» (Մատթ. 5, 42):

Ինչ անմտություն է, որ կյանքդ անցկացնում ես որևէ մտլության ու հղիացածության մեջ, կերուխուսը ձգում ես մինչև ուշ գիշեր և քնում ես փափուկ անկողնում, իսկ մերկ, դողդողացող ու սոված մուրացկանի վրա ոչ մի ուշադրություն չես դարձնում:

Բայց ի՞նչ եմ ասում մերկության և դողի մասին, երբ ումանք ստիպված են վաղ տարիքից կուրացնել իրենց երեխաներին, որպեսզի մեր մեջ կարեկցանք արթնացնեն: Քանի որ կույր չլինելով ու մերկ չըջելով՝ նրանք ո՛չ իրենց տարիքով, ո՛չ դժբախտությամբ անսիրտների կարեկցանքը չեն շարժում, ապա այդքան դժբախտությունների վրա ավելացնում են նորը, էլ ավելի ծանրը, որպեսզի փրկվեն սովից՝ ավելի տանելի համարելով իրենց զրկել լույսից և բուլորին պարգևված արևի ճառագայթներից, քան մշտապես պայքարեն սովի դեմ և ենթարկվեն ամենախղճալի մահվան:

Հիրավի, մարդը մեծ բան է, և էլ ավելի թանկ է ողորմած մարդը: Ողորմությունը լինում է այնժամ, երբ այն տրվում է հոժարությամբ, առատորեն, երբ մտածում ես, որ չես տալիս, այլ ստանում ես, երբ կարծես թե բարեգործություն ես ստանում, երբ կարծես թե շահույթ ես ունենում և ոչ թե կորցնում. այլ կերպ դա բարեգործությունն է՛ր լինի, որովհետև ուրիշին ողորմացողը պետք է ուրախանա և ոչ թե տրտնջա:

Իսկապես անհեթեթ է՞ր լինի, եթե դու՝ ուրիշին ազատելով տրամությունից, ինքդ սկսես տրտմել: Եթե դու նեղվում ես, որ ուրիշին ազատել ես նեղությունից, ապա ապացուցում ես քո ծայրահեղ դաժանությունն ու անսը-

տությունը, այդ դեպքում ավելի լավ է չազատես, քան այդ ձևով ազատես:

Բայց դու ինչու՞ ես ընդհանրապես տխրում, մարդ: Եթե դու այդպիսի վերաբերմունք ունես, ավելի լավ է ամենևին չտաս: Եթե դու չես հավատում, որ տվածդ բազմապատկվում է երկնքում, մի տուր: Բայց դու այստե՞ղ ես փոխհատուցում ցանկանում: Ինչի՞ համար: Թող ողորմությունը ողորմություն մնա և ոչ թե առևտուր: Ճիշտ է, շատերն այստեղ էլ են հատուցում ստանում, սակայն այնպես չեն ստանում, որպեսզի այդ պատճառով իրենք ավելի շատ ունենան, քան չստացողները:

Նրանք, ովքեր այստեղ են փնտրում և ստանում են, նվազեցնում են իրենց պարգևն այնտեղ: Ուրեմն, չենք ասելու՝ այս մեկն անառակ է ու արժանի է բարեգործության, այն մեկը արհամարհելի է, մյուսը՝ թշվառ: Նայիր ոչ թե օգնության կարիք ունեցողների արժանավորությունը, այլ միայն կարիքին: Թեկուզև այդ մարդը ոչնչությունն, թշվառ, արհամարհելի եղած լինի, Քրիստոս քեզ այնպես է պարգև պարտավորեցնում, կարծես թե ինքդ բարեգործություն ստանում ես նրա շնորհիվ:

Պետրոսն ու Հովհաննեսը մի անգամ մտնում են տաճար՝ աղոթելու, և ահա ի ծնե կաղ մեկը, որին շալակած էին տանում, պառկած էր տաճարի դռների մոտ և, տեսնելով ներս մտնողներին, սևեռուն նայում է նրանց՝ հույս ունենալով, որ ողորմություն կստանա: Ինչ վերաբերում է Պետրոսին, նա ասում է. «Նայի՛ր մեզ» (Գործք, 3, 4), հենց արտաքին տեսքը բավականաչափ վկայում է, որ մարդը աղքատ է, ոչ խոսք է պետք, ոչ պատասխան. հազուստը ցույց է տալիս, որ ոչինչ չունի: Եվ՝ ի՞նչ: Միայն մուրացկանի նկատմամբ այսպիսի վերաբերմունքի մե՞ջ է ողջ առաքյալության իմաստը, որպեսզի չթեթևացնի՞ նրա աղքատությունը, որ-

պեսզի լոկ մուրացկանին ասի՝ ոսկի և արծաթ չունե՞մ: Մի քիչ սպասիր և դու կստանաս մեծ հարստություն: «Արծաթ և ոսկի չունեմ, բայց ինչ որ ունեմ, այն քեզ կտամ. հանում եմ Նազովրեցի Հիսուս Քրիստոսի վե՛ր կաց և քայլիր» (Գործք, 3, 6):

Տեսնու՞մ ես փողի պահասությունը և շնորհի հարստությունը: Նայիր նրա հետագա խոնարհությունը: Ո՛չ վիրավորում է, ո՛չ մերժում, ինչպես հաճախ անում ենք մենք մեզ դիմողներին՝ նրանցից բացատրություն պահանջելով, աշխատանքի ուղարկելով, նախատելով այն բանի համար, որ նրանք ծուլանում են:

Մի՞թե դա են քեզ սովորեցրել, մա՛րդ: Քեզ չի՞ պատվիրված՝ պարապություն համար մի՛ մեղադրիր, անազնվություն համար մի՛ հանդիմանիր, ծուլություն համար մի՛ կշտամբիր, այլ թեթևացրու նրա աղքատությունը, փրկիր դժբախտություններից և ընկածներին օգնություն ձեռք մեկնիր: Ուրեմն, մի՛ հարցրու նրա կյանքի ու գործերի մասին, երբ պատրաստվում ես ողորմություն տալ. չէ՞ որ դա ծայր անպատշաճություն է մի կտոր հացի համար քննություն անել նրա ողջ կյանքը: Թեկուզև մուրացողը մարդասպան լինի, թեկուզ և ավազակ կամ ով էլ որ լինի, մի՞թե նա արժանի չէ մի կտոր հացի կամ մի քանի դրամի: Բո Տերը արևին ստիպում է նրանց նույնպես լուսավորել, իսկ դու նրան անարժա՞ն ես համարում ամենօրյա սննդի: Թե՞ դու չգիտես, որ Աբրահամն առաջին հերթին զարմանքի է արժանի այն բանի համար, որ տեսնելով իր մոտ եկածներին և չիմանալով, թե ովքեր են, շտապ նրանց ընդառաջ գնաց և մինչև գետին խոնարհվելով, ասաց. «Տե՛ր, եթե շնորհ գտա քո առաջ, քո ծառայի՞ն անտես մի արա» (Ծննդ. 18, 3):

Այդպես և դու հետաքրքրասիրություն մի ցուցաբերիր, որովհետև դու ընդունում ես հանուն Քրիստոսի, իսկ եթե

կսկսես մշտապես ամեն ինչ տեղը տեղին իմանալ, ապա հաճախ կանցնես հարգանքի արժանի մարդու կողքով և կկորցնես պարզևը, որ դրա համար կունենայիր: Եվ եկեք հոգ տանենք ոչ միայն հավատակիցների նկատմամբ, մյուսներին անտեսելով, այլ ում կտեսնենք դժբախտություն մեջ՝ ոչ մի այլ բանով չհետաքրքրվելով. այն, որ նա հայտնվել է դժբախտության մեջ, արդեն օգնություն ստանալու արդարացում է:

Արդարև, չգիտեմ, թե որտեղից է եկել այդ սովորությունը. եթե մենք տեսնում ենք դժբախտության մեջ եղող աշխարհիկ մարդու, օգնության ձեռք չենք մեկնում, և միայն սարերում գտնվողների նկատմամբ ենք հոգատար լինում: Հույն լինի, հրեա լինի կամ ուրիշ մեկը, ում որ կտեսնես դժբախտության մեջ, բոլորին բարեգործություն արա: Եթե դու փնտրում ես միմիայն վանականների և միայն նրանց ես ուզում բարեգործություն անել և, ընդ որում, նրանց առիթով նույնպես հետաքրքրվում ես, թե, արդյոք, նրանք արժանի՞ են, արդարակյա՞ց են, հրաշքներ գործու՞մ են, և առանց իմանալու ձեռք չես մեկնում, ապա դու դարձյալ կորցնում ես ողորմությունից ակնկալվող օգուտը, ասենք, հենց ողորմությունը ժամանակի ընթացքում կորցնում ես:

Եթե դու ոտքի ես կանգնեցնում ավանակին, երբ տեսնում ես, որ սա խեղդվում է, և չես հետաքրքրվում, թե դա ումն է, ապա առավել ևս պետք չէ հետաքրքրվել, թե այդ մարդը ումն է: Նա Աստուծուն է՝ հույն կլինի թե հրեա, բավական է, որ նա օգնության կարիք ունի: Եթե դու տեսնիր, որ նա բազում միջոցներ ունի և մեծ փառք, ապա արդարացիորեն կարող էիր այդպես ասել, բայց եթե տեսնում ես, որ նա դժբախտ է, մի ասա, որ նա անառակ է և ծուլ, որովհետև դա դաժանություն, անսրտություն և մեծագույն ամբարտավանության նշան է:

Ողորմությունը հենց այն պատճառով է այդպես կոչվում, որպեսզի մենք տանք և՛ արժանավորներին, և՛ անարժաններին: Եթե մենք սկսենք քննել ու տեղեկանալ անարժանների մասին, ապա արժանավորներին էլ այդքան հեշտությամբ չենք գտնի, իսկ եթե ողորմություն տանք նաև անարժաններին, անկասկած և՛ արժանավորներ, և՛ ամեն կարգի մարդկանց էլ կհանդիպենք: Եթե մենք սկսենք քննել արժանավորությունը և չափազանց խստապահանջ լինենք մեր եղբայրակիցների նկատմամբ, ապա Աստված մեր հանդեպ նույնը կանի, ու ջանք թափելով հաշիվ պահանջել մեր եղբայրակիցներից՝ մենք կզրկվենք բարձրագույն ողորմությունից:

Ով բարյացակամություն է ցուցաբերում, հարկավոր է կյանքի մասին նրանից ոչ թե հաշիվ պահանջել, այլ թեթևացնել աղքատությունը և բավարարել կարիքները:

Ուրեմն, երբ տեսնում ես մուրացկանի, կողքից մի անցիր, այլ իսկույն մտածիր այն մասին, որ նա, ինչպես դու, ազատ է, պատկանում է միևնույն հասարակությանը, քեզ հետ բոլոր ընդհանուր բաներն ունի, իսկ դու հաճախ նրան քո շների հետ էլ չես հավասարեցնում. երբ դու կուշտ ես, նա հաճախ սոված է քնում, և ազատ մարդը քեզ համար ավելի արհամարհելի է դառնում քո ծառաներից: Բայց վերջիններս քեզ համար պետքական բանե՞ր են անում և քեզ լա՞վ են ծառայում: Սակայն ես կարող եմ ցույց տալ, որ նրանք նույնպես ծառայություն են մատուցում և շատ ավելի կարևոր, քան ծառաներդ. նրանք քեզ կօգնեն դատաստանի օրը և կազատեն քեզ կրակից: Նման բան կարո՞ղ են քո ծառաները:

Երբ Տաբիթան մեռավ, ո՞վ նրան հարություն տվեց: Նրան շրջապատող ծառանե՞րը, թե՞ աղքատները: Իսկ դու չես ցանկանում ազատին հավասարեցնել քո ծառաների

հետ, այն դեպքում, երբ նա միայն իր արտաքին տեսքով քեզ պիտի մղեր ողորմության: Եվ դու ինչպե՞ս պիտի խնդրես Աստծուն քեզ ազատել, երբ վտանգի մեջ ես, երբ դու ինքդ անօգ վիճակում ես թողնում մարդու, որ քո առջև ոչ մի մեղք չի գործել, երբ նա վշտաբեկ է, հեծեծում ու տանջվում է սովից ու ցրտից: Ինչպե՞ս է Նա քեզ անպատիժ թողնելու, որ մեղք է գործել իր հանդեպ: «Ով իր ակամքը փակում է սուսնից չլսելու համար, ինքն էլ երբ կամի Տիրոջը, Տերն էլ իրեն չի լսի» (Առակ. 21, 13):

Ուրեմն մեր եղբայրակիցներին վերաբերվենք այնպես, ինչպես մենք կուզեինք, որ Աստված վարվեր մեզ հետ: Ողորմությունը շատ ավելի մեծ զոհաբերություն է, քան աղոթքը, պասը և մյուս բաները, եթե, իհարկե, այն լինում է արդար մղումներով և նույնպիսի նեղություններով, եթե մաքուր է ամեն կարգի շահախնդրությունից, թալանից և բռնությունից:

Այդպիսի ընծաներ Աստված ընդունում է, մյուսները մերժում և ատում է: Նա չի ցանկանում, որ իրեն պատվեն ի հաշիվ ուրիշների դժբախտության, որովհետև այդպիսի զոհը անմաքուր և անվայելուչ է և ավելի շուտ կարող է բարկացնել, քան թե գթաշարժել Աստծուն: Ողորմությունը հենց այդպես էլ կոչվում է, որ մենք ողորմենք մեր եղբայրակիցներին և ոչ թե տանջենք: Իսկ ով խլում է ուրիշինը և տալիս մյուսին, ապա նա ոչ թե ողորմություն է անում, այլ ավելի շուտ պատժի է ենթարկում և նվազ վիրավորանք չի պատճառում:

Ով ցանկանում է հարուստ լինել, միշտ էլ փողի կարիք է զգում, իսկ ով չի ցանկանում հարուստ դառնալ, միշտ էլ բավարարություն է ստանում: Ոչ թե հարուստ լինել, այլ չցանկանալ հարստանալ, ահա թե որն է հարստությունը: Օրինակի համար ասեմ, որ կա հարուստ, որ բոլորին անխ-

տիր թալանում է, և կա հարուստ, որ իր հարստութիւնը տալիս է աղքատներին, մեկը հարստանում է հավաքելով, մյուսը՝ ծախսելով, մեկը ցանում է հողը, մյուսը մշակում է երկինքը:

Բայց որքանով երկինքը առավել է երկրից, այդքանով վերջինի բերրիութիւնը նվազ է առաջինից: Եվ ահա որն է զարմանալին. գիշատչին պատահում է այնպես, որ նրան ատում են ոչ միայն նրանից խաբվածները, այլև նրանք, ովքեր ոչ մի հարութիւն չեն տեսել՝ հատկապես կարեկցելով տուժածներին: Եվ եթե նրա հետ դժբախտութիւն է պատահում, ամեն կողմից աղմկում են՝ չարագործ, խաբեբա, անառակ, և բոլորը հարձակվում են նրա վրա:

Իսկ ողորմած մարդու հետ պատահում է այնպես, որ նրան սիրում են ոչ միայն նրանք, ում նա կարեկցել է, այլև նրանք, ում ոչինչ չի արել՝ իրեն վերագրելով բարեգործութիւն, որ ցույց է տրվել ուրիշներին: Իսկ երբ նրա հետ ինչ-որ դժբախտութիւն է պատահում, ապա բոլորն աղոթում են, որպեսզի Աստված նրան ողորմի և ամեն ինչ բարեհաջող կարգավորի, որպեսզի նա միշտ հարուստ մնա:

Տեսնու՞մ ես, թե ինչպես է չարութիւնը նաև նրանց թշնամի դարձնում, ովքեր ոչ մի վնաս չեն կրել, իսկ բարեհոգութիւնը հետևորդ է դարձնում նաև նրանց, ովքեր ոչինչ չեն ստացել: Այդ պատճառով, առաջին հերթին հեռու մնա թալանից և միայն այնժամ ողորմութիւն արա: Եթե մենք միևնույն ձեռքերով և ուրիշներին ենք ճնշում, թեկուզև նրանցից վերցրածով հագցնենք ուրիշներին, միևնույն է, մենք պատժից չենք խուսափի, որովհետև ողորմութիւն հիմքը դառնում է ցանկացած մեղքի հիմք: Ավելի լավ է ամենևին չողորմել, քան այդպես ողորմել:

Եթե Կայենը բերում է պակաս կարևորը, զայրացնում է Աստծուն, ապա ինչպե՞ս կարող է չզայրացնել նա, ով դեռ

ուրիշինն է տալիս: Ողորմութիւնը ազնվագույն արվեստ է և դրա իրագործման հովանավորը, որովհետև այն հաճո է Աստծուն, եթե չի պղծվում մեզնով, իսկ այն կարող է պղծվել, երբ մենք ստեղծում ենք ի հաշիվ ուրիշի կողոպտման, իսկ եթե մաքուր է լինում, նրան զորացնողին տալիս է մեծ շնորհ և հանգցնում իր նկատմամբ Աստծո զայրույթը:

Այդպիսին է նրա զորութիւնը. այն քանդում է կապերը, խափանում է խավարը, հանգցնում կրակը և իր ստեղծողին դարձնում Աստծո նման: Ասված է՝ «գթասիրտ եղէ՛ք, ինչպես և ձեր Հայրը գթասիրտ է» (Ղուկ. 6, 36):

Բաց չթողնենք հարմար ժամանակը, ինչպիսին ներկա կյանքն է, սակայն մեր ողջ կարողութեամբ հոգ տանենք մեր փրկութեան մասին: Չէ՞ որ կարելի է, և կարելի է մինչև մեր վերջին շունչը հաճոյանալ Աստծուն. կարելի է արժանանալ գովասանքի և կտակի, ճիշտ է, ոչ այնպես, ինչպես կյանքում, բայց, այնուամենայնիվ, կարելի է: Հատկապես ինչպե՞ս: Եթե դու քո ժառանգորդների հետ միասին նշես նաև Աստծուն, եթե Նրան էլ քո ժառանգութիւնից բաժին հանես: Կյանքիդ օրոք դու Նրան չե՞ս կերակրել: Գոնե ծայրահեղ դեպքում մեռնելիս, երբ արդեն տեր չես, Նրա համար քո հարստութիւնից մի մաս առանձնացրու: Անշուշտ, շատ ավելի ցանկալի է մեծ պարգև, եթե դու ողջ ժամանակ անել ես Նրան, սակայն եթե այդ չես արել, ապա թեկուզ երկրորդիդ, իսկ եթե տատանվում ես և այդ անել, ապա մտածիր, որ Հայրը նրան դարձրել է քո համաժառանգորդը, և հրաժարվիր խստասրտութիւնից:

Իրոք, ի՞նչ թողութիւն կստանաս, երբ դու, քիչ է որ կենդանութեան օրոք չես կերակրել Նրան, նույնիսկ պատրաստվելով հեռանալ Նրա մոտ, չես ցանկանում տալ այն հարստութեան մի մասը, որի վրա դու այլևս իշխանութիւն

չունես, իսկ Նրա նկատմամբ այնպիսի թշնամանք ես տածում, որ Նրան մաս չես հանում արդեն քեզ համար անօգուտ դարձած ունեցվածքից: Մի՞թե չես տեսնում, թե որքան մարդիկ անգամ այդպիսի վախճանի չարժանացան, այլ հանկարծամահ եղան: Աստված քեզ հնարավորություն տվեց ունեցվածքի վերաբերյալ պարզաբանումներ տալ մերձավորներին և կարգադրություններ անել տան ամեն ինչի մասին: Ինչպիսի՞ ներում կարող ես ունենալ, երբ դու, Նրանից ստանալով անգամ այդպիսի ողորմություն, չես օգտվում բարեգործությունից և նույնիսկ անհրաժեշտություն բերումով չես ցանկանում բարեսիրտ լինել:

Անշուշտ, ավելի լավ է և մեծ շնորհ աղքատի վիճակը թեթևացնել կենդանություն օրոք, սակայն եթե դու չես ցանկացել անել այդ, ապա մեռնելիս գոնե մի փայլուն բան արա, թեկուզև այն սիրուց մեծ չէ, այնուամենայնիվ, բարի գործ է: Թեպետև դու ոչխարների մեջ չես զբաղի առաջին տեղը, բայց պակաս կարևոր չէ և այն, որպեսզի ծայրահեղ դեպքում կարող ես լինել նրանց, քան այծերի հետ: Եթե դու անգամ այդ չես անի, ապա դրանից հետո արդարացման ի՞նչ խոսք կարող է լինել, որ փրկի քեզ կախաղանից:

Երբ ապրում էիր, այնպես էիր կաչում հարստությանը, կարծես թե անմահ էիր, իսկ հիմա, երբ զգացիր, որ մահկանացու ես, ծայրահեղ դեպքում հիմա զանց արա այդ մոլորությունը և որպես մահկանացու դատիր քո ունեցվածքի մասին: Թեպետև ծանր և միանգամայն ահավոր է ասել այն, ինչ հարկավոր է ասել, այնուամենայնիվ, պետք է ասել. համադասիր քո Տիրոջը ծառաներից հետ միասին: Դու ազատում ես քո ծառաներին: Ազատիր Քրիստոսին սովից, կարիքից, բանտից և մերկությունից:

Լսելով սա՝ դու սարսափում ես: Հետևաբար, ավելի սարսափելի է, որ հենց այդ չես անում: Ահա և այստեղ

այդպիսի խոսքը ստիպեց քեզ շփոթվել. հապա ի՞նչ կասես այնժամ, երբ կհեռանաս այնտեղ, կլսես ավելի ծանր խոսքեր և կտեսնես անտանելի տանջանքներ: Ու՞մ մոտ կվազես: Ու՞մ կկանչես որպես քեզ դաշնակից ու օգնական: Աբրահամի՞ն: Բայց նա քեզ չի լսի: Հորդ կամ պապի՞դ: Բայց նրանցից ոչ ոք, որքան էլ սուրբ լինեն, անզոր են փոխել այդ դատավճիռը: Սակայն դու անմարդկային ես, դատան ու անխիղճ: Ամաչի՛ր մուրացողի արժանապատվությունից: Բայց քեզ այդ արժանապատվությունը չի ամաչեցնում:

Խոնարհվի՛ր դժբախտության առջև: Բայց դժբախտությունն էլ քեզ չի հակում գլխարտության: Խնդրանքին թեթև իրագործելիության տեսք տուր: Իսկ եթե ո՛չ արժանապատվությունը, ո՛չ ծայրահեղ կարիքը, ո՛չ ողորմության թեթևությունը չեն կարող քեզ համոզել, ապա կարիքավորներին տուր՝ թեկուզ հանուն ավետյաց բարիքների վե՛հություն: Ի՞նչ ներում կլինի նրանց, ովքեր այդքան հորդորներից հետո կարիքավորներին անօգնական են թողնում: Թող լսեն խորհրդի նվիրակները. Քրիստոս, երբ պետք է կերակրի քեզ, չի խնայում անգամ սեփական մարմինը, երբ պետք է խմեցնի, չի խնայում արյունը, իսկ դու նույնիսկ հաց և ջուր չե՞ս տալիս: Եվ ինչպիսի՞ թողութուն կունենաս դու, որ ստանալով այդքան պարզևներ՝ ժլատանում ես այդքան չնչին բաներում: Չէ՞ որ դու այստեղից հարստությամբ չես հեռանա, քանի դեռ չես տվել հանուն Քրիստոսի, եթե չմեռնես հանուն Քրիստոսի: Նա քեզնից պահանջում է այն, ինչ դու տալու ես առանց Նրա պահանջի, որովհետև մահկանացու ես: Նա ցանկանում է, որ քո կամքով անես այն, ինչ պարտավոր ես անել և ըստ անհրաժեշտության: Ինչ քեզ անպայման անհրաժեշտ է տանել, նախընտրիր տանել հանուն Ինձ, միայն թե այդպի-

սի մտադրութիւն լինի, և ես կհամարեմ բավարար հնազանդութիւն:

Մի՞թե հանդուրժելի է, որ, երբ Աստված հանուն քեզ անգամ Որդուն մատնեց, դու նույնիսկ հաց չես տալիս Նրան, որ դավաճանվեց հանուն քեզ, որ մատնվեց հանուն քեզ: Հանուն քեզ Հայրը չխնայեց Որդուն, և ընդ որում՝ ճշմարիտ Որդուն, իսկ դու արհամարհում ես քաղցից տանջվողներին, և ընդ որում՝ երբ պարտավոր էիր ծախսել Նրա իսկ բարիքներից, ծախսել հենց հանուն քեզ: Եվ ի՞նչը կարող է այդպիսի անօրինութիւնից վատը լինել:

Հանուն քեզ Նա մատնվեց, հանուն քեզ դավաճանվեց, հանուն քեզ չըջեց փափագելով, որպեսզի դու, տալով Նրա իսկ բարիքներից, ինքդ օգուտ ստանայիր և, այնուամենայնիվ, չե՞ս տալիս: Ավելի անզգա չե՞ս ցանկացած քարից, երբ այդքան դրդիչներ քեզ մղում են ողորմութեան, իսկ դու համառում ես այդ դիվական դաժանութեամբ: Եթե, ասում է, դու չես վարձատրում ինձ, որ ես տառապեցի քեզ համար, ապա զթա հանուն աղքատութեան, եթե չես զթում հանուն աղքատութեան, ապա զթա հանուն հիվանդութեան, խղճա հանուն շղթաների, եթե այդ անգամ քեզ կարեկից չի դարձնում, խոնարհվիր հանուն խնդրանքի հեշտութեան. չէ՞ որ Նա այլ բան չի խնդրում, որ մեծ գոհողութիւններ է պահանջում, այլ միայն հաց, տանիք և խոսքի մխիթարութիւն:

Եթե այդքանից հետո էլ դեռ խստասիրտ ես մնում, ապա ներողամիտ եղիր գոնե հանուն արքայութեան: Սակայն նույնիսկ դա քեզ չի՞ վերաբերում: Այդժամ գոնե կարեկցիր բնութեանը, տեսնելով մերկին՝ հիշիր այն մերկութիւնը, որով մերկացա ես հանուն քեզ խաչ բարձրանալիս: Եթե չես ցանկանում այդ մասին հիշել, ապա հիշիր գոնե այն մեկի մասին, որով մերկացա հանուն աղքատների: Չեմ ասում՝

սում՝ փրկիր ինձ աղքատութիւնից, չեմ ասում՝ ինձ հարստութիւն տուր, այլ միայն հաց եմ խնդրում, հագուստ և քաղցից փոքր-ինչ թեթևութիւն. եթե բանտ ընկնեմ, չեմ ստիպելու արձակել և ազատել կապանքներից, այլ միայն մի բան եմ փնտրում, որպեսզի դու այցելես բանտարկյալին հենց քեզ համար, և ես կստանամ սիրո միանգամայն բավարար պարգև:

Անշուշտ, ես կարող եմ առանց այդ էլ քեզ պսակել, սակայն ցանկանում եմ նաև քեզ պարտապան լինել, որպեսզի պսակը որևէ պտուղ և շնորհ տա քեզ: Ահա թե ինչու, թեպետև ինքս կարող էի կերակրել ինձ, ես պտտվում եմ մուրացկանի պես և, կանգնելով քո դռների առաջ, մեկնում եմ ձեռքս՝ ցանկանալով կերակրվել քեզանով: Եվ ես պարծենում եմ զրանով, որպեսզի ժամանակին փառաբանեմ քեզ ողջ աշխարհի առաջ, և ի լուր հայտարարեմ իմ կերակրողին:

Դուք, որ կերակրվում եք որևէ մեկի կողմից, ամաչում եք զրանից ու թաքցնում, իսկ ես այնքան ուժգին եմ սիրում ձեզ, ձեր գործերի մասին հայտարարում եմ մեծ գովասանքներով, թեկուզև դուք լուրիս լինեք, և չեմ ամաչում ասել, որ դուք հագցրիք մերկիս, կերակրեցիք սովածիս, ընդհակառակը՝ անգամ պարծենում եմ զրանով, որպեսզի դուք հոգակվեք երկնային արքայութեան ժառանգներ:

Ուրեմն, սիրելիներ՛րս, խորհելով այդ մասին, պետք է ջանադրաբար հոգ տանենք մեր փրկութեան մասին, որպեսզի հասու լինենք նաև հավիտենական երանութեանը, մեր Տեր Հիսուս Քրիստոսով, Որին փառք հավիտյանս հավիտենից. Ամեն:

ԵՐԵՄԱՆԵՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Խնդրում և աղաչում եմ ձեզ, սիրելիներս, եկեք մեծ խնամքով վերաբերվենք մեր երեխաներին ու ամեն կերպ հոգ տանենք նրանց հոգու փրկության մասին: Ընդօրինակեք երանելի Հոբին, ով վախենալով նրանց մտովի մեղսագործությունից, նրանց համար զոհեր մատուցեց և երևան բերեց մեծ հոգատարություն, ընդօրինակեք Աբրահամին, որ նույնպես ձեռ ու ոտ էր ընկնում հարստության և ունեցվածքի համար, այլ հոգ էր տանում աստվածային օրենքների մասին, թե ինչպես դրանք պահպանել և անվնաս ժառանգել սերունդներին:

Եվ երբ Դավիթը մեռնում էր, ապա մեծ ժառանգություն թողնելու փոխարեն, նա կանչեց իր որդուն, նույնը ներշնչեց և հանգամանորեն ասաց, որ եթե կցանկանաս, տղաս, ապրել Աստծո օրենքներով, ոչ մի անսպասելի բան չի պատահի քեզ հետ, քո բոլոր գործերը կընթանան ըստ ցանկության, ապա մեծ ապահովություն կունենաս, իսկ եթե զրկվես այդ օգնությունից, ապա ոչ մի օգուտ չես ունենա թագավորությունից ու այդ մեծ իշխանությունից: Չէ՞ որ, երբ բարեպաշտությունը բացակայում է, ապա այն հարստությունը, որ կա, ոչնչանում է վտանգով և ծայր խայտառակությունը, իսկ եթե առկա է, ապա այն բաները, որոնք չկան, գալիս են:

Այդ պատճառով ծնողները չպետք է մտածեն այն մասին, թե ինչպես իրենց զավակներին արծաթով ու ոսկով հարստացնեն, այլ այն մասին, թե ինչպես նրանք դառնան բոլորից հարուստ բարեպաշտությամբ, իմաստությամբ և

առաքինության ինչքով, որքան էլ նրանք շատ բաների պակասություն ունենան, կենսական ու պատանեկան ինչպիսի հրապուրանքներ էլ որ ունենան: Եվ ջանադրաբար հարկավոր է քննել նրանց ներս ու դուրս անելը, նրանց զրույցներն ու հավաքները, իմանալով, որ եթե դրանք մերժելի են, ապա Աստծուց ոչ մի վարձատրություն չեն ստանա:

Չէ՞ որ, եթե մեզնից հաշիվ է պահանջվում ուրիշներին հոգ տանելու համար, իսկ ասված է՝ «ոչ ոք միայն իրենն թող չփնտրի, այլ նաև ընկերոջին» (Ա Կորնթ. 10, 24), ապա որքան ավելի է պահանջվելու երեխաների համար: Իսկ դու ամեն ինչ անում և ձեռնարկում ես, որպեսզի նրանք գեղեցիկ ձի ունենան, հրաշալի տուն, մեծարժեք հողեր, իսկ որպեսզի հոգին լավը լինի և ունենա բարի կամք, դու ամենևին ուշադրություն չես դարձնում:

Թեկուզև մեկի ունեցածը մեծ և թանկարժեք լինի, բայց եթե նա լի չէ դա առաքինաբար տնօրինելու եռանդով, ամեն ինչ կոչնչանա և նրա հետ կվերանա. իսկ երբ հոգին ազնվաբար է և իմաստությամբ լեցուն, ապա տանը թեկուզ ոչինչ կուտակած չլինի, աներկյուղ կարող է տիրանալ ցանկացած բարիքի:

Իսկ որ ծնողներից շատերը շատ բան են քաշում երեխաների ձեռքից, ապա դա նրանից է, որ չեն ցանկանում քոթակել, խոսքով խելքի բերել և դառնացնել անառակ ու անօրեն կյանքով ապրող իրենց զավակներին, այդ պատճառով քիչ չի պատահում, որ նրանք ականատես են լինում, թե ինչպես են վերջիններս հայտնվում ծայր դժբախտություն մեջ, քարչ են գալիս դատարաններում, և դահիճները կտրում են գլուխները:

Իսկապես, երբ ինքդ չես դաստիարակում, երբ ինքդ խելքի չես բերում, ապա նա, միանալով սրիկաներին ու

փչացած մարդկանց խմբին ու մասնակից լինելով նրանց անառակություններին, կարգի է հրավիրվում հասարակական օրենքներով և պատժվում բոլորի աչքի առաջ, իսկ մահապատժին հետևում է ավելի մեծ խայտառակություն, որովհետև նրա վախճանից հետո բոլորը մատնացույց են անում հորը, որն ամաչում է անգամ շուկայում երևալ: Ի՞նչ էրեսով նա պիտի երևա իրեն հանդիպողներին իր զավակի այդպիսի խայտառակությունից ու դժբախտությունից հետո: Ի՞նչը կարող է անմտությունից ավելի վատը լինել:

Ասա ինձ, մի՞թե քեզ համար ամոթ է և չես կարմրում, երբ դատավորը պատժում ու խրատում է քո որդուն, իսկ վերջինս, կյանքի սկզբից այդքան ժամանակ ապրելով քեզ հետ, կարիք ունի օտար մեկից դաստիարակվելու: Մի՞թե ցանկություն չես ունենում փակվելու և թաքնվելու: Բայց դու, այնուամենայնիվ, ասա՛ ինձ, դեռ հանդգնո՞ւմ ես քեզ հայր անվանել, որ այդ կերպ մատնեցիր որդուդ՝ նրան անհրաժեշտ օգնություն ցույց չտալով և ուշադրության չառնելով այն արատները, որոնք նրա կործանման պատճառ դարձան:

Երբ նկատում ես, որ ինչ-որ օտարական քո երեխայի ականջակոթին է հասցնում, դու վրդովվում ես, զայրանում, չարանում և գազանային ցասումով ապտակում ես հարվածողին, իսկ երբ նկատում ես, թե ինչպես է ամեն օր սատանան քո որդու ականջին փսփսում, թե ինչպես են դեերը նրան արատավորում, դու հանդիստ քնում ես, չես վրդովվում, չես զայրանում, որդուդ չես փախցնում ամենասարսափելի գազանից: Եվ ի՞նչ մարդասիրության կարող ես արժանանալ: Մի՞թե անխելքություն է, որ դու, երբ որդիդ դիվահարվում է, վազ ես տալիս բոլոր սրբերի մոտ, հոգնեցնում ես լեռների գագաթներին ապրող մարդկանց, որ-

պեսզի լուր ազատեն նրան դիվահարությունից, իսկ երբ նրան անընդհատ ճնշում է մեղքը, որ ավելի ծանր է ցանկացած դեկից, դու ոչինչ չես ձեռնարկում:

Մանավանդ ոչ մի ծանր բան չկա դեկից տանջվելու մեջ, որովհետև դեռ բոլոր դեպքերում չի կարող դժոխք տանել, իսկ եթե մենք սթափվելու լինենք, երախտագիտությամբ կտանենք այդպիսի հարձակումները, այդ փորձությունը կարող է մեզ անգամ լուսավոր փառապսակի արժանացնել, իսկ ով կյանքն անցկացնում է անառակության մեջ, ապա նա երբեք չի կարող փրկվել, նա անխուսափելիորեն այստեղ նույնպես արժանի է անարգման, իսկ այստեղի կյանքից հեռանալու դեպքում այնտեղ նույնպես կարժանանա հավիտենական պատժի:

Ի վերջո, ինչո՞վ կարող ես արդարանալ: Ի սզբանե երեխաներին Քեզ հետ ապրել չվերապահեցի՞՞ դեռ կասվի քեզ: Նրանց գլխին քեզ ուսուցիչ կարգեցի, դաստիարակ, խնամառու և ղեկավար, նրանց վրա ողջ իշխանությունը քո ձեռքը չտվեցի՞: Այդքան քնքուշ էակին չկարգադրեցի՞՞ մշակվել ու կարգավորվել: Ի՞նչ արդարացում կստանաս, եթե անհոգությամբ նայես նրա թռչկոտումներին: Ի՞նչ կասես: Թե՞ նա անզուսպ և սանձարձակ է:

Բայց հարկ էր, որ այդ ամենին հենց սկզբից հետևեիր՝ սանձեիր, երբ նա դեռ փոքր էր ու սանձի ենթակա, ջանադրությամբ ուսուցանել, անհրաժեշտ ուղղությամբ տանել, զսպել նրա հոգեկան պոռթկումները, երբ նա դեռ ավելի ընկալունակ էր ազդեցությունների նկատմամբ, մոլախոտը այն ժամանակ պիտի հանել, երբ տարիքը դեռ փխրուն է, և հեշտ է դուրս քաշվում, ահա այդ ժամանակ անուշադրության մատնված կրքերը չէին ուժգնանա ու անուղղելի չէին դառնա:

Ուրեմն, ինչպիսի՞ն ենք մենք պատկերացնում թողություն-

յունը, երբ Աստված չի խնայում անգամ երեխաների կյանքը այն դեպքերում, երբ նրանք մեզ վիրավորում են. «Ով որ վատաբանի իր հորն ու իր մորը, մահապատժի թող ենթարկվի» (Ելք, 21, 17), իսկ մենք նույնիսկ չենք բարկանում նրանց վրա, երբ անարգում են Աստծուն:

Ես, ասում է, չեմ հրաժարվի անգամ մեռցնել, երբ նա քեզ վիրավորում է, իսկ դու չես համարձակվում նույնիսկ խոսքով դառնացնել, երբ նա ոտնահարում է Իմ օրենքները: Ինչպիսի՞ ներողամտություն կարող է արժանանալ սա:

Այդ պատճառով չպետք է անտարբեր լինել երեխաների նկատմամբ, իմանալով, որ եթե նրանք իրենց լավ պահեն Աստծո հետ ունեցած հարաբերություններում, ապա հարգված ու փառաբանված կլինեն ներկա կյանքում: Բոլորը մեծարում և հարգում են նրան, ով ապրում է առաքինի ու ազնիվ կյանքով, թեկուզև նա բոլորից աղքատ լինի, ճիշտ այնպես, ինչպես բոլորը անառակին նայում են խորշանքով ու ատելությամբ, թեկուզև նա մեծահարուստ լինի:

Ով անփուլթ է իր երեխաների հանդեպ, նա, թեկուզև մյուս հարցերում լավ և կարգին մարդ լինի, միևնույն է, այդ մեղքի համար արժանանալու է ծանրագույն պատժի: Իսկ եթե ուզում եք ճիշտն իմանալ, որ նույնիսկ այն ժամանակ, երբ մեր մյուս գործերը գտնվեն կարգին վիճակում, իսկ երեխաների փրկություն մասին հոգ չտանենք, մենք կենթարկվենք ծանրագույն պատժի, այնպես որ, ջանադրաբար ահանջ դրեք, ինչ հիմա կասվի:

Հրեաներն ունեին մի ոմն քահանա, խոնարհ ու բարեպաշտ մի մարդ, նրա անունը Եղիա էր, նա երկու որդիների հայր էր, տեսնելով, որ նրանք դեպի չարն են գնում, չի զսպում ու չի խոչընդոտում, ավելի ճիշտ ասած՝ և՛ զսպում, և՛ չի խանգարում, այսինքն ողջ ջանադրությամբ

չի անում՝ չի պատժում, այլ փորձում է, խոսքով հասկացնելով, նրանց չեղել անառակությունից ու մշտապես ասում է այսպիսի խոսքեր. «Մի՛ արեք որդյակներ, իմ լսած լուրը բարի չէ» (Ա. Թագ. 2, 24):

Ճիշտ է, այդ խոսքերն էլ բավական կլինեին նրանց ուղղելու համար, բայց քանի որ նա ամեն ինչ չէր անում, ինչ հարկավոր էր, ապա Աստծուն հանեց իր և որդիների դեմ և, անբարեպատեհ խնայելով և՛ իրեն, և՛ երեխաներին, երեխաների հետ միասին կորցրեց սեփական փրկությունը:

Բացի երեխաների հանդեպ ունեցած անփութությունից, Աստված ոչ մի բանում չէր կարող մեղադրել ծերունուն: Իսկ եթե Աստված նրան ողջ տնով խորտակեց, նրան, որ թեթև մեղք ուներ, առանց պատժի կթողնի՞ նրանց, ովքեր ավելի ծանր մեղք են գործում: Եթե նա, որ քահանա էր, որ ծեր մարդ էր, որ նշանավոր էր, որ քսան տարի բարեպաշտորեն ղեկավարում էր հրեա ժողովրդին, եթե այդ ամենը անգոր եղան արդարացնել նրան, այլ ծանրագույն դժբախտություն մատուցեց այն պատճառով, որ ջանադիր հոգատարությամբ չզբաղվեց երեխաներով, և նրա անփութություն մեղքը, ինչպես դաժան վիթխարի ալիք, ամեն ինչ ավերեց և բոլոր ծառայությունները մոռացություն մատնեց, ապա ինչպիսի՞ պատիժ է սպասում մեզ, որ և՛ բարեպաշտությամբ ենք զիջում նրան, և՛ երեխաներին ոչ միայն չենք դաստիարակում, այլև նրանց վերաբերվում ենք ցանկացած բարբարոսից էլ ավելի դաժան:

Նման այն բանին, որ որևէ մեկը չի կարող իր սեփական մեղքերին արդարացում և ներողամտություն փափագել, այդպես և ծնողները իրենց զավակների հարցում: Եվ դա շատ ճիշտ է: Եթե մեղքը մարդուն հատուկ լիներ բնութայամբ, ապա ուրիշ մեկը իրավացիորեն կարող էր արդարացման հույս ունենալ, իսկ քանի որ մենք մեր բարի կամ-

քով ենք լինում չար և բարի, ապա ինչպիսի՞ բարեհույս ուղի կարող էր ցույց տալ նա, ով թույլ է տալիս իր ամենասիրելիներին (երեխաներին) փչանալ ու անառականալ:

Այնպես որ, զավակներիդ հարստությունն մի ժառանգիր, այլ բարեպաշտություն: Եվ մի՞թե ծայր անմտությունն չէ, որ քանի դեռ ողջ են, նրանց չեն հանձնում իրենց ունեցվածքի տնօրինումը, այլ մեռնելիս են մեծ ազատություն տալիս թեթևամիտ պատանեկությունը: Ողջ լինելով, ծայրահեղ դեպքում կարող էինք նրանցից հաշիվ պահանջել, իսկ երբ հիմար ձևով օգտվելու լինեին, խելքի բերել ու սանձել, իսկ երբ մեռնեք, ապա մեզինից զրկելով և նրանց տնօրինության տակ թողնելով երիտասարդությունն ու հարստությունը, նրանց մղում ենք անհաշիվ աղետների ու դժբախտությունների անդունդ:

Այդ պատճառով պետք է ձգտենք ոչ թե այն բանին, որ պեսզի նրանց թողնենք հարուստ վիճակում, այլ այն բանին, որպեսզի բարեպաշտներ լինեն: Չէ՞ որ եթե նրանք հարստության հույս փայփայեն, ապա ոչ մի այլ բանի մասին չեն մտածի, որովհետև փողի լիությունը նրանց աչքին կնսեմացնի իրենց բարքերի արատավոր լինելը, իսկ եթե տեսնեն, որ այդ կողմից լրիվ զրկվել են մխիթարությունից, ապա ամեն ինչ կձեռնարկեն, որպեսզի առաքիլության օգնությամբ մեծ մխիթարություն գտնեն աղքատության մեջ: Ուրեմն, չենք սկսի զբաղվել մասնավոր կամ հասարակական գործունեությամբ ավելի շուտ, քանի դեռ նրանց հոգիներին ուղղություն չենք տվել: Եթե դուք դաստիարակում եք ձեր զավակներին, ապա նրանք իրենց հերթին դաստիարակում են իրենց զավակներին, իսկ այս վերջիններն էլ վերստին կսովորեցնեն իրենցիներին՝ այդպես շարունակելով մինչև Քրիստոսի գալուստը, և այդ գործի ողջ պարզևը կհասնի նրան, ով ծառայել է արմատներին:

Եվ իրոք, եթե լավ ես դաստիարակել երեխային, իսկ նա՝ իր որդուն, իսկ սա՝ իրենին, և մինչև վերջին սահմանը կարծես թե ձգվում է ինչ-որ շղթա և անցած կյանքի հետևողականություն, որ սկիզբ ու արմատ է առնում քեզինից և սերունդների ջանքով քեզ էլ հասցնում է իր պտուղները: Իսկ այն հայրերը, որոնք հոգ չեն տանում իրենց զավակների պարկեշտության ու համեստության մասին, մանկասպաններ են և ավելի դաժան, քան մանկասպանները, քանի որ այստեղ խոսքը վերաբերում է հոգու կործանմանն ու մահվանը:

Այդ պատճառով նման այն բանին, երբ տեսնում ես, որ եթե ձին տանում է դեպի անդունդ, ցած ես նետվում ու բռնում նրա սանձից ու ողջ ուժով ձգելով՝ ստիպում ծառս լինել, երբեմն նաև հարվածելով, ինչը այլ բան չէ, քան պատիժ, բայց չէ՞ որ պատիժը փրկության մայրն է, ճիշտ այդպես վարվիր զավակներիդ հետ, եթե նրանք մեղք են գործում. կապկպիր մեղսագործին, քանի դեռ Աստծո գուլթը չես շարժել, նրան արձակ մի թող, որպեսզի առավել ևս հարկ չլինի կապել Աստծո բարկությունը:

Եթե դու կապես, Աստված այնուհետև չի կապի, իսկ եթե չկապես, ապա նրան սպասում են անճառելի շղթաներ: Բայց կասեն, թե նա բավական ժամանակ պատժվել է: Հարցնում եմ՝ ինչքա՞ն: Մե՞կ տարի, երկու՞, երե՞ք: Սակայն ես պահանջում եմ ոչ ժամանակի տևականություն, այլ՝ հոգու ուղղում, դու այն ասա՝ արդյոք, զղջացե՞լ է, փոխվե՞լ է, ամեն ինչ կատարե՞լ է, եթե այդպես չէ, ապա ոչ մի օգուտ չկա ժամանակից:

Այսպես, մենք պահանջում ենք ոչ թե հաճախական վիրակապում, այլ որպեսզի վիրակապումը ինչ-որ օգուտ տա, եթե այն օգտակար է եղել շատ կարճ ժամանակում, ապա այլևս չի դրվում, իսկ եթե ոչ մի օգուտ չի տվել, ապա տա-

սը տարի անց էլ դեռ պետք է դրվի՝ ահա կապված թողնելու ժամկետը՝ օգուտը:

Եվ ոչինչ այդպես չի առաջարկում իշխանությունն ունեցողը, քան ջերմագին սեր առ ենթակաները: Եվ հայր դարձնում է ոչ միայն այն, որ նա ծնել է, այլև այն, որ ծնվածին սիրում է: Եթե բնությունն ուրտում սերն անհրաժեշտ է, ապա առավել ևս՝ վերին օգնությունն ուրտում:

Իսկ դու, մանկիկ, հնազանդիր քեզ ծնողին, ինչպես ծառան (տիրոջը): Ինչո՞վ պիտի հատուցես այն, ինչ քեզ (տվել են): Դու չես կարող քո հերթին ծնել նրանց: Նմանապես, երբ հայրդ խրատում է եղբորդ, նրա հետ զայրացիր նաև դու՝ կամ եղբորդ նկատմամբ ունեցած հոգատարությունից, կամ հորդ նկատմամբ եղած կարեկցանքից, որովհետև եթե մեղավորը տեսնի, որ հայրն իրեն պատժում է, իսկ դու քաջալերում ես, նա ավելի անփուլթ կդառնա և վնասը միայն նրանով չի վերջանա, իսկ դու քեզ վրա կվերցնես հատուցումը:

Այդպես նաև նա, ով խոչընդոտում է վերքի բուժմանը շատ ավելի պատժի է արժանի, քան նա, ով հասցրել է (վերքը), որովհետև նույն բանը չէ՝ վիրավորել և խանգարել վերքի բուժմանը, վերջինը վերջնականապես հանգեցնում է մահվան, իսկ առաջինը՝ ոչ այնքան:

Եկեք անհարգալից չլինենք ծնողների նկատմամբ, որովհետև եթե նրանց հարգանքով չվերաբերվենք, ապա ղեկավարությունն առջև ունեցած վախից անպայմանորեն ստիպված էք լինելու հնազանդվել, իսկ եթե մեղք գործելով կարհամարհենք նրանց, ապա ոչ մի դեպքում չենք կարող խուսափել խղճի խայթից. եթե դրան էլ բանի տեղ չզննք ու մերժենք, ապա ստիպված կլինենք ուղղվել հանրային կարծիքի նկատմամբ ունեցած երկյուղից, եթե սա էլ հեղինակությունն չէ, ապա մենք, հակառակ մեր կամքի, ի վիճակի

ենք լինելու նրան խելքի բերել օրենքի նկատմամբ եղած վախով:

Նման այն բանին, որ այն դեպքում, երբ պատժվում են չարագործները, մյուսները ավելի լավն են դառնում, այդպես էլ այն դեպքում, երբ ոմանք ճիշտ են վարվում, շատերը ձգտում են ընդօրինակել նրանց:

Եվ երեխան, քանի դեռ գտնվում է խիստ դաստիարակի հսկողություն տակ, զարմանք չի հարուցում, թեկուզև խոնարհ լինի, թեկուզև պարկեշտ կյանքով ապրի, սակայն պատանու խոնարհությունը վերագրում են դաստիարակի նկատմամբ ունեցած վախին, իսկ երբ դրա անհրաժեշտությունը (դաստիարակի) վերանում է, իսկ երեխան շարունակում է պահպանել միևնույն մաքուր բարքերը, այնժամ բոլորը հենց նրան են վերագրում նաև նախորդած տարիքի խոնարհությունը:

Այդ պատճառով հարկ է դաստիարակներին ավելի գնահատել ու սիրել, քան հայրերին. այս վերջիններից պարզապես կյանքն է սկիզբ առնում, իսկ դաստիարակներից՝ լավ կյանքը: Եվ եթե հայրդ իր ողջ կյանքում սուրբ է եղել, մի փքվիր, հենց դա քեզ համար դատապարտման առիթ կհանդիսանա, երբ տանն ունենալով ազնվաբարոյություն օրինակ՝ դու քեզ նախահայրերիդ առաքինության հանդեպ անվայելուչ ես պահում:

Մեծ բարիք է, անմիջական բարի արարքներով փրկվելու հույս ունենալ, որովհետև այնտեղի կյանքում ոչ մի դեպքում ոչ մի ընկեր քեզ չի պաշտպանի: Եթե այստեղ Երեմիային ասվում է՝ մի խնդրիր այդ ժողովրդի համար, այստեղ, ուր ենթակա ենք փոփոխման, ապա առավել ևս այն կյանքում:

Այսպիսով, նախնիների գովաբանումը նշանակում է նաև մեզ գովաբանել, իսկ եթե ոչ՝ նշանակությունն չունի,

նույնիսկ դատապարտման մեծ կարիք ունի: Թե ինչպես, լսիր ասեմ. Դավիթը Աբիսողոմ անուհով որդի ունեւր՝ մի անուղղելի ու անառակ պատանի, նա, ընդդիմանալով Հորը, նրան զրկում է թագավորութիւնից, տնից և հայրենիքից, նրա փոխարեն տիրում է ամեն ինչին. նա ուշադրութիւն չի առնում ո՛չ բնութիւնը, ո՛չ դաստիարակութիւնը, ո՛չ տարիքը, ո՛չ այն, ինչ դրանից առաջ ստացել էր, ու այնքան դաժան ու անմարդկային էր, ավելի շուտ գազան էր, քան մարդ, որ, ավերելով բոլոր այդ խոչընդոտները, անամոթաբար ոտնատակ տվեց բնական բոլոր օրենքները և ամենուր խռովութիւն և սարսափ տարածեց: Չէ՞ որ նա պետք է հարգանքով վերաբերվեր եթե ոչ որպէս հոր, ապա գոնե որպէս ծերունու, եթե քամահարում էր ծերութիւնը, ապա գոնե պետք է ամաչեր որպէս բարեգործի, եթե նաև ոչ այս, ապա գոնե որպէս ոչ մի անարդարութիւն չարած մարդու: Սակայն իշխանամոլութիւն կիրքը արտաքսել էր այս կարգի ամոթները և նրան դարձրել էր գազան:

Եվ Դավիթը՝ այդ երանելին, որ ծնել էր նրան ու դաստիարակել, շրջում էր անապատում թափառականի և փախստականի նման, ճիշտ ինչպէս աքսորական, որ պատժվել է աքսորով և դրա հետ կապված ձախորդութիւններով, իսկ նա, այնինչ, վայելում էր հայրական բարիքները:

Երբ հանգամանքներն այդպիսին էին, երբ նրա բանակն արդեն պատրաստ էր, իսկ քաղաքները գտնվում էին տիրակալի իշխանութիւն տակ, ոմն Քուսի, մի բարի մարդ և Դավթի ընկերը, որ չնայած ժամանակները փոխվել էին, պահպանել էր բարեկամեցողութիւնը, երբ տեսնում է, որ Դավթը թափառում է անապատներում, հագուստները պատառոտում է և գլխին մոխիր ցանում, դառնապէս հեծեծում է և կարեկցանքով աղաղակում. նա մխիթարանքի

արցունքներ է թափում, որովհետև այլ բան անել չէր կարող: Նա ո՛չ ժամանակներն է ո՛չ էլ իշխանութիւն, այլ առաքինութիւն ընկերն էր, այդ պատճառով, երբ իշխանութիւնը կորչում է, նա բարեկամութիւնը չի դավաճանում:

Եվ ահա՝ տեսնելով, որ Քուսին այդպէս է վերաբերվում, Դավթն ասում է. դա իսկական ընկերոջ պահվածք է և մեր նկատմամբ անկեղծ վերաբերմունքի, սակայն մեզ ոչ մի օգուտ չի բերում, իսկ ի՞նչ խորհուրդ կտաս ձեռնարկելու, որպէսզի սարսափները վերջ ունենան և ես ինչ-որ ելք գտնեմ դժբախտութիւնից:

Սա ասելով՝ Դավթը Քուսինն առաջարկում է այսպիսի միտք. դնա, ասում է, իմ որդու մոտ, ընկեր ձևացիր, խափանիր նրա մտահղացումները և անպիտան դարձրու Աքիտոփելի խորհուրդները: Իսկ այդ Աքիտոփելը մեծ ազդեցութիւն ուներ տիրակալի վրա, Աբիսողոմի մերձավորներից էր, զինական գործերում բավական հմուտ, կարողանում էր առաջնորդել և մարտնչել, այդ պատճառով Դավթը նրանից ավելի շատ էր վախենում, քան որդուց, այնքան որ սա վտանգավոր էր խորհուրդներով:

Լսելով սա՝ Քուսին հնազանդվում է, ոչ մի փոքրողութիւն ու վախ չի ցուցաբերում, և չի ասում. իսկ եթե բռնե՞ն: Ի՞նչ կլինի, եթե դիմակս պատուի ու բացահայտվի: Իսկ եթե կեղծիքը բացվի՞: Անշուշտ, Աքիտոփելը խորամանկ է, նա կարող է մերկացնել ու բացահայտել, իսկ ես ապարդյուն ու անիմաստ կմեռնեմ:

Ոչ մի այդպիսի բան նա չի մտածում, ճանապարհ է ընկնում Աբիսողոմի բանակ և ապավինելով Աստծուն՝ նետվում է վտանգի մեջ: Երբ մտնում է քաղաք, ապա տեսնելով մոտեցող տիրակալին՝ ընդառաջում է, իսկ սա, նրան հանկարծ նկատելով և արբած լինելով իշխանամոլութիւնով, ամենևին չի սկսում մարամասնորեն քննել Քուսիի

բանը, այլ ծաղրանքով ու հանդիմանանքով ասում է. գնա ընկերոջդ մոտ՝ ատելության և մեծ թշնամանքի պատճառով նույնիսկ չհիշատակելով հոր անունը:

Իսկ Քուսին, ամենևին չչփոթվելով և չտազնապելով, գիտե՞ք, ինչ է ասում: Երբ Աստված նրա հետ էր, ասում է նա, ես նրա կողքին կանգնած էի, իսկ երբ հիմա՝ նա քեզ հետ է, բնական կլինի քեզ ծառայելը:

Այս խոսքերը շոյում են տիրակալին և հպարտությամբ լցնում, և խորապես չքննելով (չէ՞ որ թեթևամիտ մարդը, որ գերազանցել է իր հակառակորդներին, հավատում է ցանկացած խոսքի), նրան մտցնում է մերձավորների մեջ և կարգում առաջին դասի ընկերների շարքը: Այս ամենը կազմակերպում է Աստված, որ այնտեղ էր և ընթացք էր տալիս իրադարձություններին:

Եվ, վերջապես, երբ կազմվում է գինական խորհուրդը, և տարբեր կողմերից տարբեր կարծիքներ են առաջարկվում առ այն, թե հիմա հարձակվե՞լ, թե՞ փոքր-ինչ սպասել, որպես խորհրդատու հանդես է գալիս այն նույն Աքիտոփելը՝ ու կարծիք հայտնելով՝ այսպիսի խորհուրդ է տալիս. քանի դեռ հայրդ այս պահին շփոթահար ու վախեցած է, մենք կհարձակվենք նրա վրա և, այդպիսով թույլ չտալով, որ նա ուշքի գա, կկործանենք, եթե մենք հիմա հարձակվենք նրա վրա, երբ պատրաստ չէ, ապա մենք ոչ մի դժվարություն չենք ունենա:

Լսելով սա՝ Աքիտողոմը կանչում է նաև Քուսինին, որ երեսպաշտորեն փախել էր նրա մոտ, և ասում է. նրա հետ էլ խոսք փոխանակենք, ինչը պատահեց ամենևին էլ ոչ մարդկային հետևողականության շնորհիվ, այսինքն՝ որ հենց նոր եկածը այնքան հարգված էր, հավատ ընծայող և այդպիսի գործերում արժանացել էր խորհրդակցության, այլ, ինչպես ասացի, այնժամ Աստված էր կառավարում, ու

դժվարը հեշտ էր դառնում:

Եվ Քուսինն բերվում է, իսկ Աքիտողոմը անկեղծորեն ներկայացնում է գործի էությունն, ու հարցնում է, թե ինչ է վերջինս մտածում այդ մասին: Իսկ Քուսինը: Երբեք, ասում է նա, Աքիտոփելն այդպես չէր սխալվել: Նկատու՞մ եք Քուսինի խելամտությունը: Անմիջապես նրանց առաջ կարծիք չի հայտնում, այլ սկսում է գովասանքով՝ սկզբում զարմանք է արտահայտում, որ Աքիտոփելը առաջներում տալիս էր փայլուն խորհուրդներ, ապա մերժում է առկա կարծիքը, կարծես թե ուզենալով ասել՝ ես ապշում եմ, թե նա ինչպես է սխալվում, որովհետև այդ կարծիքը հարմար չեմ համարում:

Եթե մենք հիմա հարձակվենք, ապա հայրդ, ինչպես կատաղած արջ, լի ցասումով և կյանքից հուսահատված՝ կուվելով կատաղի գայրույթով, ոչ մի ուշք չի դարձնի սեփական փրկությունը և ամեհի մոլեգնությունը կընկնի մեզ վրա, իսկ եթե մենք մի քիչ սպասենք, ապա կհարձակվենք մեծ ուժերով ու մեծ վստահությամբ, առանց դժվարության և հեշտության կբռնենք նրան՝ ինչպես ուռկանում, և կբերենք:

Աքիտողոմը գովաբանում է այդ կարծիքը և իր համար ավելի օգտակար համարում: Իսկ Քուսինն այդպես է ասում այն նպատակով, որպեսզի ժամանակ տա Դավիթին՝ փոքր-ինչ ուշքի գալու, հանգստանալու և զորք հավաքելու:

Այդկերպ բացառելով Աքիտոփելի կարծիքը՝ նա մի քանի գաղտնի ուղարկված մարդկանց միջոցով այդ ամենի մասին տեղեկացնում է Դավիթին, թե տիրակալը հավանություն է տվել իր տեսակետին, որը Դավիթին հաղթանակ է խոստանում:

Այդպես էլ լինում է, որովհետև երբ տիրակալի հետ եղածները զիջումներ են անում, պատրաստված Դավիթը

հարձակվում է և հաղթում: Աքիտոփելը, որ մեծ խելքի ու խորաթափանցության շնորհիվ գիտեր, թե վերջը ինչ է լինելու, որ Քուսիի կարծիքը կործանարար է Աբիսողոմի համար, այդ դառնությունը չտանելով, հեռանում է, օղակը վիզն է գցում և խեղդվում, և այդ ձևով ավարտում կյանքը: Ահա այդ Աքիտոփելի և Աբիսողոմի համար ասված է. «Նրա գլխին կոստիսի իր չարագործությունները» (Սաղմ. 7, 17), որովհետև պատիժն ընկնում է երկուսի գլխին էլ:

Պարանից կախվելով իր կյանքն ավարտեց Աքիտոփելը. Աբիսողոմը պարանով չի կախվում, սակայն հակառակ իր կամքի նույնպես կախվում է և անմիջապես չի մահանում, այլ ինչպես բանտում է լինում, նախապես կապվում և ամրացվում է ծառին, և վերևից որոշված Աստծո դատաստանով՝ երկար ժամանակ կախված է մնում՝ դրանից ավելի տանջելով խիղճը:

Եվ որպեսզի դու իմանաս, որ մարդկային ջանքերով դա չարվեց, այլ լիովին Աստծո դատաստանի շնորհիվ էր, ասեմ, որ սկզբում նա ծառին կապվեց մագերով, նրան դավաճանեց անբան անասունը և որպես պարան ծառայեցին մագերը, սյանը փոխարինեց ծառը, զինվորին փոխարինեց ջորին: Եվ ուշադրություն դարձրու Աստծո ողորմությունը. Աստված նրան երկար ժամանակ կախված պահեց՝ մղելով զղջման և հնարավորություն տալով փորձել հոր տրամադրությունը:

Զէ՞ որ, եթե նա գազան չլիներ և քարսիրտ, ապա այդ ամենը թույլ կտային խուսափել դժբախտ խելագարությունից՝ (նկատի ունեմ) այն սեղանը, որի շուրջը կերակրվելիս նա հնարավորություն ուներ հաղորդակցվելու հոր հետ, տունը, հավաքները, երբ իրար հետ խոսք էին փոխանակում, և մյուս բաները, որտեղ կարող էր ծնվել հաշտութունը, երբ նա սպանել էր եղբորը:

Բացի այդ, կային ուրիշ բաներ էլ, որ կարող էին մեղմացնել նրան: Նա լսում էր, որ (հայրը) շրջում է ինչպես աքսորական և փախստական, որ նա բազմաթիվ դժբախտություններ է տարել: Ինչպե՞ս նա կարող էր չհասկանալ, որ նույնիսկ հաղթանակի դեպքում իրեն՝ անիծյալին և հանցագործին, հենց հաջողության դազաթնակետին, սպասում էր դժբախտ կյանք անցկացնել: Եվ ի հավելում այդ ամենի՝ հայրը ծեր էր և վախճանը մոտ էր՝ քիչ ժամանակ ուներ ապրելու:

Որտե՞ղ են հիմա նրա դժբախտությունը ողբացողները: Այդ ի՞նչ դժբախտությունից ավելի ծանր չէ, ի՞նչ հիվանդությունից, ի՞նչ տրամոլությունից:

Բայց և այնպես, ինքն իրեն ոչ մի այդպիսի բան չասաց արդարակյացը, չհուսահատվեց, չհեծեծաց՝ ասելով. «Լավ հատուցում եմ ստանում, ես, որ վարժվում էի նրա օրենքներում գիշեր ու զօր, այդպիսի արժանապատվությունից հետո ամենանսեմ վիճակում եղա՝ շրջապատված թշնամիներով և հանձնված անսանձ որդուս ձեռք»: Ոչ մի այդպիսի բան չի ասում, չի մտածում, այլ ամեն ինչ տանում է խելամտորեն, և պատահածից միայն մի մխիթարություն ուներ՝ համոզված լինելով, որ այն կատարվել է Աստծո թողտվությունը:

Եվ ինչպես հնոցում գտնվող երեք պատանիներն են ասում. «Թող քեզ հայտնի լինի, արքա՛, որ քո աստվածները մեզ չենք պաշտում, և չենք երկրպագում քո կանգնեցրած այդ ոսկե արձանին» (Դան. 3, 18), և եթե մեկը հարցնեք նրանց, թե ի՞նչ հույսով եք մեռնում, ինչի՞ եք սպասում, ի՞նչ ակնկալիքներ ունեք մահից հետո, այս կրակից հետո հարություն հույս ունե՞ք, ապա նրանցից կլսեք, որ իրենց համար մեծագույն պարգևն այն է, որ մեռնում են Աստծո համար, ճիշտ այդպես և Դավիթը իր համար մեծագույն մխիթա-

ըուծյուն էր համարում, որ Աստված իմանալով այդ, չխոչընդոտեց:

Եվ եթե սիրողը հազար անգամ պատրաստ է մեռնել սիրելիի համար, թեպետ և մահից հետո նրանից ոչ մի սպասելիք չունի, ապա առավել ևս մենք պետք է պատրաստ լինենք զիմանալ դրան ոչ թե արքայուծյան սպասելիքով, ոչ էլ ապագա բարիքների որևէ հույսով, այլ Աստծո համար, որովհետև Նրան է պատշաճ հավիտյանս հավիտենից փառք. Ամեն:



ՄԱՀՎԱՆ ՄԱՍԻՆ

Մեր ոգին, սիրելինե՛րս, մեզ դրդում է շատ բան հասկանալ և շատ բան իմանալ, բայց ամենից կարևորը՝ վախճանի ժամանակը: Այդ պատճառով Պողոսը, մերկացնելով այդ անպատեհ հետաքրքրասիրուծյամբ բռնվածներին, ասում է. «Եղբայրանե՛ր, բայց ժամերի և ժամանակների մասին ձեզ գրել պետք չէ» (Ա. ԹԵՍԱՂ. 5, 1):

Իսկապես, ասա ինձ՝ դրանից ի՞նչ օգուտ: Եթե մենք ասենք վախճանը գալիս է քսան, երեսուն, հարյուր տարի հետո՝ ի՞նչ կա դրանում մեզ համար: Մեզինից յուրաքանչյուրի համար սեփական վախճանը իր կյանքի վերջը չէ՞: Ինչու՞ ես հոգ տանում և անհանգստանում ընդհանուր վախճանի մասին: Սակայն ինչպես մյուս դեպքերում, թողնելով սեփական գործերը, մենք մտահոգված ենք ընդհանուր գործերով և ամեն ինչի մասին ավելի խնամառու ենք, քան մեր գործերի, այդպես և այս հարցում՝ յուրաքանչյուրը, թողնելով իր սեփական վախճանի խնդիրը, ցանկանում է գիտենալ ընդհանուր վախճանի մասին:

Եթե դուք կամենում եք իմանալ, թե ինչու՛ է մեր վախճանը թաքցված մեզինից, և ինչու՛ է այն գալիս գողեգող, ես կասեմ. իմ հասկացածով, դա բարիք է: Ինչ-որ մեկը, եթե իմանա իր վերջը, ողջ կյանքի ընթացքում հոգ չի տանի բարեպաշտուծյան մասին, սակայն իմանալով իր վերջին օրը, ցանկացածը կմեռնի, նախապես գործելով բազմաթիվ հանցանքներ, և միայն դրանից հետո կզղջա:

Եթե անգամ հիմա, երբ անհայտուծյան նկատմամբ վախը բոլորի հոգուն ստիպում է թրթռալ, նրանք, այնուամենայնիվ, չարի մեջ են անցկացնում իրենց նախկին կյանքը

և միայն վերջին շնչում են գղջում, ապա որևէ մեկը երբևէ կսկսե՞ր խորհել բարեպաշտության մասին այն դեպքում, եթե վերջի մասին ունենար ստույգ տեղեկություններ:

Եթե յուրաքանչյուրն իմանար, որ վաղն անպայման մեռնելու է, նա ոչ մի մղում չէր ունենա զսպել իրեն մեկ օր առաջ և կսպաներ, ում կցանկանար, ապա վրեժ լուծելով թշնամիներից՝ ինքն իր հետ կրկին կհաշտվեր և կընդուներ վախճանը՝ նախապես հանգստացնելով հոգին:

Բացի այդ, նույնիսկ խիզախ այրերը, որ պատրաստ են ամեն ինչի, չնայած դժբախտությանը, պարզևներ չէին ստանա, որովհետև նրանք քաջ կլինեին, քայց ոչ թե մահվան առաջ. չէ՞ որ անգամ ամենածույլ մարդը իրեն կրակը կնետեր, եթե գտներ իր անվտանգության ստույգ երաշխավորին: Ով մտածում է, որ ինքը կմեռնի որևէ վտանգից, և կամ ընդհակառակը, համոզված է, որ ողջ կմնա, եթե չխիզախի, ու եթե արդեն վճռել է ընդունել մահը, այդպիսի մարդը մեծագույն վկայությունն է այն բանի, որ ինքը արհամարհում և անտարբեր է այստեղի կյանքի նկատմամբ:

Էությունը քննողը և ապագայի հույսերին ձգտողը չի կարող մահը մահ համարել և, տեսնելով մեռածին, որ ընկած է իր աչքերի առաջ, ամբոխի նման չի սկսի տառապել խորհելով հատուցման մասին: Եվ ինչպես մշակը՝ տեսնելով գետնին նետված հաց, չի ընկծվում և չի վշտանում, այդպես և բարեպաշտը, զարդարված առաքինություններով և ամեն օր սպասելով արքայությունը, երբ տեսնում է մահը, որ ընկած է նրա աչքերի առաջ, չի տագնապում, ինչպես ամբոխը, չի դողդողում և չի վրդովվում, որովհետև գիտի, որ մահը արդար կյանքով ապրած մարդու համար դեպի լավագույնը փոփոխությունն է, հեռացում է էլ առավել գերազանցը, ձգտում է առ հատուցում:

Այդ պատճառով կան շիրիմներ քաղաքների կողքին, շի-

րիմներ կան դաշտերում, և ամենուր մեզ հնազանդեցման դասեր են առաջարկվում, որպեսզի մշտապես հիշենք սեփական թուլության մասին: Ինչպես ինչ-որ մեկը, շտապելով մտնել պերճաշուք հարստությունք, հզորությունք և այլ արժանիքներով զարդարված արքայական քաղաք, մինչ կտեսնի այն, ինչ երևակայել է, սկզբում տեսնում է այն, ինչ կա, այդպես և մենք՝ սկզբում սովորում ենք այն, ինչին ուշադրություն ենք դարձնում, և միայն հետո ենք սովորում տեսնել ներքին պատկերները:

Եվ ոչ միայն սա, այլև հաճախ նույնպես պատահում է, որ տղամարդը, երբ ցանկանում է կին առնել, առաջնորդվում է օրենքով և օժիտին վերաբերվող պարտավորություններն է գրում և իսկույն, թեև ամուսնական միությունը դեռ չի կայացել, ավելացնում է մահվան մասին գրանցումը: Նա դեռ կնոջ հետ չի ապրել, սակայն իր դեմ կամ կնոջ դեմ մահվան վճռին արդեն նախապես ենթարկվում է ու գրում հետևյալը. եթե ամուսինը կնոջից առաջ մեռնի, եթե կինը ամուսնուց առաջ մեռնի, ապա կլինի այսպես ու այսպես: Եվ ոչ միայն արդեն գոյություն ունեցողի և ապրողի մասին գրելիս է ուշադրության առնվում մահվան վճիռը, այլև նրա մասին, որ դեռ աշխարհ չի եկել:

Իրականում, ի՞նչ է նշանակում սա. եթե «ծնված» երեսխան մեռնում է: Դեռ պտուղը չկա, իսկ որոշումն արդեն ընդունված է:

Այնուհետև որևէ մեկը ուսումնասիրում է բնությունը ըստ աղյուսակների, և ահա նրան պատահում է մի բան, ինչ պատահում է մարդու հետ՝ կամ կինն է մահանում (նա մոռանում է, թե ինչ է գրել և սկսում է բարձրաձայնել ահա այսպիսի և այլ ողբերգական խոսքեր. «Ահա թե ինչ, - ասում է նա, - պատահեց ինձ: Կարո՞ղ էի մտքովս անցկացնել, որ կզրկվեմ կնոջից»): Ի՞նչ ես ասում: Քեզ դեռ

դժբախտութիւնն չէր պատահել, սակայն այնժամ էլ գիտեիր բնութիւն օրենքները, իսկ երբ դժբախտութիւն պատահեց, դու մոռացա՞ր այդ օրենքները:

Այսպիսով, երբ տեսնում ես, որ քո մերձավորներից որևէ մեկը այստեղից հեռանում է, մի սրտմտիր, ուշքի արի, քննիր խիղճդ, և տես՝ որո՞շ ժամանակ անց նույն բախտին ես արժանանալու: Բայց մեռածները, ասում են, փտում են, դառնում են հող ու մոխիր: Ահա հենց այդ պատճառով էլ արժե ուրախանալ: Չէ՞ որ, երբ մեկը մտադրվում է վերականգնուցել հին, արդեն խարխուլ տունը, սկզբում նա դուրս է հանում այնտեղ ապրողներին և այնուհետև կառուցում է ավելի հրաշալին: Եվ դա չի վշտացնում արտաքսվածներին, այլ, ընդհակառակը, ուրախացնում է, որովհետև նրանք ուշադրութիւն են դարձնում ոչ երևութական ավերման վրա, այլ երևակայութիւն մեջ պատկերացնում են ապագա շինութիւնը, որը դեռևս չեն տեսնում:

Կատարելապես միևնույն բանն է Աստծո արարքներում. միտք ունենալով ավերել մեր մարմինը՝ Նա ինչպես բնակարանից, նախապես այնտեղից հանում է այնտեղ բնակվող հոգին, որպեսզի, կառուցելով ավելի հոյակապը, այն նորից մեծ փառքով այնտեղ մտցնի: Ադամը նույնպես արարման ժամանակ չտեսավ, որ ինքը ստեղծվեց հողից: Աստված հոգին մարմնից առաջ չստեղծեց, որպեսզի այն չտեսնի արարչութիւնը, ուստի հենց այդ պատճառով չիմացավ իր ոչնչութիւն մասին, սակայն երբ հարութիւնը կկենդանանա, նա, անշուշտ, կիմանա, որ կենդանացավ՝ ազատվելով աճյունից:

Եթե մեռածը անգամ չի տեսնում իրեն, տեսնում է իրենից առաջ հող դարձածներին և տեսածով է դասեր առնում: Դու չե՞ս տեսել խիզախ և հպարտ այրերի, թե ինչպես են մահվամբ նսեմանում: Մահն ազդարարվում է, և

բոլորի սիրտը տրոփում է:

Հուշակոթողների մոտ մենք իմաստասիրում ենք այն մասին, թե ինչ կպատահի մեզ ու դատարկաբանում ենք, սակայն գերեզմանատնից հազիվ դուրս եկած՝ արդեն մոռանում ենք նսեմացման մասին: Գերեզմանատանը յուրաքանչյուրը դիմում է իր կողքի հարևանին այսպիսի բացական չութիւններով. օ՛, դժբախտութիւն, օ՛, մեր խղճուկ կյանք, ի՞նչ կլինի մեզ հետ: Սակայն ի՞նչ օգուտ այդ բացական չութիւններից, երբ շարունակում ենք կողոպտել և քինապահութիւն անել: Եվ յուրաքանչյուրը դատողութիւններ է անում այնպիսի տեսքով, կարծես հենց հիմա մտադրվել է հրաժարվել բոլոր անառակութիւններից, սակայն այդպես է դատում միայն իր ներքին խորհրդածութիւններում, իսկ արտաքին գործերում նա հակառակվում է Աստծուն:

Սակայն վերադառնանք նյութին: Ասա ինձ, ինչու՞ ես այդպես լաց լինում մեռնողի համար: Ի՞նչ է, անխելքի մե՞կն էր: Սակայն այստեղ հարկ է շնորհակալ լինել, քանի որ վերջ են դրված նրա անառակութիւններին: Նա շուայլ և խելո՞ք էր: Բայց այդ դեպքում էլ շնորհակալ պետք է լինել այն բանի համար, որ նրան Աստված շուտ վերցրեց, և ավելի առաջ, քան չարը հասցրել էր փոխել նրա խելքը: Երիտասարձ էր: Դրա համար նույնպես շնորհակալ եղիր ու փառաբանիր Վերցնողին:

Ինչպես իշխանութիւն կոչվածներին շատերը ուղեկցում են աղոթքներով, այդպես և մեռած սրբերին, ինչպես մեծարանքի կոչվածներին պետք է ուղեկցել ջանադիր աղոթքներով:

Ես, իհարկե, չեմ ցանկանում ասել, որ չպետք է վշտանալ մեռնողների համար, բայց հարկ չկա դա անել անչափափոր: Եթե մենք պետք է մտածենք, թե մեռնողը մահա-

ցած է, և Աստված լքել է նրան, մենք բավարար մխիթարողություն չենք ունենա: Այդ առիթով վրդովվելը նրանց հատկությունն է, ովքեր բնությունից ուզում են այն, ինչ բարձր է նրանից: Մարդը ծնվող և մահկանացու է, ուրեմն ինչու՞ ես կատարվածի համար տրտմում բնություն համապատասխան: Չէ՞ որ դու չես վշտանում, որ սնվում ես՝ սնունդ ընդունելով: Չե՞ս ձգտում, չէ՞, ապրել առանց սննդի: Այդպես և մահվան վերաբերյալ. մի փնտրիր անմահություն՝ ծնված լինելով մահկանացու: Դա մեկընդմիջտ սահմանված և օրենքով հաստատված է: Սակայն երբ Աստված կանչում և կամենում է ինչ-որ բան վերցնել մեզնից, չդառնանք երախտամոռ ծառաներ՝ լքելով Քահանայապետին: Եթե Նա վերցնել դրամ, փառք ու պատիվ, մարմին, անգամ հոգին, Նա կվերցնել իրենը, եթե Նա վերցնել քո որդուն՝ ոչ թե քո որդուն, այլ իր ծառային Նա կվերցնել:

Եթե մենք ինքներս չենք պատկանում մեզ, ինչպե՞ս կարող է մերը լինել այն, ինչ Նրանն է: Եթե հոգին քոնը չէ, ինչպե՞ս կարող է դրամը քոնը լինել: Եթե դա քոնը չէ, ինչպե՞ս ես ծախսում ոչ անհրաժեշտի վրա այն, ինչը քեզ չի պատկանում: Մի ասա, թե ծախսում եմ իմը և իմ ունեցածով եմ ճոխ կյանք ապրում: Ոչ թե քոնով, այլ՝ ուրիշինով: Ասում եմ՝ ուրիշինով (դու ինքդ ես այդպես ուզում), որովհետև Աստծուն հաճելի է, որ քոնը լինի այն, որ վստահված է քեզ աղքատների անունով: Ուրիշինը լինում է քոնը, երբ դու այն ծախսում ես նրանց վրա, իսկ եթե ծախսում ես քեզ վրա, այնժամ քոնը դառնում է ուրիշին:

Մի՞թե դու չես տեսնում, որ մեր մարմնում ձեռքերը ծառայում են, բերանը տրորում է կերակուրը, ստամոքսն այն ընդունում է: Չէ՞ որ ստամոքսը չի ասում, թե քանի որ ես եմ ընդունել, ես էլ պետք է ամեն ինչ պահեմ: Նույն

նր և աչքը՝ թեպետ նա է ընդունում ողջ լույսը, բայց մի՞թե այդ պատճառով է նա միայն իր համար պահում այն, մի՞թե լույս չի տալիս ողջ մարմնին: Քայլում են միայն ոտքերը, բայց մի՞թե միայն իրենց են տեղափոխում: Մի՞թե դրանցով չի տեղափոխվում ողջ մարմինը: Նրանցից յուրաքանչյուրը, որը որևէ անհրաժեշտ գործ ունի, եթե չցանկանար իր հատկությունից ինչ-որ օգտակար բան տալ մյուսներին, ապա կկործաներ ոչ միայն մնացածներին, այլև հենց իրեն:

Եթե աղքատներն սկսեին վրեժխնդիր լինել ձեր անառակության համար, որ հատուկ է ժլատ և հարուստ մարդկանց, նրանք շուտով քեզ աղքատ կդարձնեին, եթե սրանք չցանկանային իրենց ունեցածը կիսել կարիքավորների հետ: Բայց ես, ասում է, կորցրեցի իմ միակ որդուն, որ դաստիարակվել էր մեծ հարստության մեջ, գեղեցիկ հույսեր էր ներշնչում, որդուս, որ պետք է լիներ իմ ժառանգորդը: Ասենք թե: Մի հեծկլտա, այլ շնորհակալ եղիր Աստծուն և փառաբանիր Խլողին, և դա Աբրահամի արածից նվազ չի լինի. ինչպես նա Աստծո հրամանով տվեց որդուն, այդպես և դու չտրտնջացիր, երբ Աստված վերցրեց նրան: Եթե դու՝ տեսնելով մեռած որդուդ, շնորհակալ կլինես Աստծուց, ապա ավելի փոքր պարգև չես ստանա, քան նա, ով իր որդուն բերեց և մատուցեց որպես զոհ: Եվ եթե դու վերջ տաս հեծկլտանքներիդ ու տրտունջներիդ, ու բոլորին մղես փառաբանության, անհաշիվ պարգևներ կստանաս և՛ երկնքից, և՛ երկրից. մարդիկ կսկսեն զարմանալ քեզ վրա, հրեշտակները կծափահարեն, Աստված կպարգևի:

Բայց ինչպե՞ս կարելի է, կասի ինչ-որ մեկը, լաց չլինել նրա համար, ումից այլևս չեմ լսելու «հայր» անվանումը: Ինչե՛ր ես ասում: Մի՞թե դու կորցրեցիր երեխայիդ, գրկվե-

ցիր որդուց: Ո՛չ, լուկ վերագտար նրան և ամուր տիրացար նրան: Եվ հայր անվանումը դու չկորցրեցիր, այլ ավելի լավ անվան իրավունք ստացար, որովհետև գալիք ժամանակներում դու հայր անվանում կստանաս ոչ մահկանացու որդուց, այլ անմահից:

Թեպետև որդիդ չկա, դու մի մտածիր, թե կորցրել ես նրան, ասես գնացել է ճանապարհորդության, նա նույնիսկ ըստ հարազատության, քեզ չի լքել մարմնով: Նա մանկիկ չէ, որ պառկել է քո առջև, այլ նա է, ով բաժանվել և համբարձվել է երկինք: Ուրեմն, երբ տեսնում ես փակ աչքեր, սեղմված բերան, անշարժ մարմին, մի մտածիր այն մասին, թե այդ բերանն արդեն ձայն չի հանի, այդ աչքերը չեն տեսնի, այդ ոտքերը չեն քայլի, այլ մտածիր այն մասին, որ այդ բերանը ավելի լավը կխոսի, աչքերը ավելի մեծը կտեսնեն, ոտքերը կքայլեն ամպերում, և այդ ունայն մարմինը կանմահանա, և դու կստանաս անգերագանցելի որդի:

Հիշիր նահապետ Աբրահամին, որ Իսահակին մեռած չտեսավ, սակայն, որ ավելի ծանր ու տանջալի է, հրաման ստացավ զոհաբերել նրան իր իսկ ձեռքով: Բայց նա չընդդիմացավ հրամանին, չհեծկլտաց և ոչինչ չբացականչեց հետևյալ կերպ. մի՞թե Դու դրա համար ինձ հայր դարձրիր, որպեսզի դարձնես որդուս սպանողը: Ավելի լավ կլիներ ամենևին չտայիր նրան, քան տալով, այդպես ետ վերցնելի: Դու ուզում ես վերցնել: Սակայն ինչու՞ ես ինձ հրամայում սպանել նրան, պղծել իմ սեփական աջը: Այս որդու շնորհիվ չէ՞, որ խոստացար սերունդներով լցնել ողջ աշխարհը: Ինչպե՞ս Դու կտաս պտուղ՝ պոկելով արմատը:

Ո՞վ է այդպիսի բան տեսել կամ լսել: Ես սխալված եմ, խաբված: Նման բաներ նա չի ասում, չի հակառակվում Հրամայողին, կովաններ չի պահանջում, այլ լսում է. «Ա՛ն քո միակ որդուն՝ քո սիրելի Իսահակին, գնա՛ մի բարձրադիր տեղ

և այնտեղ լեռան վրա, որ ցույց կտամ քեզ, ողջակիզի՛ր Արամ» (Մենդ. 22, 2), և հրամանը կատարում է այնպիսի նախանձախնդրություն, որ ավելին է անում, քան հրամայված էր: Նա դա թաքցնում է կնոջից և ծածուկ է պահում ծառաներից՝ թողնելով սպասել լեռան ներքևում:

Իսկ հիմա պատկերացրու, թե ինչպիսի՞ զրույց կարող էր ունենալ որդու հետ, երբ մենակ մնացին և սիրտը դրանից ավելի ուժգին էր վառվում, իսկ սերը դառնում էր ավելի բուրբոք: Այդ ո՞ր բառը կարող է արտահայտել այն:

Տղային տանում է լեռ, կապում ոտքերը, դնում ցախի վրա և բարձրացնում է դանակը՝ պատրաստվելով հարվածել: Չգիտեմ, թե ինչպե՞ս պատմեմ և ի՞նչ բառերով: Դա կարող է իմանալ միայն նա, ով արել է: Ոչ մի խոսքով հնարավոր չէ արտահայտել այն: Ինչպե՞ս չպոկվեց ձեռքը: Ջղերն ինչպե՞ս դիմացան լարվածությունը: Ինչպե՞ս նրան ետ չպահեց տրտմությունը լեցուն որդու տեսքը: Այս ամենը հնարավոր է տեսնել մեկ պատկերում՝ թե ինչպես հայրը դարձավ քահանա, զոհաբերումն ինչպես անարյուն կատարվեց, ողջակիզումը եղավ առանց կրակի:

Նա և՛ սրախողխող արեց որդուն, և՛ սրախողխող չարեց, սրախողխող չարեց ձեռքով, բայց արեց մտադրություն, որպեսզի դրանով ապագա ժամանակներում բոլորին ուսուցանի, թե Աստծո հրամանը պետք է բարձր համարել և՛ երեխաներից, և՛ բնությունից, և՛ գոյություն ունեցող ամեն ինչից, և՛ անգամ հոգուց: Պատկերացրու այն մարդու սխրանքը, երբ հրաման է ստանում սրախողխող անել իր մինուճար որդուն, որին ունեցավ անսպասելի, ինչ մտածումներ էին նրան տանջահար անում: Սակայն նա դրանց հնազանդեցնում է, ամեն ինչ նրա առջև ավելի ուժգին տազնապի մեջ էր, քան նիզակակիրը՝ թագավորի առջև: Մի հայացքով նա ենթարկեց դրանց, և ոչ մեկը չկարողա-

ցավ ծպտուն հանել, և ամեն ինչ այնպես էր խաղաղվել, որ ավելի շուտ զարգարում էին Աբրահամին, քան նրան վախ էին ներշնչում:

Տես նաև նրա հաստատակամությունը: Բնությունն իր գեներով խոնարհեցնում է գետնին, սակայն նա կանգնում է, բարձրացնում ձեռքը, որտեղ ոչ թե պսակ է, այլ դանակ, որ բոլոր պսակներից լավն է: Հրեշտակների խումբը ողջունում է նրան, և Աստված երկնքից ազդարարում է նրա հաղթանակը: Կարո՞ղ է լինել մի բան, որ հավասարվի այդ ավարի հետ:

Եթե ատլետի հաղթանակից հետո ոչ թե մունետիկը ներքևից, այլ թագավորը վերևից նրան հաղթող ազդարարներ օլիմպիական խաղերում, մի՞թե նա չէր մտածի, որ այն պսակից ավելի թանկ է: Եվ մի՞թե այն չէր գրավի ողջ թատրոնի ուշադրությունը: Երբ ոչ թե թագավոր-մարդը, այլ ինքը՝ Աստված, և ոչ թե թատրոնում, այլ ողջ աշխարհի առջև, հրեշտակների խմբի և հրեշտակապետերի առջև նրան հաղթող է ճանաչում՝ երկնքից բարձրաձայն ազդարարելով այն, ասա ինձ, որտե՞ղ կարող ենք տեղավորել այդպիսի սրբին:

Երբ ծնողներին հեշտ չէ քամահրել նույնիսկ անխոհեմ երեխաներին (նրանք այդպիսիներին էլ են խղճում), ապա այդ դեպքում կարելի՞ է վախենալ պերճախոսություններից, երբ որդիդ հարազատ է, միակը, սիրելին, երբ նա պետք է հենց հորից ստանա հարվածը:

Օ՛, երանելի աջ, որ արժանանում է սրի: Օ՛, փառապանծ սուր, ի՛նչ աջի է նա արժանացել: Օ՛, փառապանծ սուր, ի՛նչ անելու համար է այն պատրաստվել, և ի՛նչ ծառայություն ընդունեց, ում ծառայեց, որ արյունից ալ կարմիր կտրեց, սակայն նրանով չկարմրեց: Իսկապես չգիտեմ, թե ինչ եմ ասում, այնքան զարմանահրաշ տեսարան է: Նա

չդիպավ պատանու պարանոցին և չանցավ սրբի կոկորդի վրայով, չկարմրեց արդարի արյամբ, սակայն ավելին եղավ, քան դիպչելը, ավելին անցավ, ու ավելի կարմրեց, ողողված արյամբ՝ չթրջվեց նրանով:

Հնարավոր է, դուք կարծում եք, որ խելքս տեղը չէ, որ այդպիսի հակասական բաներ եմ ասում, արդարև, հենց այդպես է, երբ պատկերացնում եմ արդարի կերպարանքը, սակայն ինձ չեմ հակասում: Աբրահամի ձեռքը պատրաստվում է դանակը խրել պատանու կոկորդը և պղծվել պատանու արյամբ, սակայն Աստծո ձեռքը այն թույլ չի տալիս: Արդարև, ոչ միայն Աբրահամն է բռնել դանակը, այլև Աստված: Աստված Աբրահամի մտքում դրդում է նրան, սակայն խոսքով զսպում է: Ահա, Աստված նրան ասում է. հարվածի՛ր, և Աբրահամը անմիջապես պատրաստում է սուրը, ասում է. մի՛ հարվածիր, և նա նույն փութկոտությունը դանակն իջեցնում է:

Նրա համար լավագույնն այն կլիներ, որ ընդհանրապես հայր չկոչվեր, որպեսզի իրեն ցույց տար միայն որպես հավատարիմ ծառա: Եվ քանի որ իրենից հրաժարվեց հանուն Աստծո, ապա այդ պատճառով և Աստված, վերադարձնելով նրան պատկանածը, էլ առավել ցուցաբերեց իր ողորմածությունը: Փութաջանություն չափով առկա էր նաև կարգադրությունը: Դու մի՛ ասա, թե նա միայն պատրաստեց զոհարանը և վրան փայտ դրեց, նմանապես հիշիր պատանու ձայնը, մտածիր այն մասին, թե մտքերի ինչ փոթորիկ բարձրացավ նրա մեջ և դրանք ինչպես էին խրվում ու տանջում նրան, հենց այնժամ, երբ լսեց որդու խոսքը. «Հայր, հապա ու՞ր է ողջակիզելու ոչխարը» (Ծննդ. 22, 7):

Եթե շատերը նույնիսկ այժմ, անգամ ծնող չլինելով, ի վիճակի չեն դիմանալ դրան, հապա ի՞նչ կարող էր զգալ Աբրահամը: Նա, որ ծնել և դաստիարակել էր պատանուն,

ունեցել ծեր հասակում և իր մինուճարն էր, նա, որ տեսել էր նրան, լսել և շուտով մտադիր էր խողխողել: Բայց այդ ամենով հանդերձ այդ աղամանդին ոչ մի բան ետ չի պահում, և նա ամենևին չի տատանվում: Ձի ասում՝ ինչու՞ ես հայր ասում մեկին, ով քիչ անց չի լինելու քո հայրը, ով կորցնելու է հայր կոչվելու պատիվը: Սակայն, ի՞նչ է ասում: «Աստված կհոգա իր ողջակիզելու ոչխարի մասին» (Ծննդ. 22, 8):

Երկուսն էլ իրար կոչում են բնական անուններով. նա ասում է «հայր», մյուսը՝ «որդի»: Երկու կողմում էլ ծանր պայքար է ընթանում, մեծ փոթորիկ է սպասվում՝ առանց նավաբեկության: Իսկ Իսահակը հենց լսեց Աստծո անունը, այլևս ոչինչ չասաց ու հարցեր չտվեց. այդքան իմաստուն էր պատանին այդքան դեռահաս տարիքում: Մի՞թե դուք բոլորդ դրանից ոգով չեք խանդավառվում: Մի՞թե ձեզանից յուրաքանչյուրը մտքով չի գրկում պատանուն, չի սիրում նրան, չի զարմանում նրա խելքի վրա, պատշաճը չի մատուցում նրա անարատությանը:

Նույնիսկ կապկպված և դրված փայտերի վրա, նա սարսափից չի ուշաթափվում, չի փորձում ցած նետվել, հորը որպես խելագարի չի հանդիմանում, այլ մնում է կապկպված, բարձրացված և բարդված փայտերին և ամեն ինչ տանում է լուռ, ինչպես գառ, էլ ավելի՝ որպես բոլորիս Տեր, Ում նմանվում է հնազանդությանը և Ում պատկերն է. «Ինչպես ոչխար՝ նա մորթվելու տարվեց, և ինչպես գառ՝ անմոռուց կանգնած է խուզողի առաջ» (Եսայի, 53, 7):

Թող ինձ չասեն, թե Աբրահամը չի տրտմում և չի ունենում ծնողներին հատուկ զգացումներ. ցանկանալով նրան չափից ավելի փրկիստիա ներկայացնել՝ թող նրան չգրկեն գովասանքի արժանի պսակից: Եթե մենք անսպասելիորեն հրապարակում տեսնում ենք մարդկանց, ում տանում են

մահապատժի, ընկնում ենք վհատություն մեջ, վշտանում, իսկ հաճախ նաև լաց ենք լինում, թեկուզև այդ մարդիկ տրված են եղել անառակության և երկար ժամանակ այդպիսի կյանք են վարել, թեկուզև նրանք անծանոթ են եղել մեզ, և մենք երբեք նրանց չենք տեսել, ապա ինչպե՞ս կարող էր չվշտանալ, որ ամեն կարգի պատժից ու տառապանքից ավելի ծանր է, նա, ով հրաման է ստացել սեփական ձեռքերով ողջակիզել հարազատ որդուն, արյունակցին, մինուճարին, որ ծնվել էր հակառակ սպասման, այն բանից հետո, երբ այդքան ժամանակ էր անցել, երբ խոր ծերություն մեջ էր, և որդին արդեն մեծացել էր: Եթե նա քար լիներ, երկաթ, անգամ աղամանդ, չէ՞ր ընկրկի, չէ՞ր սրտաշարժվի պատանու տեսքից, նրա իմաստուն խոսքերից, նրա հոգու անարատությունից:

Նա լսում է. «Աստված կհոգա իր ողջակիզելու ոչխարի մասին» (Ծննդ. 22, 8), և այլևս հարցեր չի տալիս. նա տեսնում է, թե ինչպես է հայրը կապում իրեն և չի դիմադրում, նա դրվում է փայտերի վրա և ցած չի նետվում, նա տեսնում է դանակը, որ բարձրանում է իր գլխին, և չի սարսափում: Ի՞նչը կարող է նրա հոգուց ավելի մաքուր լինել: Ուրեմն, այսքանից հետո դեռ կհանդգնե՞ն ասել, թե այդ ամենը Աբրահամին ոչ մի ցավ չի պատճառում: Եթե որևէ մեկը մտադրվել է սպանել իր թշնամուն ու հակառակորդին, եթե անգամ նա գազան է, մի՞թե կաներ դա առանց վշտանալու: Ո՛չ, ամենևին՝ ո՛չ:

Այդ պատճառով, խնդրում և աղաչում եմ քեզ. եթե կորցրել ես որդուդ կամ դստերդ, այդպես անվայել մի ողբա և քեզ մի ծվատիր, այլ խորհիր, որ Աբրահամը խոցում է հարազատ որդուն և լաց չի լինում, դառը խոսքեր չի ասում: Եվ Հորն է տրտմում, ինչքան պատշաճ է տրտմել հորը, որը սիրում է իր զավակներին: Սակայն այն, ինչ մենք

անուամ ենք հիմա, ավելի շուտ պատշաճ է մեր թշնամուն ու հակառակորդին:

Եթե դու սկսես վշտանալ ու լաց լինել այն ժամանակ, երբ ինչ-որ մեկին տանում են պալատ և այնտեղ թագավոր օծում, կասեի, որ դու ոչ թե օծվողի բարեկամն ես, այլ թշնամին ու հակառակորդը: Բայց ես չգիտեմ, կասե՞ս ինձ, թե նա ուր գնաց: Ինչու՞ չգիտես, ասա ինձ: Լավ է պարել կամ վատ, պարզ է, թե ուր է գնում: Կասեն՝ հենց այդ պատճառով եմ վշտանում, որ նա այս կյանքից հեռացավ որպես մեղսավոր: Սակայն այդ դեպքում էլ հարկ է ուրախանալ այն բանի համար, որ դադարեցվել են նրա մեղսագործությունները, և նա դրանք է՛լ չի կարող շատացնել, իսկ օգնել նրան, ինչքանով օգնելը հնարավոր է, պետք է ոչ թե արցունքներով, այլ աղոթքներով, ողորմություններով ու զոհաբերումներով, որովհետև հենց այնպես չի հնարված և իզուր չեն գալիք զոհասեղանի առջև, ահեղ խորհրդի կատարման ժամանակ բացականչում. բոլորի համար, ով Քրիստոսով մխիթարություն է գտնում, և նրանց համար, ովքեր պահում են նրանց հիշատակը կատարվում է՝ ըստ Սուրբ Հոգու սահմանման: Չէ՞ որ, եթե Հորի գավակներին մաքրագործում է հոր զոհաբերումը, ի՞նչ գարմանալի բան կա, եթե մեռյալներին որոշ մխիթարություն տրվի, երբ մենք նրանց համար զոհողություններ ենք անում: Այսպիսով, անմտորեն չենք ողբալու մեռնողներին, այլ պետք է վշտանանք նրանց միջից նրանց համար, ովքեր վախճանվել են հարստության մեջ և չեն կարողացել հարստությունից ստանալ այն, ինչը կարող էր թեթևացնել նրանց հոգու ճակատագիրը, նրանց համար, ովքեր հնարավորություն են ունեցել մեղքերից մաքրվել և չեն ցանկացել դրանից օգտվել:

Լաց կլինենք այդ մարդկանց համար, յուրաքանչյուրս

առանձին-առանձին և բոլորս միասին, և ոչ թե մեկ, ոչ թե երկու օր, այլ մեր ողջ կյանքում և կօգնենք նրանց մեր ուժերի ներածին չափով: Եկեք նրանց օգնելու մասին ինչ-որ բան մտածենք և թեկուզ քիչ, բայց օգնենք: Ինչպե՞ս և ի՞նչ միջոցներով: Աղոթելով ինքներս, ուրիշներին համոզելով, որ աղոթքներ ասեն նրանց համար, մշտապես նրանց համար ողորմություն տալով աղքատներին: Եվ այդ ամբողջը ի՞նչ արժե: Լսիր, թե ինչ է ասում Աստված. «Այս քաղաքը պիտի հովանավորես, որպեսզի այն ազատեմ ինձ ու իմ ծառայողների համար» (Դ թագ. 19, 34):

Սակայն եթե միայն արդարի մասին հիշողությունը այդպիսի նշանակություն ունի, ի՞նչ արժեք պիտի ունենա այն, երբ հանուն Նրա նաև գործեր կկատարվեն: Իզուր չէ, որ առաքյալները ահեղ խորհրդի իրագործման ժամանակ մեռածների համար օրինականացրել են աղոթասացությունը: Նրանք գիտեին, որ մեռածները դրանից մեծ շահ և շատ օգուտներ կունենան: Երբ ողջ ժողովուրդը կանգնած է՝ կարկառելով ձեռքերը, և քահանաների խումբը նրանց հետ է, երբ մեր առջևում մեծ զոհն է, ինչպե՞ս մենք կարող ենք չզթաշարժել Աստծուն՝ աղոթելով այդ մարդկանց համար:

Բայց մենք դա ասում ենք այն մարդկանց համար, ովքեր մահն ընդունում է հավատով, իսկ խեղճ արժանի չեն այդպիսի մխիթարություն ստանալու, նրանք զրկված են այդպիսի ցանկացած օգնությունից, բացառությամբ օգնության մի միջոցից: Որի՞ց: Կարելի է նրանց համար անդադար ողորմություն տալ աղքատներին, և դա նրանց որոշակի հանգստություն կբերի:

Այսպիսով, ոչ թե մահն է չար բան, այլ մեղսավորի մահը: Չէ՞ք ցանկանում, որ ես ի սեր ձեզ ասեմ, թե որտեղից է մեր մեջ մահվան սարսափը: Սերը առ երկնային արքա-

յուլթյունն չի խոցում մեզ, գալիք պարզեաների ցանկութիւնը չի բորբոքվում մեր մեջ, որովհետեւ մենք այնժամ կարահամարհեինք ներկան: Նա, ով մշտապես վախենում է դժոխքից, մահից չի վախենա:

Թույլ տվեք, եղբայրներ, բարեպատեհ ժամանակ ձեզ աւել. խելքով երեխաներ մի մնացեք, փոքր եղեք չարութեան մեջ: Փոքրիկ երեխաները վախենում են դիմակից, սակայն չեն վախենում կրակից, և եթե պատահաբար նրանց մոտեցնեն վառվող աշտանակին, նրանք անզգուշորեն ձեռք կմեկնեն աշտանակին ու կրակին. վախենում են դատարկ դիմակից և չեն վախենում իրապես սարսափելի կրակից:

Ուզու՞մ ես մահից վախենալու այլ պատճառի մասին խոսեմ: Մենք խստակյաց կյանք չենք վարում, մեզ պակասում է բարեխղճութիւնը: Եթե դա ունենայինք, ոչինչ մեզ չէր վախեցնի՝ ո՛չ մահը, ո՛չ ունեցվածքի կորուստը, ո՛չ էլ նման այլ բան: Վստահեցրու ինձ, թե ես կստանամ երկնային արքայութիւն, այնժամ խոցիր ինձ, թեկուզ չենց այսօր. ես քեզ շնորհակալ կլինեմ դրա համար, որովհետեւ դու դրանով կարագացնես այն պահը, երբ ես կվայելեմ այն բարիքները: Սակայն մեկնումեկը կասի՞՞ ես վախենում եմ անարդար մահից: Այդ ի՞նչ ես ասում: Դու վախենում ես անարդար մահի՞ց, իսկ արդարը ցանկանում ես:

Սակայն ո՞վ է այդ դժբախտ և խղճուկ մարդը, որ նախընտրում է արդար մահը, երբ կարելի է մեռնել անարդար մահով: Եթե հարկ կա վախենալ մահից, ապա նրանից, որ մենք ունենում ենք արժանիորեն, որովհետեւ անարդար մահ ունեցողը չենց դրա շնորհիվ հաղորդակցվում է բոլոր սրբերի հետ: Նրանց մեծամասնութիւնը, ով հաճո է եղել Աստծուն, չենց այդպիսի անարդար վախճան է ունեցել, և նրանցից առաջինը Աբելն էր: Նա Կայենի հանդեպ մեղք չի գործում, նրան չի վիրավորում, սակայն սպանվում է այն

բանի համար, որ մեծարում է Աստծուն: Իսկ Աստված այդ բանը թույլ է տալիս՝ սիրելով նրան, թե՞ ատելով:

Ակնհայտ է, թույլ է տալիս այն պատճառով, որ սիրում է և ցանկանում այդ անարդար սպանութեան համար մեծ պարգևի արժանացնել: Այստեղից չե՞ս եզրակացնում, որ հարկ է վախենալ ոչ թե անարդար մահից, այլ մեղքերի մեջ մեռնելուց: Աբելը անարդարաբար է մեռնում, Կայենն ապրում է անվերջ հեծյունի ու սարսափի մեջ: Ասա ինձ, նրանցից ո՞վ է ավելի երանելի: Նա, ով ստացավ արդար հանգստութիւն, թե՞ նա, ով արդար պատիժ ստացավ: Ասա ինձ, կա՞ ավելի հանցավոր բան, քան սպանութիւնը: Սակայն դա անողը երբեմն ճշմարտութիւնն է բացահայտում:

Լսիր, թե դա ինչպես պատահեց: Մի անգամ մադիանացիք, ցանկանալով հրեաների դեմ առաջացնել Աստծո զայրույթը և հույս ունենալով հաղթանակի հասնել նրանց նկատմամբ՝ դրա շնորհիվ նրանց զրկելով Տիրոջ բարեհաճութիւնից, աղջիկներին տոնական հագուստներ հագցրին և ցուցադրեցին բանակի առաջ, գայթակղեցին հրեաներին՝ նրանց մղելով անառակութիւն:

Տեսնելով այդ՝ Փենեհեսը վերցնում է սուրը ու հարվածում իրեն պղծող հրեա իշխանին և մի կնոջ, երկուսին էլ սպանում է չենց մեղք գործելու պահին, սպանում է ոչ այն պատճառով, որ ատում է սպանվածներին, այլ որպեսզի մյուսները չկործանվեն: Սպանութիւնը կատարվում է, սակայն երջանիկ ավարտ է ունենում՝ բոլոր կործանվողները փրկվում են. սպանում է երկուսին, փրկում անհամար բազմութեանը: Եվ ինչպես բժիշկները՝ կտրելով հիվանդ անդամը, փրկում են ողջ մարմինը, այդպես և Փենեհեսն է վարվում, և դա նրա համար արդար դատաստան է համարվում:

Ուրեմն, եկեք անմտորեն չողբանք մեռածներին, լաց լի-

նենք նրանց համար, ովքեր մեռնում են մեղքերի մեջ. նրանք արժանի են լացի, աղաղակի և արցունքների:

Ասա ինձ, ի՞նչ հույս կունենա նա, ով մեղքերով գնում է այնտեղ, որտեղ հնարավոր չէ իրենից թոթափել սեփական մեղքերը: Քանի դեռ նրանք այստեղ էին, դեռ մեծ հույս կար, որ կապաշխարեն ու կուղղվեն: Սակայն այն բանից հետո, երբ դժոխք են ընկնում, անկարելի է ապաշխարությամբ որևէ բանի հասնել (ասված է՝ «Չկա մեկը, որ դժոխքում գոհանա քեզանից» (Սաղմ. 6, 6), մի՞թե նրանք արժանի չեն արցունքի:

Ուրեմն, մեռյալների համար պետք է այդպես ողբալ՝ ես դեմ չեմ: Լաց լինենք, բայց ոչ անվայելուչ ձևով՝ մագերը գլխին փետելով, ուսերը մերկացնելով, դեմքը ճանկուելով, այլ հանդիստ հոգով առատ արցունքներ չթափելով: Դա մեզ օգուտ կբերի, որովհետև մեռնողին այդպես ողբացողը հոգ կտանի, որ իր հետ էլ նման բան չպատահի: Կամ ահա դու տեսնում ես հետևյալ տեսարանը. փողոցում մեռած մարդ են տանում, նրա հետևից քայլում են որբացած երեխաները, կինը՝ այրին, հեծկտում է, ծառաները լաց են լինում, ընկերները վշտացած են, այդժամ հիշիր գոյության ունայնության մասին, և նաև՝ այն ոչնչով չի տարբերվում սովերից ու երազատեսությունից: Մտածիր մեծ և փառապանծ մարդկանց պալատների մասին, այն մասին, թե դրանք ինչպես են հիմնահատակ ավերվել, պատկերացրու, թե այդ մարդիկ որքան հզոր են եղել, իսկ հիմա նույնիսկ նրանց հիշատակը չի մնացել: «Բազում բռնակալներ գետինն անտեցին, և նա, որից չէին սպասում, թագ ստացավ» (Սիրաբ. Ա, 11, 5):

Դա քեզ բավական չէ՞: Այդ դեպքում խորհիր այն մասին, թե ինչ կարող է քեզ հետ պատահել դեռ մահից առաջ, այնժամ, երբ քնած ես. քեզ ի զորու չէ՞ սպանել ան-

գամ ամենաչնչին գազանը: Շատերի հետ հաճախ պատահում է, որ փոքրիկ մի գազանիկ, տանիքից ընկնելով, վնասում է մարդու աչքը կամ մի այլ վտանգի պատճառ է դառնում: Լավ մտածիր այդ մասին և մի հիացիր մարդկանց արտաքին տեսքի վրա, մի զարմացիր ինքնագոհ ետ գցած գլխի, պճնազարդ հագուստների, ձիերի ու ծառաների վրա: Մտածիր այն մասին, թե այդ ամենը ինչով է վերջանում: Եթե դու հիանում ես տեսածովդ, նկարչության մեջ ցույց կտամ բաներ, որոնք ավելի հրաշալի են:

Բայց ինչու՞ մենք չենք հիանում այնժամ, երբ տեսնում ենք կերպարանքը նրա, ով պատկերված է նկարի մեջ, որովհետև այն ընդամենը աղտեղություն է, ինչպես և նա: Նա նույնպես աղտեղություն է, ավելի ճիշտ՝ նա այդպիսին է մինչև ոչնչանում և վերածվում է փոշու: Ցույց տուր ամբարտավան մարդու, որ բորբոքվել և կորցրել է ինքնատիրապետումը, և այնժամ ես կզրուցեմ քեզ հետ և կասեմ՝ որտե՞ղ են հիմա նրանք, որոնք սնապարծորեն շրջում էին փողոցներում՝ ծառաների մեծ խմբի ուղեկցությամբ: Որտե՞ղ են մետաքսյա հանդերձներով հագնվածները, անուշաբույր յուղերով օծվածները, ձրիակյաց պահողները, որ չէին լքում թատրոնը: Ու՞ր են անհետացել այն շքեղ խնջույքները, երաժիշտների խումբը, շողոքորթների հաճկատարությունը, անսահման հուզուցը, հոգու հանգստությունը, մեծ-մեծ ծրագրերը, փափկակենցաղ կյանքը՝ պարապ և շքեղ: Ամեն ինչ անցել է, ամեն ինչ անհետացել:

Իսկ ի՞նչ եղավ մարմինը, որ այդքան խնամք էր պահանջում, որի մաքրության մասին այդքան հոգ էինք տանում: Գնա գերեզմանատուն, տես աճյունն ու մոխիրը, որդերին, տեղի նողկալի տեսքը. տես և դառնորեն լաց եղիր: Եթե միայն պատիժը սոսկ աճյունով վերջանա՛ր: Բայց դու հիմա այդ գերեզմանից, այդ որդերից մտքով տեղափոխվիր

այն անմահ որդին, ատամների կրճտոցին, այն անլույս խավարին, այն անմար կրակին, այն սարսափելի, անտանելի տանջանքներին, այն անվերջ կյանքին:

Այստեղ և՛ բարիքը, և՛ տառապանքը վերջ ունեն՝ բավական մոտալուտ վերջ, իսկ այնտեղ և՛ առաջինը, և՛ երկրորդը հավիտյանս հավիտենից շարունակվում են, իսկ ըստ որակի՝ դրանք այնպես են տարբերվում այժմյան երջանկովթյունից ու դժբախտովթյուններից, որ անհնար է արտահայտել:

Իսկ ի՞նչ եղան բազմաքանակ զարդերը: Ու՞ր կորան փափկակեցուլթյունը, ծառաների հաճկատարուլթյունը, ունեցվածքի և կալվածքների առատուլթյունը: Այդ ի՞նչ քամի ամեն ինչ ավելց ու տարավ: Ինչի՞ համար են թանկարժեք ու իզուր ծախսերը թաղումների վրա, ծախսեր, որ վնաս են տալիս թաղողներին ու օգուտ չեն տալիս մեռնողներին: Երբ կլսես, որ Տերը հարուլթյուն առավ մեռյալներից առանց հանդերձների՝ հանուն դրա մոռացիլ թաղումների մասին բոլոր անհմաստ հոգսերը:

Քրիստոս, երբ ասում էր. քանի որ տեսաք Ինձ, որ սոված եմ՝ կերակրեցիք, ծարավ եմ՝ խմեցրիք, մերկ էի՝ հագուստ տվիք, և չի ավելացնում, թե մեռա՝ թաղեցիք: Եթե նա նույնիսկ ողջերին պատվիրում է ավելին չունենալ, քան մի ծածկոց, առավել ևս դա վերաբերում է մեռյալներին: Այդ ինչո՞վ ենք արդարացնում մեզ, երբ մարմինը, որ հանձնվում է ի կուր որդերի և փտումի, զարդարում ենք, իսկ Քրիստոսին, որ սոված է, ծարավ, մերկ և թափառական, հոգ չենք տանում:

Սակայն և մեռյալը, որ պառկած է մահճին, ասում են, ունենում է իր կոչման ու հարստուլթյան նշանները, երբ շքեղ հագուստներ է հագած, երբ աղքատներն ու հարուստները ուղեկցում են նրան, երբ ժողովուրդը պահպա-

նում է հարգալից լուլթյուն: Ահա առավելապես դա է արժանի ծանակման, սակայն դա ևս շուտով կմերկացվի, ինչպես թափվող ծաղիկը:

Հենց որ դուրս ենք գալիս քաղաքի դարպասների շեմից, և մարմինը հանձնում ենք որդերին, վերադառնում ենք, կրկին հարցնում եմ՝ ու՞ր կորան այն բազմամարդ հավաքները: Ի՞նչ եղան աղաղակներն ու հուզումները: Որտե՞ղ են ջահերը, կանանց երգչախումբը: Մի՞թե այդ ամենը երազ է: Իսկ այն ճիչե՞րը: Որտե՞ղ անհետացան այն բազմաթիվ բերանները, որոնք աղաղակում և համոզում էին արիանալ, որովհետև ոչ ոք անմահ չէ: Հիմա չպետք է այդ խոսքերը ասել, երբ նա չի լսում, այլ այն ժամանակ, երբ նա գիշատչուլթյուն էր անում, երբ շահամոլ էր, այն ժամանակ պիտի ասվեր՝ փոքր-ինչ փոխելով. անվախ լինելը բանի պետք չէ՝ ոչ ոք անմահ չէ:

Եթե քեզ համար տուն կառուցեին այնտեղ, որտեղ դու միտք չունեիր ապրելու, դու դա քեզ համար վնասաբեր բան կհամարեիր: Սակայն իսկապես ցանկանում ես հարստանալ այնտեղ, որտեղից հաճախ ստիպված ես հեռանալ ավելի շուտ, քան գիշերը կիջնի: Հեռու մնա խելագարուլթյունից, զսպիր ցանկուլթյուններդ: Սա հարկ է ասել նրան, ում դժբախտուլթյուն է պատահել: Եթե արդեն անօգուտ է նրա համար, ով արդեն թողել է ասպարեզը, ապա թող լսի նա, ով հիվանդ է նույնպիսի ախտերով, ինչպես և նա, և ով բռնել է միևնույն վերջի ճանապարհը:

Քանի որ նրանք՝ արբած հարստուլթյամբ, նախկինում նման բաների մասին չեն մտածում, ապա թող գոնե խելքի գան հիմա, երբ պառկածի տեսքն անգամ հաստատում է այս խոսքերը. թող դասեր առնեն՝ խորհելով այն մասին, որ շատ չանցած ուղեկցողներին նույնպես կտանեն այն ահեղ դատաստանին, որպեսզի հատուցում ստանան այն բանի

Համար, որ այստեղ իրենց վատ պահեցին:

. Ուրեմն, որպեսզի մեզ միևնույն բանը չպատահի, ինչպես նրանց, ձգտենք մեր ուժերի ներածին չափով փոխվել և ուղղվել, որպեսզի լինենք գալիք բարիքների մասնակիցներ Քրիստոսով, մեր Տիրոջով, Որին փառք և զորություն Հոր և Կենսատու Հոգու հետ, այժմ և միշտ, և հավիտյանս հավիտենից. Ամեն:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Տովիան Ոսկերեքան.....	5
Միրոն մասին.....	13
Ադոքթի մասին.....	36
Ապաշխարության մասին.....	59
Երջանկության և դժբախտության մասին.....	73
Տարսության և սղքսության մասին.....	83
Տիվանդության և բժիշկների մասին.....	104
Նախանձի մասին.....	116
Տիրության և արարման մասին.....	125
Ղեկավարության, իշխանության, և փառքի մասին.....	134
Ողորմության և օրարասիրության մասին.....	148
Երեխաների դաստիարակության մասին.....	184
Մահվան մասին.....	201

Խմբագիր՝ Ասողիկ Եպիսկոպոս
ԳԵՂ. Խմբագիր՝ Ղևոնդ քահանա
Շապիկը՝ Ա. Օհանջանյանի
Սրբագրիչ՝ Յու. Նովիաննիսյան